

ՀԱՄԱՌՕՏ  
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ  
ԿԱԹՈՂԻԿԷ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ



2016



**ՀԱՄԱՌՕՏ**  
**ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ**  
**ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ**

2016

Սոյն պատկերացումը արտատպումն է Գ. դարի վերջաւորութեան պատկանող քրիստոնեայ գերեզմանաքարէ մը, որ կը գտնուի Հռոմի Դոմիտիլլա գետնադամբանին մէջ:

Հեթանոսական այս հովուական պատկերը քրիստոնեաներուն կողմէ գործածուած է իբր խորհրդանիշ ննջեցեալ հոգիին յաւիտենական կեանքին մէջ վայելած հանգիստին եւ երանութեան:

Նոյն նկարը արտայայտութիւնն է նաեւ այս «Համառօտ Քրիստոնէական»ին ընդհանուր նշանակութեան. Քրիստոս՝ Իր հաւատացեալները (ոչխարը) Իր հովանիին (գաւազան) տակ առաջնորդող եւ պաշտպանող բարի Հովիւն է, որ զանոնք կ'առինքնէ ճշմարտութեան ներդաշնակ համանուագով (սրինգը) եւ անոնց հանգիստ կը պարգեւէ հովանիին տակ «կեանքի ծառին», որ արքայութեան զուռը բացող փրկչագործ խաչն է:

Քրիստոնէականիս Թարգմանութիւնը վարեց եւ տպագրութիւնը հոգաց Եր. Գրիգոր Եպս. Կապրոյեան, Մ. Զ.,

Առաջնորդ Ֆրանսայի Կաթողիկէ Հայոց:

Թարգմանութիւնը կատարեց, իտալերէն բնագրէն

Գերյ. Հ. Անդրանիկ Մ. Վ. Կռանեան, Մ. Զ.:

Համակարգիչի աշխատանքը ստանձնեց

Ազնուափայլ Տիկին Թամար Կապրոյ-Չալոլլեան:



## ԻՆՔՆԱՄԱՏՈՅՑ

### ԹՈՒՂԹ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ի վաւերացումն եւ ի հրատարակութիւն

**«Կաթողիկէ Եկեղեցւոյ Համառօտ Քրիստոնէական»ի**

Մեծայարգ Եղբայրներու՝ Ծիրանաւորներուն, Պապ-  
րիարքներուն, Արքեպիսկոպոսներուն, Եպիսկոպոսնե-  
րուն, Բահանաներուն, Սարկաւագներուն եւ Աստուծոյ  
Ժողովուրդին բոլոր անդամներուն:

Վատիկան Բ. Տիեզերական Ժողովին փակման 20րդ տա-  
րեղարձին առիթով, Եպիսկոպոսներու Սիւնհոգոսին կողմէ  
խնդրուած «Բրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցւոյ» աշ-  
խատասիրութիւնը սկիզբ կ'առնէր քսան տարի առաջ:

Իմ անհուն շնորհակալութիւնս կը յայտնեմ Աստուծոյ,  
որ սոյն Քրիստոնէականը շնորհեց Կաթողիկէ Եկեղեցւոյ-  
ան լոյս տեսաւ իմ մեծարեալ եւ սիրեցեալ նախորդիս՝  
Յովհաննէս Պօղոս Բ. Պապին կողմէ, 1992ին:

Այս թանկագին նուէրին օգտաշատութիւնը փաստուեցաւ  
նախ անով որ ան դրական եւ լայն ընդունելութեան ար-  
ժանացաւ Եպիսկոպոսաց Դասին կողմէ, որուն ուղղուած  
էր առաջին հերթին, որպէսզի ծառայէ իբր պաշտօնով եւ  
վաւերական աղբիւր եւ բաղդատման տեղիք կաթողիկէ

վարդապետութեան ուսուցումին եւ յատկապէս տեղական քրիստոնէականներուն մշակումին:

Օգտաշատութիւնը փաստուեցաւ նաեւ անով, որ ան նպաստաւոր եւ նշանակալից ընդունելութիւն գտաւ Աստուծոյ Ժողովուրդը բաղադրող այն բոլոր տարրերուն կողմէ, որոնք հնարաւորութիւնն ունեցան անոր ծանօթանալու եւ զայն զնահատելու, շնորհիւ մինչեւ օրս աւելի քան 50 լեզուներով կատարուած թարգմանութիւններուն:

Իսկ այժմ սրտի խո՛ր գոհունակութեամբ սոյն «Համառօտ Քրիստոնէականը» կը հաստատեմ եւ լոյս կ'ընծայեմ:

Ան ջերմօրէն յանձնարարուած էր 2002 Հոկտեմբերին Քրիստոնէականի Միջազգային Համաժողովին մասնակցողներուն կողմէ, որոնք այսպէս՝ Եկեղեցւոյ զգացած նորագոյն մէկ պահանջին արտայայտութիւնն եղած էին: Ընդառաջելով այս կարիքին՝ իմ երջանկայիշատակ նախորդս 2003 Փետրուարին որոշում առաւ այս «Համառօտ Քրիստոնէական»ը պատրաստել տալ եւ անոր մշակումը յանձնեց Կարգինալներու սեղմ Յանձնախումբի մը՝ իմ նախագահութեամբ եւ մի քանի մասնագէտ անձերու աջակցութեամբ: Աշխատանքներուն ընթացքին՝ գործին նախագիծը ենթարկուեցաւ բոլոր վսեմաշուք Կարգինալներուն եւ Եպիսկոպոսաց Համաժողովներու Նախագահներուն քննարկումին: Անոնք մեծամասնական ձայնով զայն զնահատեցին եւ իրենց հաւանութիւնը տուին:

Այս հատորը իր կառոյցով, իր բովանդակութեամբ եւ իր լեզուով հարազատ արտացոլացումն է «Կաթողիկէ Եկեղեցւոյ Քրիստոնէական»ին, որ ա'լ աւելի լայնօրէն պիտի ծանօթացուի եւ խորացուի շնորհիւ իր այս համառօտ ձեւին ընձեռած օժանդակութեան եւ մղումին:

Հետեւաբար սոյն «Համառօտ Քրիստոնէական»ը ամենայն վստահութեամբ կը յանձնեմ նախ համա՛յն Եկեղեցւոյ եւ իւրաքանչիւր քրիստոնեային, որպէսզի անոր միջոցով եւ այս երրորդ դարադարձի սեմին՝ անոնցմէ իւրաքանչիւրը նոր թափ ստանայ՝ հաւատքը աւետարանելու եւ

մարդը դաստիարակելու, նորոգուած յանձնառութեամբ, ինչ որ յատկանշելու է ամէն եկեղեցային հասարակութիւն եւ Քրիստոսի բոլոր հաւատացեալները, ինչ տարիքի եւ ազգութեան ալ պատկանին:

Սակայն այս «Համառօտ Քրիստոնէական»ը իր կարճառօտ, յստակ եւ ամբողջական ձեւին տակ՝ ուղղուած է նաեւ այն անձերուն, որոնք ապրելով անհեթեթ եւ հակասական պատգամներու աշխարհի մը մէջ, ցանկութիւնն ունին ճանշնալու Կեանքի Ճանապարհն եւ Ճշմարտութիւնը, որոնք Աստուծոյ կողմէ յանձնուած են Իր Որդիին Եկեղեցիին:

Այս «Համառօտ Քրիստոնէական»ը իբր հեղինակաւոր աղբիւր գործածելով, մարդս պիտի կարենայ Քրիստոսի եւ Եկեղեցոյ Մօր՝ Ս. Կոյս Մարիամի յատուկ բարեխօսութեամբ, միշտ աւելի՛ լաւ ճանչնալ եւ իւրացնել անսպառ գեղեցկութիւնը, միակութիւնը եւ այժմէականութիւնը այն գերազա՛նց Պարգեւին, զոր Աստուած մարդկութեան ընծայեց, այսինքն՝ Իր Միածին Որդին Յիսուս Քրիստոսը, «Ճանապարհ, Ճշմարտութիւն եւ Կեանք» (Յովհ 14,6):

Տուեալ ի Հռովմ, մերձ առ տաճարն Ս. Պետրոսի, 28 Յունիս 2005, ի նախատօնակի Ս. Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի եւ յառաջնում տարւոյ Քահանայապետութեան իմոյ:

Benedictus PP XVI

Ամենակալ Քրիստոսը ներկայացնող բացառիկ գեղեցկութեամբ այս սրբանկարը կը յիշեցնէ սաղմոսերգունին խօսքը-« Մարդոց բոլոր որդիներէն աւելի գեղեցիկ դէմք ունիս եւ շրթունքներդ շնորհք կը սփռեն» (Սղմ 44 [45], 3): Ս. Յովհաննէս Ոսկերեան այս գովեստը մերձեցնելով Տէր Յիսուսի, այսպէս կը գրէր-«Քրիստոս իր ծաղիկ հասակին՝ Հոգիին գօրութեան մէջ էր: Անոր անձէն՝ հոգիին եւ մարմինն զոյգ գեղեցկութիւնը կը ցոլար» (Յոյն Հայրաբանութիւն 59, 479):


Այս սրբանկարը իր պատկերաւոր լեզուով՝ համադրումն է տիեզերական առաջին ժողովներուն: Ան կը յաջողի իր մէջ ներկայացնել Յիսուսի ո՛չ միայն մարդկային փայլքը, այլ նաեւ Անոր աստուածութեան արտացոլացումը:

Քրիստոս զգեցած է կարմիր քղամիդ մը եւ ծածկուած է կապոյտ վերարկույով մը: Այս երկու գոյները՝ ակնարկութիւնն են Անոր երկու բնութիւններուն, իսկ ոսկեգօծ ցոլքերը՝ արտայայտութիւնն են Բանին աստուածային անձին: Աջ ուսէն վար՝ ոսկեգոյն ուրար մը կախուած է, խորհրդանիշ անոր յաւիտեական քահանայութեան: Անոր վսեմ ու շէնչող դէմքը, որ առատ վարսերով ու խաչածեւ պսակով մը շրջապատուած է, կը կրէ եռատառ - «Որ է»- բառերը, որոնք կը վերաբերին Աստուծոյ անունին (Ելք 3, 14): Սրբանկարին եզերքին վերեւ երկու զոյգ գիրեր կան. ՅՄ-ՔՄ (Յիսուս Քրիստոս), որոնք պատկերին վերնագիրը կը հանդիսանան: Յիսուսի աջ ձեռքը, իրարու միացուած փութամատով եւ մատնեմատով (արտայայտելու համար Քրիստոսի երկու բնութիւնը մէկ անձին միութեան մէջ), պատկերացուած է օրհնելու յատկանշական ձեւով: Ձախ ձեռքը բռնած է մարգարտագարդ եւ երեք կապիչներով Աւետարանը: Ան Աստուծոյ Խօսքին խորհրդանիշն ու համադրութիւնն է, որ ծիսական նշանակութիւն մըն ալ ունի. արդարեւ Գոհութեան Խորհուրդը ծիսակատարելու պահուն՝ Աւետարանէն անցք մը կը կարդանք, իսկ սրբագործումի պահուն՝ Յիսուսին խօսքերը կ'արտասանենք:

Այս նկարը, որ իրապաշտ եւ խորհրդապաշտ տուեալներու գերազանց համադրութիւն մըն է, հրաւէր մըն է Յիսուսը հիացումով դիտելու եւ Անոր հետեւելու: Այօր եւս Յիսուս, իր Հարսն ու իր խորհրդանշական Մարմինը եղող Եկեղեցիին ընդմէջէն, կը շարունակէ մարդկութիւնն օրհնել եւ զայն լուսաւորել Աւետարանին միջոցով, որ ճշմարտութեան, քրիստոնեայութեան եւ մարդոց փրկութեան հարազատ մատանն է:

386րդ Օգոստոսին՝ Ս. Օգոստինոս, երբ իր պարտէզին մէջ կը գտնուէր, ձայն մը լսեց որ իրեն կ'ըսէր. - Ա՛ռ, կարդա՛... Ա՛ռ, կարդա՛ (Խոստովանութիւնք 8, 12, 29): «Համառօտ Քրիստոնէական»ը, որ Եկեղեցւոյ կրօնուսուցումին ընդմէջէն՝ Յիսուսի քարոզած Աւետարանին համադրութիւնը կը ներկայացնէ, հրաւէր մըն է ճշմարտութեան գիրքը բանալու եւ կարդալու, նոյնիսկ զայն ուսելու, ինչպէս որ Եզեկիէյ մարգարէն ըրաւ ( Եզկ 3, 1-4):

Սրբանկար Կրետացի Թէոփանոսի (1546) - Քրիստոս, Սթավրոնիքիիս վանք (Աթոս Լեւ):





## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

1 - 11 Հոկտեմբեր 1992ին, Յովհաննէս Պօղոս Բ. Պապը «Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցւոյ» հատորը աշխարհի հաւատացեալներուն կը յանձնէր իբր վերանորոգ կրօնութեան «բաղդատման տեղիք»<sup>1</sup> եւ հաւատքի կենդանի աղբիւր: Այսպէս՝ Վատիկանեան Բ. Ժողովին բացումէն երեսուն տարիներ ետք (1962-1965), Եպիսկոպոսաց Սիւնհոգոսի արտակարգ Համաժողովին կողմէ 1985ին արտայայտուած բաղձանքը՝ հաւատքի եւ բարոյականի հայող կաթողիկէ ամբողջական վարդապետութեան շուրջ քրիստոնէական մը մշակելու մասին, իր բախտաւոր իրականացումին կը հասնէր:

Ապա հինգ տարի ետք, 15 Օգոստոս 1997ին, Սրբազան Քահանայապետը «Կաթողիկէ Եկեղեցւոյ Քրիստոնէական»ի մայր օրինակին (յատիներէն) հրատարակութեան առիթով՝ անոր հիմնական նպատակը այսպէս կը բնորոշէր. «Կազմել Կաթողիկէ Վարդապետութեան լրիւ եւ ամբողջական կառույց մը, որ իւրաքանչիւրին հնարաւորութիւնը ընծայէ ճանչնալու ինչ որ Եկեղեցին իր առօրեային մէջ կը դաւանի, կը տօնակատարէ, կ'ապրի ու կ'աղօթէ»<sup>2</sup>:

2- Քրիստոնէականին լաւագոյն արժեւորումին համար եւ 2002ին Կրօնութեան Միջազգային Համագումարին ընթացքին ծագած խնդրանքի մը ընդառաջելու նպատակով, Յովհաննէս Պօղոս Բ. 2003ին՝ յատուկ Յանձնախումբ մը կազմեց եւ զայն դրաւ վարդապետութեան եւ հաւատքի Ս. Ժողովին վերակացու կարգինալ Ժողէֆ Ռացինկերի նախագահութեան ներքեւ, անոր պարտականութիւնը յանձնելով պատրաստելու «Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցւոյ» հատորին համառօտ օրինակը՝ հաւատքի բովանդակութեան աւելի համադրական բանաձեւումով մը: Երկու տարիներու աշխատանքէ ետք, «Համառօտ Քրիստոնէա-

<sup>1</sup> Յովհաննէս Պօղոս Բ. - Հով. Սահմ. Հաւատքի Աւանդ, 11 Հոկտ.1992 :

<sup>2</sup> Յովհաննէս Պօղոս Բ. - Թղթ. Հով. Հաւատքի Աւանդ, 11 Օգոս.1997 :

կան»ին նախածրագիրը պատրաստուեցաւ եւ Կարգինալներուն ինչպէս նաեւ Եպիսկոպոսաց Համագումարին նախագահներուն խորհրդակցութեան ուղարկուեցաւ: Նախածրագիրը իր ամբողջութեամբ արժանացաւ բացարձակ մեծամասնութեամբ դրական պատասխանին: Ուստի Յատուկ Յանձնախումբը սոյն նախածրագրին վերատեսուութեան գործին լծուեցաւ եւ անոր վերջնական բնագիրը մշակեց, նկատի առնելով բարեփոխումի զանազան առաջարկները:

3- «Համառօտ Քրիստոնէական»ին գլխաւոր յատկանիշները երեք են. ա) սեղմ յարակցութիւն «Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցւոյ» հատորին հետ, բ) զրուցատրական ոճ, գ) կրօնուսուցումի պահուն պատկերներու գործածութիւն: «Համառօտ Քրիստոնէական»ը, նախ եւ առաջ՝ անկախ երկմը չէ, ո՛չ ալ կը ձգտի «Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցւոյ» հատորը փոխարինելու: Ընդհակառակն՝ ան միշտ անոր հետ առնչուած կը մնայ՝ թէ՛ կանոնաւորապէս յուշելով անոր համապատասխանող թիւերը եւ թէ՛ անոր կառոյցին, ընթացքին եւ բովանդակութեան հետ անդադար յարակցութիւն պահելով: «Համառօտ Քրիստոնէական»ը կը ձգտի նաեւ նոր հետաքրքրութիւն եւ նոր խանդավառութիւն արծարծել «Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցւոյ»ն նկատմամբ, որ իր իմաստալից մատուցումով եւ իր հոգեւոր խորութեամբ կը հանդիսանայ այժմեան կրօնուսուցումի հիմնատիպարը:

Միւս «Քրիստոնէական»ին պէս՝ «Համառօտ»ն ալ չորս մասերէ կը բաղկանայ, որոնք Քրիստոսով ապրուած կեանքի մը հիմնական օրէնքներուն կը համապատասխանեն.

Առաջին մասը, որ «հաւատքի դաւանութիւն» կը կոչուի, կը բովանդակէ յարմար համադրում մը «հաւատալեաց», այսինքն Կաթողիկէ Եկեղեցւոյ դաւանած հաւատքին, որ համադրումն է Առաքելոց Հանգանակին, զարգացուած Նիկիական-Կոստանդնուպոլսական հանգանակին կողմէ: Քրիստոնէական հաւաքոյթներուն ընթացքին կատարուած անոր մշտական դաւանումը՝ հաւատքի գլխաւոր ճշմարտութիւններուն յիշատակը վառ կը պահէ:

Երկրորդ մասը, որ «Քրիստոնեայ խորհուրդի հանդիսական տարուում» կը կոչուի, կը ներկայացնէ «unofficially» հական տարրերը: Արդարեւ Աւետարանին հռչակումը իր նախասիրած համապատասխանումը կը գտնէ խորհրդենական կեանքին մէջ: Անով՝ հաւատացեալները իրենց կեցութեան իւրաքանչիւր պահին մէջ՝ զատկական խորհուրդին փրկչագործ զօրութիւնը կը փորձարկեն եւ իրենց կեանքով վկաները կ'ըլլան ա՛յն զատկական խորհուրդին, որուն շնորհիւ Քրիստոս մեր փրկութիւնը իրագործեց:

Երրորդ մասը, որ «կեանքը Քրիստոսի մէջ» կը կոչուի, յիշեցումն է այն «ապրելեաց», այսինքն՝ այն յանձնառութեան, զոր մկրտեալները իրենց կենցաղով եւ բարոյական արարքներու նախընտրանքով պարտին ցուցաբերել, ի նշան իրենց դաւանած եւ ծիսակատարած հաւատքին հանդէպ հաւատարմութեան:

Չորրորդ մասը, որ «Քրիստոնեայ աղօթք» կը կոչուի, համադրումն է «աղօթելեաց», այսինքն աղօթքի կեանքին: Նմանելով Յիսուսին՝ աղօթող մարդուն կատարեալ տիպարին, Քրիստոնեան եւս կանչուած է Աստուծոյ հետ զրուցելու աղօթքի ճամբով, որուն նախասիրեալ արտայայտութիւնը «Հայր Մեր»ն է, աղօթք մը որ Յիսուս անձա՛մբ մեզի սորվեցուց:

4- «Համառօտ Քրիստոնէական»ին երկրորդ յատկանիշը իր խօսակցական ոճն է: Ան վերադարձ մըն է Քրիստոնէականի ուսուցումի հարցում-պատասխան վաղեմի մէկ ձևին: Ան առաջարկ մըն է վերադառնալու ուսուցիչի եւ աշակերտի միջեւ իտէալ երկխօսութեան, շնորհիւ շարք մը հետապնդող հարցումներուն, որոնք ընթերցողը կը մղեն իր հաւատքին ճշմարտացիութեան մասին նոր տեսոյթներու գիւտը կատարելու: Խօսակցական այս ոճը կ'օժանդակէ նաեւ «Քրիստոնէական»ին բնագիրը զգալիօրէն համառօտելու, զայն հականին վերածելով, ինչ որ կրնայ հետացնել բովանդակութեան իւրացումը եւ ի հարկին՝ անոր մտաբերումը:

5- Երրորդ յատկանիշը՝ պատկերներու ներկայութիւնն է, որոնք «Համառօտ Քրիստոնէական»ին յօդաւորումները կը ցայտեցնեն: Սոյն պատկերները քաղուած են քրիստոնեայ սրբանկարներու շատ ճոխ ժառանգութենէն: Ս. Ժողովներու դարաւոր աւանդոյթէն կ'իմանանք, թէ պատկերը եւս աւետարանական քարոզչութեան մէջ գործածուած մէկ ձեւը եղած է: Բոլոր ժամանակներու արուեստագէտները հաւատացեալներուն սքանչացումին մատուցած են փրկական խորհուրդը յատկանշող դրուագները, զանոնք զգեստաւորելով գոյներու պէսպիսութեամբ եւ կատարելագործ գեղեցկութեամբ: Ասիկա արտայայտութիւնն է այն իրողութեան, որ այսօր, պատկերներու ներկայ քաղաքակրթութեան շրջանին՝ սրբանկար մը աւելի քան երբեք կարողութիւնն ունի խօսքէն աւելի խօսուն ըլլալու, հետեւաբար Աւետարանին պատգամը հաղորդելու եւ փոխանցելու մէջ եւս՝ պատկերին ուժականութիւնը աւելիով արդիւնաւործելու:

6- Վատիկանի Բ. Ժողովէն քառասուն տարիներ ետք եւ Ս. Հաղորդութեան նուիրուած այս տարուան մէջ, «Համառօտ Քրիստոնէական»ը կրնայ ներկայանալ իբր նոր միջոց՝ յագեցնելու ամէն տարիքի եւ դասակարգի պատկանող հաւատացեալներուն ճշմարտութեան ծարաւը, ինչպէս նաեւ պահանջն անոնց, որոնք առանց հաւատացեալներ ըլլալու՝ ճշմարտութեան եւ արդարութեան պապակն ունին:

Սոյն հատորին լոյս ընծայուած տեղի պիտի ունենայ Ս. Պետրոս եւ Ս. Պօղոս առաքեալներու տօնին օրը: Անոնք տիեզերական Եկեղեցոյ սիւներն են եւ իրենց ժամանակակից մարդոց համար՝ Աւետարանի տիպար քարոզիչները: Անոնք իրենց քարոզած պատգամին ականատեսներն եղան եւ Քրիստոսի ճշմարտութեան վկայելու համար՝ նահատակուեցան: Օրինակ քաղենք անոնց առաքելագործ եռանդէն եւ աղօթենք Տիրոջ, որպէսզի հաւատքի անդրանիկ եւ շէնչող հռչակումը անոնցմէ ստացած Եկեղեցին միշտ հետեւողն ըլլայ անոնց ուսուցումին:

20 Մարտ 2005, Ծաղկազարդ:

ԺողէՅ Կարդ. Ռացիոնկեր  
Նախագահ Յայրուկ Յանճնախումբի







Մոգերու երկրպագութիւնը (հմտ. Մտք 2, 1-2) պատկերացնող այս շքեղ գլուխ գործոցը կը ներկայացնէ Յիսուսի Յայտնութիւնը բոլոր ազգերուն: Մարդեղութիւնը պարզեւ մըն է՝ տրուած ո՛չ միայն Մարիամին, Յովսէփին, կիներուն, հովիւներուն եւ իսրայէլի ժողովուրդին համեստ մարդոց հաւատքին, այլ նաեւ նորածին Մեսիան պաշտելու եւ իրենց ընծաները Անոր նուիրելու համար՝ Արեւելքէն ժամանած օտարականներուն հաւատքին: «Տունը մտնելով, անոնք մանուկը տեսան Մարիամի՝ իր մօր հետ եւ ծունկի գալով երկրպագութիւն ըրին: Ապա իրենց գանձերը բանալով, Մանուկին իրենց ընծաները նուիրեցին. ոսկի, կնդրուկ եւ զմուրս» (Մտք 2, 11):

Մոգերը առաջինները եղան հաւատալու կանչուած ժողովուրդներուն: Ս. Լեւոն Մեծ կ'ըսէր. «Բոլոր ժողովուրդները ներկայացնող երեք մոգերը թող տիեզերքին Արարիչին երկրպագեն: Թող Աստուած ճանչցուի ո՛չ միայն Հրէաստանի մէջ, այլ ամբողջ աշխարհի վրայ, որպէսզի Անոր անունը իսրայէլի մէջ ամէն տեղ մեծ հռչակուի» (Հմտ. Սղմ 75 [76], 2) (Գ. Զառ Յայտնութեան):

«Համառօտ Քրիստոնէական»ին առաջին մասը կը ներկայացնէ Աստուծոյ եւ մարդուն միջեւ հանդիպումը եւ համայն մարդկութեան անունով՝ Եկեղեցիին տուած հաւատքին պատասխանը, ի դիմաց Աստուածորդիին փրկչագործ Մարդեղութեան եւ աստուածային Յայտնութեան:

**ՃԵՆԹԻԼԷ ՏԱ ՅԱՊՐԻԱՆՈՅ** (1423), Մոգերու Երկրպագութիւնը:  
Փլորենտիա, ՕՖիցի պատկերասրահ:

**ԱՌԱՋԻՆ ՄԱՍ**

**ՀԱՒԱՏՔԻ ԴԱԽԱՆՈՒԹԻՒՆԸ**

Այս մանրանկարը կը ներկայացնէ Արարչագործութեան վեց օրերը, մինչեւ նախածնողներուն սատանայէն փորձուիլը:

«Որքան բազմաթիւ են, Տէ՛ր, Քու գործերդ:  
Քու իմաստութիւնդ ստեղծեց զանոնք  
եւ երկիրը լեցունեցաւ Քու բարիքներովդ:  
Ահաւասիկ ծովն ընդարձակ եւ անդորր,  
անոր մէջ կը խալտան անասուններն անթիւ,  
Մեծ եւ պզտիկ:  
Անոր վրայ կը շրջին նաւերը,  
եւ լեւիաթանը գոր Քուն ստեղծեցիր  
որպէսզի անով հրճուիս:  
Ամէնքը Քեզի կ'ապաւինին:  
Քուն յարմար ժամուն կերակուր կու տաս անոնց:  
Քուն անոնց կու տաս, անոնք կը կերակրուին:  
Կը բանաս ձեռքդ, կը կերակրես ամէնքը:  
(Սղմ 103 [104], 24-28. 35)

Զատիկը երեկոյին՝ Եկեղեցին Տէրը կը գովաբանէ մարդկութեան եւ տիեզերքի փրկագործութենէն աւելի՝ հոյակապ գործի մը համար.

«Յաւիտենական եւ ամենագոր Աստուած,  
Քուն որ միշտ կը գործես սքանչելի իմաստութեամբ,  
Ըրէ՛ որ Քու փրկանաւորած մարդիկը հասկնան  
Թէ՛ Քրիստոսի գատկական Զոհաբերումը  
Աւելի՛ սքանչելագործ է քան աշխարհի սկիզբի  
Ստեղծագործութիւնը»:

Սուվինյի Աստուածաշունչ- Մանրանկար Արարչագործութեան,  
Մուլէն, Քաղաքապետարանի Մատենադարան:

## ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԱԾ

«ԿԸ ՀԱՒԱՏԱՄ» - «ԿԸ ՀԱՒԱՏԱՆՔ»



**Ծանոթ** - Լուսանցքի թիւերը կը համապատասխանեն  
«Զրիաբունէական Կաթողիկէ Եկեղեցւոյ»  
հատորին թիւերուն:

## 1 - Ի՞նչ է Աստուծոյ ծրագիրը մարդուն մասին:

Անսահմանօրէն կատարեալ եւ հոլթեամբ երջանիկ Աստ- 1-25  
ւածը մարդը ստեղծեց իր գերազանցապէս բարի մէկ  
ծրագրով՝ իր ազատ կամքով, զինք իր երանաւէտ կեանքին  
մասնակից դարձնելու համար: Երբ ժամանակները իրենց  
լրումին հասան, Հայր Աստուած մեղքի մէջ ինկած մարդոց  
դրկեց իր Փրկարար եւ Փրկիչ Որդին, որպէսզի զանոնք իր  
Եկեղեցիին կանչէ եւ Սուրբ Հոգիին զօրութեամբ՝ զանոնք  
իւր որդեգիրները եւ երանաւէտ կեանքին ժառանգորդներն  
ընէ:

## ԳԼՈՒԽ Ա.

### ՄԱՐԴԸ «ԸՆԴՈՒՆԱԿ» Է ԱՍՏՈՒԾՈՅ

Մեծ եւ Դու Տէր եւ գերազանցօրէն գովելի (...): Դուն մեզ  
Քեզի համար կազմեցիր եւ մեր սիրտը չունի՝ դադար  
որքան ատեն որ չի հանգչիր Քու մէջդ (Մ. Օգոստինոս)

30

## 2 - Ինչու՞ մարդը իր մէջ Աստուծոյ փափաքը ունի:

Աստուած մարդը իր պատկերին համեմատ ստեղծած 27-30  
ըլլալով՝ Զինք տեսնելու փափաքը անոր սրտին մէջ Ի՞նք 44-45  
դրոշմեց: Մարդը նման փափաք մը եթէ նոյնիսկ կ'անդի-  
տանայ, Աստուած կը շարունակէ զինք դէպի իրեն քաշել,  
որպէսզի մարդը իր մէջ գտնէ ու ապրի ճշմարտութեան եւ  
երջանկութեան լիութիւնը զոր անդադար կ'որոնէ: Ուրեմն  
մարդը իր բնութեամբ եւ իր կոչումով կրօնամէտ էակ մըն  
է, ընդունակ՝ Աստուծոյ հետ հաղորդութեան մէջ մտնելու:  
Աստուծոյ հետ մտերմիկ եւ կենսական այս կապը մարդուն  
հիմնական հենքը կը հանդիսանայ:

### 3 - Կարելի՞ է ճանչնալ Աստուած միայն իմացականութեան լոյսով:

31-36 *Մարդը՝ մեկնելով արարչագործութենէն, այսինքն՝ տիե-*  
 46-47 *զերքի եւ մարդկային էակին ստեղծումէն, կարող է իր լոկ իմացականութեամբ՝ ստուգապէս ճանչնալ զԱստուած որպէս ծագում եւ վախճան տիեզերքի, որպէս գերագոյն բարիք, եւ որպէս ճշմարտութիւն եւ անվախճան գեղեցկութիւն:*

### 4 - իմացականութեան լոյսը բաւարա՞ր է Աստուծոյ խոր- հուրդը ճանչնալու:

37-38 *Մարդը իր իմացականութեան լոյսով միայն՝ զԱստուած ճանչնալու մէջ շատ դժուարութիւններու կը բախի: Նաեւ ան ինքնիրմով կարող չէ նաեւ աստուածային խորհուրդին մտերմութեան մէջ մտնել: Այս պատճառով Աստուած ուզեց իր Յայտնութեան միջոցով մարդը լուսաւորել ո՛չ միայն մարդու հասկացողութիւնը գերազանցող ճշմարտութիւն-ներուն շուրջ, այլ նաեւ ա՛յն կրօնական եւ բարոյական ճշմարտութիւններուն մասին, որոնք ըստ ինքեան՝ մարդու բանականութեան մատչելի մնալով հանդերձ, կրնան բոլորէն իմացուիլ առանց դժուարութեան, հաստատ ստուգութեամբ եւ առանց սխալելու վտանգին:*

### 5 - Աստուծոյ մասին ին՞չ ձեռով խօսիլ:

39-43 *Կարելի է խօսիլ բոլոր մարդոց եւ ամէն տեսակ մարդոց*  
 48-49 *հետ Աստուծոյ մասին՝ մեկնելով մարդուն եւ միւս արարածներուն ունեցած կատարելութիւններէն, որոնք ցոլացումն են, թէեւ սահմանափակ, Աստուծոյ անսահման կատարելութեան: Առ այս հարկ է յարատեւ զտել մեր լեզուէն պատկերաւոր եւ անկատար խօսելաձեւերը, գիտակցելով որ բնա՛ւ կարելի պիտի չըլլայ Աստուծոյ անհուն խորհուրդը լրիւ արտայայտել:*

## ԳԼՈՒԽ Բ.

### ԱՍՏՈՒԱԾ ԸՆԴԱՌԱՋ ՄԱՐԴՈՒՆ

#### ԱՍՏՈՒԾՈՅ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ

##### 6 - Աստուած մարդուն ի՞նչ կը յայտնէ:

Աստուած Իր բարութեամբ եւ Իր իմաստութեամբ, մար- 50-53  
դուն Ինքզինք կը յայտնէ: Եղելութիւններու եւ իր 68-69  
խօսքերուն ընդմէջէն՝ Ան թէ՛ Ինքզինք կը յայտնէ եւ թէ՛  
Քրիստոսի միջոցով ի յաւիտենից մարդուն ի նպաստ  
սահմանած իր բարեխնամ ծրագիրը: Այս ծրագիրը կը ձգտի  
բոլոր մարդիկը Սուրբ Հոգիին շնորհքով աստուածային  
կեանքին մասնակից ընելու, որպէսզի անոնք Իր միածին  
Որդիին ձեռքով որդեգիրներ դառնան:

##### 7 - Որո՞նք են Աստուծոյ Յայտնութեան առաջին հանգրուան- ները:

Աստուած նախ յայտնուեցաւ մեր նախածնողներուն՝ 54-58  
Ադամին եւ Եւային եւ զանոնք հրաւիրեց Իրեն հետ սերտ 70-71  
հաղորդութեան: Անոնց մեղանշումէն ետք, Ան Իր Յայտ-  
նութիւնը չկասեցուց, այլ անոնց բոլոր սերունդներուն  
փրկութիւն խոստացաւ: Ջրհեղեղէն ետք, Ան դաշինք կնքեց  
Նոյի հետ՝ Իր եւ բոլոր կենդանի արարածներուն միջեւ:

##### 8 - Որո՞նք են Աստուծոյ Յայտնութեան իրերայաջորդ հանգրուանները:

Աստուած Աբրահամը ընտրեց, կանչելով զայն որ իր 59-64  
երկիրը թողու, որպէսզի գինքը «ազգերու բազմութեան 72  
հայր» կարգէ (Մնդ 17, 5), եւ խոստացաւ անոր մէջ «օրհնել  
երկրի բոլոր ազգերը» (Մնդ 12, 3): Աբրահամի սերունդները  
Աստուծոյ նահապետներուն կատարած խոստումներուն  
աւանդապահները պիտի ըլլան: Աստուած Իսրայէլը կազմեց

իբր իր ընտրեալ ժողովուրդը, զայն ազատելով Եգիպտոսի գերութենէն: Անոր հետ Սինայ լեռան ուխտը կնքեց եւ Մովսէսի ձեռքով՝ իր Օրէնքը տուաւ անոր: Մարգարէները, նոր եւ յաւերժական Ուխտի մը միջոցով, աւետեցին հրեայ ժողովուրդին արմատական փրկագործութիւնը եւ բոլոր ազգերու փրկութիւնը: Իսրայէլի ժողովուրդէն եւ Դաւիթի ցեղէն պիտի ծնէր Յիսուս, Մեսիան:

#### 9 - Ո՞րն է Աստուծոյ Յայտնութեան վերջին եւ վերջնական հանգրուանը:

65-66

Այդ հանգրուանը իրականացաւ մարմնացեալ Բանին՝  
 73 Յիսուս Քրիստոսի միջոցով, որ Յայտնութեան միջնորդն ու լիութիւնն է: Ան Աստուծոյ մարդացեալ միածին Որդին է, հետեւաբար Հօր կատարեալ եւ վերջնական Խօսքն է: Յայտնութիւնը իր կատարեալ իրագործումին հասած է Որդիին առաքումով եւ Սուրբ Հոգիին պարգեւով, նոյնիսկ եթէ Եկեղեցիին հաւատքը անոր ամբողջական տարողութիւնը հետզհետէ պիտի ըմբռնէ դարերու ընթացքին:

Այն վայրկեանին իսկ երբ Աստուած տուաւ մեզի Իր Որդին, որ Իր միակ եւ վերջնորոշ Խօսքն է, Աստուած Իր այս Խօսքով՝ մեզի մի անգամ ընդ միշտ ամէն բան ըսաւ եւ ուրիշ ոչինչ ունի ըսելիք (Ս. Յովհաննէս Խաչեան):

#### 10 - Առանձնական յայտնութիւնները ի՞նչ արժէք կը ներկայացնեն:

67

Թէեւ անոնք հաւատքի աւանդին մաս չեն կազմեր, սակայն կրնան հաւատքի ապրումին օգնել, պայմանով որ դէպի Քրիստոս սերտօրէն առնչուած մնան: Եկեղեցւոյ ուսուցանող վարդապետութիւնը, որուն կը վերաբերի այս առանձնական յայտնութիւններուն մասին զատորոշում կատարելը, չի կրնար ընդունիլ այն յայտնութիւնները, որոնք կը յաւակնին գլխ աւանդի կամ սրբազրեւ վերջնորոշ Յայտնութիւնը, որ Քրիստոս է:

## ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՆՅՈՒՄԸ

**11 - Իճնու՞ եւ ի՞նչպէս աստուածային Յայտնութիւնը փոխանցուելու է:**

Աստուած «կ'ուզէ որ բոլոր մարդիկը փրկուին եւ 74  
հասնին ճշմարտութեան ճանաչումին» (1 Տիմ 2, 4)  
(այսինքն՝ Յիսուս Քրիստոսի): Այս պատճառով՝ անհրա-  
ժեշտ է որ Քրիստոս քարոզուի բոլոր մարդոց, ըստ Իր իսկ  
տուած պատուէրին. «Գացէ՛ք, աշակերտեցէ՛ք բոլոր ազ-  
գերը» (Մաթ 28, 19): Ասիկա կ'իրագործուի առաքելական  
Աւանդութեան ճամբով:

**12 - Ի՞նչ է առաքելական Աւանդութիւնը:**

Առաքելական Աւանդութիւնը Քրիստոսի պատգամին 75-79  
փոխանցումն է, որ քրիստոնէութեան ծագումէն ի վեր՝ կը 83  
կատարուի քարոզութեան, վկայութեան, հաստատութիւն- 96, 98  
ներու, պաշտամունքի, ներշնչեալ գրութիւններու միջոցով:  
Առաքեալները, ինչ որ Քրիստոսէն ստացան եւ Սուրբ  
Հոգիէն սորվեցան, զայն իրենց յաջորդ Եպիսկոպոսներուն  
փոխանցեցին եւ անոնց միջոցով՝ յաջորդ բոլոր սերունդ-  
ներուն, մինչեւ ժամանակներուն վախճանը:

**13 - Առաքելական Աւանդութիւնը ի՞նչ ձեւով կ'իրագործուի:**

Առաքելական Աւանդութիւնը երկու ձեւով կ'իրագոր- 76  
ծուի՝ Աստուծոյ Խօսքին կենդանի փոխանցումով (այլ  
խօսքով՝ Աւանդութեամբ) եւ Սուրբ Գիրքով, ուր փըր-  
կութեան նոյն հռչակումը գրաւոր կատարուած է:

**14 - Ի՞նչ առնչութիւն կայ Աւանդութեան եւ Սուրբ Գիրքին միջեւ:**

Աւանդութիւնն ու Սուրբ Գիրքը իրարու զօդուած եւ ի- 80-82  
րարու սերտօրէն հաղորդակից են: Մին եւ միւսը Քրիստոսի 97  
խորհուրդը Եկեղեցւոյ մէջ ներկայ եւ բեղմնաւոր կը

դարձնեն, եւ աստուածային նո՛յն ակէն կը բխին: Անոնք նո՛յն սրբազան աւանդը կը բաղկացնեն, որոնցմէ Եկեղեցին կը քաղէ իր ստուգութիւնը իւրաքանչիւր յայտնեալ ճշմարտութեան շուրջ:

**15 - Հաւատքի աւանդը որո՞ւ յանձնուած է:**

84, 91 Հաւատքի աւանդը առաքեալներուն օրերէն սկսեալ՝  
94, 99 յանձնուած է Եկեղեցւոյ ամբողջութեան: Աստուծոյ ամբողջ համայն ժողովուրդը, Հաւատքի հանդէպ իր գերբնական զգայնութեամբ, Սուրբ Հոգիին օժանդակութեամբ եւ Եկեղեցւոյ Ուսուցանող Նուիրապետութեան առաջնորդութեամբ՝ կ'ընդունի աստուածային Յայտնութիւնը, զայն միշտ աւելի խորացնելով կը հասկնայ եւ զայն աւելի կառչածութեամբ կ'ապրի:

**16 - Որո՞ւ վերապահուած է հաւատքի աւանդին վաւերական մեկնաբանութիւնը:**

85-90 Հաւատքի աւանդին վաւերական մեկնաբանութիւնը  
100 վերապահուած է մի միայն Եկեղեցւոյ կենդանի Ուսուցանող Նուիրապետութեան Հեղինակութեան, այսինքն՝ Սուրբ Պետրոսի յաջորդ՝ Հռոմի Եպիսկոպոսին եւ անոր հետ հաղորդակից Եպիսկոպոսներուն: Քանի որ Ուսուցանող Նուիրապետութեան Հեղինակութիւնը, Աստուծոյ Խօսքը մատակարարելու հարցով՝ ճշմարտութեան ստույգ պարզեւաշնորհը ինք ունի, ուստի իրեն կը վերաբերի նաեւ բնորոշել հրամանակարգ վարդապետութիւնները, որոնք աստուածային Յայտնութեան պարունակած ճշմարտութիւններուն բանաձեւումներն են: Այս իշխանութեան մէջ ընդգրկուած են նաեւ ա՛յն ճշմարտութիւնները, որոնք անհրաժեշտօրէն Յայտնութեան հետ կապուած են:

**17 - Ի՞նչ առնչութիւն կայ Ս. Գիրքին, Աւանդութեան եւ Վարդապետումի միջեւ :**

95 Սուրբ Գիրքը, Աւանդութիւնը եւ Ուսուցանող Նուիրապետութիւնը իրարու միջեւ այնքան սեղմ ձեւով առնչուած են, որ անոնցմէ ո՛չ մէկը առանց միւսին կրնայ

գոյութիւն ունենալ: Անոնք, Սուրբ Հոգիին ներգործութեամբ, միասնաբար, ազդու կերպով եւ իւրաքանչիւրը իր ձեռով կ'օժանդակեն մարդոց փրկութեան:

## Ս. ԳԻՐԶԸ

### 18 - Ինչու՞ Սուրբ Գիրքը ճշմարտութիւնը կ'աւանդէ:

Որովհետեւ Աստուած Ինքը հեղինակն է Սուրբ Գիրքին: 105-108  
Աստուած է զայն ներշնչողը: Այս պատճառով, ան կոչուած 135-136  
է ներշնչուած գիրք (Աստուածաշունչ): Ան մեր փրկութեան անհրաժեշտ ճշմարտութիւնները անսխալական կերպով կ'ուսուցանէ: Արդարեւ Սուրբ Հոգիին ներշնչումով է որ մարդիկը գրի առին ինչ որ Աստուած կ'ուզէր մեզի ուսուցանել: Սակայն քրիստոնեայ հաւատքը «Գիրքի կրօն» մը չէ, այլ Աստուծոյ խօսքին կրօնը, «ո՛չ թէ գրի առնուած ու համը խօսքի մը, այլ մարմնացեալ եւ կենդանի Բանին» (Ս. Բեռնարդոս):

### 19 - Ի՞նչպէս կարդալ Սուրբ Գիրքը:

Սուրբ Գիրքը կարդացուելու եւ մեկնաբանուելու է 109-119  
Սուրբ Հոգիին օժանդակութեամբ եւ Եկեղեցւոյ Ուսուցա- 137  
նող Նուիրապետութեան առաջնորդութեամբ, ըստ հետեւեալ երեք չափանիշներուն. ա) ուշադիր ըլլալ ամբողջ Սուրբ Գիրքին բովանդակութեան եւ ներքին միութեան, բ) զայն կարդալ՝ հետեւելով Եկեղեցւոյ կենդանի Աւանդութեան, գ) յարգել հաւատքի վերաբերեալ համանմանութիւնները, այսինքն՝ հաւատքի դաւանած ճշմարտութիւններուն միջեւ գոյութիւն ունեցող ներդաշնակ յարակցութիւնը:

### 20 - Ի՞նչ է Սուրբ Գիրքին «կանոն»ը:

Սուրբ Գիրքի «կանոն»ը ամբողջական ցանկն է այն 120  
սրբազան գրութիւններուն, զորս առաքելական Աւանդու- 138  
թիւնը Եկեղեցիին զատորոշել տուած է: Սոյն «կանոն»ը կ'ըմբռնէ Հին Կտակարանէն քառասունվեց գիրք եւ Նոր Կտակարանէն քսանեօթ գիրք:

**21 - Ինչո՞վ Հին Կտակարանը կարելուք է քրիստոնեաներուն համար:**

121-123 *Քրիստոնեաները Հին Կտակարանը կը մեծարեն որպէս Աստուծոյ ճշմարիտ Խօսքը: Անոր բոլոր գրուածքները Աստուծոյ ներշնչուած են եւ մշտակալ արժէք կը ներկայացնեն: Անոնք կը վկայեն Աստուծոյ փրկչագործ սիրոյն ջամբած դաստիարակչական դերին մասին: Անոնք մասնաւորապէս գրուած են Քրիստոսի՝ Տիեզերքի Փրկչին գալուստը պատրաստելու համար:*

**22 - Ինչո՞վ Նոր Կտակարանը կարելուք է քրիստոնեաներուն համար:**

124-127 *Նոր Կտակարանը, որուն կեդրոնական նիւթը Յիսուս*  
 139 *Քրիստոս է, մեզի կը սորվեցնէ աստուածային Յայտնութեան վերջնորոշ ճշմարտութիւնը: Նոր Կտակարանին - Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի եւ Յովհաննէսի - չորս աւետարանները Յիսուսի կեանքին եւ վարդապետութեան մասին հիմնական վկայութիւններն են: Անոնք ամբողջ Սուրբ Գիրքին ծովը կը կազմեն եւ Եկեղեցւոյ մէջ իւրաքանչեւ տեղ կը գրաւեն:*

**23 - Ի՞նչ է միութիւնը Հին եւ Նոր Կտակարաններուն միջեւ:**

128-130 *Սուրբ Գիրքը մէ՛կ է, քանի որ Աստուծոյ Խօսքը մէ՛կ է:*  
 140 *Մէ՛կ է մարդու փրկութեան Աստուծոյ ծրագիրը, մէ՛կ է աստուածային ներշնչումը երկու Կտակարաններուն մէջ: Հին Կտակարանը Նորին նախապատրաստութիւնն է, իսկ Նորը՝ Հինին իրագործումը: Երկուքը փոխադարձաբար զիրար կը լուսաբանեն:*

**24 - Ի՞նչ է Սուրբ Գիրքին պաշտօնը Եկեղեցւոյ կեանքին մէջ:**

131-133 *Սուրբ Գիրքը թիկունքն ու կորովն է Եկեղեցիին կեանքին:*  
 141 *Եկեղեցւոյ զաւակներուն համար, ան հաւատքի ամրապնդում է, սնունդ է եւ հոգեւոր կեանքի աղբիւր: Ան*

աստուածաբանութեան եւ հովուական քարոզութեան ոգին է: Ըստ Սաղմոսերգուին, ան «քայլերուս լոյսն է եւ ճանապարհիս ճրագը» (Սղմ 118 [119], 105): Այս պատճառով՝ Եկեղեցին կը յորդորէ Սուրբ Գիրքը յաճախակի կարդալ, որովհետեւ «Սուրբ Գիրքը անգիտանալ՝ Քրիստոսը անգիտանալ է» (Ս. Երոնիմոս):

## ԳԼՈՒԽ Գ.

### ՄԱՐԴՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԱՍՏՈՒԾՈՅ

#### ԿԸ ՀԱՒԱՏԱՄ

**25 - Ի՞նչ է մարդուն պատասխանը իրեն յայտնուող Աստուծոյ:**

Մարդը, աստուածային շնորհքով զօրացած, Աստուծոյ <sup>142-143</sup> կը պատասխանէ հաւատքին հնազանդութեամբ, այսինքն՝ ինքզինք ամբողջովին Աստուծոյ յանձնելով եւ ընդունելով Անոր ձգմարտութիւնը, քանի որ ան երաշխաւորուած է Աստուծոյ, որ ձգմարտութիւնն իսկ է:

**26 - Սուրբ Գիրքին մէջ հաւատքի հնազանդութեան գլխաւոր վկաները որո՞նք են:**

Հոն բազմաթիւ վկաներ կան, բայց յատկապէս երկու <sup>144-149</sup> անձ. մին՝ Աբրահամը, որ փորձի ենթարկուելով՝ «հաւատաց Աստուծոյ» (Հն 4, 3) եւ Անոր կանչին յարատեւ ընդառաջեց եւ ասոր համար՝ բոլոր հաւատացեալներուն հայրը եղաւ (Հն 4, 11-18): Իսկ երկրորդ վկան՝ Սուրբ Կոյս Մարիամն է, որ հաւատքի հանդէպ ամենակատարեալ հնազանդութիւնը գործադրեց իր ամբողջ կեանքին ընթացքին. «Եղիցի ինձ ըստ բանի քում»: - Թող ըլլայ ինձի քու Խօսքիդ համաձայն (Դուկ 1, 38):

**27 - Մարդուն համար Աստուծոյ հաւատալը՝ գործնականօրէն ի՞նչ բանի մէջ կը կայանայ:**

150-152 Աստուծոյ հաւատալը կը կայանայ Աստուծոյ յարելու մէջ,  
176-178 Անոր վստահելու եւ Անոր յայտնած բոլոր ճշմարտութիւններուն իր հաւանութիւնը տալու մէջ, քանի որ Աստուած ճշմարտութիւնն իսկ է: Կը նշանակէ հաւատալ երեք Անձերէ կազմուած մէկ Աստուծոյ. Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին:

**28 - Հաւատքին յատկանիշները որո՞նք են:**

153-165 Հաւատքը՝ Աստուծոյ ձրի տուրքն է, ան մատչելի կը  
179-180 մնայ բոլոր զայն խոնարհաբար հայցողներուն, ան փրկու-  
183-184 թեան համար անհրաժեշտ գերբնական առաքինութիւնն է: Հաւատքի ներգործութիւնը մարդո՛ւն՝ այսինքն մարդու խելքին ներգործութիւնն է: Ան՝ Աստուծմէ դրդուած իր մարդկային կամքին ազատ հաւանութիւնը կու տայ աստուածային ճշմարտութեան: Հաւատքը նաեւ ստոյգ է, որովհետեւ հիմնուած է Աստուծոյ խօսքին վրայ: Հաւատքը գործօն է «սիրոյ միջոցով» (Գաղ 5, 6): Հաւատքը յարատեւօրէն կ'աճի ու կը զարգանայ յատկապէս Աստուծոյ խօսքն ունկնդրելով եւ աղօթելով: Հաւատքը այժմէն երկինքի ուրախութեան նախաճաշակը կու տայ մեզի :

**29 - Ինչո՞ւ հաւատքին եւ գիտութեան միջեւ հակասութիւն չկայ:**

159 Նոյնիսկ եթէ հաւատքը կը գերազանցէ մարդու բանականութիւնը, սակայն անոր եւ գիտութեան միջեւ հակասութիւն երբեք տեղի պիտի չունենայ, որովհետեւ երկուքին ալ ծագումը Աստուած է: Մարդուն բանականութեան եւ հաւատքին լոյս հաղորդողը Ինք Աստուած է:

Հաւատա՛ հասկնալու համար, հասկցի՛ր հաւատալու համար (Մ. Օգոստինոս):

## ՄԵՆՔ ԿԸ ՀԱՌԱՏԱՆՔ

**30 - Ինչու՞ հաւատքը միանգամայն անձնական եւ եկեղեցային արարք մըն է:**

Հաւատքը անձնակա՛ն ներգործութիւն է, որովհետեւ ան 166-169  
մարդուն ազատ պատասխանն է Ինքզինքը մարդուն յայտ- 181  
նող Աստուծոյ: Բայց ան միանգամայն եկեղեցային ներգոր-  
ծութիւն մըն է, որ կ'արտայայտուի Հաւատքին դաւանու-  
մով: «Մենք կը Հաւատանք»: Իրականին մէջ Եկեղեցի՛ն է որ  
կը Հաւատայ: Այսպէս, Սուրբ Հոգիին շնորհքով, Եկեղեցի՛ն  
է որ մեզմէ իւրաքանչիւրին մէջ Հաւատքը կը կանխէ, զայն  
կը ծնի եւ կը սնուցանէ: Այս պատճառով՝ Եկեղեցին Մայր է  
եւ Ուսուցիչ:

Ո՛չ որ կրնայ Աստուած իբր Հայր ունենալ եթէ չունի  
Եկեղեցին իբր Մայր (Ս. Կիպրիանոս):

**31 - Ինչու՞ հաւատքին բանաձեւերը կարելոր են:**


Հաւատքին բանաձեւերը կարելոր են, որովհետեւ անոնք 170-171  
Հասարակաց լեզուի մը միջոցով՝ հնարաւոր կը դարձնեն  
Հաւատքի ճշմարտութիւնները արտայայտել, իւրացնել, տօ-  
նակատարել, ապա զանոնք ուրիշին հետ միատեղ ապրիլ:

**32 - Ի՞նչ նշանակութեամբ Եկեղեցւոյ հաւատքը միայատուկ է:**

Եկեղեցին թէեւ տարբեր լեզուի, մշակոյթի եւ սովորու- 172-175  
թիւններու պատկանող անձերէ բաղկացած է, սակայն ան 182  
միաձայնաբար կը դաւանի միայատուկ Հաւատքը, զոր ան  
նոյն Տիրոջմէ ստացած է եւ իրեն փոխանցուած է առաքե-  
լական Աւանդութեան միայատուկ ճամբով: Եկեղեցին մէ՛կ  
Աստուած կը դաւանի - Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի - եւ  
փրկութեան մէ՛կ ուղի կ'ուսուցանէ: Ահա թէ ինչո՞ւ, մենք  
մէ՛կ սիրտ մէ՛կ հոգի կազմած, կը Հաւատանք ի՛նչ որ  
Աստուծոյ գրաւոր թէ բերանացի Խօսքը կը բովանդակէ եւ  
ի՛նչ որ Եկեղեցին իբր աստուածային յայտնութիւն մեզի կը  
պարզէ:



**ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ**  
**ԴԱՒԱՆԱՆՔԸ**  
**ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՒԱՏՔԻՆ**



Հռոմի Ս. Կղեմէսի պապիլիքային այս հին խճանկարը կը պանծացնէ խաչին յաղթանակը, որ քրիստոնեայ հաւատքին կեդրոնական խորհուրդն է: Հոն կը նկատենք յորդառատ ճիւղարձակումով տունկ մը, որուն բունէն պտուղներ եւ ծաղիկներ ճիւղաւորուելով՝ կը տարածուին ամէն ուղղութեամբ: Այս տունկը իր կենսունակութիւնը կը քաղէ Յիսուսի խաչափայտէն, աղբիւր մարդոց եւ տիեզերքի վերածնունդին: Յիսուս նոր Ադամն է, որ իր չարչարանքին, մահուան ու յարութեան խորհուրդով, մարդիկը կը վերակենդանացնէ, զանոնք Հօր հետ հաշտեցնելով:

Տառապող Յիսուսին շուրջ գտնուող 12 աղանձները կը ներկայացնեն 12 առաքեալները: Խաչի ոտքին կեցած են Մարիամ եւ Յովհաննէս՝ սիրեցեալ աշակերտը: «Յիսուս, իր մօր կողքին տեսնելով այն աշակերտը գոր կը սիրէր, ըսաւ իր մօր, “Կի՛ն դու, հա՛մ, քու որդիդ”։ Ապա աշակերտին ըսաւ. “Ահա՛ քու մայրդ”։ Եւ այդ ժամէն սկսեալ, աշակերտը գինք իր քով առաւ» (Յովհ 19, 26-27):

Նկարին վերեւ՝ կը տեսնուի Հօր ձեռքը, որ փառքի պսակ մը կ'երկարէ իր Որդիին, որ իր գատկական խորհուրդին գօրութեամբ՝ կը յաղթահարէ մահը:

Տունկին ստորոտը՝ փոքր եղնիկ մը կը կռուի չարութեան օձին հետ: Փրկութեան ծառը ներկայացնող այս տունկէն կը բխի յորդահոս աղբիւր մը, որ ծնունդ կու տայ չորս առուակներու, խորհրդանիշ չորս աւետարանիչներուն, որոնցմէ հաւատացեալները ջուր կը խմեն ինչպէս եղնիկները՝ կենդանի ջուրի աղբիւրէն:

Ս. Կղեմէսի պապիլիքա (Հռոմ)- Սրբարանի խճանկար, 12րդ դար: (Մասնապատկեր. խաչը՝ կենաց ծառ):

## ՀԱՒԱՏԱՄՔԸ

### Հանգանակ Առաքեալներուն

Կը հաւատամ Աստուծոյ,  
Հայր Ամենակալ, Արարիչ  
երկինքի եւ երկրի:

Եւ Յիսուս Քրիստոսի,  
Անոր Միածին Որդին, մեր  
Տէրը,

Որ յղացաւ Սուրբ Հոգիէն,  
ծնաւ Կոյս Մարիամէն,

չարչարուեցաւ Պոնտոս Պի-  
ղատոսի օրով, խաչուեցաւ,  
մեռաւ եւ թաղուեցաւ,  
իջաւ դժոխք,

### Հանգանակ Նիկիոյ-Կոստանդնուպոլսոյ

Կը հաւատամ միայն մէկ  
Աստուծոյ, Հայր Ամենակալ,  
Արարիչ երկինքի եւ երկրի,  
տեսանելի եւ անտեսանելի  
տիեզերքին:

Կը հաւատամ միայն մէկ  
Տիրոջ, Յիսուս Քրիստոսի,  
Միածին Որդի Աստուծոյ,  
ծնած Հօրմէ բոլոր դարե-  
րէն առաջ, Լոյս՝ ծնած Լոյ-  
սէն, Աստուած ճշմարիտ՝  
ծնած ճշմարիտ Աստուծմէ,  
ծնունդ եւ ոչ արարած. նոյն  
ինքն համագոյակից է Հօր,  
եւ ամէն ինչ Անով եղաւ.

Մեզի՝ մարդոց եւ մեր  
փրկութեան համար Ան  
իջաւ երկինքէն, մարմնա-  
ցաւ Կոյս Մարիամէն Սուրբ  
Հոգիով եւ մարդացաւ,

մեզի համար խաչուեցաւ Պոն-  
տոս Պիղատոսի օրով, չար-  
չարուեցաւ եւ թաղուեցաւ,

երրորդ օրը յարեալ մե-  
ռելներէն,  
ելաւ երկինք, նստաւ աջ  
կողմն Աստուծոյ Հօր Ամե-  
նակալի,  
ուրկէ պիտի դայ դատե-  
լու կենդանիներն ու մեռ-  
եալները:

Կը հաւատամ Սուրբ Հո-  
գիին,

Սուրբ Կաթողիկէ Եկեղեց-  
ւոյ եւ սուրբերուն հաղոր-  
դութեան,

մեղքերուն թողութեան,

մարմինին յարութեան,  
յաւիտենական կեանքին :

Ամէն :

երրորդ օրն Ան յարեալ  
ըստ Գիրքին,  
ելաւ երկինք  
նստաւ Հօր աջ կողմը,

Ան պիտի դայ փառքով դա-  
տելու համար կենդանիներն  
ու մեռեալները եւ անոր թա-  
գաւորութիւնը վախճան  
պիտի չունենայ:

Կը հաւատամ Սուրբ Հո-  
գիին, Որ Տէր է եւ կենդա-  
նարար, որ կը բխի Հօրմէն  
եւ Որդիէն, Հօր եւ Որդիին  
հետ կ'ընդունի նոյն երկըր-  
պագութիւնը եւ փառքը, որ  
խօսեցաւ մարգարէներով:

Կը հաւատամ նաեւ Մէկ,  
Սուրբ, Կաթողիկէ եւ Առա-  
քելական Եկեղեցւոյ:

Կը հաւատամ միայն մէկ  
Մկրտութեան, մեղքերուն  
թողութեան համար: Կը  
սպասեմ մեռեալներուն յա-  
րութեան եւ կեանքին՝ հան-  
դերձեալ աշխարհին:

Ամէն :

## ԳԼՈՒԽ Ա.

## ԿԸ ՀԱՒԱՏԱՄ ՀՕՐ ԱՍՏՈՒԾՈՅ

## Հաւատքի Հանգանակները

## 33 - Ի՞նչ են հաւատքի Հանգանակները:

Հաւատքի Հանգանակները կազմաւորական բանաձե- 185-188  
ւումներ են: Կը կոչուին նաեւ «Հաւատոյ դաւանութիւն» 192, 197  
կամ «Հաւատամք», որոնց միջոցով Եկեղեցին իր  
հիմնադրութենէն սկսեալ՝ իր հաւատքը համադրուած  
ձեւով բանաձեւելէ ետք, զայն իր բոլոր հաւատացեալ-  
ներուն փոխանցած է օրինադրիչ եւ ամէնուն հասարակ  
եղող լեզուով:

## 34 - Որո՞նք են հաւատքի հնագոյն Հանգանակները:

Անոնք «մկրտական» Հանգանակներն են: Քանի որ 189-191  
Մկրտութիւնը կը մատակարարուի «Հօր, Որդիին եւ Սուրբ  
Հոգիին անունով» (Մտք 28, 19), հոն դաւանուած հաւատքի  
ճշմարտութիւններն ալ կը յօդաւորուին Սուրբ  
Երրորդութեան երեք Անձերուն, Անոնց ունեցած  
յարակցութեան համեմատ:

## 35 - Որո՞նք են հաւատքին կարեւորագոյն Հանգանակները:

Մին՝ Առաքեալներուն Հանգանակն է, որ Հռոմի Եկե- 193-195  
ղեցւոյ գործածած մկրտական հին Հանգանակն է: Իսկ  
միւսը՝ Նիկիոյ (325) եւ Կոստանդնուպոլսոյ (381) տիեզերա-  
կան առաջին երկու Ժողովներուն մշակած Հանգանակներն  
են: Անոնք այսօր եւս հասարակաց են Արեւելքի եւ Արեւ-  
մուտքի բոլոր մեծ Եկեղեցիներուն մօտ:

**«ԿՐ ՀԱՒԱՏԱՄ ԱՍՏՈՒԾՈՅ,  
ՀՕՐ ԱՍԵՆԱԿԱԼԻՆ,  
ԱՐԱՐԻՉ ԵՐԿԻՆՔԻ ԵՒ ԵՐԿՐԻ»:**

**36 - Ինչու՞ հաւատոյ դաւանանքը կը սկսի «Կը հաւատամ Աստուծոյ» բառերով:**

198-199 *Որովհետեւ «Կը հաւատամ Աստուծոյ» դաւանութիւնը՝ ամենակարեւորն է եւ ակնադբիւրն է մարդուն եւ աշխարհին, ինչպէս նաեւ Աստուծոյ հաւատացողներուն ամբողջ կեանքին հայող միւս բոլոր՝ ճշմարտութիւններուն :*

**37 - Ինչու՞ մէկ Աստուած կը դաւանինք:**

200-202 *Որովհետեւ Աստուած Իսրայէլի ժողովուրդին իբր Մէկ*  
228 *Աստուած յայտնուեցաւ, երբ ըսաւ. «Լսէ՛, Իսրայէլ, մեր Տէր Աստուածը Մէկ է» (Բ Օր 6, 4): «Ուրիշ մը չկա՛յ» (Ես 45, 22): Յիսուս եւս նոյնը հաստատեց. «Միա՛կ Տէրը» Աստուած է (Մրկ 12, 29): Յիսուսը եւ Սուրբ Հոգին իբր Աստուած եւ Տէր դաւանիլը՝ ո՛չ մէկ բաժանում կը ներմուծէ Միա՛կ Աստուծոյ մէջ:*

**38 - Աստուած Ինքզինք ի՞նչ անունով յայտնեց:**

203-205 *Աստուած Ինքզինք յայտնեց որպէս ապրող ու կենդանի*  
230-231 *Աստուած. «Աստուած Աբրահամի, Աստուած Իսահակի, Աստուած Յակոբի» (Ելք 3, 6): Իր խորհրդաւոր անունն ալ յայտնեց. «Ես եմ Ան որ է» (ԵԱՀՎԷ): Հին Կտակարանին ժամանակէն իսկ՝ Աստուծոյ անպատում անունը փոխարինուեցաւ «Տէր» կոչումով: Նոր Կտակարանին մէջ եւս՝ Յիսուս «Տէր» անունի տակ՝ Ինքզինք իբր ճշմարիտ Աստուած կը յայտնէ:*

**39 - Միայն Աստուած «Է»:**

212-213 *Մինչ արարածները ինչ որ են եւ ինչ որ ունին՝ Աստուծմէ ստացած են, միայն Աստուած Ինքնիր մէջ ունի լինելու-թեան եւ բոլոր կատարելութիւններուն լիութիւնը. Ինքն է*

«Ան որ է», անսկիզբ եւ անվախճան: Յիսուս կը յայտնէ թէ Ինք եւս կը կրէ աստուածային «ես եմ» Անունը (Յովի 8, 28):

#### 40 - Ինչու՞ Աստուծոյ անունին յայտնութիւնը կարեւոր է:

Աստուած Իր Անունին յայտնութեան միջոցով՝ կը 206-213  
գիտցնէ Իր անպատում խորհուրդին բովանդակած հարը-  
տութիւնները: Ինքն է որ միշտ կայ ու ցմիշտ է, Ինքն է որ  
վերանցապէս կը գերազանցէ աշխարհը եւ պատմութիւնը:  
Ինք ստեղծեց երկինքն ու երկիրը: Ինք հաւատարիմ Աստ-  
ւած է, Իր ժողովուրդին միշտ մերձ՝ զայն փրկելու համար:  
Ինք սրբութիւնն իսկ է, «գթութեամբ հարուստ» (Եփս 2,  
4), պատրաստ՝ միշտ ներելու: Ինք անմարմնական, վերան-  
ցական, ամենակարող, ինքնագոյ, կատարեալ էակն է:  
Ինքն է ճշմարտութիւնն ու սէրը:

Աստուած անհումօրէն կատարեալ էակն է, որ Սուրբ  
Երրորդութիւնն է ( Ս. Թորիպիոյ Մոկրովեխացի):

#### 41 - Ի՞նչ իմաստով Աստուած ճշմարտութիւնն է:

Աստուած ճշմարտութիւնն իսկ է եւ որպէս այդ՝ Ան ո՛չ 214-217  
կը սխալի, ո՛չ ալ կը սխալեցնէ: Ան «լոյս է եւ Անոր մէջ 231  
խաւար չկայ» (Ա Յովի 1, 5): Աստուծոյ յաւիտենական Որ-  
դին՝ մարմնացեալ Իմաստութիւնը աշխարհ զրկուեցաւ  
«ճշմարտութեան վկայելու համար» (Յովի 18, 37):

#### 42 - Աստուած ի՞նչ ձեւով կը յայտնէ, թէ Ինք սէր է:

Աստուած Ինքզինք Իսրայէլի յայտնեց որպէս մէկը, որուն 218-221  
սէրը աւելի սաստիկ է քան հօր մը կամ մօր մը ունեցած  
սէրը իրենց զաւակներուն հանդէպ: Աստուած Ինքնիր մէջ  
«սէր է» (Ա Յովի 4, 8. 16), Ինքզինք կու տայ ամբողջովին եւ  
ձրիօրէն: Ան «այնքան սիրեց աշխարհը որ Իր միածին Որդին  
տուաւ (...), որպէսզի աշխարհը Անով փրկուի» (Յովի 3, 16-  
17): Աստուած Իր Որդին եւ Սուրբ Հոգին ուղարկելով՝  
յայտնեց թէ Ինք սիրոյ յաւերժական փոխանակում մըն է:

**43 - ՄԷԼ ԼԱՍՏՈՒԾՈՅ ԽԱՆԱՏԱՅԸ Ի՞ՆՉ ԿՐ ՈՇԱՆԱԿԷ:**

222-227 *ՄԷԼ ԼԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՆԱՏԱՅԸ՝ ԱՆՈՐ մեծութիւնն ու մեծ-*  
 229 *վայելչութիւնը ճանչնալ է, Իրեն շնորհակալ ըլլալով ապրիլ*  
*է, նոյնիսկ մեր ձախորդութիւններուն մէջ Անոր վստահիլ*  
*է, Իր պատկերին համեմատ ստեղծուած մարդոց միու-*  
*թիւնն եւ իսկական արժանապատուութիւնը ճանչնալ է,*  
*Անոր արարածները ուղիղ ձեւով գործածել է:*

**44 - Ո՞ՐՆ Է ԽԱՆԱՏՔԻՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷԱՎԱՅԷԼ ԿԵԱՆՔԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐԻՈՐԴ:**

232-237 *Հաւատքին եւ քրիստոնեայ կեանքին կեդրոնական*  
*խորհուրդը Սուրբ Երրորդութեան Խորհուրդն է: Քրիստո-*  
*նեաները կը մկրտուին Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին*  
*անունով:*

**45 - ԿԱՐԵՒԻ՞ Է ՍՈՒՐԵ ԵՐՐՈՐԴՈՒՅԵԱՆ ԽՈՐԻՈՐԴ ԽԱՍԿՆԱՎ ՄԻԱՅԻՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲԱՆԱԿԱՆՈՒՅԵԱՆ ՈՒԾՈՎ:**

237 *Աստուած Իր երբեակ էութեան հետքերը դրոշմեց արար-*  
*չութեան եւ Հին Կտակարանին մէջ: Սակայն նախ քան Աստ-*  
*ւածորդւոյն մարդեղութիւնը եւ Սուրբ Հոգիին առաքումը՝*  
*Սուրբ Երրորդական Էութեան խորութիւնը անմատչելի*  
*խորհուրդ կը մնայ լոկ մարդկային ուղեղին համար, եւ*  
*նոյնիսկ Իսրայէլի հաւատքին համար Աստուածորդւոյն*  
*Մարդեղութենէն եւ Սուրբ Հոգիին առաքումէն առաջ:*  
*Սոյն խորհուրդը Յիսուս Քրիստոսով յայտնուեցաւ ու միւս*  
*բոլոր խորհուրդներուն ակնադբիւրը կը մնայ:*

**46 - ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ Ի՞ՆՉ յԱՅՄՆԵՑ ՀՕՐ ԽՈՐԻՈՐԴՈՒՆ ԶՈՐԶ :**

240-242 *Յիսուս Քրիստոս մեզի յայտնեց, թէ Աստուած «Հայր» է,*  
*ո՛չ միայն որովհետեւ Ան տիեզերքին եւ մարդուն Արարիչն*  
*է, այլ յատկապէս որովհետեւ Ան Իր ծոցին մէջ յաւիտենա-*  
*պէս Որդին կը ծնի, որ Իր Բանն է, «պաշտառութիւնը Իր*  
*փառքին, պատկերը Իր էութեան» (Եբր 1, 3):*

**47 - Ո՞վ է Սուրբ Հոգին, զոր Յիսուս Քրիստոս մեզի յայտնեց:**

*Սուրբ Հոգին Սուրբ Երրորդութեան երրորդ Անձն է: Ան 243-248*  
*Աստուած է, միացած Հօր եւ Որդիին եւ Անոնց համա-*  
*հաւասար: Ան «Հօրմէ կը բխի» (Յովհ 15, 26): Ան որպէս*  
*անսկիզբ նախասկիզբ՝ Սուրբ Երրորդութեան համակ*  
*կեանքին ծագումն է: Ան կը բխի նաեւ Որդիէն (եւ յՈրդւոյ),*  
*Հօր կողմէ Իր Որդիին կատարած յաւիտեական ընծայու-*  
*մին: Հօր եւ մարդացեալ Որդիին կողմէ առաքուած Սուրբ*  
*Հոգին Եկեղեցին կ'առաջնորդէ դէպի ճանաչումը «ամ-*  
*բողջական ծշմարտութեան» (Յովհ 16, 13):*

**48 - Եկեղեցին ի՞նչ ձեւով կ'արտայայտէ իր Սուրբ երրորդութեանական հաւատքը:**

*Եկեղեցին Սուրբ Երրորդութեան հանդէպ իր հաւատքը 249-256*  
*կ'արտայայտէ դաւանելով մէկ Աստուած երեք Անձերով. 266*  
*Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի: Աստուածային այս երեք*  
*Անձերը մէկ Աստուած են, որովհետեւ Անոնցմէ իւրաքան-*  
*չիւրը աստուածային բնութեան միա՛կ եւ անբաժանելի՛*  
*լիութեամբ նո՛յնն է: Անոնք իրարմէ իսկապէս կը*  
*զանազանուին Ձիրենք Իրարու առնչող յարաբերութիւն-*  
*ներուն միջոցով: Հայրը կը ծնի Որդին, Որդին ծնունդ*  
*կ'առնէ Հօրմէն, իսկ Սուրբ Հոգին՝ կը բխի Հօրմէն եւ*  
*Որդիէն:*

**49 - Աստուածային երեք Անձերը ինչպե՞ս կը գործեն:**

*Աստուածային երեք Անձերը, որոնք Իրարմէ անբաժան 257-260*  
*են Իրենց համանոյն բնութեան մէջ, անբաժան են նաեւ 267*  
*Իրենց արարքներուն մէջ: Սուրբ Երրորդութիւնը մի եւ*  
*նոյն գործերը կը կատարէ, բայց աստուածային այս*  
*համանոյն արարքներուն մէջ՝ իւրաքանչիւր Անձ ներկայ է*  
*լստ այն կերպին, որ Երրորդութեան մէջ Իրեն յատուկ է:*

Ո՛վ Աստուած իմ, Երրորդութիւն՝ գոր կը պաշտեմ... խաղաղութիւն հոգիս: Չայն Քու երկինքդ ըրէ՛, Քու սիրած բնակարանդ եւ Քու հանգստավայրդ ըրէ՛, ուր Քեզ երբեք առանձին չթողում, այլ հոն ըլլամ ամբողջովին, հաւատքիս մէջ արթուն, միշտ պաշտող եւ ինքզինքս ամբողջովին յանձնած Քու արարչագործ ներգործութեանդ (Երանուհի Եղիսաբէթ Ս. Երրորդութեան):

## 50 - Ի՞նչ կը նշանակէ Աստուած ամենակարող է :

268-278

*Աստուած Ինքզինք յայտնեց որպէս Ան որ «կարող է եւ հզօր» (Սղմ 23 [24], 8), որպէս մէկը՝ որուն համար «անկարելի բան չկայ» (Ղուկ 1, 37): Անոր ամենակարողութիւնը տիեզերական է, խորհրդասքօղ: Անոր ամենակարողութիւնը կը յայտնուի աշխարհը ստեղծելով ոչինչէն, մարդն ալ սիրելէն: Բայց Ան կը յայտնուի յատկապէս Իր Որդիին մարդեղութեամբ ու յարութեամբ, մարդուն որդեգրութեամբ եւ մեղքերուն թողութեամբ: Այս պատճառով Եկեղեցին իր աղօթքները կ'ողղէ «Ամենակարող եւ Յաւիտեանական Աստուծոյ»:*

## 51 - Ինչու՞ կարելոր է հաւատալ, թէ «Աստուած սկիզբէն երկինքն ու երկիրը ստեղծեց» (Ծնդ 1, 1):

279-289

315

*Որովհետեւ ստեղծագործութիւնը հիմնական է աստուածային միւս բոլոր՝ ծրագիրներուն: Ստեղծագործութիւնը Աստուծոյ ամենակարող եւ իմաստուն սիրոյն դրսեւորումն է: Անիկա նախաքայլն է միա՛կ Աստուծոյ կողմէ Իր ժողովուրդին հետ կնքած Ուխտին: Ան սկզբնաւորութիւնն է փրկութեան պատմութեան, որ Քրիստոսով իր զագաթնակէտին կը հասնի: Ան մարդուս առաջնե՛կ պատասխանն է իր ծագումին եւ վախճանին հիմնահարցերուն:*

**52 - Ո՞վ ստեղծեց աշխարհը:**

Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին աշխարհի միակ եւ ան- 290-292  
բաժանելի սկիզբն են, նոյնիսկ եթէ արարչագործութիւնը 316  
յատկապէս Հօր Աստուծոյ վերագրուած է:

**53 - Աստուած աշխարհը ինչու՞ ստեղծեց:**

Աշխարհը ստեղծուեցաւ Աստուծոյ փառքին համար, Ան 293-294  
ուզեց այսպէս մարդուն յայտնել եւ հաղորդել Իր բարու- 319  
թիւնը, Իր ճշմարտութիւնը եւ Իր գեղեցկութիւնը: Արար-  
չագործութեան վախճանական նպատակը այն է, որ Աստ-  
ուած Քրիստոսով ըլլայ «ամէն ինչ ամէնուն մէջ» (Ա Կոր 15,  
28), եւ ասիկա Իր փառքին եւ մեր երջանկութեան համար:

Աստուծոյ փառքը՝ կենդանի մարդն է, իսկ մարդուն  
կեանքը՝ Աստուծոյ տեսութիւնն է» (Մ. Երանոս):

**54 - Աստուած տիեզերքը ինչպե՞ս ստեղծեց:**

Աստուած տիեզերքը Իր ազատ կամքով, իմաստութեամբ 295-301  
եւ սիրով ստեղծեց: Աշխարհը անհրաժեշտութեան մը, կոյր 317-320  
ճակատագրի մը, կամ պատահականութեան մը արդիւնքը  
չէ: Աստուած աշխարհը «ոյինչէն» (Բ Մակ 7, 28), կարգա-  
պահ եւ բարի ստեղծեց: Աստուած աշխարհէն անհունօրէն  
վերանցական կը մնայ: Աստուած Իր արարչութիւնը Իր լի-  
նելութեան մէջ կը պահպանէ եւ անոր նեցուկ կը կանգնի,  
Իր գործելու կարողութիւնը անոր փոխանցելով եւ Իր Որդի-  
ին եւ Սուրբ Հոգիին միջոցով՝ զայն իր վախճանին  
հասցնելով:

**55 - Աստուածային Նախախնամութիւնը ի՞նչ է:**

Աստուածային Նախախնամութիւնը ամբողջութիւնն է 302-306  
այն կարգաւորութիւններուն, որոնց շնորհիւ Աստուած Իր 321  
արարածները կ'առաջնորդէ դէպի վերջնագոյն կատարելու-  
թիւնը, որուն համար զանոնք կանչած է: Աստուած թէեւ

Ի՛նքն է Իր ծրագրին գերագոյն հեղինակը, սակայն անոր գործադրութեան համար նաեւ Իր արարածներուն օժանդակութիւնը կ'օգտագործէ: Անոնց միանգամայն կը հաղորդէ արժանապատուութիւնը ինքնակամ գործելու եւ իրարու փոխադարձ պատճառ ըլլալու:

**56 - Մարդս ի՞նչ ձեւով աստուածային Նախախնամութեան հետ կը գործակցի:**

307-308 *Աստուած, մարդուն ազատութիւնը յարգելով հանդերձ՝*  
323 *թէ՛ կ'օգնէ անոր թէ՛ ալ կը խնդրէ անկէ որ Իր գործակիցն ըլլայ իր գործերով, իր աղօթքներով ու նաեւ իր տառապանքներով, մարդուն մէջ արծարծելով «ուզելն ու գործելը ի սպաս Իր բարեխնամ ծրագրերներուն» (Փիլ 2, 13):*

**57 - Եթէ Աստուած ամենակարող զօրութիւն եւ նախախնամութիւն է, ինչու՞ չարը գոյութիւն ունի:**

309-310 *Այս ցաւագին եւ միանգամայն խորհրդասքօղ հարցու-*  
324, 400 *մին պատասխանը միայն քրիստոնեայ հաւատքին ամբողջութիւնը կրնայ տալ: Աստուած ո՛չ մէկ ձեւով, ո՛չ ուղղակիօրէն ո՛չ ալ անուղղակիօրէն չարին պատճառն է: Ան չարին խորհուրդը կը լուսաբանէ Իր Որդիին Յիսուսի միջոցով, որ մեռաւ ու յարեաւ որպէսզի յաղթէ բարոյական մեծ չարիքին, այսինքն մարդոց գործած մեղքին, արմատ միւս բոլոր չարիքներուն:*

**58 - Աստուած ինչու՞ չարիքը թոյլ կու տայ:**

311-314 *Հաւատքը կը հաւաստիացնէ մեզ, թէ Աստուած չարիքը*  
324 *թոյլ պիտի չտար եթէ չարիքէն բարիք դուրս չգար: Աստուած ասիկա արդէն հրաշալիօրէն կատարեց Քրիստոսի մահով եւ յարութեամբ: Արդարեւ բարոյական մեծագոյն չարիքէն, որ Իր Որդիին մա՛հն էր, Ան մեծագոյն բարիքները քաղեց, այսինքն՝ Քրիստոսը փառաւորեց եւ մեզ փրկագործեց:*

## Երկինքը եւ Երկիրը

## 59 - Աստուած ի՞նչը ստեղծեց:

*Ս. Գիրքը կ'ըսէ. «Սկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց» (Ծնդ 1, 1): Եկեղեցին ալ իր հաւատոյ դաւանանքին մէջ կը հռչակէ, թէ Աստուած է ստեղծիչը տեսանելի եւ անտեսանելի ամէն բանի, անմարմին եւ նիւթական բոլոր էակներուն, այսինքն՝ հրեշտակներուն, տեսանելի աշխարհին եւ յատուկէն մարդուն:* 325-327

## 60 - Հրեշտակները ի՞նչ են:

*Հրեշտակները ամբողջովին հոգեղէն, անմարմին, անտեսանելի եւ անմահ արարածներ են: Անոնք խելքով եւ կամքով օժտուած անձնաւոր էակներ են: Անոնք Աստուծոյ տեսութիւնը դէմ առ դէմ վայելելով, Աստուած կը փառաբանեն եւ Անոր կը սպասաւորեն: Անոնք բոլոր մարդոց փրկութեան գործին մէջ Աստուծոյ պատգամաբերներն են:* 328-333 350-351

## 61 - Հրեշտակները Եկեղեցւոյ կեանքին մէջ ի՞նչ ձեւով առկա չեն:

*Եկեղեցին հրեշտակներուն կը միանայ՝ զԱստուած պաշտելու համար. անոնց օժանդակութիւնը կը հայցէ եւ իր ծիսակատարումին միջոցին՝ անոնցմէ ոմանց յիշատակութիւնը կը կատարէ:* 334-336 352

Իւրաքանչիւր հաւատացեալ իր կողքին հրեշտակ մը ունի իբր պաշտպան եւ հովիւ, որպէսզի անոր դէպի կեանք առաջնորդէ (*Ս. Բարսեղ Կեսարացի*):

**62 - Սուրբ Գիրքը ի՞նչ կ'ուսուցանե տեսանելի աշխարհին ստեղծագործութեան մասին:**

337-344 Արարչագործութեան նուիրուած «եօթը օրերու»ն էջերուն ընդմէջէն՝ Սուրբ Գիրքը մեզի ճանչցնել կու տայ ստեղծագործութեան արժէքը, ինչպէս նաեւ անոր նպատակը, որ կը կայանայ զԱստուած գովաբանելու ու մարդուն օգտակար ըլլալու մէջ: Ամէն էակ իր գոյութիւնը Աստուծոյ կը պարտի եւ Անկէ կը ստանայ իր լաւութիւնը, կատարելութիւնը, իր օրէնքներն եւ տիեզերքին մէջ իր գրաւելիք տեղը:

**63 - Արարչագործութեան մէջ մարդուն տեղը ու՞ր է:**

343-344 Մարդը տեսանելի արարչութեան գազաթնակէտն է, քանի որ Աստուծոյ պատկերին եւ նմանութեան համեմատ ստեղծուած է:

**64 - Արարածներուն միջեւ ի՞նչ զօդ գոյութիւն ունի:**

342 Արարածներուն միջեւ գոյութիւն ունին Աստուծմէ  
354 ուղղուած փոխ-առնչուածութիւն մը եւ նուիրակարգ մը: Գոյութիւն ունին նաեւ միութիւն մը եւ զօրակցութիւն մը անոնց միջեւ, քանի որ արարածները նոյն Արարիչն ունին, Որուն կողմէ բոլորն ալ սիրուած են եւ Անոր փառքին համար կարգաւորուած են: Հետեւաբար արարչութեան մէջ ներգոյ օրէնքները եւ իրականութիւններուն էութենէն բխող յարաբերութիւնները յարգելը՝ սկիզբն է իմաստութեան եւ հիմը բարոյականին:

**65 - Ի՞նչ առնչութիւն կայ արարչագործութեան եւ փրկագործութեան միջեւ:**

345-349 Արարչագործութիւնը իր գազաթնակէտին կը հասնի աւելի՛ մեծ արարքով մը, որ փրկագործութիւնն է: Ան ելակէտն է նոր արարչագործութեան մը, որուն մէջ ամէն ինչ՝ իր ամբողջական նշանակութիւնն ու իր լրումը պիտի գտնէ:

## Մարդը

**66 - Ի՞նչ իմաստով մարդը «Աստուծոյ պատկերին համեմատ» ստեղծուած է:**

*Մարդը Աստուծոյ պատկերին համեմատ ստեղծուած է, որ կը նշանակէ թէ մարդը ատակ է իր Ստեղծիչը ճանչնալու եւ զայն ազատակամօրէն սիրելու: Ա՛յն է երկրիս միա՛կ արարածը զոր Աստուած ինքնիր համար ուզեց ու ճանաչումի եւ սիրոյ ճամբով՝ զայն իր աստուածային կեանքին մասնակցելու կանչեց: Մարդը ըստ Աստուծոյ պատկերին ստեղծուած ըլլալուն համար՝ անձ ըլլալու արժանապատուութիւնը կը վայելէ: Մարդը առարկայ մը չէ, այլ մէ՛կը, որ կարող է ինքզինք ճանչնալ, ինքզինք ազատակամօրէն նուիրել եւ Աստուծոյ եւ ուրիշին հետ հաղորդակցութիւն հաստատել:* 355-358

**67 - Աստուած մարդը ի՞նչ նպատակի համար ստեղծեց:**

*Աստուած ամէ՛ն ինչ մարդուն համար ստեղծեց, իսկ մարդը ստեղծուեցաւ՝ որպէսզի զԱստուած ճանչնայ, Անոր ծառայէ, Զայն սիրէ, այս աշխարհիս մէջ՝ արարածները Անոր նուիրէ իբր գոհաբանութիւն, իսկ երկինքի մէջ Աստուծոյ կեանքին արժանանայ: Մարդուն խորհուրդը իր իսկական լուսաւորումը կը գտնէ միայն մարմնացեալ Բանին խորհուրդին մէջ: Մարդը նախասահմանուած է իր մէջ վերարտադրելու Աստուծոյ մարդացեալ Որդիին պատկերը, որ նոյնինքն «անտեսանելի Աստուծոյ կատարեալ պատկերն է» (Կող 1, 15): 358-359 381*

**68 - Ինչո՞ւ մարդիկը միութիւն մը կը կազմեն:**

*Բոլոր մարդիկը, Աստուծմէ ընդունած իրենց հասարակաց ծագումին պատճառով՝ մարդկային մէ՛կ ցեղ կը կազմեն: Առաւել՝ Աստուած «մէկ մարդէն բոլոր ազգերը ստեղծեց» (Գործ 17, 26): Բոլորը՝ մէկ ու միակ Փրկիչը 360-361*

ուներին: Բոլորն ալ կանչուած են Աստուծոյ երանաւէտ յաւիտենականութեան բաժնեկից ըլլալու:

**69 - Ինչպէ՞ս հոգին եւ մարմինը մարդուն մէջ մէկ էութիւն կը կազմեն:**

362-365 *Մարդկային անձը՝ թէ՛ մարմնաւոր թէ՛ հոգեւոր էակ մըն է: Մարդուն մէջ հոգին եւ մարմինը մէկ բնութիւն կը կազմեն: Այս միութիւնը այնքան խոր է, որ շնորհիւ հոգիին հոգեւոր բնոյթին՝ մարմինն անգամ որ նիւթական է, կը դառնայ մարդկային եւ կենդանի մարմին եւ կը մասնակցի Աստուծոյ պատկերին արժանապատուութեան:*

**70 - Մարդուն հոգին ո՞վ կու տայ:**

362-365 *Մարդուն աննիւթական հոգին անոր ծնողներէն չի գար, այլ ուղղակիօրէն Աստուծմէ կը ստեղծուի եւ անմահ է:*  
 366-368 *Հոգին, մարմինէն մահով անջատուելէն ետք, չի մեռնիր: Ան պիտի վերամիանայ մարմինին վերջին յարութեան պահուն:*

**71 - Աստուած մարդուն եւ կնոջ միջեւ ի՞նչ կապակցութիւն ստեղծեց:**

369-373 *Մարդն ու կինը Աստուծմէ ստեղծուեցան համահաւա-*  
 383 *սար արժանաւորութեամբ՝ որպէս մարդկային անձեր, ինչ-*  
*պէս նաեւ զիրար փոխադարձաբար ամբողջացնողներ՝*  
*որպէս այր եւ կին: Աստուած զանոնք մին միւսին համար*  
*կամեցաւ, անձերու փոխադարձ հաղորդութեամբ: Անոնք*  
*կանչուած են նաեւ մարդկային կեանքը միասնաբար*  
*փոխանցելու, ամուսնութեան միջոցով կազմելով «մէկ*  
*մարմին» (Մատթ. 2, 24) եւ երկրին տիրելու որպէս Աստուծոյ*  
*«տնտեսներ»:*

**72 - Ի՞նչ էր մարդուն սկզբնական գոյավիճակը ըստ Աստուծոյ ծրագրին:**

374-379 *Աստուած այրն ու կինը երբ ստեղծեց, զանոնք իր իսկ*  
 384 *աստուածային կեանքին յատուկ կերպով մասնակից դար-*

ձուց, սրբութեան եւ արդարութեան ճամբով: Ըստ Աստուծոյ նախածրագրին, մարդը ո՛չ չարչարուելու էր, ո՛չ ալ նաեւ, մեռնելու էր: Նաեւ, Մարդուն մէջ կատարեալ ներդաշնակութիւն կը տիրէր, նախ ինքնիր անձին մէջ, ապա Արարիչին եւ արարածին միջեւ, ապա այր մարդուն եւ կնոջ միջեւ, ինչպէս նաեւ առաջին մարդկային զոյգին եւ ամբողջ արարչութեան միջեւ:

### Մեղանշումը

#### 73 - Ինչպէ՞ս ըմբռնել մեղքի իրականութիւնը:

Մեղքը ներգոյ է մարդկային պատմութեան մէջ: Նման իրականութիւն մը լման կը բացայայտուի միայն աստուածային Յայտնութեան եւ յատկապէս Ամենափրկիչ Քրիստոսի լոյսին տակ, որ շնորհքը բազմառատ դարձուց հոն ուր մեղքը առատացած էր:

385-389

#### 74 - Ի՞նչ է հրեշտակներուն մեղանշումը:

Այս ասոյթով կ'ուզենք նշանակել թէ Սատանան եւ միւս դեւերը, որոնց մասին Սուրբ Գիրքն ու Եկեղեցւոյ Աւանդութիւնը կը խօսին, մինչ Աստուծոյ կողմէ բարի հրեշտակներ ստեղծուած էին, չար հոգիներ դարձան երբ իրենց ազատ եւ անյետադարձ որոշումով՝ մերժեցին զԱստուած եւ անոր Թագաւորութիւնը եւ այսպէս դժոխքին սկիզբ տուին: Անոնք այժմ կը փորձեն մարդը իրենց ըմբոստութեան ընկերակից դարձնել, բայց Աստուած Չարին դէմ իր ապահով յաղթանակը կը հաստատէ Քրիստոսի միջոցով:

391-395

414

#### 75 - Ի՞նչ բանի մէջ կը կայանայ մարդուն առաջին մեղքը:

Մարդը սատանայէն փորձուելով՝ թողուց որ իր սրտին մէջ մարի այն վստահութիւնը որ ունէր Արարչին նկատմամբ իր յարաբերութիւններուն մէջ: Ան, մերժելով Աստուծոյ հնազանդիլ՝ ուզեց «Աստուծոյ պէս» դառնալ,

396-403

415-417

մնալ առանց Աստուծոյ քան թէ Աստուծոյ համեմատ: (Մնդ 3, 5): Եւ այսպէս Ադամ եւ Եւա սկզբնական սրբութեան շնորհքը եւ արդարութիւնը խսկոյն կորսնցուցին թէ՛ իրենց եւ թէ՛ իրենց սերունդին համար:

#### 76 - Ի՞նչ է սկզբնական մեղքը:

404 Սկզբնական մեղքը, որուն մէջ բոլոր մարդիկը կը ծնին,  
419 սկզբնական սրբութենէն եւ արդարութենէն զրկուածութեան վիճակն է: Այս մեզի «փոխանցուած» է եւ ո՛չ թէ մեր կողմէ «գործուած»: մեղք մըն է ան մեր ծագումին հետ առնչուած եւ ո՛չ թէ անձնական արարք: Մարդկային ցեղին սկզբնական միաւորութեան պատճառով, այս մեղքը մարդկային բնութեան հետ կը փոխանցուի Ադամի սերունդներուն, «ո՛չ նմանողութեամբ, այլ փոխանցումով»: Այս հաղորդումը խորհուրդ մըն է, զոր չենք կրնար լման ըմբռնել:

#### 77 - Որո՞նք են սկզբնական մեղքին պատճառած միւս հետեւանքները:

405-409 Սկզբնական մեղքին հետեւանքով, մարդկային բնութիւնը առանց լման ապականելու՝ խոցուած է իր բնական ուժերուն մէջ եւ ենթարկուած է տգիտութեան, տառապանքի, մահուան իշխանութեան եւ հակամէտ՝ մեղքին: Այս հակամէտութիւնը ցանկասիրութիւն կը կոչուի:

#### 78 - Աստուած ի՞նչ ըրաւ՝ գործուած առաջին մեղքին դիմաց:

410-412 Առաջին մեղքէն ետք, աշխարհը մեղքերով համակուեցաւ:  
420 Բայց Աստուած մարդը մահուան տիրապետութեան չընեց: Ընդհակառակը, Ան խորհրդապօղ կերպով յայտնեց, - «Նախաւետարանին» մէջ (Մնդ 3, 15) - թէ չարը պիտի յաղթահարուի եւ մարդը իր անկումէն պիտի վերականգնի: Ասիկա փրկագործ Մեսիային մասին առաջին աւետումը եղաւ եւ այս պատճառով մարդուն անկումը նոյնիսկ «եռջանիկ յանցանք» որակուեցաւ, քանի որ մարդը

«այսպիսի մեծ Փրկագործի մը արժանացաւ» (Զատկուայ Ճրագալոյցի լատին ծիսակատարում):

### ԳԼՈՒԽ Բ

## «ԿԸ ՀԱՒԱՏԱՄ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԻԱԾԻՆ ՈՐԴԻՒՆ»

**79 - Ի՞նչ է Բարի Լուրը մարդուն համար:**

Բարի Լուրը Յիսուս Քրիստոսի, «կենդանի Աստուծոյ 422-424  
Որդի»ին աւետիսն է (Մտք 16, 16), որ մեռաւ եւ յարութիւն  
առաւ: Աստուած Աբրահամի եւ անոր սերունդին տուած  
խոստումը կատարեց Հերովդէս արքայի եւ Օգոստոս Կայս-  
րի ժամանակ, երբ աշխարհ ղրկեց «Իր Որդին որ ծնաւ  
կնոջմէ, մտաւ օրէնքի տակ որպէսզի ազատագրէ օրէնքի  
հպատակները եւ որդեգրութեան շնորհքը մեզի պարգեւէ»  
(Գալ 4, 4-5):

**80 - Բարի Լուրը ի՞նչ ձեւով սփռուեցաւ:**

Սկիզբէն իսկ առաջին աշակերտները վառ փափաքն ու- 425-429  
նեցան Յիսուս Քրիստոսը աւետելու, բոլոր մարդիկը դէպի  
Անոր հաւատքին առաջնորդելու համար: Այսօր եւս Քրիս-  
տոսի սիրագեղ ճանաչումէն յառաջ կու գայ աւետարա-  
նելու եւ կրօնութեանցանելու փափաքը, այսինքն Քրիստոսի  
անձով Աստուծոյ ամբողջական ծրագիրը յայտնաբերելու  
եւ մարդկութիւնը անոր հաղորդակից դարձնելու իղձը:

## «ԵՒ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԻՐ ՄԻԱԾԻՆ ՈՐԴԻՒՆ, ՄԵՐ ՏԻՐՈՋ»

**81 - Ի՞նչ կը նշանակէ «Յիսուս» անունը:**

Աւետման օրը Հրեշտակին կողմէ տրուած «Յիսուս» 430-435  
անունը կը նշանակէ «Աստուած կը փրկէ»: Ան Քրիստոսի 452  
ինքնութիւնը եւ առաքելութիւնը կ'արտայայտէ, որովհե-  
տեւ «Ան է որ Իր Ժողովուրդը իր մեղքերէն պիտի փրկէ»

(Մտք 1, 21):

Պետրոս իր հերթին՝ կը հաստատէ ըսելով, թէ «երկինքի տակ չկայ ուրիշ անուն մը որուն միջոցով կարենանք փրկուիլ» (Գործ 4, 12):

## 82 - Ինչու՞ Յիսուսը կոչուած է «Քրիստոս»:

436-440

453

«Քրիստոս»՝ յունարէն, իսկ «Մեսիա»՝ եբրայեցերէն, կը նշանակէ «օծեալ»: Յիսուս՝ Քրիստոս՝ է, որովհետեւ Աստուծոյ կողմէ նուիրագործուած է եւ Սուրբ Հոգիին կողմէ օծուած է իր փրկագործ առաքելութիւնը կատարելու համար: Անկիւ է Իսրայէլի կողմէ սպասուած եւ Հօր կողմէ աշխարհ ուղարկուած Մեսիան: Յիսուս եւս իր մասին Մեսիայի տիտղոսը ստանձնեց, անոր նշանակութիւնը բացայայտելով՝ որպէս «երկինքէն իջած» (Յովհ 3, 13 ), խաչուած եւ յարութիւն առած Անձ: Ան է տառապող Ծառան որ «իւր կեանքը իբր փրկանք կու տայ բազմութեան» (Մտք 20, 28 ): Քրիստոս անունէն առաջ կու գայ մեր քրիստոնէայ անուանումը:

## 83 - Ի՞նչ իմաստով Յիսուս «Աստուծոյ միածին Որդին» է:

441-445

454

Բառին միակ ու կատարեալ իմաստով: Հօր ձայնը՝ Յիսուսի Մկրտութեան եւ Պայծառակերպութեան օրը, Զայն «Իր սիրելի Որդին» անուանեց: Յիսուս, երբ Ինքզինք ներկայացնելով որպէս Որդին որ «Հայրը կը ճանչնայ» (Մտք 11, 27), կը հաստատէ իր Հօր Աստուծոյ հետ իր միակ եւ յաւիտեանական յարաբերութիւնը: «Ան է Աստուծոյ միակ Որդին» (Ա Յովհ 4, 9 ), Սուրբ Երրորդութեան երկրորդ Անձը: Ան է առաքելական քարոզչութեան կեդրոնը. առաքելները Անոր մէջ տեսան «փառքը, զոր Հօրմէն կ'ընդունի իբրեւ միածին Որդի» (Յովհ 1, 14):

## 84 - Ի՞նչ կը նշանակէ «Տէր» տիտղոսը:

446-451

455

Սուրբ Գիրքին մէջ այս տիտղոսը սովորաբար կը յատկանշէ գերիշխան Աստուածը: Յիսուս, զայն իրեն եւս վերագրելով, իր աստուածային գերիշխանութիւնը կը

յայտնէ բնութեան, սատանաներուն, մեղքին եւ մահուան դէմ իր բանեցուցած զօրութեամբ եւ յատկապէս իր Յարութեամբ: Քրիստոնեայ առաջին դաւանութիւնները կը հռչակեն թէ զօրութիւնը, պատիւն ու փառքը որ կը մատուցուին Հօր Աստուծոյ, կը մատուցուին նաեւ Յիսուսի, որուն Աստուած «տուաւ անուն մը որ գեր ի վեր է քան ամէն անուն» (Փիլ 2, 9): Ան Տէրն է տիեզերքին եւ պատմութեան եւ Ան միա՛կն է, Որուն մարդ իր անձնական ազատութիւնը ամբողջովին ենթարկելու է:

«ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ  
ՍՈՒՐԲ ՀՈԳԻԷՆ ՅՂԱՅՈՒԵՅԱԻ,  
ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄԷՆ ԾՆԱԻ»

**85 - Աստուածորդին ինչու՞ մարդացաւ:**

Աստուածորդին մարմնացաւ Սուրբ Հոգիին ներգործութեամբ՝ Կոյս Մարիամին արգանդին մէջ մեզի՝ մարդերուս փրկութեան համար, որպէսզի մեզ՝ մեղաւորներս Աստուծոյ հետ հաշտեցնէ, իր անհուն սէրը մեզի ճանչցնէ, մեզի սրբութեան օրինակ ծառայէ եւ մեզ «աստուածային բնութեան հաղորդակից» ընէ (Բ Պետ 1, 4): 456-460

**86 - «Մարդեղութիւն» բառը ի՞նչ կը նշանակէ:**

Եկեղեցին «Մարդեղութիւն» կը կոչէ աստուածային եւ մարդկային բնութիւններուն եւ Բանին աստուածային միակ Անձին միջեւ հրաշալի միութեան խորհուրդը: Աստուածորդին մեր փրկութիւնը իրագործելու համար «մարմին» եղաւ (Յովհ 1, 4) եւ ճշմարիտ մարդ դաճաւ: Մարդեղութեան դաւանանքը զատորոշիչ նշանն է քրիստոնեայ հաւատքին: 461-463 483

**87 - Յիսուս Քրիստոս ինչպէ՞ս ճշմարիտ Աստուած եւ ճշմարիտ մարդ է:**

Յիսուս Քրիստոս իր աստուածային Անձին միութեան մէջ՝ անբաժանելիօրէն ճշմարիտ Աստուած եւ ճշմարիտ մարդ 464-467 469

է: Աստուածորդին, որ «ծնած է եւ ո'չ թէ ստեղծուած եւ Հօր համագոյակից է», ճշմարիտ մարդ եղաւ եւ մեր եղբայրը դարձաւ, առանց դադրելու մեր Տէր Աստուածն ըլլալէ:

**88 - Այս մասին ի՞նչ կ'ուսուցանէ Քաղկեդոնի Ժողովը (451):**

467 Քաղկեդոնի Ժողովը կ'ուսուցանէ դաւանիլ «մեր Տէր Յիսուս Քրիստոսը՝ մէկ եւ նոյն Որդին, կատարեալ աստուածութեամբ եւ կատարեալ մարդկութեամբ, նոյնը ճշմարիտ Աստուած եւ ճշմարիտ մարդ, կազմուած բանաւոր հոգիէ եւ մարմինէ, համագոյակից Հօր ըստ աստուածութեան, համագոյակից մեզի՝ ըստ մարդկութեան, «յար ու նման մեզի, բացի մեղքէն» (Եբր 1, 4): Ըստ աստուածութեան՝ Հօրմէն ծնած ի յաւիտենից, իսկ ըստ մարդկութեան՝ վերջին ժամանակներուն Կոյս Մարիամէն, Աստուածամայրէն ծնած մեզի եւ մեր փրկութեան համար»:

**89 - Եկեղեցին Մարդեղութեան խորհուրդը ինչպէ՞ս կ'արտայայտէ:**

464-469 Ձայն կ'արտայայտէ՝ դաւանելով որ Յիսուս Քրիստոս ճշմարիտ Աստուած եւ ճշմարիտ մարդ է, աստուածային եւ մարդկային երկու բնութեամբ, անշփոթ միաւորութեամբ Բանին Անձին հետ: Սակայն Յիսուսի մարդկայնութեան մէջ ամէն բան - հրաշք, չարչարանք եւ մահ - վերագրուելու է Իր աստուածային Անձին, որ կը գործէ Իր ստանձնած մարդկային բնութեան միջոցաւ:

Ո՛վ միածին Որդի եւ Բանն Աստուած եւ անմահ Էութիւն, որ յանձն առիր մեր փրկութեան համար մարմնանալ Աստուածածին եւ միշտ սուրբ Կոյսէն...: Դուք որ Սուրբ Երրորդութեան Անձերէն մէկն եւ եւ փառաւորուած Հօր եւ Սուրբ Հոգիին հետ, փրկէ՛ մեզ (Ս. Յովհան Ոսկեբերանի պատարագ):

**90 - Մարդացեալ Աստուածորդին հոգի մը ունէ՞ր մարդկային ճանաչումով:**

*Աստուածորդին ստանձնեց մարմին մը, որ մարդկային բանաւոր հոգիով կը գործէր: Յիսուս Իր մարդկային խելքով՝ շատ բան սորվեցաւ փորձառութեամբ: Բայց Աստուածորդին նաեւ որպէս մարդ՝ կը վայելէր Իր Հօր Աստուծոյ մտերիմ եւ անմիջական ճանաչումը: Ան նմանապէս մարդոց գաղտնի խորհուրդները կը ներթափանցէր եւ լիովին գիտէր այն յաւիտենական ծրագիրները, զորս յայտնելու համար եկած էր:* 470-474 482

**91 - Մարմնացած Բանին երկու կամքերը ինչպէ՞ս իրարու կը համաձայնին:**

*Յիսուս ե՛ւ աստուածային ե՛ւ մարդկային կամք ունի: Իր երկրաւոր կեանքին ընթացքին, Աստուածորդին մարդկօրէն կամեցաւ ինչ որ մեր փրկութեան համար Հօր եւ Սուրբ Հոգիին հետ որոշած էր: Քրիստոսի մարդկային կամքը առանց ընդդիմութեան եւ հակադրութեան կը հետեւէր աստուածային կամքին, աւելի ճիշդ՝ անոր կ'ենթարկուէր:* 475 482

**92 - Քրիստոս մարդկային ճշմարիտ մարմին ունէ՞ր:**

*Քրիստոս մարդկային իսկակա՛ն մարմին մը ստանձնեց, որուն մէջէն անտեսանելի Աստուածը տեսանելի եղաւ: Այս պատճառով՝ կարելի է սուրբ նկարներու միջոցով Քրիստոսը պատկերացնել եւ մեծարել:* 476-477

**93 - Յիսուսի Սիրտը ի՞նչ կը ներկայացնէ:**

*Յիսուս մեզ ճանչցաւ ու սիրեց մարդկային սրտի միջոցով: Մեր փրկութեան համար խոցուած Սիրտը խորհրդանշին է անհուն սիրոյն, որով Ան կը սիրէ Իր Հայրը եւ բոլոր մարդիկը:* 478

**94 - Ի՞նչ կը նշանակէ «Սուրբ Հոգիին ներգործութեամբ յղացուեցաւ»:**

484-486 *Կը նշանակէ թէ Սուրբ Կոյսը Աստուծոյ յաւիտենական Որդին իր ծոցին մէջ յղացաւ Սուրբ Հոգիին ներգործութեամբ եւ առանց մարդու մասնակցութեան: Աւետարեւր Հրեշտակը Մարիամին ըսաւ. «Սուրբ Հոգին պիտի գայ քու վրադ» (Ղուկ 1, 35):*

**95 - «Ծնաւ Մարիամ Սուրբ Կոյսէն»:** Մարիամ ինչո՞վ իսկապէս Աստուծոյ Մայրն է:

495 *Մարիամ իսկապէս Աստուծոյ Մայրն է, որովհետեւ Յիսուսի՝ Մայրն է (Հմտ. Յովհ 2, 1 եւ 19, 25): Արդարեւ Ան որ Սուրբ Հոգիին կողմէ իրմէ յղացուեցաւ եւ իր ճշմարիտ Որդին դարձաւ՝ Հօր յաւիտենական Որդին է: Ան եւս Աստուած է:*

**96 - Ի՞նչ կը նշանակէ «Անարատ Յղութիւն»:**

487-492 *Աստուած ի յաւիտենից եւ լրիւ ձրի կերպով Մարիամը ընտրեց, որպէսզի ան իր Որդիին Մայրն ըլլայ: Ան այս առաքելութիւնը կատարելու համար՝ իր յղութենէն սկսեալ անարատ մնաց: Ասիկա կը նշանակէ, թէ Մարիամ Աստուծոյ շնորհքով եւ Յիսուս Քրիստոսի արդիւնքներուն հեռագրեցութեամբ, իր յղութեան պահէն իսկ սկզբնական մեղքէն զերծ մնաց:*

**97 - Մարիամ փրկական աստուածային ծրագրին ի՞նչ ձեւով գործակցեցաւ:**

493-494 *Մարիամ Աստուծոյ շնորքին միջոցով՝ ամբողջ կեանքին ընթացքին ամէն անձնական մեղքէ զերծ մնաց: Ան «շնորհքներով լեցուն» է (Ղուկ 1, 28), ան «Ամենասրբուն» է: Հրեշտակը երբ անոր աւետեց, թէ ան «Բարձրեալին Որդին» (Ղուկ 1, 32) պիտի ծնէր, ան ազատօրէն իր հաւանութիւնը տուաւ «հաւատքի հնազանդութեան մէջ» (Հն 1, 5):*

*Մարիամ ամբողջովին նուիրուեցաւ իր Որդիին Յիսուսի Անձին եւ գործին, ամբողջ հոգիով ընդունելով աստուածային փրկչական կամքը:*

**98 - Ի՞նչ կը նշանակէ Յիսուսի կուսական յղացումը:**

*Կը նշանակէ թէ Յիսուս Սուրբ Կոյսին արգանդին մէջ յղացուեցաւ միայն Ս. Հոգիին զօրութեամբ, առանց մարդու միջնորդութեան: Ան երկնաւոր Հօր Որդին է ըստ իր աստուածային բնութեան եւ Մարիամի զաւակը՝ ըստ իր մարդկային բնութեան, բայց իր երկու բնութիւններով՝ Աստուծոյ ճշմարիտ Որդի, մնալով մէկ Անձ, որ աստուածային է:*

496-498

503

**99 - Ի՞նչ իմաստով Մարիամ «միշտ կոյս» է:**

*Այն իմաստով որ Մարիամ «կոյս մնաց երբ յղացաւ իր Որդին, կոյս՝ երբ ծնաւ զինք, կոյս՝ երբ կրեց զինք, կոյս՝ երբ դիեցուց զինք, կոյս մայր, միշտ կոյս» (Ս. Օգոստինոս): Սակայն երբ աւետարանները կը խօսին «Յիսուսի եղբայրներուն եւ քոյրերուն» մասին, խօսքը Յիսուսին մօտիկ ազգականներու մասին է, ըստ Սուրբ Գիրքին մէջ օգտագործուած բառամիջերէն:*

499-507

510-511

**100 - Ի՞նչ նշանակութեամբ Մարիամի հոգեւոր մայրութիւնը ընդհանրական է:**

*Մարիամ միակ զաւակի մը Յիսուսի մայրն է, որուն ընդմէջէն Մարիամի հոգեւոր մայրութիւնը կը տարածուի բոլոր մարդոց, զորս փրկելու համար Ան եկած էր: Նոր Աշխարհ՝ Յիսուս Քրիստոսի կողքին, հնազանդ Սուրբ Կոյսը նոր Եւան է, ողջերու իսկական մայրը, որ իր մայրական սիրով կ'աջակցի շնորհքի ճամբով անոնց ծնունդին եւ աճումին: Մարիամ, որպէս Մայր եւ Կոյս, Եկեղեցւոյ պատկերն է եւ անոր ամենակատարեալ իրադործումը:*

501-507

511

**101 - Ի՞նչ իմաստով Քրիստոսի ամբողջ կեանքը *Խորհուրդ* է:**

512-521 *Քրիստոսի ամբողջ կեանքը՝ յայտնութեան եղելութիւն մըն է: Քրիստոսի երկրաւոր կեանքին մէջ, տեսանելին՝ կ'առաջնորդէ Անոր անտեսանելի խորհուրդին, յատկապէս Անոր աստուածորդիութեան խորհուրդին. «Զիս տեսնողը Հայրը կը տեսնէ» (Յովի 14, 9): Թէեւ փրկագործութիւնը լիովին իրագործուած է խաչին եւ յարութեան միջոցով, այսուհանդերձ Քրիստոսի ամբողջ կեանքը կը մնայ փրկութեան խորհուրդ, որովհետեւ Յիսուսին գործը, խօսքը եւ Հարչարանքները կը ձգտէին անկեալ մարդը փրկելու եւ Աստուծոյ զաւակի իր կոչումին մէջ զայն վերահաստատելու:*

**102 - Որո՞նք եղան Քրիստոսի *Խորհուրդներուն* նախապատրաստութիւնները:**

522-524 *Նախ գոյութիւն ունեցաւ դարե՛ր տեւած յուսալից սպասումի պատմաշրջան մը, զոր մենք խորհրդանշաբար կ'ապրինք Յիսնակաց շրջանին մեր ծիսակատարումներով: Աստուած հեթանոսներուն սրտին մէջ դրոշմած այս մթաւքօղ սպասումէն զատ, Իր Որդիին գալուստը նախապատրաստեց Հին Ուխտին ընդմէջէն մինչեւ Յովիաննէս Մկրտիչը, որ մարգարէներուն վերջինն ու մեծագոյնն է:*

**103 - Աւետարանը ի՞նչ կ'ուսուցանէ Յիսուսի ծննդեան եւ մանկութեան խորհուրդներուն մասին:**

525-530 *Ծնունդի օրը՝ Երկինքի փառքը կը յայտնուի նորածինի մը տկարութեան մէջ: Թլփատութիւնը նշանն է Յիսուսին հրեայ ժողովուրդին պատկանելուն, միանգամայն նախապատկերը մեր Մկրտութեան: Աստուածայայտնութիւնը Իսրայէլի Թագաւոր-Մեսիային երեւումն է բոլոր ազգերուն: Յիսուսի Տաճար ընծայումի օրը, Սիմէոն եւ Աննա պատկերացումն են Իսրայէլի համակ սպասումին, որ ընդառաջ կ'երթայ իր Փրկիչին: Դէպի Եգիպտոս փախուստը եւ անմեղ մանուկներուն ջարդը կը նշեն թէ Քրիստոսի ամբողջ*

կեանքը հալածանքի պիտի ենթարկուի: Եզիպտոսէն վերադարձը կը յիշեցնէ հրեայ ժողովուրդին Եգիպտոսէն Ելքը, իսկ Յիսուսը կը պատկերացնէ որպէս նոր Մովսէս: Ան է իսկական եւ վերջնական ազատարարը:

**104 - Յիսուսի Նազարէթի մէջ թաքուն կեանքը մեզի ի՞նչ դասեր կու տայ:**

Նազարէթի թաքուն կեանքին մէջ Յիսուս սովորական գոյութիւն մը կ'անցընէ լուսթեան մէջ, հրաւիրելով որ մենք ալ իրեն հետ միատեղ՝ աղօթքի, պարզութեան, աշխատանքի, ընտանեկան սիրոյ սուրբ կեանք մը ապրինք: Մարիամի եւ իր խնամատար հօր Յովսէփի հանդէպ իր հլու հպատակութիւնը պատկեր մըն է՝ իր Հօր հանդէպ իր որդիական հնազանդութեան: Մարիամ եւ Յովսէփ իրենց հաւատքի աչքով կ'ընկալեն Յիսուսին Խորհուրդը, նոյնիսկ եթէ զայն միշտ չեն հասկնար:

533-534

564

**105 - Յիսուս ինչու՞ Յովհաննէսի ձեռքէն կ'ընդունի «ապաշխարութեան մկրտութիւնը մեղքերու թողութեան համար» (Ղուկ 3, 3):**

Իր հրապարակային կեանքը չսկսած եւ իր մահուան մկրտութիւնը կանխելով՝ մեղքէ զերծ Յիսուսը կը յօժարի մեղաւորներուն դասէն համարուիլ, ինք՝ «Աստուծոյ Գառնուկը, որ կը կրէ աշխարհի մեղքը» (Յովհ 1, 29): Հայրը Զինք «Իր սիրելի Որդին» կը հռչակէ (Մտք 3, 17) եւ Սուրբ Հոգին իր վրայ կ'իջնէ: Յիսուսի Մկրտութիւնը նախապատկերն է մեր մկրտութեան:

535-537

565

**106 - Յիսուսի անապատին մէջ փորձութիւնները մեզի ի՞նչ կը յայտնեն:**

Յիսուսի անապատին մէջ փորձութիւնները կրկնութիւնն են Ադամին դրախտին մէջ, իսկ Իսրայէլի անապատին մէջ կրած փորձութիւններուն: Սատանան Յիսուսը կը փորձէ Հօր կողմէ իրեն յանձնուած առաքելութեան հանդէպ հնազանդութեան առնչութեամբ: Քրիստոս, նոր Ադամը, փոր-

538-540

566

ձուլթեան տեղի չի տար եւ իր այս յաղթանակով՝ կը նախանշէ չարչարանքներուն դէմ իր տարած յաղթանակը, իր որդիական սիրոյն կողմէ իբր գերագոյն հնազանդութիւն: Եկեղեցին այս Խորհուրդին մասնակից կը դառնայ յատկապէս Մեծ Պատիւի շրջանի ծիսակատարումներուն ատեն:

**107 - Ո՞վ հրաւիրուած է մասնակցելու Աստուծոյ Արքայութեան, զոր Յիսուս քարոզեց եւ իրագործեց:**

541-546 *Յիսուս բոլոր՝ մարդիկը կը հրաւիրէ Աստուծոյ Արքայութեան մասնակցելու: Ամենամեծ մեղաւորն անգամ կանչուած է դարձի գալու եւ Հօր անհուն բարեգթութիւնը ստանալու: Այս Արքայութիւնը, երկրէս սկսեալ, կը պատկանի զայն խոնարհ սրտով ընդունողներուն: Անոնց է որ Արքայութեան խորհուրդները ծանուցուած են:*

**108 - Ինչու՞ Քրիստոս Արքայութիւնը կը յայտնէ նշաններով եւ հրաշքներով:**

547-550 *Յիսուս իր խօսքին կը միացնէ նշաններ եւ հրաշքներ, ապացուցելու համար թէ Արքայութիւնը առկայ է իր մէջ, որ ինք Մեսիա՛ն է: Նոյնիսկ եթէ Ան կարգ մը մարդիկ բուժեց, սակայն ինք չէր եկած այս աշխարհին բոլոր ցաւերը փարատելու, այլ նախ եւ առաջ մարդիկը մեղքին գերութենէն ձերբազատելու: Սատանաներուն դէմ մղած իր պայքարը՝ սկիզբն էր «այս աշխարհի իշխանին» դէմ (Յովի 12, 31) իր տարած խաչի յաղթանակին:*

**109 - Յիսուս իր առաքելներուն ի՞նչ իշխանութիւն կը փոխանցէ Թագաւորութեան մէջ:**

551-553 *Յիսուս Տասներկուքը կ'ընտրէ իբր Յարութեան ապագայ վկաները: Զանոնք մասնակից կը դարձնէ իր առաքելութեան եւ իշխանութեան՝ ուսուցանելու, մեղքերը ներելու, Եկեղեցին կառուցանելու եւ կառավարելու համար: Առաքելներու դասին մէջ՝ Պետրոսն է որ «Արքայութեան բանալիները» կը ստանայ (Մտք 16, 19) եւ հոն*

առաջին դիրքը կը գրաւէ, հաւատքը անաղարտ պահելու եւ իր եղբայրները հաստատելու առաքելութեամբ:

#### 110 - Ի՞նչ է Պայծառակերպութեան նշանակութիւնը:

Պայծառակերպութեան մէջ նախ Սուրբ Երրորդութիւնը 554-556  
կը յայտնուի. «Հայրը՝ ձայնով, Որդին՝ Իր մարդկայնու- 568  
թեամբ, Սուրբ Հոգին՝ լուսաւոր ամպով» (Ս. Թովմաս Աքրոինացի): Յիսուս Մովսէսի եւ Եղիայի հետ Իր «մեկնումին» (Դուկ 9, 31) մասին խօսելով, կը յայտնէ թէ Իր փառքը Խաչի ճամբէն կ'անցնի, կը կանխէ Իր յարուսթիւնն ու փառքով վերադարձը, «որ մեր մահկանացու մարմինը պիտի կերպարանափոխէ Իր փառքի մարմնին» (Փիլ 3, 21):

Լերան վրայ պայծառակերպուեցար, եւ աշակերտներդ, իրենց կարողութեան չափով հիացմամբ դիտեցին Քու Փառքդ, ո՛վ Քրիստոս Աստուած, որպէսզի երբ օր մը Քեզ խաչուած տեսնեն, հասկնան թէ Քու չարչարանքներդ կամատր էին եւ աշխարհին աւետեն թէ Դուն Հօր իսկական ճառագայթումն ես (Բիւզանդական Ծէյս):

#### 111 - Քրիստոսի մեսիական մուտքը Երուսաղէմ ինչպէ՞ս պատահեցաւ:

Սահմանուած ժամանակին, Յիսուս կ'որոշէ Երուսաղէմ 557-560  
բարձրանալ՝ չարչարուելու, մեռնելու եւ յարութիւն առնե- 569-570  
լու համար: Իբրեւ Թագաւոր-Մեսիա որ Արքայութեան գալուստը կ'աւետէ, Ան Իր քաղաքը մուտք կը գործէ աւա-  
նակի վրայ նստած: Ան կ'ընդունուի մանուկներու կողմէ, որոնց բացազանցութիւնը կրկնուած է պատարագի «Սուրբ Սուրբ»ին մէջ. «Օրհնեալ ըլլայ ան որ Տիրոջ անունով կու գայ. Ովսաննա՛ (փրկէ՛ մեզ) (Մտք 21, 9): Եկեղեցիին Աւագ Շաբաթի ծիսակատարումը կը սկսի Երուսաղէմ մուտքի տօնակատարումով:

**«ՅԻՍՈՒՄ, ՊՈՆՏՈՍ ՊԻՂԱՏՈՍԻ ՕՐՈՎ,  
ՉԱՐՉԱՐՈՒԵՑԱԻ, ԽԱՉՈՒԵՑԱԻ,  
ՄԵՌԱԻ ԵՒ ԹԱՂՈՒԵՑԱԻ»**

**112 - Ի՞նչ է կարևորությունը Յիսուսի գատկական Խորհուրդին:**

571-573

*Յիսուսի չարչարանքներէն, մահէն, յարուլթենէն եւ փառաւորութենէն բաղկացած գատկական Խորհուրդը քրիստոնեայ հաւատքին կեդրոնը կը գրաւէ, որովհետեւ Աստուծոյ փրկչական ծրագիրը Անոր Որդիին Յիսուս Քրիստոսի փրկչագործ մահով է որ մի անգամ ընդ միշտ իրագործուեցաւ:*

**113 - Յիսուս ո՞ր ամբաստանութեամբ մահուան դատաւարտուեցաւ:**

574-576

*Իսրայէլի կարգ մը պետերը Յիսուսը ամբաստանեցին իբր Օրէնքին դէմ, Երուսաղէմի տաճարին դէմ եւ յատկապէս մէկ Աստուծոյ հաւատքին դէմ գործող մարդ, քանի որ Ինքզինք Աստուծոյ Որդի հռչակած էր: Այս պատճառով՝ անոնք Քրիստոսը Պիղատոսին յանձնեցին որ Զինք մահուան դատաւարտէ:*

**114 - Ի՞նչ էր Յիսուսի կեցուածքը Իսրայէլի Օրէնքին նկատմամբ:**

577-582

592

*Յիսուս չճնչեց Սինայ լեռան վրայ Աստուծոյ Մովսէսին տուած Օրէնքը, այլ զայն իր աւարտին հասցուց, իր վերջնական մեկնաբանութիւնը տալով անոր: Յիսուս է աստուածային Օրէնսդիրը որ սոյն Օրէնքը ամբողջութեամբ կը կիրարկէ: Ան նաեւ իր մեղսաքաւիչ մահով իբր հաւատարիմ Ծառայ՝ կը մատուցանէ միակ զոհը, որ կարող է փրկանաւորել «առաջին Ուխտի դէմ մեղանշած մարդիկը» (Եբր 9, 15):*

**115 - Ի՞նչ էր Յիսուսին կեցուածքը Երուսաղէմի տաճարին հանդէպ:**

*Յիսուս ամբաստանուեցաւ տաճարին դէմ թշնամական զիրք բռնելու յանցանքով: Եւ սակայն Յիսուս զայն մեծա- 583-586  
րեց որպէս «Իր Հօր տունը» (Յովհ 2, 16) եւ իր ուսուցումին 593  
կարեւոր մէկ մասը անոր յատկացուց: Սակայն իր մահուան  
հետ առնչուած անոր կործանումն ալ նախատեսեց: Ինք-  
զինք ներկայացուց իբր Աստուծոյ վերջնական բնակարանը  
մարդոց մօտ:*

**116 - Յիսուս հակադրուեցա՞ւ Իսրայէլի դաւանած միակ եւ փրկիչ Աստուծոյ հաւատքին:**

*Յիսուս երբեք չհակադրուեցաւ միակ Աստուծոյ դաւա- 587-591  
նանքին, նոյնիսկ երբ մեղքերու թողութիւն տալով՝ գերա- 594  
զանցօրէն աստուածային գործ կը կատարէր, գործ մը որ  
լրումն էր մեսիական խոստումներուն եւ որ Զինք Աս-  
տուծոյ հաւասար կը յայտնէր: Յիսուսի ներկայացուցած  
խնդրանքը իրեն հաւատալու եւ դարձի գալու հնարաւոր կը  
դարձնէ հասկնալու այն ողբերգական թիւրիմացութիւնը,  
զոր Քահանայից Ատեանը գործեց եւ Յիսուսը իբր հայհոյիչ  
մահուան արժանի համարեց:*

**117 - Յիսուսի մահուան պատասխանատուն ո՞վ է:**

*Կարելի չէ Յիսուսի չարչարանքներն ու մահը անխտրա- 595-598  
բար վերագրել այդ օրերուն ապրող բոլոր Հրեաներուն եւ  
կամ յաջորդ ժամանակներուն եւ այլ վայրերուն մէջ ապ-  
րած միւս Հրեաներուն: Իւրաքանչիւր մեղաւոր անհատ,  
այսինքն իւրաքանչիւր մարդ՝ ի՛նքն է Փրկչին չարչարանք-  
ներուն իսկական պատճառն ու գործիքը: Անո՛նք աւելի  
ծանր յանցաւորներ կը դառնան որոնք մանաւանդ քրիս-  
տոնեայ են եւ յաճախակի մեղքի մէջ կ'իյնան եւ իրենց ախ-  
տաւոր կեանքէն հաճոյք կը քաղեն:*

**118 - Ինչու՞ Քրիստոսի մահը Աստուծոյ ծրագրին մաս կը կազմէ:**

599-605 *Մեղքով մահուան դատապարտուած մարդիկը իրեն հետ*  
 619 *հաշտեցնելու համար, Աստուած սիրալիր նախաձեռնու-*  
*թիւնն առաւ իր Որդին աշխարհ ղրկելու, որպէսզի Ան մե-*  
*ղաւորներուն համար մահուան ենթարկուի: Քրիստոսի*  
*մահը, որ Հին Կտակարանին մէջ գուշակուած էր յատկա-*  
*պէս տառապող Ծառային զոհաբերումին տիպարով, կա-*  
*տարուեցաւ «Ս. Գիրքին համեմատ»:*

**119 - Քրիստոս ինչպէ՞ս Ինքզինք Հօր նուիրեց:**

606-609 *Քրիստոսի ամբողջ կեանքը ազատակամ նուիրում մըն է*  
 620 *Հօր, Անոր փրկչական ծրագիրը իրագործելու համար: Ան*  
*իր կեանքը նուիրեց «իբր փրկանք բազմութեան համար»*  
*(Մրկ 10, 45): Այս ընելով՝ Ան ամբողջ մարդկութիւնը*  
*Աստուծոյ հետ կը հաշտեցնէ: Անոր չարչարանքներն ու*  
*մահը ցոյց կու տան, թէ Քրիստոսի մարդկային բնութիւնը*  
*ազատ եւ կատարեալ գործիքը դարձաւ աստուածային*  
*Սիրոյ, որ բոլոր մարդոց փրկութիւնը կը ցանկայ:*

**120 - Յիսուսի նուիրումը ի՞նչ ձեւով կ'արտայայտուի Վերջին Ընթրիքին պահուն:**

610-611 *Իր չարչարանքներուն նախօրեակին՝ իր առաքեալնե-*  
 621 *րուն հետ վերջին Ընթրիքի նստած Յիսուսը իր կամաւոր*  
*ինքնանուիրումը կը կանխէ, այսինքն՝ կանխօրօք կը նշէ եւ*  
*կ'իրագործէ. «Ասիկա Իմ մարմինս է՝ տրուած ձեզի հա-*  
*մար» (Ղուկ 22, 19), «Ասիկա Իմ արիւնս է՝ քափուած...»*  
*(Մաթ 26, 28): Այս ըսելով, Յիսուս Հաղորդութիւնը հաս-*  
*տատեց «իբր յիշատակարան» (Ա Կոր 11, 25) իր*  
*զոհաբերումին, իսկ առաքեալները՝ իբր նոր Ուխտի*  
*բահանաները:*

**121 -** Գերսեմանիի պարտեզին մէջ հոգեվարքի պահուն ի՞նչ պատահեցաւ:

Հակառակ մահուան պատճառած սոսկումին՝ «Կեանքի 612  
Իշխանին» (Գործ 3, 15) ամենասուրբ մարդկային բնութեան  
վրայ, Աստուածորդիին մարդկային կամքը Հօր կամքին կը  
յարի, եւ Յիսուս, մեզ փրկելու համար՝ կը յօժարի մեր  
մեղքերը իր մարմինին մէջ կրել, «հնազանդելով մինչեւ  
մահ» (Փիլ 2, 8):

**122 -** Ի՞նչ են արդիւնքները խաչի վրայ Քրիստոսի գոհա-  
բերումին:

Յիսուս իր կեանքը ազատակամօրէն ընծայեց իբր քա- 613-617  
ւութեան զոհ, այսինքն՝ Ան իր սիրոյ լման ու ցմահ հնա- 622-623  
զանդութեամբ՝ մեր սխալներուն դարման եղաւ: Աստուա-  
ծորդիին այս «ի սպառ սէրը» (Յովհ 13, 1) ամբողջ մարդ-  
կութիւնը Հօր հետ կը հաշտեցնէ: Յիսուսի զատկական զոհը  
բոլոր մարդիկը միակ, կատարեալ եւ վերջնական կերպով կը  
փրկանաւորէ եւ մարդոց ու Աստուծոյ միջեւ հաղորդու-  
թեան ճամբան կը բանայ:

**123 -** Յիսուս ինչո՞ւ իր աշակերտները կը յորդորէ իրենց  
խաչը կրելու:

Յիսուս երբ իր աշակերտներէն կը խնդրէ որ իրենց խաչը 618  
կրեն եւ իրեն հետեւին, կ'ուզէ որ իր փրկչական զոհաբե-  
րումէն բարերարեալներուն առաջինները՝ իր առաջին հա-  
ղորդակիցները ըլլան:

**124 -** Յիսուսի գերեզման դրուած մարմինը ի՞նչ վիճակի մէջ  
կը գտնուէր:

Յիսուս իսկական մահը, ու իսկական թաղումը ճանչցաւ: 624-630  
Բայց աստուածային զօրութիւնը Անոր մարմինը ապակա-  
նութենէ զերծ պահեց:

«ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍ ԴԺՈՒՔ ԻԶԱԽ,  
ԵՐՐՈՐԴ ՕՐԸ ՄԵՌԵԱԼՆԵՐԷՆ  
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՒ»

**125 - Ի՞նչ է «դժոխքը» ուր Յիսուս իջաւ:**

632-637      «Դժոխքը» - որ տարբեր է դատապարտութեան գեհենէն - Քրիստոսէ առաջ բոլոր (արդար թէ մեղաւոր) մեռեալներուն վերապահուած վիճակն էր: Յիսուս, Իր աստուածային Անձին միացած Իր հոգիով՝ զնաց դժոխքի մէջ գտնուող այն արդարներուն մօտ, որոնք իրենց Փրկարարին կը սպասէին որպէսզի ի վերջոյ Աստուծոյ տեսութեան արժանանային: Յիսուս, Իր մահով՝ մահուան եւ «մահուան իշխանութիւնն ունեցող» (Եբր 2, 14) սատանային յաղթելէ ետք, իրենց Փրկարարին սպասող արդարները ազատեց եւ երկինքի դռները բացաւ անոնց:

**126 - Ու՞ր է Քրիստոսի Յարութեան տեղը մեր հաւատքին մէջ:**

631, 638      Քրիստոսի Յարութիւնը մեր հաւատքին բարձրագոյն ճշմարտութիւնն է: Խաչին հետ միատեղ, ան զատկական Խորհուրդին էական մէկ մասը կը հանդիսանայ:

**127 - Ո՞ր «նշանները» կը վկայեն Յիսուսի Յարութեան մասին:**

639-644      Դատարկ գտնուած գերեզմանին էական նշանէն զատ,  
656-657      Յիսուսի Յարութիւնը վկայուած է այն կիներուն կողմէ, որոնք առաջինները եղան Յիսուսին հանդիպելու եւ լուրը առաքեալներուն աւետելու մէջ: Ապա Յիսուս «Կեփասին (Պետրոսին) յայտնուեցաւ» եւ հուսկ Տասներկուքին: Իսկ յետոյ յայտնուեցաւ աւելի քան հինգ հարիւր եղբայներուն միանգամայն (Ա Կոր 15, 5-6), ապա նաեւ ուրիշներուն: Առաքեալները յարութիւնը չհնարեցին, քանի որ յարութիւնը անոնց համար՝ անկարելի բան մը կը թուէր: Եւ իրապէս, Յիսուս անգամ զանոնք յանդիմանեց՝ իրենց թերահաւատութեան համար:

**128 - Ինչու՞ Յարութիւնը միանգամայն վերանցական դէպք մըն է:**

Յարութիւնը, հաւաստիացուած եւ նշաններով ու վկա- 647  
յութիւններով հաստատուած պատմական դէպք մը ըլլալով 656-657  
հանդերձ, քանի որ Քրիստոսի մարդկային բնութեան Աս-  
տուծոյ փառքին մէջ մուտքն ալ կը հանդիսանայ, ուստի ան  
որպէս հաւատքի խորհուրդ՝ պատմութիւնը կը վերանցէ ու կը  
գերազանցէ: Այս պատճառով է որ յարուցեալ Քրիստոսը  
Ինքզինք աշխարհին չյայտնեց, այլ Իր աշակերտներուն,  
զանոնք ժողովուրդին առջեւ Իր վկաները կարգելով:

**129 - Յարուցեալ Յիսուսին մարմինը ի՞նչ վիճակի մէջ է:**

Քրիստոսի յարութիւնն առնելը՝ դէպի երկրաւոր կեանք 645-646  
վերադարձ մը չէ: Անոր յարուցեալ մարմինը խաչի վրայ  
զամուած եւ Իր չարչարանքներուն նշանները Իր վրայ կրող  
մարմինն է, բայց Ան, այսուհետեւ, աստուածային կեանքին  
մաս կը կազմէ՝ փառաւորեալ մարմնի մը յատկութիւն-  
ներով: Այս պատճառով է, որ յարուցեալ Յիսուսը  
գերիշխանօրէն ազատ կը մնայ Իր աշակերտներուն  
երեւնալու ե՛րբ կամ ու՛ր որ ուզէ եւ զանազան կերպա-  
րանքներու տակ:

**130 - Յարութիւնը ի՞նչ ձեւով Սուրբ Երրորդութեան արարքն է:**

Քրիստոսի Յարութիւնը Աստուծոյ վերանցական արարքն 648-650  
է: Երեք Անձերը միասնաբար կը ներգործեն, իւրաքանչիւրը  
Իրեն յատուկ եղանակով: Հայրը Իր զօրութիւնը կը յայտնէ,  
Որդին՝ Իր հոգին եւ մարմինը իրարու վերամիացնելով, Իր  
ազատօրէն նուիրած կեանքը «ետ կ'առնէ» (Յովհ 10, 17),  
Խակ Սուրբ Հոգին Զայն կը կենդանացնէ եւ կը փառաւորէ:

**131 - Որո՞նք են Յարութեան իմաստն ու տարողութիւնը մարդու փրկութեան համար:**

651-655

658

Յարութիւնը Մարդեղութեան գազաթնակէտն է: Ան կը վաւերացնէ Քրիստոսի աստուածութիւնը, ինչպէս նաեւ անոր բոլոր կատարածները եւ ուսուցածները: Ան Աստուծոյ կատարած աստուածային բոլոր խոստումները մեզի ի նպաստ կ'իրականացնէ: Առաւել, մեղքին եւ մահուան դէմ յաղթական Յարուցեալը՝ մեր արդարացումին եւ յարութեան նախասկիզբն է: Ան այժմէն իսկ մեզի կը հայթայթէ որդեգրութեան շնորհքը, որ իսկական մասնակցութիւն մըն է միածին Որդիին կեանքին, որ ժամանակներուն վախճանին՝ մեր մարմիններուն յարութիւն պիտի տայ:

«ՅԻՍՈՒՄ ԵՐԿԻՆՔ ՀԱՄԲԱՐՁԱԻ,  
ԱՄԵՆԱԿԱԼ ՀՕՐ ԱՍՏՈՒԾՈՅ  
ԱՋԱԿՈՂՄԸ ԲԱԶՄԵՅԱԻ»

**132 - Համբարձումը ի՞նչ կը ներկայացնէ:**

659-667

Քրիստոս, քառասուն օր իր Առաքեալներուն երեւնալէ ետք՝ Յարուցեալի իր փառքը սքօղող սովորական մարդու երեւոյթին ներքեւ, երկինք համբարձաւ եւ Հօր աջակողմը բազմեցաւ: Ան Տէրն է, որ այսուհետեւ իր մարդկային բնութեամբ՝ Աստուածորդիին յաւիտենական փառքին մէջ կը թաղաւորէ եւ Հօր մօտ մեզի համար անդադար կը բարեխօսէ: Ան իր Հոգին կ'ուղարկէ եւ մեզ կը յուսադրէ որ օր մը իրեն պիտի միանանք, մեզի համար պատրաստած վայրի մը մէջ:

«ՈՒՍԿԻՅ ՊԻՏԻ ԳԱՅ ԴԱՏԵԼՈՒ  
ՈՂՋԵՐԸ ԵՒ ՄԵՌԵԱԼՆԵՐԸ»

**133 - Տէր Յիսուս ինչպէ՞ս այսօր կը թագաւորէ:**

668-674

680

Փառաւորեալ Քրիստոսը, որպէս Տէ՛ր աշխարհի եւ պատմութեան, որպէս Գլուխ իր Եկեղեցւոյ, խորհրդաւոր

ձեռով աշխարհի մէջ կը մնայ, ուր իր Արքայութիւնը Եկեղեցւոյ մէջ արդէն ներկայ է իբր սերմ եւ սկզբնաւորութիւն: Եւ օր մը՝ մեր չիմացած մէկ ժամուն, Ան իր փառքով աշխարհ պիտի վերադառնայ, որուն սպասումին մէջ՝ մենք կ'ապրինք աղօթքի հսկումով. «Ե'կ, Տէ'ր Յիսուս» (Յայտ 22, 20):

**134 - Տիրոջ փառաւոր գալուստը ի՞նչ ձեռով պիտի կատարուի:**

Այս անցողական աշխարհին համատարած վերջին փոթորկումէն ետք, Քրիստոսի փառաւոր վերադարձը պիտի կատարուի Աստուծոյ վերջնական յաղթանակով՝ Գալուստի օրը եւ վերջին դատաստանի պահուն: Այսպէս՝ Աստուծոյ Արքայութիւնը իրականութիւն պիտի դառնայ: 675-677 680

**135 - Քրիստոս ինչպէ՞ս պիտի դատէ ողջերը եւ մեռեալները:**

Քրիստոս պիտի դատէ ա'յն իշխանութեամբ որով տիրացաւ աշխարհի Փրկիչ, որ մարդիկը ազատելու եկաւ: Սրտերուն գաղտնիքները պիտի քօղազերծուին, ինչպէս նաեւ Աստուծոյ եւ ուրիշին նկատմամբ իւրաքանչիւրին վարմունքը: Ամէն մարդ իր գործածին համեմատ պիտի արժանանայ կեանքի կամ յաւիտենական դատապարտութեան: Այսպէս պիտի իրականանայ «Քրիստոսի լրումը» (Եփս 4, 13), ուր «Աստուած պիտի ըլլայ ամէն ինչ ամէնին մէջ» (Ա Կոր 15, 18): 678-679 681-682

## ԳԼՈՒԽ Գ.

### ԿԸ ՀԱՒԱՏԱՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ

**136 - Եկեղեցին ի՞նչ կը դաւանի երբ կ'ըսէ. «Կը հաւատամ Սուրբ Հոգիին»:**

Հաւատալ Սուրբ Հոգիին՝ դաւանիլ է թէ Ան Սուրբ Երրորդութեան երրորդ Անձն է, որ Հօրմէն եւ Որդիէն կը բխի եւ «կը պաշտուի ու կը փառաւորուի Հօր եւ Որդիին հետ»: 683-686

Հոգին «ղրկուած է (...) մեր սրտերուն մէջ» (Գաղ 4, 6), որպէսզի Աստուծոյ զաւակի նոր կեանքն ընդունինք:

**137 - Ինչու՞ Որդիին եւ Հոգիին առաքելութիւնները իրարմէ անանջատելի են:**

687-690 *Անբաժանելի Սուրբ Երրորդութեան մէջ՝ Որդին եւ*  
 742-743 *Հոգին Իրարմէ կը զանազանուին, բայց Իրարմէ անանջատելի կը մնան: Արդարեւ ժամանակին սկիզբէն մինչեւ վախճանը՝ Հայրը երբ Իր Որդին կը ղրկէ, Իր Հոգին ալ կը ղրկէ, որ մեզ հաւատաքով Քրիստոսի կը զօդէ, որպէսզի կարողանանք իբր որդեգիրներ՝ զԱստուած «Հայր» կոչել (ՀՈ 8, 15):*

Հոգին անտեսանելի է, բայց մենք Զինք կը ճանչնանք Իր արարքով, երբ Ան Բանը կը յայտնէ եւ Եկեղեցիին մէջ կը գործէ:

**138 - Որո՞նք են Սուրբ Հոգիին անուանակոչումները:**

691-693 *Սուրբ Երրորդութեան երրորդ Անձին յատուկ անունը «Սուրբ Հոգի» է: Քրիստոս Զայն նաեւ Մխիթարիչ, Փաստաբան եւ Ճշմարտութեան Հոգի կը կոչէ: Նոր Կտակարանը Զայն նաեւ Քրիստոսի Հոգի, Տիրոջ եւ Աստուծոյ Հոգի, փառքի եւ խոստումին Հոգի կ'անուանէ:*

**139 - Որո՞նք են Ս. Հոգիին խորհրդանիշները:**

694-701 *Անոր խորհրդանիշերը բազմաթիւ են. - Կենդանի ջուրը՝ որ կը բխի Քրիստոսի խոցուած սրտէն եւ կը յագեցնէ մկրտեալները. - Իւղով օծումը, որ դրոշմին խորհրդենական նշանն է. - Կրակը, որ իր հպածը կը կերպարանափոխէ. - Մոլթ կամ լուսաւոր ամպը, որուն մէջ աստուածային փառքը կը յայտնուի. - Չեռնադրութիւնը, որուն միջոցով Հոգին կը տրուի. - Աղաւնին, որ մկրտութեան ատեն երկինքէն կ'իջնէ եւ Քրիստոսի վրայ կանգ կ'առնէ:*

**140 - Ի՞նչ կը նշանակէ «Հոգին խօսեցաւ մարգարէներով»:**

Մարգարէ բառով՝ հոս կը հասկնանք անոնք որ Սուրբ 687-688  
 Հոգիէն ներշնչուած՝ Աստուծոյ անուշով խօսեցան: Հոգին 702-706  
 Հին Կտակարանին մարգարէութիւնները իրենց լրումին կը 743  
 հասցնէ Քրիստոսով, Որուն խորհուրդը Նոր Կտակարանին  
 մէջ կը քօղազերծուի:

**141 - Ո՞րն է Սուրբ Հոգիին ներգործութիւնը Յովհաննէս Մկրտիչի անձին մէջ:**

Յովհաննէս Մկրտիչը, Հին Կտակարանին վերջին մար- 717-720  
 գարէն, կը լեցուի Սուրբ Հոգիին ուժով, եւ Անոր  
 զօրութեամբ՝ Յովհաննէս կը զրկուի «Ժողովուրդ մը Տիրոջ  
 համար պատրաստելու» (Ղուկ 1, 17), ապա գալուստը  
 աւետելու Քրիստոս Աստուածորդւոյն, Որ «կը մկրտէ  
 Հոգիով» (Յովհ 1, 33), Որուն վրայ Յովհաննէս Հոգիին  
 իջնելն ու մնալը տեսաւ:

**142 - Ո՞րն է Հոգիին ներգործութիւնը Մարիամի անձին մէջ:**

Մարիամի մէջ, Սուրբ Հոգին իրենց կատարումին կը 721-726  
 հասցնէ Հին Կտակարանի սպասումն ու պատրաստութիւնը 744  
 Քրիստոսի գալուստին: Մարիամը առանձնապատուկ  
 շնորհներով կը լիացնէ եւ անոր կուսութիւնը կը  
 բեղմնաւորէ՝ մարմնացեալ Աստուածորդիին ծնունդ տալու  
 համար: Մարիամը «ամբողջական Քրիստոսին», այսինքն  
 Քրիստոս-Գլխին եւ անոր մարմին՝ Եկեղեցիին Մայր կը  
 կարգէ: Հոգեգալուստին օրը՝ Մարիամ ներկայ է Տասներ-  
 կուքին միջեւ, երբ Սուրբ Հոգին, Եկեղեցիին հրապարակու-  
 մով՝ «վերջին ժամանակներուն» բացումը կը կատարէ:

**143 - Ի՞նչ առնչութիւն կայ Հոգիին եւ Յիսուս Քրիստոսի մի-  
ջեւ Անոր երկրաւոր առաքելութեան նկատմամբ:**

Իր մարդեղութենէն սկսեալ, Աստուածորդին Իր մարդ- 727-730  
 կայնութեան մէջ որպէս Մեսիա կը նուիրագործուի Հոգիին 745-746

օծումով: Ան Իր ուսուցումին մէջ՝ Հոգին կը յայտնաբերէ, կատարելով Հայրերուն տրուած խոստումը, իսկ Իր Յարութենէն ետք՝ Զայն նորածին Եկեղեցւոյ կը հաղորդէ, փչելով Առաքելներուն վրայ:

#### 144 - Հոգեգալստեան օրը ի՞նչ պատահեցաւ:

731-732 Իր Յարութենէն յիսուն օր ետք, Պենտեկոստէի օրը, փա-  
738 ռաւորեալ Յիսուս Քրիստոսը Հոգին առատօրէն սփռեց եւ  
Զայն որպէս աստուածային Անձ յայտնեց եւ այսպէս՝  
Սուրբ Երրորդութիւնը ամբողջութեամբ յայտնուեցաւ:  
Քրիստոսի եւ Հոգիին առաքելութիւնը Եկեղեցիին  
առաքելութիւնը դարձաւ եւ Ան ղրկուեցաւ որպէսզի  
միասնական Երրորդութեան խորհուրդը տարածէ:

Տեսանք ճշմարիտ Լոյսը, ընդունեցանք երկնային Հոգին, գտանք ճշմարիտ հաւատքը. երկրպագե՛նք անբաժանելի Երրորդութեան, որովհետեւ ան է որ մեզ փրկեց:  
(Բիւզանդական պատարագ, Հոգեգալստեան ժամամուտ):

#### 145 - Ո՞րն է Հոգիին ներգործութիւնը Եկեղեցւոյ մէջ:

733-741 Հոգին կը կարուցանէ, կ'ոգեւորէ եւ կը սրբացնէ  
747 Եկեղեցին: Որպէս Սիրո՛յ Հոգի, Ան մկրտեալներուն մէջ կը  
վերանորոգէ մեղքով կորսուած աստուածային նմանութիւնը  
եւ զանոնք Քրիստոսով կ'ապրեցնէ Սուրբ Երրորդութեան  
նոյն Կեանքին մէջ: Զանոնք կ'առաքէ Քրիստոսի Ճշմարտութիւնը  
վկայելու եւ զանոնք կը հաստատէ իրարու փոխադարձ  
պաշտօններուն մէջ, որպէսզի բոլորն ալ «Հոգիին պտուղը»  
բերեն (Գաղ 5, 22):

#### 146 - Քրիստոս եւ Իր Հոգին հաւատացեալներուն սրտին մէջ ինչպե՞ս կը ներգործեն:

738-741 Խորհուրդներուն միջոցով՝ Քրիստոս Իր Մարմնին  
անդամներուն Իր Հոգին կը հաղորդէ, ինչպէս նաեւ

Աստուծոյ շնորհքը, որ Հոգիին միջոցով՝ անոնց մէջ նոր կեանք կը պտղաբերէ: Հոսակ՝ աղօթքի վարդապետը Հոգիին է:

«ԿԸ ՀԱՒԱՏԱՄ ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԷ  
ԵԿԵՂԵՑԻՒՆ»

### Եկեղեցին Աստուծոյ ծրագրին մէջ

**147 - Եկեղեցի բառը ի՞նչ կը նշանակէ:**

Ան կը մատնանշէ ժողովուրդը, զոր Աստուած աշխարհի բոլոր կողմերէն կը համակոչէ եւ կը համախմբէ, կազմելով համաժողովը անոնց, որոնք հաւատքի եւ մկրտութեան շնորհիւ, կը դառնան Աստուծոյ որդիներ, Քրիստոսի անդամներ եւ Սուրբ Հոգիին տաճարներ: 751-752 777, 804

**148 - Աստուածաշունչին մէջ որո՞նք են Եկեղեցին բնորոշող միւս անուններն ու պատկերները:**

Սուրբ Գիրքին մէջ շատ պատկերներ կը գտնենք, որոնք ցայտուն կը կացուցանեն Եկեղեցւոյ խորհուրդին զանազան երեսները: Հին Կտակարանը կը նախասիրէ գործածել Աստուծոյ Ժողովուրդին հետ առնչուող պատկերները, իսկ Նոր Կտակարանը կը նախընտրէ Քրիստոսը ներկայացնել որպէս Գլուխ այն ժողովուրդին, որ Իր Մարմինն է: Այս պատկերներէն մաս մը քաղուած է հովուական կեանքէն (փարախ, հօտ, գառնուկ), գիւղական միջավայրէն (արտ, ձիթենի, այգի), բնակութենէն (բնակարան, քար, տաճար), ընտանիքէն (ամուսին, մայր, ընտանիք): 753-757

**149 - Որ՞ն է Եկեղեցիին ծագումը եւ լուծը :**

Եկեղեցիին ծագումն ու լրումը առկայ են Աստուծոյ յաւիտեական ծրագրին մէջ: Ան սկսած է Հին Ուխտէն՝ Իսրայէլի ընտրութեամբ, որ նշանն է բոլոր ազգերուն յետագայ համախմբումին: Եկեղեցին, հաստատուած՝ 758-766 778

Յիսուս Քրիստոսի խօսքին եւ գործունէութեան վրայ, իրականութիւն դարձաւ շնորհիւ յատկապէս Քրիստոսի փրկարար մահուան ու յարութեան:

Եկեղեցին, որպէս փրկչական խորհուրդ՝ յայտնուեցաւ Հոգեգալստեան օրը՝ Սուրբ Հոգիին էջքով: Եկեղեցին իր լրումին պիտի հասնի ժամանակներու աւարտին՝ հանդիսանալով բոլոր փրկեալներուն երկնաւոր համախմբումը:

#### 150 - Ի՞նչ է Եկեղեցւոյ առաքելութիւնը:

767-769

Եկեղեցւոյ առաքելութիւնն է բոլոր ազգերուն աւետել եւ Յիսուս Քրիստոսի կողմէ նախաձեռնուած Աստուծոյ Արքայութիւնը հաստատել: Եկեղեցին երկրիս վրայ այս փրկարար Արքայութեան սերմն ու սկզբնաւորութիւնը կը հանդիսանայ:

#### 151 - Ի՞նչ իմաստով Եկեղեցին խորհուրդ է:

770-773

779

Եկեղեցին խորհուրդ է, որովհետեւ ան, իր տեսանկի իրողութեան մէջ, կը ներկայացնէ եւ կ'իրագործէ հոգեւոր, աստուածային իրականութիւն մը, զոր միայն հաւատքի աչքով կարելի է նշմարել:

#### 152 - Եկեղեցիին համար ի՞նչ կը նշանակէ փրկութեան ընդհանրական խորհուրդ ըլլալ:

774-776

780

Կը նշանակէ թէ Եկեղեցին նշան եւ գործիք է Աստուծոյ հետ ամբողջ մարդկութեան հաշտութեան եւ հաղորդութեան, ինչպէս նաեւ ամբողջ մարդկային ցեղին ներքին միասնականութեան:

**Եկեղեցին Աստուծոյ Ժողովուրդ, Քրիստոսի Մարմին,  
տաճար Սուրբ Հոգիին**

#### 153 - Ինչու՞ Եկեղեցին Աստուծոյ Ժողովուրդն է:

781

802-804

Եկեղեցին Աստուծոյ Ժողովուրդն է, որովհետեւ Աստուծոյ հաճոյ թուեցաւ մարդիկը սրբացնել ու փրկել՝ ո՛չ թէ

զանոնք անջատաբար առնելով, այլ անոնցմէ մէկ ժողովուրդ կազմելով եւ զանոնք Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին միութեան մէջ խմբելով:

**154 - Որո՞նք եւ Աստուծոյ Ժողովուրդին յատկանիշերը:**

Այս ժողովուրդը, որուն անդամ կը դառնանք Քրիստոսի հաւատալով եւ մկրտուելով, իբր ծագում Հայր Աստուած ունի, իբր Գլով՝ Յիսուս Քրիստոսն ունի, իբր նախապայման՝ Աստուծոյ զաւակներուն արժանապատուութիւնն ու ազատութիւնն ունի, իբր օրէնք՝ սիրոյ նոր պատուիրանն ունի, իբր առաքելութիւն՝ երկրիս աղն ու աշխարհիս լոյսն ըլլալը, իբր նպատակակէտ՝ Աստուծոյ Արքայութիւնը, որ երկրիս վրայ արդէն իսկ սկիզբ առած է:

782

**155 - Ի՞նչ իմաստով Աստուծոյ Ժողովուրդը կը մասնակցի Քրիստոսի քահանայական, մարգարեական եւ թագաւորական երեք պաշտօններուն:**

Աստուծոյ Ժողովուրդը կը մասնակցի Քրիստոսի քահանայական պաշտօնին՝ որովհետեւ այն որ մկրտուած է՝ Սուրբ Հոգիին կողմէ նուիրագործուած է հոգեւոր զոհեր մատուցանելու համար: Ան կը մասնակցի Քրիստոսի մարգարեական պաշտօնին, որովհետեւ, շնորհիւ հաւատքի գերբնական իմաստին՝ ան հաւատքին անքակտելիօրէն կը յարի, զայն կը խորացնէ եւ զայն մարդոց առջեւ կը վկայէ. կը մասնակցի Քրիստոսի թագաւորական պաշտօնին՝ մարդոց սպասարկելով, Յիսուս Քրիստոսի՝ տիեզերքի թագաւորին նման, որ ամէնուն ծառան եղաւ եւ յատկապէս աղքատներուն եւ տառապեալներուն:

783-786

**156 - Եկեղեցին ի՞նչ ձեւի տակ Քրիստոսի մարմինն է:**

Սուրբ Հոգիին զօրութեամբ, մահացած եւ յարութիւն առած Քրիստոսը իր հաւատարիմները սերտօրէն իրեն կը կապէ: Այս ձեւով՝ Քրիստոսի հաւատացեալները, յատկապէս Սուրբ Հաղորդութեան միջոցով, Անոր հետ սերտ կապակցութեան մէջ ըլլալով՝ իրարու կը միանան նաեւ

787-791

805-806

եղբայրսիրույթեան զօդով եւ այսպէս կը կազմեն մէկ մարմին, որ Եկեղեցին է, որուն միասնականութիւնը կ'իրագործուի իր անդամներուն եւ պաշտօններուն զանազանութեան մէջ:

**157 - Ո՞վ է գլուխը այս մարմինին:**

792-795 *Քրիստոս* է «մարմինին՝ այսինքն Եկեղեցիին Գլուխը»  
807 (Կող 1, 18): Եկեղեցին կ'ապրի Անկէ, Անոր մէջ եւ Անով: Քրիստոս եւ Եկեղեցին միասին «ամբողջական Քրիստոսը» կը կազմեն (Ս. Օգոստինոս): «Գլուխ եւ անդամ, այսպէս ըսելու համար, միատիկական մէկ եւ նոյն անձը կը կազմեն» (Ս. Թովմաս Աթուինացի):

**158 - Ինչու՞ կ'ըսեն թէ Եկեղեցին հարսն է Քրիստոսի:**

796 Որովհետեւ Տէրը Ինքզինք «Փեսայ» կոչեց (Միկ 2, 19), որ  
808 սիրեց Եկեղեցին եւ անոր միացաւ յաւիտենական Ուխտով: Ինքզինք անոր համար յանձնեց որպէսզի զայն իր արիւնով մաքրագտէ, զայն «սրբացնէ» (Եփս 5, 26) եւ Աստուծոյ բոլոր որդիներուն բեղմնաւոր մայրը դարձնէ: Եթէ «մարմին» բառը կը բացայայտէ «գլուխին» անդամներուն հետ ունեցած միութիւնը, «հարս» բառը ցայտուն կը կացուցանէ երկուքին իրարմէ զանազանումը անձնական յարաբերումի մէջ:

**159 - Ինչու՞ կ'ըսեն թէ Եկեղեցին Սուրբ Հոգիին փաճարն է:**

797-798 Որովհետեւ Սուրբ Հոգին կը բնակի այն մարմինն մէջ որ  
809-810 Եկեղեցին է, կը բնակի անոր Գլուխին եւ անդամներուն մէջ: Այլուստ, Ան Եկեղեցին սիրոյ մէջ կը կերտէ, Աստուծոյ Խօսքին, Սուրբ Խորհուրդներուն, առաքելութիւններուն եւ արտասովոր շնորհներուն միջոցով:

Ինչ որ մեր շունչը, այսինքն՝ մեր հոգին մեր անդամներուն համար է, նոյնը Ս. Հոգին Քրիստոսի անդամներուն, Քրիստոսի Մարմնին՝ այսինքն Եկեղեցիին համար է (Ս. Օգոստինոս):

**160 - Ի՞նչ են արտասուվոր շնորհքները:**

Արտասուվոր շնորհքները Սուրբ Հոգիին յատուկ 799-801  
 պարգեւներն են, որոնք անհատներու շնորհուած են  
 մարդոց բարիքին, աշխարհի կարիքներուն եւ յատկապէս  
 Եկեղեցւոյ կերտումին համար: Զանոնք զատորոշելը՝  
 Եկեղեցւոյ Ուսուցանող Նուիրապետութեան Հեղինակու-  
 թեան կը պատկանի:

**Եկեղեցին մի, սուրբ, ընդհանրական  
 եւ առաքելական է:**

**161 - Ինչու՞ Եկեղեցին մէկ է:**

Եկեղեցին մէկ է, որովհետեւ անոր ծագումն ու տի- 813-815  
 պարը՝ երբեակ Անձերով մէ'կ Աստուծոյ միութիւնն է: 866  
 Անոր հիմնադիրը եւ պետը՝ Յիսուս Քրիստոսն է, որ բոլոր  
 ժողովուրդները մէ'կ մարմնի մէջ կը համախմբէ: Ան իբր  
 ոգի՝ Սուրբ Հոգին ունի, որ բոլոր հաւատացեալները կը  
 միացնէ Քրիստոսի Հաղորդութեան մէջ: Ան մէ'կ հաւատք,  
 մէ'կ խորհրդենական կեանք, մէ'կ առաքելական յաջորդու-  
 թիւն, մէ'կ հասարակաց յոյս եւ նոյն սէրը ունի:

**162 - Քրիստոսի միակ Եկեղեցին ու՞ր ներգոյ է:**

Քրիստոսի միակ Եկեղեցին, որպէս աշխարհի մէջ կառու- 816  
 ցաւոր եւ կազմակերպուած ընկերութիւն՝ ներգոյ է Կաթո- 870  
 ղիկէ Եկեղեցւոյ մէջ, որ Պետրոսի եւ անոր հետ հաղորդա-  
 կից Եպիսկոպոսներուն կողմէ կառավարուած է: Միայն  
 Եկեղեցիին միջոցով՝ կարելի է փրկութեան միջոցներուն լի-  
 ութեան հասնիլ, որովհետեւ Տէրը Նոր Ուխտին բոլոր բա-  
 րիքները յանձնեց առաքելական դասին, որուն գլուխը Պետ-  
 րոս է:

**163 - Ինչպե՞ս նկատի առնել՝ ոչ կաթողիկե քրիստոնեաները:**

817-819

*Կաթողիկէ Եկեղեցւոյ ամբողջական հաղորդակցութենէն անջատուած Եկեղեցիներուն եւ եկեղեցական հաւաքականութիւններուն մօտ՝ կը հանդիպինք սրբութեան եւ ճշմարտութեան բազմաթիւ տարրերու: Այս բոլոր բարի տարրերը Քրիստոսէն կու գան եւ կաթողիկէ միութեան կը ձգտին: Այս Եկեղեցիներուն եւ հաւաքականութիւններուն անդամները Մկրտութեան միջոցով Քրիստոսի մարմնին մաս կը կազմեն, հետեւաբար զանոնք իբր եղբայրներ կը ճանչնանք:*

**164 - Քրիստոնեաներու միութեան գործին ի՞նչպէս լծուիլ:**

820-822

866

*Բոլոր քրիստոնեաներուն միջեւ միութիւնը վերահաստատելու իղձը Քրիստոսի պարգեւն է եւ Սուրբ Հոգիին կոչը: Ան ամբողջ Եկեղեցւոյ կը վերաբերի եւ կ'իրագործուի հոգիի դարձով, աղօթքով, եղբայրական փոխադարձ ճանաչումով, աստուածաբանական երկխօսութեամբ:*

**165 - Ի՞նչ իմաստով Եկեղեցին սուրբ է:**

823-829

867

*Եկեղեցին սուրբ է, որովհետեւ ամենասուրբն Աստուած անոր հեղինակն է: Քրիստոս անոր համար Ինքզինք զոհեց՝ զայն սրբացնելու եւ սրբագործող դարձնելու համար: Սուրբ Հոգին զայն կը կենսագործէ սիրոյ միջոցով: Փրկութեան միջոցներու լիութիւնը անոր մէջ կը բնակի: Սրբութիւնը անոր ամէն մէկ անդամին կոչումը եւ իր գոծունէութեան նպատակն է: Եկեղեցին իր ծոցին մէջ ունի Մարիամ Սուրբ Կոյսը եւ անհամար սուրբերը, որոնք անոր տիպաւորներն ու բարեխօսներն են: Եկեղեցին սրբութիւնը իր զաւակներուն սրբացումին աղբիւրն է, որոնք իրենք զիրենք աշխարհի վրայ մեղաւոր ճանչնալով՝ միշտ կարիքն ունին դարձի գալու եւ մաքրասրբուելու:*

166 - Ինչու՞ Եկեղեցին *կաթողիկէ* կոչուած է:

Եկեղեցին կաթողիկէ, այսինքն ընդհանրական է, որովհե- 830-831  
տեւ Քրիստոս անոր մէջ ներկայ է. «Հոն ուր Յիսուս Քրիս- 868  
տոս ներկայ է, հոն կաթողիկէ Եկեղեցին է» (Ս. Իգնատիոս Անտիոքացի): Ան ամբողջ եւ ամբողջական հաւատքը կը քա-  
րողէ: Ան փրկութեան լրիւ միջոցներն ունի եւ կը մատակա-  
րարէ զանոնք: Անոր առաքելութիւնը իր մէջ կ'ընդգրկէ բո-  
լոր դարաշրջաններու ազգերը, ինչ մշակոյթի ալ պատկանին:

## 167 - Առանձնայատուկ Եկեղեցի մը կաթողիկէ՞ է:

Կաթողիկէ է ամէն առանձնայատուկ Եկեղեցի (այսինքն՝ 832-835  
թեմ կամ վիճակ), որ կազմուած է քրիստոնեաներու  
հասարակութենէ մը, որ հաւատքի եւ խորհուրդներուն  
կապով հաղորդութեան մէջ է առաքելական յաջորդու-  
թեամբ ձեռնադրուած իրենց Եպիսկոպոսին եւ Հոռմի  
Եկեղեցիին հետ, որ «սիրոյ նախագահութիւնն» ունի (Ս.  
Իգնատիոս Անտիոքացի):

## 168 - Ո՞վ կաթողիկէ Եկեղեցւոյ մաս կը կազմէ:

Բոլոր մարդիկը, բազմազան կերպերով, Աստուծոյ 836-838  
Ժողովուրդին կաթողիկէ միութեան կը պատկանին եւ կամ  
դէպի ան կարգաւորուած են: Կաթողիկէ Եկեղեցւոյ մարմի-  
նին ամբողջապէս մաս կը կազմէ անիկա, որ Քրիստոսի Հո-  
գին ունի եւ Եկեղեցւոյ կապուած է հաւատքի դաւանու-  
թեամբ, խորհուրդներով, եկեղեցական վարչականոնով եւ  
հաղորդութեամբ: Այն մկրտուածները, որոնք այդ կա-  
թողիկէ միութիւնը լման չեն իրագործած, անոնք կաթողի-  
կէ Եկեղեցւոյ հետ որոշ, բայց անկատար հաղորդութեան  
մէջ են:

**169 - Ո՞րն է կաթողիկէ Եկեղեցւոյ առնչութիւնը հրեայ ժողովուրդին հետ:**

839-840 *Կաթողիկէ Եկեղեցւոյ հրեայ ժողովուրդին հետ առնչութեամբ իր խօսքը հաղորդելու համար՝ բոլորէն առաջ զայն ընտրեց: Հրեայ ժողովուրդին կը պատկանին «որդեգրութիւնը, փառքը, օրէնքը, պաշտամունքը, Աստուծոյ խոստումները, նախահայրերը, որոնցմէ սերած է Քրիստոս ըստ մարմնի» (Հն 9, 4. 5): Հրեայ հաւատքը, ի տարբերութիւն ոչ քրիստոնեայ միւս կրօններէն, արդէն պատասխան մըն է տրուած Հին Ուխտին մէջ Աստուծոյ կատարած Յայտնութեան:*

**170 - Ի՞նչ կապ գոյութիւն ունի կաթողիկէ Եկեղեցւոյ եւ ոչ քրիստոնեայ կրօններուն միջեւ:**

841-845 *Անոնց միջեւ նախ եւ առաջ՝ մարդկային ցեղին հասարակաց ծագումէն եւ վախճանէն յառաջ եկած զօդը կայ: Կաթողիկէ Եկեղեցին կ'ընդունի, թէ միւս կրօններուն մէջ ինչ որ բարի եւ ճիշդ կայ՝ Աստուծմէ կու գայ: Ասիկա Աստուծոյ ճշմարտութենէն բխող ճառագայթ մըն է: Ասիկա կրնայ մարդը տրամադրել Աւետարանը ընդունելու եւ զայն մղել մարդկութեան միութեան՝ Քրիստոսի Եկեղեցիին մէջ:*

**171 - Ի՞նչ կը նշանակէ «Եկեղեցիէն դուրս փրկութիւն չկայ» խօսքը:**

846-848 *Կը նշանակէ, թէ ամէն փրկութիւն Քրիստոս-Գլուխէն կու գայ, Անոր Մարմինը հանդիսացող Եկեղեցւոյ միջոցով: Հետեւեալը չեն կրնար փրկուիլ անոնք որ, գիտնալով հանդերձ թէ Եկեղեցին Քրիստոսէն հիմնուած է եւ թէ փրկութեան համար ան անհրաժեշտ է, սակայն պիտի չուզեն ո՛չ հոն մտնել, ո՛չ ալ հոն յարատեւել: Այլուստ՝ ուրիշներ, Քրիստոսի եւ Իր Եկեղեցիին շնորհիւ՝ պիտի կրնան յաւիտենական փրկութեան հասնիլ, որովհետեւ անոնք առանց իրենց յանցանքին՝ կ'անգիտանան Քրիստոսի Աւետարանն ու Եկե-*

ղեցին, սակայն գԱստուած անկեղծօրէն կ'որոնեն եւ, շնորհքին զօրութեամբ, կը ջանան Աստուծոյ կամքը կատարել, զայն իրենց խղճին թելադրածէն ճանչնալով:

**172 - Եկեղեցին ինչու՞ պարտի Աւետարանը ամբողջ աշխարհին քարոզել:**

Որովհետեւ Յիսուս հրահանգեց. «Գացէ՛ք աշակերտեցէ՛ք բոլոր ազգերը, մկրտեցէ՛ք զանոնք յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ» (Մտք 28, 19): Տիրոջ այս առաքելագործ հրահանգը կը բխի Աստուծոյ յաւիտենական սէրէն, որ Իր Որդին եւ Իր Հոգին աշխարհ ղրկեց, քանի որ Ան «կ'ուզէ որ բոլոր մարդիկը փրկուին եւ հասնին ճշմարտութեան գիտութեան» (Ա Տիմ 2, 4): 849-851

**173 - Եկեղեցին ինչպէ՞ս առաքելագործ է:**

Սուրբ Հոգիէն առաջնորդուած Եկեղեցին կը շարունակէ, պատմութեան հոլովոյթին մէջէն՝ հետապնդել նոյնինքն Քրիստոսի առաքելութիւնը: Հետեւաբար քրիստոնեաները պարտին Քրիստոսի բերած Բարի Լուրը բոլորին աւետարանել, Անոր ուղիէն ընթանալ եւ նոյնիսկ նահատակուելու պատրաստ գտնուիլ: 852-856

**174 - Եկեղեցին ինչու՞ առաքելական է:**

Եկեղեցին առաքելական է նախ իր ծագումով, որովհետեւ ան «Առաքեալները իբր հիմ ունի» (Եփս 2, 20): Ապա առաքելական է իր ուսուցումով, որ Առաքեալներուն նոյն ուսուցածն է: Հուսկ առաքելական է իր կառոյցով, որովհետեւ մինչեւ Քրիստոսի վերջնական գալուստը՝ Եկեղեցին կը կերտուի, կը սրբանայ եւ կը կառավարուի Առաքեալներուն կողմէ՝ շնորհիւ անոնց յաջորդ Եպիսկոպոսներուն, որոնք Պետրոսի յաջորդին հետ հաղորդութեան մէջ են: 857 869

**175 - Առաքելներուն առաքելութիւնը ի՞նչ բանի մէջ կը կայանայ:**

858-861 *«Առաքեալ» բառը կը նշանակէ ուղարկուած: Հօր Առաքեալը Յիսուս՝ Իր աշակերտներուն մէջէն ընտրած Տասներկուքը Իր մօտ կանչելով՝ զանոնք Իր առաքեալները կարգեց եւ զանոնք Իր յարութեան ընտրեալ վկաները եւ Իր Եկեղեցիին հիմերը ըրաւ: Անոնց պատուիրեց Իր առաքելութիւնը շարունակել, ըսելով. « Ինչպէս որ Հայրը Զիս ղրկեց, Ես ալ ձեզ կը ղրկեմ» (Յովհ 20, 21) եւ խոստացաւ իրենց հետ ըլլալ մինչեւ աշխարհի վերջը:*

**176 - Ի՞նչ է առաքելական յաջորդութիւնը:**

861-865 *Առաքելական յաջորդութիւնը Սուրբ Կարգի Խորհուրդին միջոցով Առաքեալներուն առաքելութեան եւ իշխանութեան փոխանցումն է անոնց յաջորդ Եպիսկոպոսներուն: Այս փոխանցումին շնորհիւ՝ Եկեղեցին իր ծագումին հետ հաւատքի եւ կեանքի հաղորդակցութեան մէջ կը մնայ, իսկ դարերու ընթացքին իր ամբողջ առաքելութիւնը կը կատարէ ի սպաս Քրիստոսի Թագաւորութեան աշխարհի վրայ տարածումին:*

*Հաւատացեալները, նուիրապետութիւն, աշխարհականներ, ուխտեալ կեանք*

**177 - Որո՞նք են հաւատացեալները:**

871-872 *Հաւատացեալները անոնք են, որոնք իրենց մկրտութեամբ Քրիստոսի մարմինին մաս կազմելով՝ Աստուծոյ Ժողովուրդին անդամ դարձած են: Անոնք Քրիստոսի քահանայական, մարդարէական եւ թագաւորական պաշտօններուն մասնակից դառնալով՝ ըստ իրենց գոյավիճակին, Աստուծոյ կողմէ կանչուած են Եկեղեցիին յանձնուած առաքելութիւնը կատարելու:*

Անոնց միջեւ իսկական հաւասարութիւն մը կը տիրէ՝ Աստուծոյ զաւակներու իրենց արժանապատուութեան պատճառով:

**178 - Աստուծոյ Ժողովուրդը ինչպէ՞ս կազմուած է:**

Աստուածային հիմնադրութեամբ՝ Եկեղեցւոյ մէջ ձեռնադրեալ պաշտօնատարներ կան, անոնք Սուրբ Կարգի Խորհուրդը ընդունած են եւ Եկեղեցւոյ նուիրապետութեան մաս կը կազմեն: Միւսները՝ աշխարհակացներ կոչուած են: Այս երկու դասակարգերէն յառաջ եկած են նաեւ հաւատացեալներ, որոնք իրենք զիրենք Աստուծոյ յատուկ կերպով նուիրած են աւետարանական խրատներու դաւանութեամբ: Կուսակրօնութեամբ, աղքատութեամբ եւ հնազանդութեամբ:

873

934

**179 - Ինչո՞ւ Քրիստոս եկեղեցային նուիրապետութիւնը հաստատեց:**

Քրիստոս եկեղեցային նուիրապետութիւնը հաստատեց Աստուծոյ Ժողովուրդը Իր անունով հովուելու առաքելութեամբ, որուն ի սպաս՝ այս իշխանութիւնը անոր յանձնեց: Նուիրապետութիւնը կը բաղկանայ նուիրեալ պաշտօնատարներէ: Եպիսկոպոսներէ, քահանաներէ, սարկաւազներէ: Սուրբ Կարգի Խորհուրդին զօրութեամբ, Եպիսկոպոսներն ու քահանաները իրենց պաշտօնատարութիւնը կը կատարեն Քրիստոս-Գլուխի անունով եւ Անձով: Սարկաւազները Աստուծոյ Ժողովուրդին կը ծառայեն իբր սպասարկուներ խօսքին, ծիսակատարումին եւ եղբայրական սիրոյ (գործադրութեան):

874-876

935

**180 - Ինչպէ՞ս կը կիրարկուի եկեղեցային պաշտօնատարութեան հաւաքական կարգաձեւը:**

Քրիստոսի կողմէ ընտրուած եւ միատեղ առաքուած տասներկու առաքեալներուն օրինակին համաձայն, եկեղեցային նուիրապետութեան անդամներուն միութիւնը եւս կը գործէ ի սպաս հաւատացեալ ամբողջ հասարակութեան:

877

Ամէն Եպիսկոպոս իր պաշտօնատարութիւնը կը կիրարկէ որպէս անդամ եպիսկոպոսական դասին եւ հաղորդակցաբար Պապին, որուն հետ՝ տիեզերական Եկեղեցիին հոգատարութեան կը մասնակցի: Քահանաները իրենց պաշտօնատարութիւնը կը կատարեն մասնայատուկ Եկեղեցիին քահանայական դասին հետ եւ հաղորդակցաբար իրենց Եպիսկոպոսին հետ եւ անոր իշխանութեան տակ:

**181 - Ինչու՞ եկեղեցային պաշտօնատարութիւնը անձնական բնոյթ մըն ալ ունի:**

878-879 Եկեղեցային պաշտօնատարութիւնը նաեւ անձնական բնոյթ ունի, որովհետեւ Սուրբ Կարգի Խորհուրդին զօրութեամբ՝ անոնցմէ իւրաքանչիւրը անձնապէս պատասխանատու է Քրիստոսի առջեւ, որ զանոնք անձնապէս կանչեց անոնց առաքելութիւն մը յանձնելու համար:

**182 - Ի՞նչ է Պապին առաքելութիւնը:**

881-882 Պապը, որպէս Հռոմի Եպիսկոպոս եւ Սուրբ Պետրոսի  
936-937 յաջորդ, Եկեղեցւոյ մշտնջենաւոր եւ տեսանելի սկիզբն ու միութեան հիմնակէտն է: Ան Քրիստոսի փոխանորդն է, Եպիսկոպոսներու Դասագլուխը եւ համայն Եկեղեցւոյ հովիւը, որուն վրայ ան Աստուծմէ հաստատուած լրակատար, գերագոյն, անմիջական եւ տիեզերական իշխանութիւն ունի:

**183 - Ո՞րն է Եպիսկոպոսներու Դասին յանձնառութիւնը:**

883-885 Եպիսկոպոսներու Դասը, եւս, հաղորդակցաբար Պապին հետ եւ երբեք առանց անոր, Եկեղեցւոյ վրայ գերագոյն եւ լրակատար իշխանութիւն մը կը վարէ:

**184 - Եպիսկոպոսները ուսուցանելու իրենց առաքելութիւնը ինչպէ՞ս կը կիրարկեն:**

888-890 Եպիսկոպոսները, հաղորդակցաբար Պապին հետ՝ պարտականութիւնն ունին Աւետարանը հաւատարմօրէն եւ  
939

հեղինակութեամբ բոլորին քարոզելու: Անոնք Քրիստոսի իշխանութիւնը զգեցած եւ առաքելական հաւատքին վաւերական վկաներն են: Աստուծոյ ժողովուրդը, շնորհիւ հաւատքի իր գերբնական ըմբռնողութեան եւ Եկեղեցւոյ կենդանի Վարդապետութիւն առաջնորդութեան, իր հաւատքին անվրէպ կերպով կը յարի:

**185 - Եկեղեցային Վարդապետութիւն անսխալականութիւնը ե՞րբ կը կիրարկուի:**

Սոյն անսխալականութիւնը կը կիրարկուի երբ Սրբազան Քահանայապետը, Եկեղեցւոյ Գերագոյն Հովիւի իր իշխանութեամբ կամ երբ Եպիսկոպոսներուն Դասը՝ Հաղորդակցաբար Պապին հետ եւ մանաւանդ տիեզերական ժողովի մը մէջ՝ վերջնորոշ վճիռով հաւատքի կամ բարոյականի հայող վարդապետութիւն մը կը հռչակեն: Նաեւ երբ Պապն ու Եպիսկոպոսները իրենց սովորական Վարդապետութիւն ընթացքին՝ միաձայնութեամբ վարդապետութիւն մը որպէս վերջնորոշ կը յայտարարեն: Ամէն հաւատացեալ պարտի նման ուսուցումին յարիլ հաւատքի հնազանդութեամբ:

891

**186 - Եպիսկոպոսները սրբացումի իրենց պաշտօնատարութիւնը ինչպէ՞ս կը կատարեն:**

Եպիսկոպոսները Եկեղեցին կը սրբացնեն Քրիստոսի շնորհքը բաշխելով Խօսքին, Սուրբ Խորհուրդներուն եւ յատկապէս Սուրբ Հաղորդութեան մատակարարումին շնորհիւ, ինչպէս նաեւ իրենց աղօթքներով, ապա իրենց կեանքի օրինակով եւ իրենց վաստակով:

893

**187 - Եպիսկոպոսները իրենց կառավարումի պաշտօնը ինչպէ՞ս կը կիրարկեն:**

Ամէն Եպիսկոպոս, որպէս անդամ եպիսկոպոսական դասին՝ ամբողջ Եկեղեցիին եւ բոլոր մասնաշաղկապ Եկեղեցիներուն խմբական հոգածութիւնը կը ստանձնէ, Պապին միացած միւս Եպիսկոպոսներուն հետ միատեղ: Եպիսկոպոսը իրեն յանձնուած մասնաշաղկապ Եկեղեցին կը

894-896

կառավարէ իր յատուկ, սովորական եւ անմիջական իշխանութեամբ, Քրիստոսի՝ Բարի Հովիւին անունով եւ Պետրոսի յաջորդին առաջնորդութեամբ:

**188 - Ի՞նչ է աշխարհական հաւատացեալներուն առաքելութիւնը:**

897-900 *Աշխարհական հաւատացեալներուն յատուկ առաքելութիւնը կը կայանայ Աստուծոյ Արքայութեան հետամուտ ըլլալու մէջ՝ իրենց ժամանակի իրադարձութիւնները ըստ Աստուծոյ լուսաւորելով եւ կարգաւորելով: Այսպէս՝ անոնք կ'իրագործեն սրբութեան եւ առաքելութեան կոչը, որ ուղղուած է բոլոր մկրտեալներուն:*

**189 - Աշխարհական հաւատացեալները ի՞նչ ձեւով կը մասնակցին Քրիստոսի քահանայական պաշտօնին:**

901-903 *Անոնք Քրիստոսի քահանայութեան կը մասնակցին երբ «Քրիստոսով Աստուծոյ հաճելի (Ա Պետ 2, 5) հոգեւոր զոհ կը մատուցանեն մանաւանդ Սուրբ Հաղորդութեան մէջ, իրենց կեանքը՝ իր բոլոր գործունէութիւններով, իրենց աղօթքներն ու առաքելագործ նախաձեռնութիւնները, իրենց ընտանիքին կեանքն ու առօրեայ աշխատանքը, համբերութեամբ տարուած կեանքի տաղտուկները եւ իրենց հոգեւոր եւ մարմնաւոր հանգիստի պահերը: Այս ձեւով՝ Քրիստոսի համար յանձնառու դարձած եւ Սուրբ Հոգիով նուիրագործուած աշխարհականներն եւս աշխարհը Աստուծոյ կ'ընծայեն:*

**190 - Աշխարհականները ի՞նչ ձեւով կը մասնակցին Քրիստոսի մարգարէական պաշտօնին:**

904-907 *Կը մասնակցին Քրիստոսի Խօսքը միշտ աւելի մեծ հաւատքով ընդունելով եւ զայն աշխարհին աւետելով՝ շնորհիւ իրենց կեանքին վկայութեան, իրենց խօսքերով, աւետաբանիչ գործերով եւ կրօնուսուցումին միջոցով:*

Աւետարանչական նման գործ մը յատուկ կերպով ազդեցիկ կը դառնայ երբ ան կը կատարուի դարուս ընթացիկ կեանքի պայմաններուն ընդմէջէն:

**191 - Աշխարհականները ի՞նչ ձեւով կը մասնակցին Քրիստոսի թագաւորական պաշտօնին:**

Աշխարհականները կը մասնակցին Քրիստոսի թագաւորական պաշտօնին, Անկէ ստացած ըլլալով իրենց եւ աշխարհի մեղքերուն յաղթելու կարողութիւնը, չնորհիւ իրենց անձնագոհութեան եւ իրենց կենցաղի սրբութեան: Անոնք հասարակութեան ի սպաս զանազան պաշտօններ կը ստանձնեն եւ մարդուն աստեանական կեանքին գործունէութիւնները եւ ընկերային հաստատութիւնները կը թրծեն բարոյական արժէքով:

908-913

943

**192 - Ի՞նչ է ուխտեալ կեանքը:**

Ան Եկեղեցւոյ ճանաչումը վայելող գոյավիճակ մըն է: Ան Քրիստոսի ուղղած կոչին տրուած ազատակամ յատուկ պատասխանն է, ուր նուիրեալ անձեր իրենք զիրենք ամբողջովին Աստուծոյ կ'ընծայեն եւ Սուրբ Հոգիին ազդեցութեամբ սիրոյ կատարելութեան կը ձգտին: Այս նուիրագործումը կը յատկանշուի աւետարանական խրատներուն գործադրութեամբ:

914-916

944

**193 - Նուիրեալ կեանքը Եկեղեցւոյ առաքելութեան ի՞նչ կ'ընծայէ:**

Նուիրեալ կեանքը Եկեղեցւոյ առաքելութեան մասնակցութիւն մըն է՝ Քրիստոսի եւ իր եղբայրակիցներուն հանդէպ ցուցաբերած ամբողջական ինքնանուիրումով, իբր վկայութիւն երկինքի Արքայութեան յոյսին:

931-933

945

**«ԿԸ ՀԱԻԱՏԱՄ ՍՈՒՐԲԵՐՈՒ  
ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ»**

**194 - Ի՞նչ կը նշանակէ «սուրբերու հաղորդութիւն» :**

946-953

960

Ան նախ եւ առաջ կը նշանակէ Եկեղեցւոյ բոլոր անդամներուն հասարակաց մասնակցութիւնը սուրբ իրողութիւններուն (սրբութիւնք), այսինքն՝ հաւատքին, Սուրբ Խորհուրդներուն, յատկապէս Գոհութեան խորհուրդին, արտասովոր շնորքներուն եւ հոգեւոր միւս պարգեւներուն: Այս հաղորդութեան արմատը սէրն է, որ «իր սեփական շահը չի փնտռեր» (Ա Կոր 13, 5), այլ հաւատացեալները կը մղէ «ամէն ինչ հասարակաց դարձնելու» (Գործ 4, 32), նոյնիսկ իրենց նիւթական ինչքերը իրենցմէ աւելի չքաւորին հետ:

**195 - Սուրբերու հաղորդութիւնը ուրիշ ի՞նչ կը նշանակէ:**

954-959

961-962

Ան կը նշանակէ հաղորդութիւն նաեւ սուրբ անձերու (սուրբ) միջեւ, որոնք շնորհքին միջոցով՝ մեռեալ եւ յարուցեալ Քրիստոսին հետ միացած են: Անոնցմէ ոմանք աշխարհիս վրայ տակաւին ուխտագնացներ են: Ուրիշներ այս կեանքէն մեկնած ըլլալով, իրենց մաքրասրբումը կ'աւարտեն՝ նաեւ մեր աղօթքներուն օժանդակութեամբ: Վերջապէս ուրիշներ՝ Աստուծոյ փառքը արդէն կը վայելեն եւ մեզի համար կը բարեխօսեն: Ասոնք ամէնքը միասին՝ Քրիստոսով մէկ ընտանիք, այսինքն Եկեղեցին կը կազմեն՝ ի գովեստ եւ ի փառս Երրորդութեան:

***Մարիամ, Մայր Քրիստոսի, Մայր Եկեղեցւոյ***

**196 - Ի՞նչ իմաստով Սուրբ Կոյս Մարիամը Եկեղեցւոյ Մայր է:**

963-966

973

Սուրբ Կոյսը Եկեղեցւոյ Մայր է շնորհքի կարգին մէջ, որովհետեւ ան ծնաւ Յիսուս Աստուածորդին, Գլուխ Իր

*Մարմինն՝ որ է Եկեղեցին: Խաչին վրայ Իր մահուան պահուն, Յիսուս Մարիամը Իր աշակերտին որպէս մայր տուաւ՝ ըսելով. «Ահա՛ մայրդ» ( Յովի 19, 27):*

#### **197 - Սուրբ Կոյսը ինչպէ՞ս կ'օժանդակէ Եկեղեցիին:**

*Իր Որդիին Համբարձումէն ետք, Սուրբ Կոյսը իր 967-970*  
աղօթքներով օժանդակեց Եկեղեցիի սկզբնաւորումին: Երկիրք վերափոխուելէն ետք եւս, ան կը շարունակէ իր զաւակներուն համար բարեխօսել, բոլորին համար հաւատքի եւ սիրոյ տիպար ըլլալ եւ Քրիստոսի յորդառատ արդիւնքներէն բխող իր փրկարար ազդեցութիւնը անոնց վրայ սփռել: Հաւատացեալները Սուրբ Կոյսին մէջ կը տեսնեն սրբանկարը եւ կանխակատարումը իրենց սպասող յարութեան, զինք կ'աղերսեն փաստաբանի, աջակիցի, օգնականի եւ բարեխօսի տիտղոսի տակ:

#### **198 - Ի՞նչ տեսակ մեծարանք կը մատուցուի Սուրբ Կոյսին:**

*Մեծարանքի յատուկ պաշտամունք մը կը մատուցուի, որ 971*  
էապէս կը տարբերի աստուածային պաշտամունքէն, վերապահուած՝ մի միայն Սուրբ Երրորդութեան: Սուրբ Կոյսին նուիրուած այս մեծարանքի պաշտամունքը ինքնաշատուկ ձեւով կ'արտայտուի Աստուածամօր ձօնուած ծիսական տօներուն եւ մարիամեան աղօթքներուն մէջ, ինչպէս՝ Վարդարանք, որ ամբողջ Աւետարանին համառօտ բովանդակութիւնն է:

#### **199 - Ինչպէ՞ս Սուրբ Կոյսը Եկեղեցւոյ վախճանական սրբանկարն է:**

*Եկեղեցին, երբ կը դիտէ մարմնով եւ հոգիով արդէն փա- 972*  
ռաւորուած ամենասրբուհի Մարիամ Սուրբ Կոյսը, անոր 974-975  
մէջ Հիւզմայլ կը նկատէ ա'յն, որուն նմանելու կանչուած է ինք եւս այս երկրի վրայ եւ ինչ որ պիտի ըլլայ ապա երկնային հայրենիքին մէջ:

## «ԿԸ ՀԱՒԱՏԱՄ ՄԵՂՔԵՐՈՒ ԹՈՂՈՒԹԵԱՆ»

**200 - Մեղքերը ի՞նչ ձևով կ'արձակուին:**

- 976-980 *Մեղքերու թողութեան առաջին եւ գլխաւոր սուրբ*  
 984-985 *Խորհուրդը Մկրտութիւնն է: Իսկ Մկրտութենէ ետք*  
*գործուած մեղքերուն համար, Քրիստոս Հաշտութեան կամ*  
*Ապաշխարութեան Սուրբ Խորհուրդը հաստատեց, որուն*  
*միջոցով մկրտեալը հաշտութիւն կը գտնէ Աստուծոյ եւ*  
*Եկեղեցւոյ հետ:*

**201 - Եկեղեցին մեղքերը արձակելու իշխանութիւնն ի՞նչ բանի համար ունի:**

- 981-983 *Եկեղեցին մեղքերն արձակելու առաքելութիւնը եւ իշ-*  
 986-987 *խանութիւնն ունի, որովհետեւ Քրիստոս Ի՛նք զանոնք անոր*  
*յանձնեց ըսելով. «Ընդունեցէ՛ք Սուրբ Հոգին: Որոնց*  
*մեղքերը ներէ՛ք, պիտի ներուին, որոնց մեղքերը կապէ՛ք,*  
*պիտի կապուին» (Յովհ 20, 22-23):*

## « ԿԸ ՀԱՒԱՏԱՄ ՄԱՐՄԻՆԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ »

**202 - Ի՞նչ կը նշանակէ «մարմին»: Ի՞նչ է մարմնին կարեւորութիւնը:**

- 990 *«Մարմին» բառը կը բնորոշէ մարդը իր տկար ու մահ-*  
 1015 *կանացու վիճակին մէջ: «Մարմինը՝ փրկութեան կեդրոնա-*  
*կան առանցքն է» (Տերտուլիանոս): Արդարեւ մենք կը*  
*հաւատանք մարմինը ստեղծող Աստուծոյ, կը հաւատանք*  
*մարմինին փրկութեան համար մարմին առած Բանին, կը*  
*հաւատանք մարմինի յարութեան, որ լրումն է մարմինի*  
*ստեղծումին եւ փրկագործումին:*

**203 - Ի՞նչ կը նշանակէ «մարմիններու յարութիւն»:**

Կը նշանակէ թէ մարդուն վախճանական վիճակը՝ մար- 990  
մինէն անջատ հոգիի մը վիճակը պիտի չըլլայ միայն, այլ  
մեր մահկանացու մարմինները եւս օր մը պիտի վերակեն-  
դանանան:

**204 - Ի՞նչ առնչութիւն կայ Քրիստոսի եւ մեր յարութեան միջեւ:**

Ինչպէս որ Քրիստոս մեռեալներէն ճշմարտապէս յարու- 998  
թիւն առաւ եւ կ'ապրի ցմիշտ, Ան մեզ բոլորս ալ վերջին օրը 1002-1003  
պիտի յարուցանէ անեղծանելի մարմինով. «Անոնք որ  
բարիք ըրած են՝ կեանքի յարութեան համար, իսկ անոնք որ  
չարիք գործած են՝ դատապարտութեան յարութեան  
համար» (Յովհ 5, 29):

**205 - Մահէն ետք ի՞նչ պիտի պատահի մեր մարմինի եւ մեր հոգիի:**

Մահէն ետք՝ հոգին եւ մարմինը իրարմէ պիտի բաժնուին. 992-1004  
մարմինը պիտի փտի, մինչ անմահ հոգին Աստուծոյ դա- 1016-1018  
տաստանին պիտի ներկայանայ եւ մարմնին վերամիանա-  
լուն պիտի սպասէ, մինչեւ որ սա, Տիրոջ վերադարձին՝  
կերպարանափոխուած յարութիւն առնէ: Թէ այս յա-  
րութիւնը ինչպէ՞ս պիտի պատահի, զայն գիտնալը կը գե-  
րազանցէ մեր երեւակայութեան եւ մեր իմացականութեան  
հասողութիւնը:

**206 - Ի՞նչ կը նշանակէ մեռնիլ ի Քրիստոս:**

Կը նշանակէ մեռնիլ Աստուծոյ շնորհքին մէջ, առանց 1005-1014  
մահացու մեղքի: Քրիստոսին հաւատացողը, Անոր օրինա- 1019  
կին հետեւելով, կրնայ այս ձեւով իր իսկ մահը կերպարա-  
նափոխել Հօր հանդէպ հնազանդութեան եւ սիրոյ ներգոր-  
ծութեան: «Այս խօսքը ստոյգ է. եթէ Անոր հետ մեռանք,  
Անոր հետ ալ պիտի ապրինք» (Բ Տիմ 2, 11):

«ԿԸ ՀԱՒԱՏԱՄ ՅԱԽԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ»

**207 - Ի՞նչ է յախտենական կեանքը:**

1020

1051

Յախտենական կեանքը մահէն անմիջապէս ետք սկիզբ առնող կեանքն է, որ վերջ պիտի չունենայ: Յախտենական կեանքէն առաջ՝ պիտի կատարուի մէն մի մարդու առանձնական դատաստանը, զոր պիտի կատարէ ողջերու եւ մեռեալներու դատաւոր Քրիստոսը: Այս դատավճիռը պիտի հաստատուի վերջին դատաստանին օրը:

**208 - Ի՞նչ է առանձնական դատաստանը:**

1021-1022

1051

Ան անմիջական հատուցման դատաստանն է, զոր իւրաքանչիւր մարդ, հազիւ թէ մեռնի՝ պիտի ստանայ իր անմահ հոգիին մէջ, իր հաւատքին եւ իր գործերուն համեմատ: Այս հատուցումը տեղի կ'ունենայ երբ մարդս երկնային երանութեան կը հասնի անմիջապէս կամ քաւչական համապատասխան մաքրումէ մը ետք, կամ ընդհակառակն, երբ զԺողիք յաւիտենական դատապարտութեան արժանանայ:

**209 - Ի՞նչ կը հասկնանք «երկինք» բառով:**

1023-1026

1053

«Երկինք» բառով կը հասկնանք գերագոյն եւ վերջնական երանութեան վիճակը: Անոնք որ Աստուծոյ շնորհքին մէջ կը մեռնին եւ անգրագոյն քաւչական մաքրութեան մը կարիքը չունին, իսկոյն կը միանան Յիսուսի եւ Մարիամի, հրեշտակներուն եւ սուրբերուն: Անոնք այսպէս երկինքի Եկեղեցին կը կազմեն, ուր զԱստուած «դէմ առ դէմ» կը տեսնեն (Ա Կոր 13, 12): Անոնք Սուրբ Երրորդութեան հետ սիրոյ միութեան մէջ կ'ապրին եւ մեզի համար կը բարեխօսեն:

Իրական եւ ճշմարիտ կեանքը մոյնիմքն Հայրն է, որ Որդիին եւ Սուրբ Հոգիին միջոցով երկնային պարգևները կը հեղու մեր բոլորին վրայ: Անոր բարեգթութեամբ, մենք մարդիկս եւս յախտենական

կեանքի անմուաճ խոստումը ստացած ենք (Ս. Կիւրեղ Երուսաղէմացի):

## 210 - Ի՞նչ է քաւարանը:

Քաւարանը վիճակն է անոնց, որ աստուածային բարեկամութեան մէջ կը մեռնին, որոնք, իրենց յաւիտենական փրկութեան մասին ապահով ըլլալով հանդերձ, երկինք մտնելու համար տակաւին քաւական մաքրագոտումի կարիքն ունին:

1030-1031

1054

## 211 - Ինչպէ՞ս կրնանք նպաստել քաւարանի հոգիներուն մաքրագոտումին:

Երկրիս վրայ տակաւին ուխտագնաց հաւատացեալները կրնան, սուրբերու հաղորդութեան զօրութեամբ՝ օժանդակել քաւարանի հոգիներուն՝ անոնց համար աղօթելով, աղերսանք եւ յատկապէս Գոհութեան զոհը մատուցանելով, ինչպէս նաեւ ողորմութիւն տալով, ներողութիւններ շահելով եւ ապաշխարանք կատարելով:

1032

## 212 - Դժոխքը ի՞նչ է:

Ան յաւիտենական դատապարտութիւնն է անոնց որ, իրենց ազատ ընտրութեամբ, մահացու մեղքի մէջ կը մեռնին: Դժոխքին գլխաւոր պատիժը՝ Աստուծոյ յաւիտեանս բաժանումն է: Մարդը միայն Աստուծոյ մէջ կը գտնէ կեանքն ու երջանկութիւնը, որոնց համար ստեղծուած է եւ որոնց կը ձգտի: Քրիստոս դժոխքի իրականութիւնը կ'արտայայտէ հետեւեալ բառերով. «Հեռացէ՛ք ինծմէ, անիծեալներ, գացէ՛ք յաւիտենական կրակին մէջ» (Մտք 25, 41):

1033-1035

1056-1057

## 213 - Ինչպէ՞ս դժոխքին գոյութիւնը հաշտեցնել Աստուծոյ անսահման բարութեան հետ:

Աստուած, հակառակ որ կ'ուզէ որ «ամէնքը հասնին զղջումի» (Բ Պետ 3, 9), սակայն Ան մարդը ազատ եւ պատասխանատու ստեղծած է եւ իր որոշումը կը յարգէ:

1036-1037

Ուստի, մա'րդն է որ ամբողջական անկախութեամբ, ինք-  
զինքը կամաւորապէս կ'անջատէ Աստուծոյ հաղորդու-  
թեանէն, եթէ կ'ուզէ մինչեւ իր մահուան կէտը մահացու  
մեղքին մէջ մնալ, մերժելով Աստուծոյ ամենագութ սէրը:

#### **214 - Ի՞նչ է վերջին դատաստանը:**

1038-1041 **Վերջին (տիեզերական) դատաստանը** երանաւէտ կեանքի  
1058-1059 կամ յաւիտենական դատապարտութեան վճիռն է, զոր Տէր  
Յիսուս պիտի արձակէ Իր շուրջ խմբուած բոլոր «արդար-  
ներուն եւ մեղաւորներուն համար» (Գործ 24, 15) երբ  
վերադառնայ որպէս դատաւոր ողջերուն եւ մեռեալ-  
ներուն: Վերջին դատաստանէն ետք, մարդուն յարուածին  
առած մարմինն ալ պիտի մասնակցի այն հատուցումին,  
որուն արժանացած էր առանձնական դատաստանին օրը:

#### **215 - Վերջին դատաստանը ե՞րբ պիտի պատահի:**

1040 Ան պիտի պատահի աշխարհին վերջը: Անոր օրն ու ժամը  
միայն Աստուած գիտէ:

#### **216 - Ի՞նչ կը նշանակէ նոր երկինքի եւ նոր երկրի յոյսը:**

1042-1050 **Վերջին դատաստանէն ետք**, ապականութեան զերուրթե-  
1060 նէն ազատագրուած տիեզերքը Քրիստոսի փառքին պիտի  
մասնակցի երբ բացումը պիտի կատարուի «նոր երկինքի եւ  
նոր երկրի» (Բ Պետ 3, 13): Այսպէս՝ Աստուծոյ Արքայու-  
թիւնը իր լրումին, այսինքն՝ Աստուծոյ փրկչական ծրագրին  
վերջնական իրագործումին պիտի հասնի, որն է «բովան-  
դակել ամէն բան Քրիստոսով, թէ՛ երկնայինները եւ թէ՛  
երկրայինները» (Եփս 1, 10): Այն ատեն Աստուած պիտի ըլլայ  
յաւիտենապէս «ամէն ինչ ամէն ինչի մէջ» (Ա Կոր 15, 28):

## «Ամէն»

**217 - Ի՞նչ կը նշանակէ մեր հաւատքի դաւանանքը աւարտող «ամէն» բառը:**

Սուրբ Գիրքին վերջին գլուխը, Նոր Կտակարանին կարգ 1061-1065 մը աղօթքները, ինչպէս նաեւ Եկեղեցւոյ ծիսական աղօթքները փակող երաջական «ամէն» բառը կը համապատասխանէ մեր դաւանածին հանդէպ մեր ամբողջական վստահութեամբ արտասանած «այո»ին, ուր մենք մեզ լիովին կը յանձնենք վերջնական «Ամէն»ին (Յայտ 3, 14), որ Տէր Յիսուսն է:





Հոս ներկայացուած նկարին մէջ՝ Յիսուս մէկ առ մէկ հաղորդութիւն կը բաշխէ սեղանի մը շուրջ հաւաքուած առաքեալներուն: Այս նկարչական պատկերացումը ցոյց կու տայ Ս. Հաղորդութեան հանդէպ Եկեղեցւոյ սնուցած խոր ջերմեռանդութիւնը դարերու ընթացքին: «Առանց հաղորդութեան մենք ոչինչ կրնանք ընել», կ'ըսէր Եմերիտոս նահատակը 304ին, Դիոկղետիանոս կայսրին քրիստոնեաներուն դէմ յաւուցած ամենադաժան հալածանքներէն մէկուն միջոցին: Սուրբ ամբաստանուած էր իր հասարակութեան հետ Ս. Հաղորդութեան մերձեցած ըլլալու յանցանքով: Ան այս ամբաստանութիւնը անվերապահ ընդունեցաւ. «Առանց հաղորդութեան մենք չենք կրնար ապրիլ»: Ուրիշ մարտիրոսուհի մը աւելցուց. «Այո՛, ես մեր հաւաքոյթին գացի եւ իմ եղբայրներուս հետ Տիրոջ ընթրիքը սօնակատարեցի, որովհետեւ ես քրիստոնեայ եմ» (Վկայաբանութիւն Ապիթեմայի ցահատակաց, գլ. 11, 7, 10): Հիւսիսային Ափրիկեցի 49 մարտիրոսներ եւս Ս. Հաղորդութեան հանդէպ իրենց հաւատարմութեան պատճառով մահուան դատապարտուեցան: Կուսակալական Ափրիկէի մէջ ինքնատակուած Սատուրնինոսի եւ իր ընկերներուն համար Ս. Հաղորդութեան մէջ գտնուող Յիսուսը իրենց իսկական կեանքն էր: Անոնք նախընտրեցին մեռնիլ քան թէ զրկուիլ Ս. Հաղորդութենէն, որ յաւիտենական կեանքի հաց է:

Ս. Թովմաս Աբուինացիին սովորութիւն ունէր միջօրէին եկեղեցի իջնելու եւ լի վստահութեամբ ու նուիրումով՝ ճակատը տապանակին կպցնելու եւ ներսի Յիսուսին հետ մեղմօրէն զրուցելու: Միջին Դարու այս մեծահռչակ աստուածաբանը ծանօթ է նաեւ Քրիստոսի Մարմնի սօնին առթիւ իր յօրինած մէկ տաղով, որուն մէջ ան իր խոր ջերմեռանդութիւնը կ'արտայայտէ Ս. Հաղորդութեան հանդէպ:

Գոհարանական սոյն լատին շարականին մէջ ներփակուած է Ս. Հաղորդութեան մասին կաթողիկէ հոգեւորականութեան համադրութիւնը.

«Մասնիչին կողմէ իր մեղսակիցներուն ձեռքը յանձնուելու պահուն,  
(Յիսուս) Իր աշակերտներուն Ինչպիսիք կեանքի սնունդ տուաւ:  
Ան Իր Մարմինն ու Իր Արիւնը, երկու տեսակներուն ներքեւ, անոնց տուաւ,  
որպէսզի այս զոյգ զոյգացութեան տակ՝ մարդը լման սնուցանէ:  
Մարմնանալով՝ Ինչպիսիք ճամբու ընկեր տուաւ,  
սեղան բազմելով՝ Ինչպիսիք կերակուր տուաւ,  
յիսկ մեռնելով՝ Ինչպիսիք վարձատրութիւն տուաւ»:

Թովմաս Աբուինացին, երբ Ս. Հաղորդութիւնը կը կոչէ «հոգեւոր կեանքի գազաթ եւ կատարելութիւն», կ'արտայայտէ Եկեղեցւոյ հաւատքին գիտակցութիւնը, որ կը դաւանի թէ Ս. Հաղորդութիւնը Յիսուսի կենդանի ներկայութիւնն է մեր մէջ եւ հոգեւոր կեանքի անհրաժեշտ սնունդն է: Ս. Հաղորդութիւնը այն ոսկեթելն է, որ Եկեղեցւոյ բոլոր դարերը իրարու կը զօդէ, սկսելով Վերջին Ընթրիքէն եւ հասնելով մինչեւ մեր օրերը: Սրբազործումի բառերը՝ «Ասիկա Իմ Մարմինն է» եւ «Ասիկա Իմ Արիւնն է»՝ միշտ եւ բազմատեսակ վալրելու մէջ արտասանուեցան. աքաղաղալոյրբու, արգելակալանքներու եւ մինչեւ օրս գոյութիւն ունեցող հազարաւոր բանտերու մէջ: Եկեղեցին Ս. Հաղորդութիւնը իբր հորիզոն սեւեռելով է որ իր կեանքը, իր փոխ յարաբերութիւններն ու իր առաքելութիւնը կը հիմնաւորէ:

ԵՈՍ ՖԱՆ ՎԱՍԸՆՀՈՎԷՆ – ՅԻՍՈՒՍ ԱՌԱՔԵԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՀՈՐԴՈՒԹԻՒԹԻՒՆ ԿԸ ԲԱՇԽԷՒ, ՈՒՐՊԻՆՕ ՔԱՀԱՔԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ:

**ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ**

**ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ**

**ՀԱՆԴԻՍԱԿԱՏԱՐՈՒՄԸ**



**ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԱԾ**  
**ԽՈՐՀՐԳԵՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ**



Խաչի զոհաբերումը աղբիւրն է Եկեղեցւոյ խորհրդենական տնտեսութեան: Նկարին մէջ Մարիամ, Եկեղեցւոյ խորհրդապատկերը, ձախ ձեռքին մէջ կը հաւաքէ Յիսուսի խոցուած կողէն հոսող արիւնը եւ ջուրը, որոնք խորհրդանշին են Եկեղեցւոյ Սուրբ Խորհուրդներուն: «Երբ Յիսուսին հասան, տեսան որ Ան արդէն մահացած էր, ուստի Անոր սրունքները չփշրեցին, այլ զինուորներէն մէկը իր տէգով խոցեց Անոր կողը եւ խկոյն արիւն եւ ջուր հոսեցաւ» (Յովի 19, 33-34):

Ս. Թգոստինոս ապպէս կը մեկնաբանէ.

«Տէր մեր Յիսուս Քրիստոս մեզի համար չարչարուելու ատեն մեզի նուիրեց ինչ որ մարդանայու ատեն մեզմէ առած էր, եւ այսպէս քահանաներուն մեծագոյնը դարձաւ յաւիտենապէս : Ան մեզի տնօրինեց որ մատուցանենք այն զոհը զոր կը տեսնէք, այսինքն իր մարմինն ու իր արիւնը: Արդարեւ տէգով խոցուած իր Մարմինը արիւն եւ ջուր հոսեցուց եւ անոնցմով մեր մեղքերուն թողութիւն տուաւ: Այս շնորհքը վերյիշելով եւ ձեր փրկութիւնը կատարելով (զոր Աստուած կը կատարէ ձեր մէջ), պատրաստուեցէ՛ք ահով եւ երկիւղով մերձենալու այս սեղանին: Այս հացին մէջ ճանչցէ՛ք այն նոյնը (մարմինը) որ դուք խաչէն կախեցիք, իսկ այս բաժակին մէջ՝ այն (արիւնը) որ իր կողէն հոսեցաւ: Աստուծոյ ժողովուրդին մատուցուած Հին զոհերը եւս, իրենց այլազան կերպերով, կը նախապատկերէին այն միակ՝ զոհը, զոր պիտի մատուցուէր: Քրիստոս թէ՛ դառն է իր մաքրամաքուր հոգիին անմեղութեամբ, թէ՛ ալ նոխազ՝ իր մեղք դարձած մարմինով: Հին Կտակարանին զոհերուն մէջ ինչ որ բազմազան եւ բազմաթիւ ձեւերով նախապէս պատկերացուած է, բոլորը կ'առնչուին մի միայն ասո՛ր (այն զոհին) հետ, որ յայտնուեցաւ Նոր Կտակարանին մէջ:

Ուրեմն առէ՛ք եւ կերէ՛ք Քրիստոսի Մարմինը, դուք որ այժմ դարձաք Քրիստոսի անդամներ՝ Քրիստոսի Մարմինն հետ: Առէ՛ք եւ խմեցէ՛ք Յիսուսի արիւնը: Իրարմէ չբաժնուելու համար՝ կերէ՛ք ինչ որ ձեզ իրարու կը միացնէ: Դուք ձեզ անարժէք չհամարելու համար՝ խմեցէ՛ք ձեր արժէքը: Ինչպէս որ Ան ձեզի կը կերպարանափոխուի երբ որ Ձինք կ'ուտէք ու կը խմէք, դուք ալ պիտի կերպարանափոխուիք Քրիստոսի Մարմինին եթէ ձեր կեանքը ապրիք հնազանդութեան եւ բարեպաշտութեան մէջ: Իր չարչարանքի ժամը մօտենալով՝ երբ Քրիստոս, ուզեց Ձատիկը տօնել իր աշակերտներուն հետ, առաւ հացը, օրհնեց ըսելով.- «Ասիկա իմ մարմինս է որ պիտի յանձնուի ձեզի համար», նմանապէս՝ բաժակը օրհնելէ ետք, զայն տուաւ ըսելով.- «Ասիկա իմ արիւնս է, նոր ուխտի արիւնը, որ պիտի հօսի բազմութեան մեղքերուն թողութեան համար»:

Այս ամէնը՝ Աւետարանէն արդէն կը լսէիք եւ կը կարդայիք սակայն չէիք գիտեր որ այս Հաղորդութիւնը նոյնինքն Որդիւն է: Բայց այժմ Անոր մօտեցէ՛ք անբիծ խիղճի մը մաքրուած սիրտով եւ ջինջ ջուրի մէջ լուացուած մարմնով: Մօտեցէ՛ք Իրեն եւ պիտի լուսաւորուիք եւ ձեր զէմքերը պիտի չկարմրին ամօթէն (Մատ 228, 19):

Վատիկան, «Մայր Փրկչին» մատուռ: Խճանկար՝ Մարդեղութեան որմէն:

**218 - Ի՞նչ է ծիսակատարումը:**

Ծիսակատարումը Քրիստոսի Խորհուրդին եւ յատկապէս Անոր զատկական Խորհուրդին տօնակատարումն է: Ծիսակատարումին մէջ, Յիսուս Քրիստոսի քահանայական պաշտօնին կատարումին միջոցով մարդոց սրբացումը կը նշուի եւ կ'իրագործուի նշաններու ընդմէջէն, իսկ Քրիստոսի խորհրդական Մարմինին, այսինքն Անոր գլուխին ու անդամներուն կողմէ, Աստուծոյ յատուկ հրապարակային պաշտամունք կը մատուցուի: 1066-1070

**219 - Ո՞րն է ծիսակատարումին տեղը Եկեղեցւոյ կեանքին մէջ:**

Ծիսակատարումը, որպէս գերանշանցօրէն սրբազան արարք, կը հանդիսանայ այն գագաթը, որուն կը ձգտի Եկեղեցիին գործունէութիւնը, ան միանգամայն այն աղբիւրն է, որմէ Եկեղեցին իր կենսական ուժը կը քաղէ: Ծիսակատարումին միջոցով Քրիստոս Իր Եկեղեցիին մէջ, Եկեղեցիին հետ եւ Եկեղեցիով՝ կը շարունակէ մեր փրկագործութիւնը կատարել: 1071-1075

**220 - Ի՞նչ բանի մէջ կը կայանայ խորհրդեցական տնտեսութիւնը:**

Խորհրդեցական տնտեսութիւնը Քրիստոսի փրկագործութեան պտուղներուն փոխանցումն է Եկեղեցւոյ Սուրբ Խորհուրդներուն մատակարարումով եւ յատկապէս Գոհութեան խորհուրդին միջոցով, «մինչեւ որ Ան գայ» (Ա Կոր 11, 26): 1076

## ԳԼՈՒԽ Ա.

ԶԱՏԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՉԾԻՍԱԿԱՏԱՐՈՒՄԸ՝ ԳՈՐԾ  
ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ**221** - Ինչպե՞ս Հայրը ծիսակատարումին աղբիւրն ու վախճանն է:

1077-1083

1110

Ծիսակատարումին մէջ՝ Հայրը մեզի համար մարմնացած, մեռած եւ յարութիւն առած Իր Որդիին մէջէն՝ Իր օրհնութիւններով մեզ կը լիացնէ եւ Սուրբ Հոգին մեր սրտերուն մէջ կը սփռէ: Եկեղեցին ալ միաժամանակ Հօր պաշտամունք կը մատուցանէ, Անոր շնորհակալութիւն կը յայտնէ եւ Զայն կ'օրհնաբանէ, միանգամայն Իր Որդիին եւ Սուրբ Հոգիին պարգեւները կ'աղերսէ:

**222** - Ի՞նչ է Քրիստոսի գործը ծիսակատարումին մէջ:

1084-1090

Ծիսակատարումին մէջ Քրիստոս գլխաւորապէս Իր գատկական Խորհուրդը կը նշէ եւ կ'իրագործէ: Իր Առաքեալներուն եւ անոնց յաջորդներուն Ս. Հոգին տալով՝ Ան անոնց շնորհեց փրկագործութիւնը կատարելու իշխանութիւնը, շնորհիւ Գոհաբանութեան զոհին եւ Սուրբ Խորհուրդներուն, որոնց մէջ Ինք եւս կը գործէ՝ Իր շնորհքը հաղորդելու համար բոլոր ժամանակներու եւ ամբողջ աշխարհի հաւատացեալներուն:

**223** - Ինչպե՞ս ծիսակատարումին մէջ Սուրբ Հոգին կը ներգործէ Եկեղեցիին նկատմամբ:

1091-1109

1112

Ծիսակատարումին մէջ տեղի կ'ունենայ ամենասեղմ գործակցութիւնը Սուրբ Հոգիին եւ Եկեղեցիին միջեւ: Սուրբ Հոգին կը պատրաստէ Եկեղեցին իր Տիրոջ հետ

Հանդիպելու: Կը վերյիշեցնէ եւ կը յայտնէ Քրիստոսը հաւատացեալներուն հաւատքին: Քրիստոսի Խորհուրդը ներկայ կը դարձնէ եւ կ'այժմէագործէ: Ան Եկեղեցին կը միացնէ Քրիստոսի կեանքին եւ առաքելութեան եւ հաղորդութեան պարզեւր անոր մէջ բեղուն կը դարձնէ:

## ՉԱՏԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՆ ՄԷՋ

**224** Ի՞նչ են Խորհուրդները: Որո՞նք են անոնք:

Խորհուրդները շնորհքին շօշափելի եւ արդիւնագործ <sup>1113-1131</sup> նշաններ են, հաստատուած Քրիստոսէ եւ յանձնուած Եկեղեցոյ, որոնց ընդմէջէն աստուածային կեանքը մեր մէջ կը բաշխուի: Անոնք եօթը հատ են. Մկրտութիւն, Դրոշմ, Հաղորդութիւն, Ապաշխարանք, Հիւանդներու Օծում, Կարգ եւ Ամուսնութիւն:

**225** - Խորհուրդները Քրիստոսի հետ ի՞նչ առնչութիւն ունին:

Քրիստոսի կեանքին Խորհուրդները հիմունքն են այն <sup>1114-1116</sup> ամէն ինչին, որ Քրիստոս այժմ Եկեղեցոյ պաշտօնատարներուն միջոցով կը բաշխէ Խորհուրդներուն ընդմէջէն:

Ինչ որ մեր Փրկչին մէջ տեսանելի էր, անցաւ Իր Սուրբ Խորհուրդներուն մէջ ( *Ս. Լեւոն Մեծ*):

**226** - Ի՞նչ է Խորհուրդներուն զօղը Եկեղեցոյ հետ:

Քրիստոս Խորհուրդները Իր Եկեղեցիին յանձնեց: Անոնք <sup>1117-1119</sup> «Եկեղեցիին» են՝ զոյգ նշանակութեամբ. «Եկեղեցիով» են՝ որովհետեւ ներգործութիւնն են եկեղեցոյ, որ իր կարգին՝ Խորհուրդն է Քրիստոսի ներգործութեան: Անոնք «Եկեղեցիին համար» են՝ որովհետեւ Եկեղեցին կը կերտեն:

**227 - Ի՞նչ է խորհրդենական դրոշմագիրը:**

1121 Ան հոգեւոր կնիք մըն է, ընձեռուած Մկրտութեան, Դրոշմին եւ Կարգի Խորհուրդներուն միջոցով: Ան աստուածային պաշտպանութեան կողմէ խոստում եւ երաշխաւորութիւն է: Այս կնիքին զօրութեամբ, քրիստոնեան Քրիստոսի կերպարանակից կը դառնայ եւ զանազան կերպերով Անոր քահանայութեան կը մասնակցի, եւ զանազան վիճակներու եւ պաշտօններու համեմատ՝ Եկեղեցւոյ մաս կը կազմէ: Ան աստուածային պաշտամունքին եւ Եկեղեցւոյ սպա-սարկութեան աջակցելու կոչուած է: Սուրբ Խորհուրդներուն հաղորդած դրոշմագրերը անջնջելի ըլլալնուն պատճառով, անոնք կեանքին մէջ միայն մէկ անգամ կը մատակարարուին:

**228 - Ո՞րն է Խորհուրդներուն զօրը հաւատքի հետ:**

1122-1126 Սուրբ Խորհուրդները՝ մարդուն մէջ հաւատքը ո՛չ միայն  
1133 կ'ենթադրեն, այլ նաեւ ծիսական խօսքերուն եւ այլ տարրերուն միջոցով՝ զայն կը սնուցանեն, կ'ամրապնդեն եւ կ'արտայայտեն: Եկեղեցին Սուրբ Խորհուրդները մատակարարելով, առաքելական հաւատքը կը դաւանի: Ասկից ծնունդ կ'առնէ «օրէնք աղօթքի, օրէնք հաւատքի» հին ասոյթը, որ կը նշանակէ. Եկեղեցին իր հաւատքին համեմատ կ'աղօթէ:

**229 - Խորհուրդները ինչպէ՞ս արդիւնագործ են:**

1127-1128 Խորհուրդները արդիւնագործ են ի գործոյ գործեցելոյ  
1131 («Խորհուրդին կատարումին զօրութեամբ»): Քրիստո՛ս է որ անոնց մէջ կը ներգործէ եւ անոնց նշանակած շնորհքը կը փոխանցէ, անկախաբար զայն մատակարարող պաշտօնատարին անձնական սրբութենէն: Սակայն Խորհուրդներուն արդիւնագործութիւնը կախում ունի նաեւ զանոնք ընդունողներուն տրամադրութենէն:

**230 - Ինչու՞ Խորհուրդները փրկութեան համար անհրաժեշտ են:**

Նոյնիսկ եթէ բոլոր Խորհուրդները իւրաքանչիւր հա- 1129  
ւատացեալին չեն տրուիր, սակայն անոնք Քրիստոսի հաւա-  
տացողներուն փրկութեան համար անհրաժեշտ են, որովհե-  
տեւ անոնք կը պարզեւեն խորհրդենական շնորհները, մեղ-  
քերու արձակումը, աստուածային որդեգրութիւնը, Քրիս-  
տոսի նմանութիւնը եւ Եկեղեցիին պատկանելիութիւնը:  
Սուրբ Հոգին կը բուժէ եւ կը կերպարանափոխէ անոնք որ  
Խորհուրդները կը ստանան:

**231 - Ի՞նչ է խորհրդենական շնորհը:**

Խորհրդենական շնորհքը Սուրբ Հոգիին շնորհքն է, զոր 1129-1131  
Քրիստոս կու տայ իւրաքանչիւր Խորհուրդին համեմատ: 1134-2003  
Այս շնորհքը կ'օգնէ հաւատացեալին՝ սրբութեան ճամբուն  
վրայ: Ան նաեւ կը նպաստէ Եկեղեցիին՝ սիրոյ եւ վկայու-  
թեան մէջ իր աճումին:

**232 - Ի՞նչ է Խորհուրդներուն առնչութիւնը յաւիտենական կեանքին հետ:**

Խորհուրդներուն միջոցով՝ Եկեղեցին յաւիտենական 1130  
կեանքը կանխիկ կը ստանայ, մնալով հանդերձ «մեր մեծ  
Աստուծոյն եւ Փրկչին Յիսուս Քրիստոսի երանելի յոյսին եւ  
փառքին յայտնութեան սպասումին մէջ» (Տիտ 2, 13):

## ԳԼՈՒԽ Բ.

### ԶԱՏԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳԻՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒՄԸ

#### ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒՄԸ

#### Ո՞վ կը ծիսակատարէ:

**233** - Ծիսակատարումին մէջ ո՞վ է գործողը:

1135-1137 *Ծիսակատարումին մէջ «Ամբողջական Քրիստոսն» է*  
 1187 *գործողը, որպէս Գլուխ եւ Մարմին: Ան որպէս Գերագոյն Քահանայ, կը հանդիսակատարէ իր Մարմինին միջոցով, որ երկնային եւ երկրային Եկեղեցին է:*

**234** - Ո՞վ կը տօնախմբէ Երկնային ծիսակատարումը

1138-1139 *Երկնային ծիսակատարումը կը տօնախմբեն հրեշտակները, Հին եւ Նոր Կտակարանին սուրբերը եւ յատուկ կերպով Աստուածամայրը, առաքեալները, մարտիրոսները եւ «անհամար բազմութիւն մը բոլոր ազգերէն, ժողովուրդներէն եւ լեզուներէն» (Յայտ 7, 9): Մենք, երբ սուրբ խորհուրդներով կը յիշատակենք փրկութեան խորհուրդը, կը մասնակցինք այս երկնային ծիսակատարումին:*

**235** - Երկրաւոր Եկեղեցին ծիսական պաշտամունքը ի՞նչ ձևով կը կատարէ:

1140-1144 *Երկրաւոր Եկեղեցին ծիսական պաշտամունքը կը*  
 1188 *կատարէ իբր քահանայական ժողովուրդ, որուն ծոցին մէջ իւրաքանչիւր անձ կը գործէ ըստ իր պաշտօնին, Սուրբ Հոգիի միութեան մէջ: Մկրտեալները իրենք զիրենք կը մատուցանեն իբր հոգեւոր գոհեր: Զեռնադրեալ պաշտօնեաները կը հանդիսակատարեն իրենց ստանձնած Կարգին*

Համեմատ՝ ի սպաս Եկեղեցւոյ բոլոր անդամներուն, իսկ Եպիսկոպոսներն ու քահանաները իրենց Գլխուն՝ Քրիստոսի անձին մէջ կը գործեն:

## Ի՞նչպէս Ծիսակատարել:

**236 - Ծիսակատարումը ի՞նչ ձևով տեղի կ'ունենայ:**

Ծիսական Հանդիսակատարումը կը բաղկանայ նշաններէ եւ խորհրդանիշերէ, որոնց նշանակութիւնը կը բացայայտուի արարչութեան եւ մարդկային մշակոյթներուն մէջ արմատացած Հին Ուխտին դէպքերուն մէջէն, իսկ ամբողջութեամբ կը յայտնուի Քրիստոսի Անձին եւ գործերուն մէջ:

1145

**237 - Ուսկի՞ց առնուած են խորհրդենական նշանները:**

Անոնցմէ ոմանք կու գան արարածներէն (լոյսը, ջուրը, կրակը, հացը, գինին, իւղը), ուրիշներ կու գան ընկերային կեանքէն (լուալ, օծել, հաց բեկանել), իսկ ուրիշներ՝ Հին Ուխտի փրկութեան պատմութենէն (Զատիկուայ ծիսարարքները, զոհերը, ձեռքերու տարածումը, նուիրագործումները): Նման նշանները, որոնցմէ ոմանք Քրիստոսի կողմէ ստանձնուած ըլլալով՝ օրէնքի անփոփոխելի նշանակութիւն ստացած են, իրենց մէջ կը ներփակեն փրկութեան եւ սրբացման արարքները:

1146-1152

1189

**238 - Ի՞նչ զօդ գոյութիւն ունի խորհրդենական հանդիսակատարումի շարժումներուն եւ խօսքերուն միջեւ:**

Խորհրդենական Հանդիսակատարումին շարժումներն ու խօսքերը իրարու հետ սերտօրէն առնչուած են: Արդարեւ նոյնիսկ եթէ խորհրդանշական շարժումները ինքնին արդէն խօսուն են, սակայն անհրաժեշտ է որ ծիսարարքի խօսքերը անոնց ընկերակցին եւ զանոնք կենսաւորեն: Ծիսարարքի խօսքերն ու շարժումները՝ իբր նշան եւ նշանակութիւն իրարու զօդուած ըլլալէն զատ, անանջատելի են՝ նաեւ

1153-1155

1190

որովհետեւ կ'իրագործեն ինչ որ կը նշանակեն:

**239 -** Երգն ու երաժշտութիւնը ի՞նչ չափանիշով իրենց պաշտօնն ունին ծիսակատարումին մէջ:

1156-1158 *Երգն ու երաժշտութիւնը ծիսարարքի հետ սեղմ կապակցութիւն ունենալնուն պատճառով, անոնք հետեւեալ չափանիշերը յարգելու են. - Անոնց խօսքերը նախընտրաբար Սուրբ Գիրքէն եւ ծիսական աղբիւրներէն քաղուած եւ կաթողիկէ վարդապետութեան հետ համաձայն ըլլալու են, - Աղօթքը գեղեցիկ ոճով արտայայտուած ըլլալու է - Երաժշտութիւնը որակաւոր ըլլալու է - Խմբուած ժողովուրդը ծիսարարքին մասնակցելու է - Աստուծոյ Ժողովուրդին մշակութային հարստութիւնը բովանդակելու են - Հանդիսակատարումին սրբազան եւ հանդիսաւոր բնոյթը պահպանելու են: «Ան որ կ'երգէ, երկու՝ անգամ կ'աղօթէ» (Ս. Օգոստինոս):*

**240 -** Ինչու՞ են սուրբ նկարները:

1159-1161 *Քրիստոսի պատկերը ծիսական գերազանց սրբանկարն է: Սուրբ Կոյսը եւ սուրբերը ներկայացնող միւս նկարները Քրիստոսը կը նշեն, որ անոնց մէջ փառաւորուած է, կը հռչակեն նոյն առաքելական պատգամը զոր Սուրբ Գիրքը կը փոխանցէ խօսքին միջոցով, կ'օժանդակեն հաւատացեալներուն մէջ հաւատքն արթնցնելու եւ սնուցանելու:*

## Ե՞րբ ծիսակատարել:

**241 -** Ո՞րն է ծիսական ժամանակին կեդրոնը:

1163-1167 *Ծիսական ժամանակին կեդրոնը՝ Կիրակին է, հիմնականէ տն ու կորիզը ծիսական ամբողջ տարիին, որուն գագաթնակէտը կը հանդիսանայ Զատիկը, տօներուն տօ՛նը:*

**242 - Ո՞րն է դերը ծխական տարիին:**

Ծխական տարիին ընթացքին, Եկեղեցին կը տօնակա- 1168-1173  
տարէ Քրիստոսի ամբողջ խորհուրդը՝ Անոր Մարդեղու- 1194-1195  
թենէն մինչեւ Անոր փառքով վերադարձը: Որոշ օրերուն՝  
Եկեղեցին յատուկ խանդաղատանքով կը մեծարէ Սուրբ  
Կոյս Աստուածամայրը եւ կը յիշատակէ սուրբերը, որոնք  
ապրեցան ու չարչարուեցան Քրիստոսի համար եւ այժմ  
Անոր հետ փառաւորուած են:

**243 - Ո՞րն է ժամասացութեան դերը:**

Ժամասացութիւնը, որ Եկեղեցւոյ հասարակական եւ 1174-1178  
սովորական աղօթքն է, Քրիստոսի՝ աղօթքն է, որ կը 1196  
կատարուի Անոր Մարմինն՝ Եկեղեցիին հետ: Անոր միջոցով՝  
Քրիստոսի խորհուրդը, զոր մենք Սուրբ Հաղորդութեան  
մէջ կը մատուցանենք, իրաքանչիւր օրուայ ժամանակը կը  
սրբացնէ եւ կ'այլակերպէ: Ան բաղկացած է յատկապէս  
Սաղմոսներէ եւ Սուրբ Գիրքի զանազան հատուածներէ,  
ինչպէս նաեւ Հայրերու եւ հոգեւոր կեանքի վարդապետ-  
ներու ընթերցումներէ:

**Ու՞ր ծխակատարել:**

**244 - Եկեղեցին Ծխակատարումի վայրերու պէտք ունի՞:**

Նոր Ուխտին «հոգևով եւ ճշմարտութեամբ» կատարուող 1179-1181  
պաշտամունքը (Յովի 4, 24) յատուկ վայրի մը չէ կապուած, 1197-1198  
որովհետեւ Աստուծոյ ճշմարիտ տաճարը Քրիստոսն է,  
Որուն շնորհիւ քրիստոնեաներն ու համայն Եկեղեցին կեն-  
դանի Աստուծոյ տաճարներ կը դառնան՝ Սուրբ Հոգիին  
ներգործութեամբ: Սակայն Աստուծոյ Ժողովուրդը իր երկ-  
րային պայմաններուն իբր հետեանք՝ կարիքն ունի  
վայրերու, ուր կարենայ համախմբուիլ ծխակատարելու  
համար:

**245 - Պաշտամունքի շենքերը ի՞նչ են:**

1181 Անոնք Աստուծոյ տուներն են, խորհրդանիշ՝ նոյն վայ-  
 1198-1199 րին մէջ ապրող Եկեղեցիին, նաեւ խորհրդանիշ՝ երկնային  
 բնակարանին: Անոնք աղօթքի վայրեր են, որոնց յարկին  
 տակ Եկեղեցին յատկապէս Սուրբ Հաղորդութիւնը կը  
 ծխակատարէ եւ տապանակին մէջ իրապէս ներկայ  
 Քրիստոսը կը պաշտէ:

**246 - Պաշտամունքի տուներուն մէջ որո՞նք են նախընտրեալ  
 վայրերը:**

1182-1186 Ասոնք են. խորանը, տապանակը, խորհրդանոցը, ուր  
 Սուրբ Մեռոնը եւ միւս Սուրբ Իւղերը կը պահուին, Եպիս-  
 կոպոսին (կամ Ժողովրդապետին) գահը, ամբիոնը, Մկրտու-  
 թեան աւազանը, խոստովանարանը:

ԾԻՍԱԿԱՆ ԱՅԼԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ  
 ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

**247 - Ինչո՞ւ Եկեղեցւոյ մէջ Քրիստոսի մէկ ու միակ Խոր-  
 հուրդը ծխական զանազան աւանդութիւններով կը  
 ծխակատարուի:**

1200-1204 Որովհետեւ Քրիստոսի Խորհուրդին անգնելի ճոխու-  
 1207-1209 թիւնը չի սպառիր մէկ ծխական աւանդութեան մը կա-  
 տարումով: Այս ճոխութիւնը, սկիզբէն իսկ, տարբեր Ժողո-  
 վուրդներու եւ տարբեր մշակոյթներու մօտ՝ գտած է ար-  
 տայայտութեան ա՛յնպիսի ձեւեր, որոնք կը բնորոշուին  
 իրենց սքանչելի բազմազանութեամբ եւ իրենց լրացուցա-  
 կան հանգամանքով:

**248 - Ո՞րն է այս բազմազանությունը միաւորող չափանիշը:**


*Չափանիշը՝ անոնց հարազատութիւնն է Առաքելական 1209 Աւանդութեան հետ, այսինքն Առաքեալներէն ընդունուած հաւատքին եւ Սուրբ Խորհուրդներուն հետ անոնց կապակցութիւնն է, նշուած եւ երաշխաւորուած առաքելական յաջորդութեան կողմէ: Եկեղեցին կաթողիկէ է, հետեւաբար կրնայ զանազան մշակոյթներու հարազատ հարստութիւնները իր միութեան մէջ համարկել:*

**249 - Ծիսակատարումին ամէն մէկ մասը անփոփոխելի՞ է:**

*Ծիսակատարումին մէջ եւ յատկապէս Սուրբ Խորհուրդ- 1205-1206 ներուն ծիսակատարումի պարագային՝ անփոփոխելի տարրեր կան, քանի որ անոնք աստուածային հաստատում ունին, որոնց հաւատարիմ պահապանը Եկեղեցին է: Կան նաեւ փոփոխութեան ենթարկելի տարրեր, զորս Եկեղեցին կրնայ եւ պարտի զանազան ժողովուրդներու մշակոյթին յարմարցնել:*



**ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ**  
**ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՕԹԸ**  
**ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ**



**Եկեղեցւոյ եօթը սուրբ Խորհուրդներն են.**

**Մկրտութիւնը,  
Դրոշմը,  
Սուրբ Հաղորդութիւնը,  
Ապաշխարանքը,  
Հիւանդներու Օծումը,  
Կարգ Քահանայութեան,  
Ամուսնութիւնը կամ Սուրբ Պսակը:**

Եկեղեցւոյ Սուրբ Խորհուրդները արգասիքն են Յիսուսի խաչին վրայ փրկագործ գոհաբերումին: Այս եռաշարք նկարները եկեղեցի մը կը ներկայացնեն, ուր եօթը Խորհուրդները կը մատակարարուին: Կեր-րօնին կը բարձրանայ Խաչը՝ գերիշխող դիրքի վրայ: Խաչի ներքեւ՝ ներկայ է Մարիամ, վշտաբեկ, անոր թիկունք կանգնած է Յովհաննէս: Հոն են նաեւ բարեպաշտ կիները: Նկարի խորքին, պատարագիչ քահանայ մը սրբագործուած Սուրբ Նշխարը բարձրացուցած է, ցոյց տալու համար, թէ ան Խաչին գոհաբերումին այժմէագործումն է, հացի եւ գինիի սուրբ տեսակներուն ներքեւ: Զախ կողմը, կողմնակի մատուռի մը մէջ՝ ներկայացուած է եպիսկոպոսի մը կողմէ կատարուող Մկրտութեան եւ Դրոշմի Խորհուրդը: Իսկ աջակողմեան թեւին մէջ՝ դարձեալ եպիսկոպոսը կը մատակարարէ քահանայական Զեռնադրութիւնը, Սուրբ Պսակը եւ Հիւանդաց Օծումը :

**Եօթը Սուրբ Խորհուրդներու եռանկար, ՌՕԺէ ՖԱՆ ՏԵՐ ՎԷՅՏԵՆ,  
Գեղարուեստից թանգարան, Անվերս :**

**250 - Սուրբ Խորհուրդները ինչպե՞ս կը բնորոշուին:**

Հետեւեալ ձեւով կը բնորոշուին. քրիստոնեայ նախապատրաստումի Խորհուրդները. (Մկրտութիւն, Դրոշմ եւ Սուրբ Հաղորդութիւն), բժշկութեան Սուրբ Խորհուրդները (Ապաշխարութիւն եւ Հիւանդաց Օծում), հաղորդակցութեան եւ առաքելութեան սպասարկող Խորհուրդները (Կարգ Քահանայութեան եւ Ամուսնութիւն): Բոլորն ալ քրիստոնեայ կեանքին կարեւոր հանգրուաններուն կը վերաբերին: Բոլորը ուղեւորուած են դէպի Սուրբ Հաղորդութիւնը «որպէս իրենց առանձնայատուկ վախճանին» (Ս. Թովմաս Աքոլինացի):

1210-1211

## ԳԼՈՒԽ Ա.

### ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԻ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

**251 - Ինչպե՞ս կը կատարուի քրիստոնեայ նախապատրաստումը:**

Կը կատարուի ա՛յն Սուրբ Խորհուրդներով, որոնք քրիստոնեայ կեանքին հիմները կը դնեն: Մկրտութեամբ վերածնած քրիստոնեաները կը զօրանան Դրոշմով եւ կը սնանին Սուրբ Հաղորդութեամբ:

1212

1275

## ՍԿՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

**252 - Նախապատրաստումի առաջին Խորհուրդը ի՞նչ անուններ կը կրէ:**

Ան նախ Սկրտութիւն կը կոչուի, սոյն ծիսական արարողութեան ունեցած կեդրոնական դերին պատճառով. արդարեւ մկրտել կը նշանակէ ջուրին մէջ «Թաթախել»: Մկրտուողը Քրիստոսի մահով կը թաթախուի եւ անոր հետ յարութիւն կ'առնէ իբր «նոր արարած» (Բ Կոր 5, 17): Ան կը

1213-1216

1276-1277

կոչուի նաեւ «աւագան վերածնունդի եւ վերանորոգումի Սուրբ Հոգիով» (Տիա 3, 5), ինչպէս նաեւ «լուսաւորում», որովհետեւ մկրտեալը «լոյսի որդի» կը դառնայ (Եփս 5, 8):

**253 - Մկրտութիւնը Հին Կտակարանին մէջ ի՞նչ ձեւով նախապատկերացում է:**

1217-1222 Հին Կտակարանին մէջ Մկրտութիւնը զանազան նախապատկերացումներ ունի: Նախ ջուրն է, աղբիւր կեանքի եւ մահուան, ապա Նոյի տապալնն է, որ կը փրկէ ջուրի միջոցով, Կարմիր Ծովին անցքն է, որ Իսրայէլը ազատեց Եգիպտոսի գերութենէն, Յորդանան գետէն անցքն է, որ Իսրայէլը մտցուց Խոստացեալ Երկիրը՝ պատկեր յաւիտենական կեանքին:

**254 - Այս նախապատկերացումներուն իրագործումը ո՞վ կը կատարէ:**

1223-1224 Յիսուս Քրիստոս՝ զայն կը կատարէ, երբ Իր հրապարակային կեանքին սկիզբը՝ Յովհաննէս Մկրտիչէն կը մկրտուի Յորդանանին մէջ, երբ խաչին վրայ Իր խոցուած կողէն կը ժայթքին արիւնը եւ ջուրը՝ նշան Մկրտութեան եւ Սուրբ Հաղորդութեան, իսկ Իր Յարութենէն ետք՝ Իր առաքելներուն հետեւեալ առաքելութիւնը կը յանձնէ, ըսելով. «Գացէ՛ք աշակերտեցէ՛ք բոլոր ազգերը եւ մկրտեցէ՛ք զանոնք յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ» (Մտք 28, 19):

**255 - Եկեղեցին երբէ՞ն ի վեր եւ ո՞ր անձերը կը մկրտէ:**

1226-1228 Հոգեգալստեան օրէն սկսեալ՝ Եկեղեցին կը մկրտէ Յիսուս Քրիստոսի հաւատացողները:

**256 - Մկրտութեան էական ծիսարարքը ո՞րն է:**

1229-1245 Այս Սուրբ Խորհուրդին էական ծիսարարքը՝ մկրտուելիք անձը ջուրի մէջ թաթախելն է, կամ անոր գլխուն վրայ

Ջուր հոսեցնելն է՝ միանգամայն այս աղերսը արտասանելով. — Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

**257 - Մկրտութիւնը ո՞վ կրնայ ընդունիլ:**

*Չմկրտուած ամէն անձ կրնայ այս Խորհուրդը ընդունել:* 1246-1252

**258 - Ինչու՞ Եկեղեցին մանուկները կը մկրտէ:**

*Որովհետեւ մանուկները կը ծնին սկզբնական մեղքով, ուստի պէտք ունին ձերբազատուելու Չարին իշխանութենէն եւ այսպէս՝ մտնելու Աստուծոյ որդիներուն ազատութեան արքայութեան մէջ:* 1250

**259 - Մկրտեալէ մը ի՞նչ կը խնդրեն:**

*Ամէն մկրտեալէն հաւատոյ դաւանութիւնը կը խնդրեն:* 1253-1255  
*Չափահասի պարագային՝ զայն ինք անձամբ կը կատարէ, իսկ երախայի պարագային՝ զայն ծնողքը կամ Եկեղեցին կը կատարէ: Կնքահայրը կամ կնքամայրը եւս, ինչպէս նաեւ համայն քրիստոնեայ հասարակութիւնը իրենց պատասխանատուութեան բաժինն ունին Մկրտութեան «երեխայութեան» պատրաստութեան եւ յետագային՝ հաւատքին եւ մկրտական շնորհքին աճումին մէջ:*

**260 - Ո՞վ կրնայ մկրտել:**

*Մկրտութեան սովորական պաշտօնեաները Եպիսկոպոսն ու քահանաներն են, իսկ լատին Եկեղեցւոյ մէջ՝ նաեւ սարկաւազը: Անհրաժեշտութեան պարագային՝ ոեւէ անձ կրնայ մկրտել, պայմանով որ դիտաւորութիւնն ունենայ կատարելու ինչ որ Եկեղեցին կ'ընէ: Մկրտող անձը մկրտեալին գլխուն վրայ Ջուր կը հոսեցնէ՝ մկրտութեան երրորդութեանկան հետեւեալ բանաձեւը արտասանելով. «Ես կը մկրտեմ քեզ յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:* 1256 1284

**261 - Փրկուելու համար Մկրտութիւնը անհրաժեշտ է:**

- 1257 *Մկրտութիւնը անհրաժեշտ է անոնց համար՝ որոնց Աւետարանը քարոզուած է եւ ատակ են Մկրտութիւնը խնդրելու:*

**262 - Կարելի՞ է փրկուիլ առանց Մկրտութեան:**

- 1258-1261 *Քանի որ Քրիստոս բոլոր մարդոց փրկութեան համար*  
 1281-1283 *մահացաւ, հետեւաբար առանց Մկրտութեան կրնան փրկուիլ նաեւ անոնք որոնք հաւատքին համար կը մեռնին (արեւան մկրտութիւն), անոնք որ մկրտութեան կը պատրաստուին («երախաները»), ինչպէս նաեւ անոնք որ շնորհքէ մղուած եւ առանց Քրիստոսը եւ Եկեղեցին ճանչնալու, անկեղծօրէն զԱստուած կը փնտռեն եւ կը ջանան Անոր կամքը կատարել (փափաքի մկրտութիւն): Իսկ առանց Մկրտութեան մահացած երեխաները Եկեղեցին, իր ծիսակատարումին միջոցին՝ զանոնք Աստուծոյ բարեգթութեան կը յանձնէ:*

**263 - Որո՞նք են Մկրտութեան արդիւնքները:**

- 1262-1274 *Մկրտութիւնը արձակում կու տայ սկզբնական մեղքին եւ բոլոր անձնական մեղքերուն, ինչպէս նաեւ մեղքին հետեւանք պատիժներուն: Ան աստուածային երրորդութեանկան կեանքին մասնակից կը դարձնէ շնորհիւ սրբարար շնորհքին եւ արգարացումի շնորհքին, որ Քրիստոսի մարմինին ու Եկեղեցիին անդամ կ'ընէ: Մկրտութիւնը մասնակից կը դարձնէ Քրիստոսի քահանայութեան եւ հիմնակէտն է բոլոր քրիստոնեաներուն հետ միութեան: Ան աստուածաբանական առաքինութիւնները եւ Սուրբ Հոգիին պարգեւները կը բաշխէ: Մկրտեալը ցմիշտ կը պատկանի Քրիստոսի անջնջելի կնիքով կը դրոշմուի (դրոշմագիր):*

**264 - Մկրտութեամբ տրուած քրիստոնեայ անունը ի՞նչ նշանակութիւն կը զգենու:**

Ամէն անուն կարեւոր է, քանի որ Աստուած ամէն մէկը իր անունով կը ճանչնայ, այսինքն՝ իր միակութեամբ: Իսկ Մկրտութեամբ, քրիստոնեան Եկեղեցւոյ մէջ իր յատուկ անունը կ'ունենայ, որ նախընտրաբար սուրբի մը անունն ըլլալու է, որպէսզի ան մկրտեալին համար սրբութեան օրինակ ծառայէ եւ Աստուծոյ մօտ անոր բարեխօսն ըլլայ:

2156-2159

2167

**ԴՐՈՇՄԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ**

**265 - Ո՞րն է Դրոշմին գրաւած տեղը Աստուծոյ փրկչական ծրագրին մէջ:**

Հին Ուխտին մէջ, մարգարէները աւետեցին թէ Տիրոջ Հոգիին պարգեւը պիտի տրուէր սպասուած Մեսիային եւ մեսիական ամբողջ ժողովուրդին: Քրիստոսի ամբողջ կեանքն ու առաքելութիւնը կ'ընթանան Սուրբ Հոգիին հետ ամբողջական հաղորդութեան մէջ: Առաքեալները Զայն կ'ընդունին Հոգեգալստեան օրը եւ կը հռչակեն «Աստուծոյ սքանչելիքները» (Գործ 2, 11): Զեռնադրութեան միջոցով նոր մկրտուածներուն նոյնինքն Հոգիին պարգեւը կը փոխանցուի: Դարերու ընթացքին Եկեղեցին շարունակեց Հոգիով ապրիլ եւ զայն իր զաւակներուն փոխանցել:

1285-1288

1315

**266 - Ինչու՞ Մեռնօծում կամ Դրոշմադրութիւն կ'ըսեն:**

Զայն մեռնօծում կը կոչեն, քանի որ անոր հաւան ծիսարարքը օծումն է (Արեւելեան Եկեղեցիներուն մէջ Սուրբ Մեռնով կ'օծեն): Ան դրոշմադրութիւն ալ կը կոչուի, որովհետեւ (չափին Եկեղեցւոյ մէջ) դրոշմել՝ կը նշանակէ Մկրտութեան չնորհքը հաստատել եւ ամրացնել:

1289

**267 - Ո՞րն է դրոշմին էական ծիսարարքը:**

1290-1301 *Դրոշմի էական ծիսարարքը՝ Սուրբ Մեռոնով - եպիսկոպոսին ձեռքով սրբազործուած քաղցրաբոյր իւղով —*  
 1318 *կատարուող օծումն է: Ան կը կատարուի պաշտօնակա-*  
 1320-1321 *տարին ձեռնադրութեամբ, միանգամայն Դրոշմին յատուկ խորհրդենական խօսքերը արտասանելով: Արեւմուտքի մէջ, մկրտեալին ճակատը կ'օծեն հետեւեալ խօսքերն արտասանելով. «Դրոշմուած եղի՛ր աստուածա-պարգեւ Սուրբ Հոգիով»: Բիւզանդական ծէսի արեւելեան Եկեղեցիները՝ մարմինն զանազան մասերն ալ կ'օծեն, հետեւեալ բանաձեւը արտասանելով. «Կը դրոշմեմ քեզ Սուրբ Հոգիին պարգեւով»:*

**268 - Ո՞րն է Գրոշմին արդիւնքը:**

1302-1305 *Դրոշմին արդիւնքը Սուրբ Հոգիին առանձնայատուկ զե-*  
 1316-1317 *ղումն է, Հոգեգալուստի օրուան նման: Այս զեղումը հոգին անջնջելի դրոշմագիրով կը կնքէ եւ մկրտական շնորհքը կ'աճեցնէ: Աստուածային որդեգրութիւնը աւելի խորապէս կ'արմատաւորէ, Քրիստոսի եւ Եկեղեցւոյ աւելի հաստատօրէն կը միացնէ, մկրտեալին հոգիին մէջ Սուրբ Հոգիին պարգեւները կը զօրացնէ եւ քրիստոնեայ հաւատքին վկա-յելու յատուկ ուժ կը հաղորդէ:*

**269 - Ո՞վ կրնայ Գրոշմը ընդունիլ:**

1306-1311 *Ամէն մկրտուած անձ կրնայ եւ պարտի զայն ընդունիլ,*  
 1319 *բայց միայն մէ՛կ անգամ: Զայն արդիւնաւորապէս ընդու-*  
*նելու համար, մկրտեալը շնորհքի վիճակի մէջ ըլլալու է:*

**270 - Ո՞վ է Գրոշմին պաշտօնատարը:**

1312-1314 *Սկզբնական պաշտօնատարը Եպիսկոպոսն է, որուն մի-*  
*ջոցով կը չհշուռի դրոշմեալին կապը Եկեղեցիին հետ՝ անոր առաքելական ծաւալին մէջ: Երբ քահանան կը մատակարարէ այս խորհուրդը, - ինչպէս սովորութիւն է*

Արեւելքի մէջ եւ յատուկ պարագաներուն՝ նաեւ Արեւմուտքի մէջ - Եպիսկոպոսին եւ Եկեղեցիին միջեւ սոյն կապը կ'արտայայտուի ըլլա՛յ Եպիսկոպոսին գործակից քահանային միջոցով, ըլլա՛յ Եպիսկոպոսին օծած Սուրբ Մեռոնով:

## ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴԸ

### 271 - Ի՞նչ է Սուրբ Հաղորդութիւնը:

Սուրբ Հաղորդութիւնը Տէր Յիսուսի Մարմինն եւ 1322-1323  
Արիւնին նոյնինքն զոհակատարումն է: Յիսուս զայն 1409  
հաստատեց յաւերժացնելու համար խաչի զոհը դարերու  
ընթացքին մինչեւ իր վերադարձը: Այս ընելով՝ Յիսուս իր  
Մահուան եւ Յարութեան յիշատակումը իր Եկեղեցիին  
յանձնեց: Սուրբ Հաղորդութիւնը կը հանդիսանայ  
միութեան նշանը, սիրոյ զօրը, զատկական ընթրիքը, ուր  
Քրիստոսը կ'ընդունինք, ուր մեր հոգին շնորհքով կը  
լիանայ, հոսկ յաւիտենական կեանքի գրաւականը մեզի կը  
տրուի:

### 272 - Քրիստոս ե՞րբ հաստատեց Սուրբ Հաղորդութիւնը :

Ձայն Աւագ Հինգշաբթի օրը հաստատեց, «այն գիշերը 1323  
երբ պիտի մատնուէր» (Ա Կոր 11, 23), մինչ իր Առաքեալ- 1337-1340  
ներուն հետ բազմած՝ վերջին Ընթրիքը կը տօնակատարէր:

### 273 - Ձայն ինչպե՞ս հաստատեց:

Իր Առաքեալները Վերնատան մէջ հաւաքելէ ետք, Յի- 1337-1340  
սուս հացը ձեռքերուն մէջ առաւ, զայն բեկանեց եւ անոնց 1365-1406  
բաժնեց ըսելով. «Առէ՛ք կերէ՛ք, ասիկա ձեզի համար զոհ-  
ւած մարմինս է»: Ապա գինիով լեցուն բաժակը առաւ եւ  
ըսաւ. «Խմեցէ՛ք ասկէ ամէնքդ, ասիկա արիւնիս բաժակն է,  
նոր եւ յաւիտենական Ուխտին արիւնը, որ պիտի հոսի ձեզի  
եւ բազմութեան համար՝ որպէս մեղքերու թողութիւն:  
Ասիկա յիշատակիս համար կատարեցէ՛ք»:

**274 - Սուրբ Հաղորդութիւնը ի՞նչ կը ներկայացնէ Եկեղեցիին կեանքին մէջ:**

1324-1327 1407 Ան ամբողջ քրիստոնեայ կեանքին աղբիւրն ու զագաթ-  
նակէտն է: Աստուծոյ մեր մէջ սրբարար ներգործութիւնը,  
ինչպէս նաեւ մե՛ր պաշտամունքը Աստուծոյ հանդէպ՝  
իրենց կատարին կը հասնին Հաղորդութեան մէջ: Ան իր մէջ  
կը պարփակէ Եկեղեցւոյ հոգեւոր բոլոր բարիքները,  
նոյնինքն Քրիստոսը՝ մեր Ձատիկը: Աստուածային կեանքին  
մեր հաղորդութիւնը եւ Աստուծոյ Ժողովուրդին ներքին  
միութիւնը արտայայտուած եւ իրագործուած են սուրբ  
Հաղորդութեան միջոցով: Գոհաբանութեան Խորհուրդին  
միջոցով, մենք այժմէն կը միանանք Երկինքի ծիսակատա-  
րումին եւ կը կանխենք յաւիտենական կեանքը:

**275 - Սուրբ Հաղորդութեան ի՞նչ անուններ կու տանք:**

1328-1332 Սուրբ Հաղորդութեան անքննելի հարստութիւնը  
կ'արտայայտուի այն բազմաթիւ անուններով, որոնք անոր  
յատկանշական երեւոյթներուն արտայայտութիւնն են: Ան  
սովորաբար կը կոչուի Գոհութեան Խորհուրդ, Սուրբ  
Պատարագ, Տիրոջ Ընթրիք, Բեկանում հացի, Գոհաբա-  
նական ճաշակում, Տիրոջ չարչարանքներուն, մահուան եւ  
յարութեան Յիշատակում, Սուրբ Զոհ, Սուրբ եւ  
Աստուածային Ծիսակատարում, Ամենասուրբ Խորհուրդ,  
Սեղանի Սուրբ Խորհուրդ, Հաղորդութիւն:

**276 - Ո՞ր է Սուրբ Հաղորդութեան տեղը փրկութեան  
աստուածային տնտեսութեան մէջ:**

1333-1344 Հին Ուխտին մէջ, Սուրբ Հաղորդութեան նախա-  
պատկերը՝ յատկապէս զատկական ընթրիքն է զոր  
Երայեցիները ամէն տարի բաղարջ հացով կը տօնեն, ի  
յիշատակ Եփրայտոսէն իրենց հապճեպ եւ ազատարար  
մեկնումին: Յիսուս իր քարոզներուն մէջ զայն աւետելէ  
ետք, զայն հաստատեց իր Առաքեալներուն սարքած վերջին  
Ընթրիքին պահուն, զատկական ճաշին ընթացքին: Եկեղե-

ցին ալ, հաւատարիմ մնալով Տիրոջ տուած հրամանին, թէ «ասիկա կատարեցէք յիշատակիս համար» (Ա Կոր 11, 24), Գոհաբանութեան Խորհուրդը միշտ տօնակատարեց, յատկապէս Կիրակի՝ Յիսուսի Յարութեան օրը:

**277 - Գոհութեան ծիսական հանդիսակատարումը ինչպէ՞ս կ'ընթանայ:**

Այն կ'ընթանայ երկու մասերով, որոնք պաշտամունքա-<sup>1345-1355</sup>  
 յին մէկ արարք կը գոյացնեն.- Խօսքի ծիսակատարումը, որ <sup>1408</sup>  
 կը բաղկանայ Աստուծոյ Խօսքին հռչակումով եւ անոր ունկնդրութեամբ. - Գոհութեան ծիսակատարումը, որ կը բաղկանայ հացի եւ գինիի ընծայումով եւ վերակոչումի աղօթքով, որուն մաս կը կազմեն սրբազործումի խօսքերը, եւ ճաշակումը:

**278 - Ո՞վ է Գոհութեան Խորհուրդին պաշտօնատարը:**

Այն վաւերականօրէն ձեռնադրուած քահանան է, (Եպիս-<sup>1348</sup>  
 կոպոս կամ քահանայ), որ կը գործէ Քրիստոս-Գլուխի <sup>1411</sup>  
 Անձին միջոցով եւ Եկեղեցիին անունով:

**279 - Որո՞նք են Գոհութեան Խորհուրդին էական եւ անհրա-  
 ժեշտ տարրերը:**

Անոնք ցորենի հացը եւ որթատունկի գինին են: <sup>1412</sup>

**280 - Ի՞նչ իմաստով Գոհութեան Խորհուրդը Քրիստոսի զո-  
 հաբերումին յիշատակումն է:**

Այն իմաստով որ Գոհութեան Խորհուրդը Քրիստոսի <sup>1362-1367</sup>  
 խաչին վրայ մի անգամ ընդ միշտ մարդկութեան համար  
 Հօր մատուցած զոհաբերումը ներկայ կը դարձնէ եւ կ'այժ-  
 մէն գործէ: Գոհութեան Խորհուրդին զոհաբերական բնոյ-  
 թը կը պարզուի անոր հաստատումին խօսքերէն. «Ասիկա  
 մարմինս է, զոհուած՝ բազմութեան համար» եւ «Այս բա-  
 ժակը նոր Ուխտն է Իմ արիւնովս, որ կը հոսի ձեզի համար»  
 (Դուկ 22, 19-20): Խաչի զոհը եւ Գոհութեան զոհը միակ եւ

նոյն զոհն են: Զոհը եւ զայն նուիրողն եւս՝ նոյն անձն են, միայն զայն մատուցանելու կերպը կը տարբերի իրարմէ: Խաչին զոհը արիւնալի է, իսկ Գոհութեան զոհը անարիւն է:

# **281 - Եկեղեցին ի՞նչ կերպով Գոհութեան զոհին կը մասնակցի:**

1368-1372 Գոհութեան Խորհուրդին մէջ՝ Քրիստոսի զոհը կը դառնայ իր Մամինին անդամներուն զոհը: Հաւատացեալներուն կեանքը, գովաբանութիւնը, տառապանքը, աղօթքը, գործերը կը միանան Քրիստոսիններուն: Գոհութեան Խորհուրդը, որպէս զոհաբերում՝ կը մատուցուի նաեւ բոլոր ողջ թէ ննջեցեալ հաւատացեալներուն համար, իբր հատուցում բոլոր մարդոց գործած մեղքերուն, ինչպէս նաեւ Աստուծոյ հոգեւոր եւ անցաւոր բարիքներ ընդունելու համար: Երկինքի Եկեղեցին եւս մասնակից է Քրիստոսի ընծայումին:

# **282 - Յիսուս ինչպէ՞ս ներկայ է Գոհութեան Խորհուրդին մէջ:**

1373-1375 Յիսուս Գոհութեան Խորհուրդին մէջ ներկայ է առանձնապատուկ եւ անհամեմատելի կերպով: Ան ներկայ է ճշմարտապէս, իրականապէս, գոյացապէս՝ իր Մարմինով եւ իր Արիւնով, իր Հոգիով եւ իր Աստուածութեամբ: Ուստի ամբողջ Քրիստոսը՝ Աստուած եւ մարդ, հոն ներկայ է խորհրդեանապէս, այսինքն՝ հացի եւ գինիի տեսակներուն ներքեւ:

# **283 - Ի՞նչ կը նշանակէ գոյացափոխութիւն:**

1376-1377 Գոյացափոխութիւն կը նշանակէ հացին ամբողջ գոյացութեան փոխուիլը Քրիստոսի Մարմինին գոյացութեան, եւ գինիին ամբողջ գոյացութեան փոխուիլը՝ Անոր Արեան գոյացութեան: Այս փոխակերպումը կ'իրագործուի զոհաբանութեան աղօթքին պահուն՝ Քրիստոսի խօսքին զօրութեամբ եւ Սուրբ Հոգիին ներգործութեամբ:

**284 - Հացին բեկանումը կը հասնէ՞ Քրիստոսը:**

Հացին բեկանումը չի հատեր Քրիստոսը: Ան լման ու  
ամբողջական ներկայ կը մնայ Գոհութեան երկու տեսակ-  
ներուն եւ անոնց իւրաքանչիւր մասերուն մէջ: 1377

**285 - Քրիստոս Սուրբ Հաղորդութեան մէջ մինչեւ ե՞րբ  
ներկայ կը մնայ:**

Ներկայ կը մնայ որքան ատեն որ Սուրբ Հաղորդութեան  
տեսակները կը գոյատեւեն: 1377

**286 - Ի՞նչ տեսակ պաշտամունք մատուցանելու է Գոհու-  
թեան Խորհուրդին:**

Մատուցանելու ենք աստուածային պաշտամունքը, այ- 1378-1381  
սինքն՝ միայն Աստուծոյ վերապահուած երկրպագութիւնը, 1418  
ըլլա՛յ Գոհութեան Խորհուրդին ծիսակատարումին ատեն,  
ըլլա՛յ անկէ դուրս: Հետեւաբար Եկեղեցին մեծագոյն գուր-  
գուրանքով կը պահպանէ սրբագործուած նշխարը, զայն կը  
տանի հիւանդներուն եւ պատարագին մասնակցելու ան-  
կարող անձերուն: Զայն հաւատացեալներուն հանդիսաւոր  
երկրպագութեան կը ցուցադրէ, զայն թափօրով կը տանի եւ  
հրաւէր կ'ուղղէ որ տապանակի մէջ պահուած Սուրբ  
Հաղորդութիւնը այցելենք եւ երկրպագութիւն ընենք:

**287 - Ինչո՞ւ Հաղորդութիւնը զատկական սեղանն է:**

Սուրբ Հաղորդութիւնը զատկական սեղանն է, քանի որ 1382-1384  
Քրիստոս Իր Զատիկը խորհրդենապէս կրկին կատարելով, 1391-1396  
մեզի կ'ընծայէ Իր Մարմինն ու Իր Արիւնը որպէս սնունդ եւ  
ըմպելի: Իր զոհով՝ մեզ իրարու եւ Իրեն կը միացնէ:

**288 - Խորանը ի՞նչ կը նշանակէ:**

Խորանը նոյնինքն Քրիստոսի խորհրդանշն է, ուր Ան 1383  
ներկայ է իբր զոհական ընծայ (խորան-խաչի զոհարան), իսկ 1410  
մեզի համար ալ կ'ընծայուի իբր երկնային սնունդ (խորան-

սեղան Հաղորդութեան):

**289 - Ե՞րբ Եկեղեցին Սուրբ Պատարագի մասնակցութիւնը պարտաւորիչ կը դարձնէ:**

1389 Եկեղեցին Սուրբ Պատարագի մասնակցութիւնը հաւա-  
1417 տացեալներուն պարտաւորիչ կը դարձնէ բոլոր Կիրակի-  
ներուն եւ պարտաւորիչ տօներուն, կը յանձնարարէ նաեւ  
որ միւս օրերուն ալ մասնակցին:

**290 - Ե՞րբ մերձենալու է Սուրբ Հաղորդութեան:**

1389 Եկեղեցին Սուրբ Պատարագի մասնակցող հաւատա-  
ցեալներուն կը յանձնարարէ, որ նաեւ Սուրբ Հաղոր-  
դութեան մերձենան, պատշաճ տրամադրութիւններով, եւ  
զայն գոնէ Զատիկին պարտադիր դարձնելով :

**291 - Ս. Հաղորդութեան մերձենալու համար ի՞նչ պա-  
հանջուած է:**

1385-1389 Սուրբ Հաղորդութեան մերձենալու համար, հարկ է  
1415 Կաթողիկէ Եկեղեցւոյ մարմնին լրիւ պատկանիլ եւ շնորհքի  
վիճակի մէջ գտնուիլ, այսինքն խղճին վրայ մահացու մեղք  
չունենալ: Ան որ կը գիտակցի թէ խղճին վրայ ծանր մեղք  
ունի, պարտի հաղորդուելէ առաջ Հաշտութեան Խորհուր-  
դին մերձենալ: Կարեւոր է նաեւ իր մէջ ունենալ ամփոփու-  
մի եւ աղօթքի հոգի, Եկեղեցիէն պահանջուած ծոմը պահել  
եւ արտաքին վայելուչ կեցուածք ունենալ (չարժուածեւ,  
զգեստ) իբր յարգանքի նշան Քրիստոսի հանդէպ:

**292 - Որո՞նք են Սուրբ Հաղորդութեան պտուղները:**

1391-1397 Սուրբ Հաղորդութիւնը Քրիստոսի եւ Իր Եկեղեցիին հետ  
1416 մեր միութիւնը կ'աճեցնէ: Ան կը պահպանէ Մկրտութեան  
եւ Դրոշմին միջոցով ընդունուած շնորհքի կեանքը եւ զայն  
կը վերանորոգէ եւ մերձաւորին հանդէպ սէրը կ'աճեցնէ:  
Մեզ սիրոյ մէջ զօրացնելով, ներքի մեղքերը կը ջնջէ եւ  
յետագային մեզ մահացու մեղքերէն զերծ կը պահէ:

**293 - Ե՞րբ կարելի է Սուրբ Հաղորդութիւն տալ միւս քրիստոնեաներուն:**

*Կաթողիկէ կղերը կրնայ Կաթողիկէ Եկեղեցւոյ հետ լիա- 1398-1401  
կատար միութեան մէջ չեղող Արեւելեան Եկեղեցիներուն հաւատացեալներուն Սուրբ Հաղորդութիւն տալ, պայմա-  
նաւ որ անոնք ազատակամ եւ պահանջուած տրամադրու-  
թիւններով զայն ուզեն:*

*Միւս եկեղեցական հասարակութիւններուն անդամնե-  
րուն պարագային եւս կաթողիկէ կղերը կրնայ Սուրբ  
Հաղորդութիւն տալ, եթէ անոնք ծանր պահանջքի մը առջեւ  
կը գտնուին, զայն իրենց ազատ կամքով եւ պահանջուած  
տրամադրութիւններով կը խնդրեն եւ Սուրբ Հաղորդու-  
թեան հանդէպ կաթողիկէ հաւատք ցոյց կու տան:*

**294 - Սուրբ Հաղորդութիւնը ինչու՞ «գրաւական է գալիք փառքին»:**

*Որվհետեւ Գոհութեան Խորհուրդը մեզ երկնային բոլոր 1402-1405  
չնորհքներով եւ օրհնութիւններով կը լիացնէ, այս կեանքին  
ուխտագնացութեան համար մեզ կը զօրացնէ եւ յաւիտե-  
ական կեանքին փափաքով մեզ կը լեցնէ, ապա մեզ այժմէն  
կը միացնէ Հօր աջակողմը բազմած Քրիստոսին, երկնային  
Եկեղեցւոյ, Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածնին եւ բոլոր  
սուրբերուն:*

(Գոհութեան Խորհուրդին մէջ), մենք կը բեկանենք մի-  
եւնոյն հացը, որ դեղ է անմահութեան, որ դեղքափ է ո՛չ  
միայն չմեռնելու, այլ Յիսուս Քրիստոսի հետ յալիտեան  
ապրելու (*Մ. Իգնատիոս Անտիոքացի*):

## ԳԼՈՒԽ Բ.

## ԲՈՒԺՈՒՄԻ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

**295 - Քրիստոս Ապաշխարութեան եւ Հիւանդներու Օծումի Սուրբ Խորհուրդները ինչու՞ հաստատեց:**

1420-1421 *Հոգիներու եւ մարմիններու բժիշկ Քրիստոսը այս Սուրբ*  
 1426 *Խորհուրդները հաստատեց, քանի որ քրիստոնեայ նախա-  
 պատրաստումի Սուրբ Խորհուրդներով Անոր մեզի տուած  
 նոր կեանքը կրնայ տկարանալ եւ նոյնիսկ չքանալ մեղքին  
 պատճառով: Ահա թէ ինչու Քրիստոս ուզեց որ բուժումի եւ  
 փրկութեան իր գործը Եկեղեցին շարունակէ, բուժումի այս  
 երկու Սուրբ Խորհուրդներուն միջոցով:*

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ  
 ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴԸ

**296 - Այս Սուրբ Խորհուրդը ինչպէ՞ս կոչուած է:**

1422-1424 *Անիկա Ապաշխարութեան, Հաշտութեան, Ներումի,  
 Խոստովանանքի, Դարձի Խորհուրդ կոչուած է:*

**297 - Ինչու՞ Սկրտութենէն ետք Հաշտութեան Սուրբ Խոր-  
 հուրդը կայ:**

1425-1426 *Որովհետեւ Մկրտութեամբ ստացուած շնորհքի նոր*  
 1484 *կեանքը՝ մեր մէջ ո՛չ մարդկային բնութեան տկարութիւնը  
 ջնջեց, ո՛չ ալ մեղքի հակումը (այսինքն՝ ցանկութիւնը), հե-  
 տեաւար Քրիստոս այս Սուրբ Խորհուրդը հաստատեց՝  
 մեղքով իրմէ հեռացած մկրտեալներուն դարձին համար:*

**298 - Այս Սուրբ Խորհուրդը ե՞րբ հաստատուեցաւ:**

1485 *Յարուցեալ Քրիստոսը զայն հաստատեց երբ Զատիկի  
 երեկոյին իր Առաքեալներուն յայտնուեցաւ եւ անոնց ըսաւ.  
 «Ընդունեցէ՛ք Սուրբ Հոգին: Որո՞նց մեղքերը ներէ՛ք, պիտի*

ներուին եւ որո՛նց մեղքերը կապէք, պիտի կապուին» (Յովի 20, 22-23):

### 299 - Մկրտուածները դարձի գալու կարիքն ունի՞ն:

Մկրտուածներուն կեանքին մէջ՝ դարձի գալու Քրիս- 1427-1429  
տոսի կանչը անընդհատ կը հնչէ: Դարձի գալը ամբողջ  
Եկեղեցւոյ համար յարատեւ յանձնառութիւն մըն է: Եկե-  
ղեցին սուրբ է, սակայն իր ծոցին մէջ մեղաւորներ ունի:

### 300 - Ի՞նչ է ներքին ապաշխարանքը:

Ան թա՛փն է «սրտաբեկ հոգիին» (Սղմ 50 [51] 17), որ 1430-1433  
աստուածային շնորհէն հրահրուած՝ կ'ընդառաջէ Աստու- 1490  
ծոյ բարեգութ սիրոյն: Ապաշխարանքը իր մէջ կը կրէ ցաւ  
եւ խորշում՝ գործուած մեղքին հանդէպ, հաստատ առա-  
ջադրութիւն՝ այլեւս չմեղանչելու եւ վստահութիւն՝ Աս-  
տուծոյ օգնութեան վրայ եւ կը սնանի աստուածային բա-  
րեգութեան յոյսով:

### 301 - Ապաշխարութիւնը քրիստոնեային կեանքին մէջ ի՞նչ ծներով կ'արտայայտուի:

Ապաշխարութիւնը կ'արտայայտուի բազմազան ձեւե- 1434-1439  
րով, յատկապէս պահճ բռնելով, աղօթելով եւ ողորմութիւն  
ընելով: Ապաշխարութեան այս եւ միւս միջոցները քրիստո-  
նեան կրնայ իր ամէնօրեայ կեանքին մէջ գործադրել, իսկ  
յատուկ կերպով Մեծ Պահքի չրջանին եւ ուրբաթ օրերը, որ  
ապաշխարութեան օրեր են:

### 302 - Հաշտութեան Սուրբ Խորհուրդին էական տարրերը որո՞նք են:

Ան երկու տարրերէն կը բաղկանայ. նախ՝ Սուրբ Հոգիին 1440-1449  
ներշնչումով զղջացած մեղաւորին կատարած գործերն են,  
ապա՝ քահանային տուած արձակումն է: Քահանան Քրիս-  
տոսի անունով ներում կը շնորհէ եւ հատուցումին պայ-  
մանները կը սահմանէ:

**303 - Որո՞նք են ապաշխարողին կատարելիքները:**

1450-1460 Աստուծոյ Եւ. ա) Ան պէտք է խղճի լուրջ քննութիւն մը կատարէ: բ) Պէտք է զղջայ. զղջումը կատարեալ է, եթէ Աստուծոյ Հանդէպ սէրէն դուրսուած է, իսկ թերի է, եթէ ուրիշ պատճառներու վրայ հիմնուած է բայց կը պարունակէ կրկին անգամ չմեղանչելու առաջադրանքը: գ) Պէտք է խոստովանանք ըլլայ, այսինքն քահանային առջեւ իր մեղքերը յայտնէ: դ) Պէտք է հատուցում ընէ, այսինքն՝ ապաշխարանքի կարգ մը գործեր կատարէ, զորս խոստովանահայրը մեղքին հասցուցած վնասին համեմատ՝ ապաշխարած մեղաւորին վրայ կը սահմանէ:

**304 - Ո՞ր մեղքերը պէտք է խոստովանիլ:**

1456 Պէտք է խոստովանինք բոլոր ծանր մեղքերը, որոնք տակաւին չեն խոստովանուած եւ զորս կը յիշենք՝ խղճի լուրջ քննութենէ մը ետք: Խոստովանանքը ծանր մեղքերուն ներումին սովորական միակ միջոցն է:

**305 - Ծանր մեղքերը ե՞րբ պէտք է խոստովանիլ:**

1457 Ամէն չափահաս հաւատացեալ պարտաւոր է իր ծանր մեղքերը տարին գէթ մէկ անգամ խոստովանիլ եւ ամէն անգամ՝ Սուրբ Հաղորդութիւնը ընդունելէն առաջ:

**306 - Ինչու՞ ներելի մեղքերն ալ խոստովանանքի առարկայ են:**

1458 Թէեւ ներելի մեղքերուն համար խոստովանանքը սեղմ իմաստով անհրաժեշտ չէ, սակայն ան Եկեղեցւոյ կողմէ ջերմօրէն յանձնարարուած է, որովհետեւ ան կ'օգնէ ուղղադատ խիղճ մը կազմելու եւ վատ հակումներուն դէմ պայքարելու, եւ այսպէս՝ ինքզինքը Քրիստոսի բուժումին ենթարկելու եւ Սուրբ Հոգիին կեանքին մէջ յառաջդիմելու:

**307 - Ո՞վ է այս Սուրբ Խորհուրդին պաշտօնատարը:**

Քրիստոս Հաշտութեան պաշտօնատարութիւնը յանձնեց 1461-1466  
 Իր առաքեալներուն, անոնց յաջորդ՝ եպիսկոպոսներուն եւ 1495  
 ասոնց գործակից քահանաներուն: Անոնք այսպէս Աստու-  
 ծոյ բարեգլխութեան եւ արդարութեան գործիքները կը  
 դառնան: Անոնք մեղքերը ներելու այս իշխանութիւնը կը  
 կիրարկեն Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով:

**308 - Կարգ մը մեղքերուն արձակումը որո՞վ վերապահուած է:**

Կարգ մը, յատկապէս ծանր (ինչպէս բանադրանքի են- 1463  
 թակայ) մեղքերուն արձակումը վերապահուած է  
 Առաքելական Աթոռին, կամ տեղւոյն եպիսկոպոսին կամ  
 անոնց կողմէ լիազօրուած քահանաներուն, թէեւ ամէն  
 քահանայ մահուան վտանգին մէջ գտնուող անձ մը կրնայ  
 ամէն մեղքէ եւ բանադրանքէ արձակել:

**309 - Խոստովանահայրը պարտաւոր է իրեն խոստո-  
 վանուած մեղքերը գաղտնի պահելու:**

Նկատի առած այս պաշտօնին նուրբ հանգամանքը, 1467  
 վսեմութիւնը եւ անձերուն հանդէպ յարգանքը, ամէն  
 խոստովանահայր պարտաւոր է Սուրբ Խորհուրդին  
 գաղտնիքը պահել առանց բացառութեան եւ շատ ծանր  
 պատիժի ներքեւ, այսինքն՝ խոստովանանքէն իմացած  
 մեղքերուն մասին բացարձակ գաղտնապահութիւն պահել:

**310 - Որո՞նք են այս Սուրբ Խորհուրդին արդիւնքները:**

Անոր արդիւնքներն են՝ — Հաշտութիւն Աստուծոյ հետ, 1468-1470  
 ուստի՝ ներում մեղքերուն — Հաշտութիւն Եկեղեցւոյ հետ - 1496  
 Վերադարձ շնորհքի վիճակին, եթէ զայն կորսնցուցած ենք -  
 Արձակում՝ մահացու մեղքով մեր արժանացած յաւիտենա-  
 կան պատիժէն, եւ գէթ մասամբ արձակում՝ մեղքի հետե-  
 ւանք եղող նաեւ ժամանակաւոր պատիժներէն — Խաղաղու-

*Թիւն, խղճի անդորրութիւն եւ հոգեւոր մխիթարութիւն — Քրիստոնեայ պայքարին մէջ հոգեպէս զօրացում:*

**311 - Կարելի՞ է որոշ պարագաներուն մէջ այս Սուրբ Խորհուրդը մատակարարել ընդհանուր խոստովանանքով եւ հաւաքական արձակումով:**

1480-1484 *Ծանր անհրաժեշտութեան պարագային (ինչպէս մահուան անմիջական վտանգի դիմաց), կարելի է դիմել Հաշտութեան խորհուրդի հաւաքական մատակարարումին՝ ընդհանուր խոստովանանքով եւ հաւաքական արձակումով, պայմանով որ Եկեղեցւոյ օրինակարգը պահպանուի եւ պատեհ ժամանակին՝ ծանր մեղքերուն համար առանձնական խոստովանանքին դիմելու առաջադրութիւն առնուի:*

**312 - Ի՞նչ են ներողութիւնները:**

1471-1479 *Ներողութիւնները Աստուծոյ կողմէ թողութիւնն են արդէն ներուած մեղքերուն հետեւանք եղող ժամանակաւոր պատիժներուն: Հաւատացեալը որոշ պայմաններով սոյն թողութիւնը կը ստանայ ըլլա՛յ իրեն, ըլլա՛յ ննջեցեալներուն համար, պաշտօնավարութեամբ Եկեղեցւոյ, որ իբրեւ փրկագործութեան մատակարար՝ Քրիստոսի եւ սուրբերուն արդիւնքներուն գանձերը կը բաշխէ:*

## ՀԻՒԱՆԴԱՅ ՕԾՈՒՄԻ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴԸ

**313 - Հին Կտակարանին մէջ հիւանդութիւնը ի՞նչ ձեւով ապրուած է:**

1499-1502 *Հին Կտակարանին մէջ, մարդը հիւանդութեան շրջանին իր սահմանափակուածութիւնը ճանչցաւ, նաեւ նկատեց թէ հիւանդութիւնը խորհրդաւոր կերպով մեղքին հետ առնչուած է: Մարգարէները ընդնշմարեցին, թէ հիւանդութիւնները իրենց եւ ուրիշներուն մեղքերուն համար կրնան նաեւ փրկագործ արժէք ունենալ:*

*Մարդը հիւանդութիւնը կ'ապրէր զԱստուած նկատի առնելով եւ իր բուժումը Աստուծմէ խնդրելով:*

**314 - Ի՞նչ նշանակութիւն ունի Յիսուսի վշտակցութիւնը հիւանդներուն հետ:**

*Հիւանդներուն հանդէպ Յիսուսի վշտակցութիւնը եւ 1503-1505 անոնց վրայ կատարած բազմաթիւ բուժումները բացայայտ նշանն են, թէ Իր միջոցով հասած է Աստուծոյ Արքայութիւնը, հետեւաբար եւ մեղքին, տառապանքին եւ մահուան դէմ յղթանակը: Իր չարչարանքներով եւ Իր մահով, Յիսուս նոր նշանակութիւն կու տայ տառապանքին, որ կարող է մեզի եւ ուրիշներուն համար մաքրագտումի եւ փրկութեան միջոց դառնալ, եթէ զայն Յիսուսի տառապանքին միացնենք:*

**315 - Ի՞նչ է Եկեղեցիին վերաբերումը հիւանդներուն նկատմամբ:**

*Եկեղեցին, հիւանդները բուժելու հրահանգը Տիրոջմէ 1506-1513 ստացած ըլլալով, կը պարտի զայն գործադրել իր մատուցած խնամքներով եւ իր բարեխօսող աղօթքներով: Ան յատկապէս իր տրամադրութեան տակ ունի հիւանդներուն յատուկ Սուրբ Խորհուրդ մը, զոր Քրիստոս հաստատեց եւ որուն մասին Սուրբ Յակոբ կը վկայէ, ըսելով. «Եթէ ձեզմէ մէկը հիւանդանայ, թող կանչէ Եկեղեցւոյ երէցները, թող վրան աղօթեն, զինք Տիրոջ անունով ձէթով օծեն» (Յակ 5, 14-15):*

**316 - Ո՞վ կրնայ Հիւանդաց Օծումը ընդունիլ:**

*Ամէն հաւատացեալ կրնայ զայն ընդունիլ, երբ զգայ թէ մահուան վտանգին մէջ է՝ հիւանդութեան կամ յառաջացած տարիքի պատճառով: Նոյն հիւանդը կրնայ զայն քանի մը անգամ ստանալ՝ նոյն հիւանդութեան վատթարացումի պարագային, ինչպէս նաեւ նոր ծանր հիւանդութեան մը պարագային: Այս Սուրբ Խորհուրդը ստանալէ առաջ, հիւանդը անհատական խոստովանանք ըլլալու է,*

*եթէ կարելիութիւնն ունի:*

**317 - Այս Սուրբ Խորհուրդը ո՞վ կը մատակարարէ:**

1516 Ան կրնայ մատակարարուիլ մի՛ միայն եպիսկոպոսէն եւ  
1530 քահանաներէն:

**318 - Ինչպէ՞ս կը մատակարարուի:**

1517-1519 Անոր մատակարարումին հիմնական մասը՝ նախընտրա-  
1531 բար եպիսկոպոսին կողմէ օրհնուած իւղով օծումն է,  
օծում՝ հիւանդին ճակատին եւ ձեռքերուն (ըստ հռոմէա-  
կան ծէսին) կամ օծում՝ նաեւ մարմնին միւս մասերուն  
(ըստ այլ ծէսերու): Օծումին կ'ընկերանայ այս Սուրբ  
Խորհուրդին յատուկ շնորհքը հայցող քահանային աղօթքը:

**319 - Որո՞նք են այս Սուրբ Խորհուրդին արդիւնքները:**

1520-1523 Անոր պարզեւած յատուկ շնորհքով՝ հիւանդը Քրիստոսի  
1532 չարչարանքներուն աւելի սերտօրէն կը միանայ յօգուտ  
իրեն եւ ամբողջ Եկեղեցւոյ: Այս Խորհուրդը հիւանդին կը  
շնորհէ սփոփանք, խաղաղութիւն, արիութիւն եւ  
մեղքերուն թողութիւն (եթէ հիւանդը չէ կրցած  
խոստովանանք ըլլալ): Երբեմն ալ, Աստուծոյ կամքով,  
նոյնիսկ մարմնական առողջութիւն կը պարգեւէ: Ամէն  
պարագային, Հիւանդաց Օծումը մարդս Հօր Տունը  
երթալու կը պատրաստէ:

**320 - Ի՞նչ է Թոշակը:**

1524-1525 Թոշակը Սուրբ Հաղորդութիւնն է՝ տրուած անոնց որ  
այս աշխարհէն մեկնելու վրայ են եւ դէպի յաւիտենական  
կեանք իրենց անցքը կը պատրաստեն: Մեռած եւ յարութիւն  
առած Քրիստոսի Մարմինին եւ Արիւնին այս Հաղորդու-  
թիւնը, զոր կը ստանանք այս աշխարհէն դէպի Հայրը  
մեկնելու պահուն, սե՛րմ է յաւիտենական կեանքի եւ երաշ-  
խիք յարութեան:

## ԳԼՈՒԽ Գ.

## ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐԸ՝ Ի ՍՊԱՍ

## ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ

**321 - Որո՞նք են հաղորդության եւ առաքելության ի սպաս Սուրբ Խորհուրդները:**

*Անոնք Կարգի եւ Ամուսնութեան կամ Պսակի երկու 1533-1535 Սուրբ Խորհուրդներն են, որոնք յատուկ շնորհք մը կը պարգեւեն ի նպաստ Եկեղեցւոյ մէջ կատարուելիք յատուկ առաքելութեան մը, ի սպաս Աստուծոյ ժողովուրդին շինութեան: Անոնք ի մասնաւորի կը նպաստեն եկեղեցային հաղորդութեան եւ ուրիշին փրկութեան:*

## ԿԱՐԳԻ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴԸ

**322 - Ի՞նչ է Կարգի Սուրբ Խորհուրդը:**

*Այն Սուրբ Խորհուրդն է, որուն միջոցով Քրիստոսի 1536 կողմէ իր Առաքեալներուն յանձնուած առաքելութիւնը Եկեղեցւոյ մէջ կը շարունակուի մինչեւ ժամանակներուն վախճանը:*

**323 - Ինչու՞ զայն Կարգի Սուրբ Խորհուրդ կը կոչենք:**

*Կարգ բառով կը մատնանշենք եկեղեցային այն դասը, 1537-1538 որուն մէջ մարդ մուտք կը գործէ յատուկ նուիրագործումի մը միջոցով (Ձեռնադրութիւն): Այս նուիրագործումը, Սուրբ Հոգիին մէկ յատուկ պարգեւով, հնարաւորութիւնը կու տայ Քրիստոսի անունով եւ իշխանութեամբ՝ սրբազան իշխանութիւն մը կիրարկելու ի սպաս Աստուծոյ ժողովուրդին:*

**324 - Կարգի Սուրբ Խորհուրդին տեղը ու՞ր է Աստուծոյ փրկչական ծրագրին մէջ:**

1539-1546 Այս Սուրբ Խորհուրդին նախապատկերները գոյութիւն ունին Հին Կտակարանին մէջ, ինչպէս՝ ղեւտական ցեղին ծառայութիւնը, Ահարոնի քահանայութիւնը, եօթնասուն «Ծերերուն» կարգումը (Հմտ. Թիմ 11, 25): Այսպիսի նախապատկերները իրենց իրազործումը կը գտնեն Յիսուս Քրիստոսի մէջ, որ Իր խաչի զոհակատարումով՝ «միակ միջնորդն է Աստուծոյ եւ մարդոց միջեւ» (Ա Տիմ 2, 5), «քահանայապետ է ըստ կարգի Մեքիսեղեքի» (Եբր 5, 10): Քրիստոսի միակ քահանայութիւնը այսօր ներկայ է պաշտօնակատար քահանայութեան մէջ:

Քրիստոս կը հանդիսանայ միակ ճշմարիտ քահանան, իսկ միւսները՝ Իր պաշտօնատարներն են սոսկ (Ս. Թովմաս Աքունցի):

**325 - Ուր՞նք են Կարգի Սուրբ Խորհուրդին զանազան աստիճանները:**

1554 Անոնք երեք հատ են եւ Եկեղեցւոյ օրկանական կառոյցին  
1593 նկատմամբ՝ անոնք անփոխարինելի կը մնան. եպիսկոպոսութիւնը, քահանայութիւնը եւ սարկաւազութիւնը:

**326 - Եպիսկոպոսական Չեռնադրութիւնը ի՞նչ արդիւնք կը պարգեւէ:**

1557-1558 Եպիսկոպոսական Չեռնադրութիւնը՝ Կարգի Սուրբ  
1594 Խորհուրդին իր լիութիւնը կը պարգեւէ, եպիսկոպոսը Առաքեալներուն իրաւական յաջորդ կը կարգէ, զայն եպիսկոպոսական դասին անդամ կը դարձնէ, Պապին եւ միւս եպիսկոպոսներուն հետ՝ բոլոր Եկեղեցիներուն հոգատարութեան բաժնեկից կ'ընէ, անոր հաղորդելով վարդապետելու, սրբացնելու եւ հովուելու առաքելութիւնը:

**327 - Ի՞նչ է եպիսկոպոսին պաշտօնը իրեն յանձնուած մասնայատուկ Եկեղեցիին նկատմամբ:**

*Եպիսկոպոսը, որուն մասնայատուկ Եկեղեցի մը յանձնը՝ 1560-1561*  
 Լած է, սոյն Եկեղեցիին միութեան տեսանելի սկիզբն ու  
 հիմնակէտն է եւ իբր Բրիստոսի փոխանորդ՝ իր Եկեղեցիին  
 հանդէպ հովիւի պաշտօնը կը կատարէ, գործակցութեամբ  
 իր քահանաներուն եւ սարկաւազներուն:

**328 - Ո՞րն է քահանայական Չեռնադրութեան արդիւնքը:**

*Սուրբ Հոգիին օծումը՝ քահանան հոգեւոր անջնջելի 1562-1567*  
 դրոշմագիրով կը կնքէ, զայն Բրիստոսի քահանայ կը 1595  
 կերպաւորէ եւ զինք Բրիստոս-Գլուխի անունով գործելու  
 ատակ կ'ընէ: Որպէս գործակից եպիսկոպոսական դասին,  
 ան կարգուած է Աւետարանը քարոզելու, ծիսակատարելու  
 սրբազան պաշտամունքը եւ յատկապէս Գոհութեան  
 Խորհուրդը, որմէ իր պաշտօնը կատարելու եւ իր  
 հաւատացեալներուն հովիւն ըլլալու ուժը կը քաղէ:

**329 - Քահանան իր պաշտօնը ի՞նչ ձեւով կը կատարէ:**

*Թէեւ տիեզերական առաքելութեան մը համար ձեռ- 1568*  
 նադրուած է, քահանան իր պաշտօնը մասնայատուկ Եկեղե-  
 ցիի մը սահմաններուն մէջ կը գործադրէ, եղբայրակցու-  
 թեամբ քահանայական դասին անդամ միւս քահանանե-  
 րուն, որոնք իրենց եպիսկոպոսին հետ հաղորդակցաբար եւ  
 անոր ձեռքին տակ՝ մասնայատուկ Եկեղեցիին պատասխա-  
 նատուութիւնը կը վարեն:

**330 - Ո՞րն է սարկաւազի ձեռնադրութեան արդիւնքը:**

*Սարկաւազը ձեռնադրուած է Եկեղեցւոյ ծառայելու 1569-1571*  
 համար, ի նմանութիւն ամէնուն ծառայ դարձած Բրիս- 1596  
 տոսին: Ան, իր եպիսկոպոսին իշխանութեան տակ, իր  
 ծառայութիւնը կը մատուցանէ Խօսքի մատակարարու-  
 թեան, աստուածային պաշտամունքի, հովուական յանձնա-

ռութեան եւ եղբայրսիրութեան ծիրէն ներս:

**331 - Կարգի Սուրբ Խորհուրդի տուչութիւնը ինչպե՞ս կը մատակարարուի:**

1572-1574 *Կարգի Սուրբ Խորհուրդի տուչութիւնը իր երեք*  
 1597 *աստիճաններուն համար ալ եպիսկոպոսին կողմէ կը*  
*մատակարարուի թեկնածուին գլխուն վրայ ձեռնադրու-*  
*թեամբ եւ օծումի հանդիսաւոր աղօթքով, որուն զօրու-*  
*թեամբ եպիսկոպոսը Աստուծոյ կը խնդրէ, որ*  
*ձեռնադրուելիք անձին վրայ սփռէ Սուրբ Հոգիին յատուկ*  
*զեղումը եւ պաշտօնին պահանջած պարգեւները:*

**332 - Ո՞վ կրնայ Կարգի Սուրբ Խորհուրդի տուչութիւնը մատակարարել:**

1575-1576 *Կարգի Սուրբ Խորհուրդին երեք աստիճաններուն տու-*  
 1600 *չութիւնը կրնայ մատակարարել վաւերապէս ձեռնադ-*  
*րուած եպիսկոպոսը, որպէս առաքեալներուն յաջորդը:*

**333 - Ո՞վ կրնայ ստանալ Կարգի Սուրբ Խորհուրդը:**

1577-1578 *Ջայն վաւերապէս կարող է ստանալ միայն արական սե-*  
 1598 *ռի պատկանող մկրտեալ մը: Եկեղեցին ինքզինք կապուած*  
*կը նկատէ Տիրոջ իսկ կատարած այս ընտրանքով: Ո՛չ ոք*  
*կրնայ Կարգի Սուրբ Խորհուրդը պահանջել: Իսկ*  
*թեկնածուներու մը ատակ դատելը՝ Եկեղեցւոյ իշխանու-*  
*թեան կը պատկանի:*

**334 - Կարգի Սուրբ Խորհուրդը ընդունողէն կուսակրօնութիւնը պահանջուա՞ծ է:**

1579-1580 *Եպիսկոպոսութեան համար՝ կուսակրօնութիւնը միշտ*  
 1599 *պահանջուած է: Քահանայութեան համար՝ լատին Եկե-*  
*ղեցին ընդհանրապէս կ'ընտրէ այն հաւատացեալ մարդիկը,*  
*որոնք կուսակրօն են եւ կ'ուզեն կուսակրօն մնալ «Երկինքի*  
*արքայութեան համար» (Մտք 19, 12): Իսկ Արեւելեան Եկե-*  
*ղեցիներուն մօտ՝ թոյլատրուած չէ ամուսնանալ՝ քահանա-*

յուլիսինը ստանալէ ետք: Ամուսնացեալ մարդիկ կրնան մնայուն սարկաւազութիւն ստանալ:

### 335 - Կարգի Սուրբ Խորհուրդին արդիւնքները որո՞նք են:

Կարգի այս Սուրբ Խորհուրդը Ս. Հոգիին մէկ յատուկ 1581-1589 զեղումը կը պարգեւէ, որուն շնորհիւ ձեռնադրեալը, Սուրբ Խորհուրդին զանազան աստիճաններուն համեմատ՝ կը կերպաւորուի Քրիստոս Քահանայի, Մարգարէի եւ Թագաւորի՝ երբեակ պաշտօններուն հետ: Ձեռնադրութիւնը անջնջելի դրոշմակնիք մը կը պարգեւէ, որուն պատճառով՝ ան ո՛չ կրնայ կրկնուիլ, ո՛չ ալ ժամանակաւոր կերպով տրուիլ:

### 336 - Քահանայական պաշտօնը ի՞նչ իշխանութեամբ կը գործադրուի:

Ձեռնադրեալ քահանաները, իրենց սրբազան պաշտօնը 1547-1553 գործադրելու միջոցին, Քրիստոս-Պետի Անձին եւ 1592 Եկեղեցւոյ անունով կը խօսին ու կը գործեն եւ ո՛չ թէ անձնական իշխանութեամբ, ո՛չ ալ իբր հասարակութեան կողմէ լիազօրուած կամ ընտրուած պատուիրակներ: Հետեւաբար՝ պաշտօնավար քահանայութիւնը, իր հոլթեամբ եւ ո՛չ թէ միայն իր աստիճանով՝ կը տարբերի հաւատացեալներուն հասարակ քահանայութենէն, որոնց ի սպաս Քրիստոս քահանայութիւնը հաստատեց:

## ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԳԸ

### 337 - Ի՞նչ է Աստուծոյ ծրագիրը այր մարդուն եւ կնոջ հանդէպ:

Աստուած, որ սէր է եւ սէրէ զրդուած՝ մարդը ստեղծեց, 1601-1605 զա՛յն եւս սիրելու կանչեց: Աստուած այրն ու կինը ստեղծելով, զանոնք Ամուսնութեան ճամբով կանչեց կեանքի մը որ հիմնուած է իրարու միջեւ մտերիմ հաղորդակցութեան եւ սիրոյ վրայ, այնպէս որ «անոնք այլեւս երկու չեն, այլ մէկ մարմին» (Մտք 19, 6):

*Աստուած զանոնք օրհնեց եւ ըսաւ. «Աճեցէ՛ք եւ բազմացէ՛ք» (Ծնդ 1, 28):*

**338 - Ի՞նչ նպատակներու համար Աստուած ամուսնութիւնը հաստատեց:**

1659-1660

*Մարդուն եւ կնոջ ամուսնական միութիւնը, որ Արարչին կողմէ հիմնուած ու կառուցաւորուած է անոր օրէնքներուն վրայ, իր էութեամբ կարգաւորուած է ամուսիններուն միութեան եւ բարիքին, զաւակներու ծնունդին եւ դաստիարակումին համար: Ըստ աստուածային սկզբնական ծրագրին, ամուսնական միութիւնը անլուծանելի է, ինչ որ Յիսուս Քրիստոս եւս հաստատեց. «Ինչ որ Աստուած միացուց, մարդը թող չբաժնէ» (Մրկ 10, 9):*

**339 - Ի՞նչպէս մեղքը ամուսնութեան դէմ սպառնալիք մըն է:**

1606-1608

*Իբր հետեւանք առաջին մեղքին, որ Արարչին կողմէ մարդուն եւ կնոջ միջեւ հաստատուած միութիւնն ալ խզեց, ամուսնական միութիւնը ստէպ վտանգուած է անհամաձայնութեան եւ անհաւատարմութեան պատճառով: Սակայն Աստուած Իր անհուն բարեգթութեամբ՝ Իր շնորհքը կը պարզեւէ այր մարդուն եւ կնոջ, որպէսզի իրենց կեանքի միութիւնը իրազօրծեն աստուածային սկզբնական ծրագրին համեմատ:*

**340 - Հիմ Կտակարանը ի՞նչ կ'ուսուցանէ ամուսնութեան մասին:**

1609-1611

*Յատկապէս Օրէնքին եւ մարգարէներուն հաղորդած դաստիարակումին միջոցով՝ Աստուած Իր ժողովուրդին կ'օգնէ որ ան ամուսնական միութեան եւ անլուծանելիութեան գիտակցութիւնը հետզհետէ հասունացնէ: Խորայնի հետ Աստուծոյ կնքած հարսանեկան ուխտը կը նախապատրաստէ եւ կը նախապատկերէ նոր Ուխտը, զոր Աստուածորդին Յիսուս Քրիստոս կնքեց Իր հարսին՝ Եկեղեցիին հետ:*

**341 - Ո՞րն է ամուսնութեան վերաբերեալ Քրիստոսի մատուցած նորութիւնը:**

*Յիսուս Քրիստոս ո՛չ միայն կը վերականգնէ Աստուծմէ 1612-1617  
ուզուած սկզբնական կարգը, այլ նաեւ շնորհք կը պարգեւէ 1661  
ամուսնութիւնը իր նոր արժանապատուութեամբ ապրելու  
իբր Սուրբ Խորհուրդ, որ նշանն է Եկեղեցիին հանդէպ իր  
ամուսնական սիրոյն. «Այրե՛ր, սիրեցէ՛ք ձեր կիները  
ինչպէս Քրիստոս սիրեց Եկեղեցին» (Եփս 5, 25):*

**342 - Ամուսնութիւնը պարտաւորութիւն մըն է բոլորին համար:**

*Ամուսնութիւնը բոլորին համար պարտաւորութիւն չէ: 1618-1620  
Աստուած յատկապէս կարգ մը այրեր եւ կիներ կը կանչէ  
Յիսուսին հետեւելու կուսութեան եւ ամուրիութեան ճանա-  
պարհով՝ երկինքի Թագաւորութեան համար, եւ հրաժարե-  
լով ամուսնութեան մեծ բարեքէն, Տիրոջ գործերը հոգալու  
եւ Անոր հաճելի դառնալու: Անոնք այսպէս նշանները կը  
դառնան Քրիստոսի գերազանց եւ առաջնահերթ սիրոյն եւ  
փառաշուք գալուստին անձկալի սպասումին:*

**343 - Ինչպէ՞ս կը մատակարարուի ամուսնութեան Սուրբ Խորհուրդը:**

*Քանի որ ամուսնութիւնը զոյգերը կը հաստատէ Եկե- 1621-124  
ղեցիէն ներս կենակցութեան հրապարակային վիճակի մը  
մէջ, անոր ծիսակատարումն ալ հրապարակային կ'ըլլայ, ի  
ներկայութեան քահանային (կամ Եկեղեցիէն ճանչցուած  
վկային), ինչպէս նաեւ ուրիշ վկաներու:*

**344 - Ամուսնական հաւանութիւնը ի՞նչ է:**

*Ամուսնական հաւանութիւնը մարդու եւ կնոջ բացա- 1625-1632  
յայտ կամքն է իրենք զիրենք վերջնականապէս իրարու 1662-1663  
տալու, հաւատարիմ եւ բեղուն սիրոյ ուխտ մը միասին ապ-  
րելու նպատակով: Քանի որ հաւանութիւնը ամուսնու-*

Թիւնն իսկ է, հետեւաբար ան անհրաժեշտ եւ անփոխարինելի է: Իսկ ամուսնութիւնը վաւեր դարձնելու համար, պէտք է որ տրուած հաւանութեան առարկան իսկական ամուսնութիւն ըլլայ, ան պէտք է մարդկային արարք ըլլայ, գիտակից եւ ազատ, զերծ ամէն բռնութենէ եւ բռնադատումէ:

**345 - Ի՞նչ կը պահանջուի երբ ամուսիններէն մէկը կաթողիկէ է:**

1633-1637 Խառն ամուսնութիւնները (կաթողիկէի եւ մկրտուած ոչ կաթողիկէի միջեւ) որպէսզի օրինաւոր ըլլան, հարկ է եկեղեցական իշխանութեան արտօնութիւնն ունենան: Տարբեր պաշտամունքի պատկանող անձերու (կաթողիկէի եւ չմկրտուածի միջեւ կատարուող) ամուսնութիւնները վաւեր ըլլալու համար՝ կարիքն ունին տնօրինումի: Բոլոր պարագաներուն մէջ, անհրաժեշտ է որ ամուսինները չզրոյթեն ամուսնութեան վախճանն ու էական յատկանիշները, իսկ կաթողիկէ ամուսինը յանձնառու ըլլայ, միւս ամուսինին եւս գիտակցութեամբ, իր հաւատքը պահպանելու եւ զաւակներուն մկրտութիւնն ու կաթողիկէ դաստիարակութիւնը ապահովելու:

**346 - Որո՞նք են ամուսնութեան Սուրբ Խորհուրդին արդիւնքները:**

1638-1642 Ամուսնութեան Սուրբ Խորհուրդը ամուսիններուն միջեւ մշտնջենաւոր եւ զատորոշ զօղ մը կը ստեղծէ: Նոյնինքն Աստուած կը վաւերացնէ ամուսիններուն հաւանութիւնը: Այսպէս՝ մկրտուածներու միջեւ կատարուած եւ իր լրումին հասած ամուսնութիւնը անլուծանելի կը դառնայ: Այս Սուրբ Խորհուրդը ամուսիններուն կը հաղորդէ շնորհք՝ նաեւ ամուսնական կեանքով սրբութեան հասնելու եւ զաւակները պատասխանատու ձեւով ստանձնելու եւ դաստիարակելու:

**347 - Որո՞նք են ամուսնութեան Սուրբ Խորհուրդին դէմ ծանօթութն գործուած մեղքերը:**

*Անոնք են. ա- Շնուլթիւնը, բ- Բազմակնուլթիւնը (քանի 1645-1648 դէմ է մարդուն եւ կնոջ հաւասար արժանապատուութեան, ամուսնական սիրոյ միակ եւ բացարձակ էութեան), գ- Բեղմնաւորութեան մերժումը (որ ամուսնական կեանքը զաւակներու պարգեւէն կը զրկէ), դ- Ապահարզանը (որ դէմ է անլուծանելիութեան):*

**348 - Եկեղեցին ամուսիններուն մարմնաւոր բաժանումը ե՞րբ կ'ընդունի:**

*Եկեղեցին ամուսիններուն մարմնաւոր բաժանումը կ'ըն- 1629 դունի երբ անոնց կենակցութիւնը ծանր պատճառներու 1649 հետեւանքով՝ գործնականապէս անկարելի դարձած է, հակառակ որ Եկեղեցին պիտի բաղձար որ հաշտութիւն կնքուէր: Բայց որքան ատեն որ ամուսիններէն մէկը տակաւին ողջ է, անոնցմէ ո'չ մէկը ազատ է նոր ամուսնութիւն մը կնքելու, բացի եթէ անոնց ամուսնութիւնը անվաւեր եղած է եւ եկեղեցական իշխանութեան կողմէ անվաւեր հռչակուած է:*

**349 - Ի՞նչ է Եկեղեցիին կեցուածքը ապահարզանով բաժանուած եւ վերամուսնացածներուն նկատմամբ:**

*Եկեղեցին, հաւատարիմ մնալով Տիրոջ, չի կրնար իբր 1650-1651 ամուսնութիւն ճանչնալ ապահարզանով բաժնուածներուն 1665 քաղաքական վերամուսնութիւնը: «Ո՛վ որ իր կինը կ'արձակէ եւ ուրիշի հետ կ'ամուսնանայ, կը շնայ: Իսկ եթէ կինը իր ամուսինը արձակէ եւ ուրիշի հետ ամուսնանայ, կը շնայ» (Մրկ 10, 11-12): Եկեղեցին այսպիսիներուն հանդէպ գուրգուրոտ հոգատարութիւն ցոյց կու տայ, զանոնք հրաւիրելով հաւատքի կեանքի, աղօթքի, բարեգործութեան եւ իրենց զաւակներուն քրիստոնեայ դաստիարակութեան: Բայց որքան ատեն որ անոնց կացութիւնը, որ առար-*

կայօրէն դէմ է Աստուծոյ օրէնքին, այսպէս շարունակուի, անոնք չեն կրնար խորհրդենական արձակումը ընդունիլ, ո՛չ Սուրբ Հաղորդութեան մերձեցալ, ո՛չ ալ Եկեղեցւոյ մէջ որոշ պատասխանատուութիւններ ստանձնել:

**350 - Իճչու՞ քրիստոնեայ ընտանիքը նաեւ առտնին Եկեղեցի կոչուած է:**

1655-1658 Որովհետեւ ընտանիքը կ'արտայայտէ եւ կը յայտնաբերէ  
1666 եկեղեցւոյ բնութիւնը իբր Աստուծոյ ընտանիքը որ կը յատկանշուի իբր հաղորդութիւն եւ ընտանիք: Ընտանիքին իւրաքանչիւր անդամը, ըստ իր դերին, մկրտական քահանայութիւն մը կը կատարէ, ընտանիքը դարձնելով շնորհքի եւ աղօթքի հասարակութիւն մը, մարդկային եւ քրիստոնէական առաքինութիւններու դպրոց մը, իսկ զաւակներուն համար՝ իրենց հաւատքը հռչակելու առաջին վայրը:

## ԳԼՈՒԽ Դ.

### ԾԻՍԱԿԱՆ ՄԻՒՍ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒՄՆԵՐԸ

#### ԽՈՐՀՐԴԱԿԵՐՊԵՐԸ

**351 - Ի՞նչ են Խորհրդակերպերը:**

1667-1672 Անոնք Եկեղեցւոյ կողմէ հաստատուած սրբազան նշան-  
1677-1678 ներ են, որոնք կը սրբացնեն կեանքի որոշ պարագաները: Անոնք աղօթքներ են, որոնց կ'ընկերակցին խաչի նշանը եւ ուրիշ նշաններ: Խորհրդակերպերուն մէջ կարեւոր տեղ կը գրաւեն օրհնութիւնները, որոնք Աստուծոյ մատուցուած գովաբանութիւն են եւ Անոր պարգեւներն ընդունելու աղօթք են: Կան նաեւ անձերու օծումը եւ աստուածային պաշտամունքին վերապահուած առարկաներուն ընծայումը:

**352 - Ի՞նչ է երդմնեցուցչությունը:**

Երդմնեցուցչութիւն կը կատարուի երբ Եկեղեցին իր 1673  
 իշխանութեամբ եւ Յիսուսի անունով կը խնդրէ որ անձ մը  
 կամ առարկայ մը պաշտպանուի կամ ձերբազատուի  
 Չարին տիրապետութենէն: Իր հասարակ ձեւին տակ, ան կը  
 գործադրուի Մկրտութեան միջոցով: Իսկ հանդիսաւոր կամ  
 մեծ երդմնեցուցչութիւնը կրնայ կատարուիլ միայն եպիս-  
 կոպոսին արտօնութիւնը վայելող քահանայի մը կողմէ:

**353 - Որո՞նք են ժողովրդային բարեպաշտութիւնները,  
 որոնք կ'ընկերակցին Եկեղեցոյ խորհրդեմական  
 կեանքին:**

Քրիստոնեայ ժողովուրդին կրօնական ըմբռնողութիւնը 1674-1676  
 բոլոր ժամանակներուն մէջ ինքզինք դրսեւորած է Եկե- 1679  
 ղեցոյ խորհրդեմական կեանքը շրջապատող բարեպաշ-  
 տական զանազան արտայայտութիւններուն մէջ, ինչպէս՝  
 մասունքներու մեծարումը, ուխտավայրերու այցելութիւնը,  
 ուխտագնացութիւնները, թափօրները, ճանապարհ խաչին,  
 Վարդարանը: Եկեղեցին հաւատքի լոյսով կը լուսաւորէ եւ  
 կը հրահրէ ժողովրդային բարեպաշտութիւններուն հարա-  
 զատ ձեւերը:

**ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՅՈՒՂԱՐԿԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ**

**354 - Ի՞նչ առնչութիւն կայ Սուրբ Խորհուրդներուն եւ քրիս-  
 տոնեային մահին միջեւ:**

Քրիստոսի մէջ վախճանող քրիստոնեան, իր երկրաւոր 1680-1683  
 գոյութեան աւարտին՝ կը հասնի լրումին ա՛յն նոր կեանքին,  
 որ սկսուած էր Մկրտութեամբ, զօրացուած էր Դրոշմով եւ  
 սնած էր երկնային խնջոյքին կանխակատարումը հանդիսա-  
 ցող Սուրբ Հաղորդութեամբ: Քրիստոնեայ մահուան  
 իմաստը կը լուսաբանուի մեր միակ յոյսը եղող՝ Յիսուս  
 Քրիստոսի մահով եւ յարութեամբ:

*Յիսուս Քրիստոսի մէջ մահացող քրիստոնեան, կը մեկնի «մտնելու համար Տիրոջ մօտ» (Բ Կոր 5, 8):*

**355 - Յուդարկաւորութիւնը ի՞նչ կ'արտայայտէ:**

1684-1685 *Յուդարկաւորութիւնը, նոյնիսկ եթէ կը կատարուի տեղական կացութիւններու եւ աւանդութիւններու համապատասխանող բազմազան ծէսերու համեմատ, կ'արտայայտէ յարութեան յոյսով տոգորուած քրիստոնեայ մահին զատկական բնոյթը, ինչպէս նաեւ վախճանեալին հետ հաղորդակցումի նշանակութիւնը, որ կը կատարուի յատկապէս անոր հոգիին քաւչական մաքրազրտումին համար աղօթելով:*

**356 - Որո՞նք են յուդարկաւորութեան գլխաւոր պահերը:**

1686-1690 *Սովորաբար յուդարկաւորութիւնը կը բաղկանայ չորս գլխաւոր մասերէ. ա-Հաւաքուած հասարակութիւնը մարմինը կը դիմաւորէ յորդորական եւ յուսատու խօսքերով, բ-Կ'անցնի Խօսքի ծիսակատարումին, գ- Պատարագ կը մատուցուի, դ- «Հրաժեշտ»ի պահումն՝ ննջեցեալին հոգին կը յանձնեն Աստուծոյ, աղբիւր յաւիտենական կեանքի, մինչ մարմինը կը թաղեն յարութեան սպասումով:*



Պատկերը կը ներկայացնէ Վերջին Ընթրիքը՝ Սուրբ Հաղորդութեան հաստատումի պահը, գորգապատ վերնատան մը մէջ (Հմտ Մրկ 14, 15):

«Ընթրիքի ատեն՝ Յիսուս հաց առաւ, օրհնեց, զայն բեկանեց եւ աշակերտներուն բաժնելով ըսաւ.- Առէ՛ք, կերէ՛ք, ասիկա մարմինս է: Ապա բաժակն առաւ, գոհութիւն մատոյց եւ զայն անոնց երկարելով ըսաւ.- Իմեցէ՛ք ամէնքդ, ասիկա արիւնս է, Ուխտի արիւնը որ կը հեղուի բազմութեան մեղքերուն համար » (Մտք 26, 26-28):

Նկարին մէջ՝ Յիսուս իր Առաքեալներուն հետ նստած է բաժակաձեւ սեղանի մը շուրջ, որուն վրայ Սուրբ Հաղորդութեան տեսակները դրուած են. հացն ու գինին: Սրահը, որու յետնամասին կ'երեւայ ճարտարապետական նրբակերտ կառոյց մը, չէնքերով եւ եթնաքարէն բոլորաձեւ տապանակով, կը խորհրդանշէ Եկեղեցին՝ Գրիստոսի բնակարանը: Յատկանշական մանրամասնութիւն՝ Յովհաննէս առաքեալը իր գլուխը հակած է Յիսուսի կուրծքին վրայ (Հմտ. Յովհ 13, 35): Ան կ'արտայայտէ սիրոյ հաղորդակցութիւնը, զոր Գոհութեան Խորհուրդը հաւատացեալին մէջ կ'իրագործէ: Յովհաննէս այս արարքով կ'ընդառաջէ իր վարդապետին հրաւերին, որ կ'ըսէ՝ «Ես եմ որթը, դուք ուռերը: Ան որ իմ մէջն կը մնայ եւ ես անոր մէջ՝ այնպիսին շատ պտուղ կու տայ (...): Մնացէ՛ք իմ սիրոյս մէջ: Եթէ իմ պատուիրաններուս հաւատարիմ էք, իմ սիրոյս մէջ պիտի բնակիք» (Յովհ 15, 5-10):

Գոհութեան Խորհուրդը թէ՛ հաղորդութիւն է եւ թէ՛ հոգեւոր սնունդ Յիսուսի հետ, որ կը զօրացնէ ամէնօրեայ բարի պայքարը հաւատացեալին՝ պատուիրանները պահելու համար:

«Փրկիչը (...) մշտապէս եւ լիապէս ներկայ է Իրեն հետ ապրողներուն մէջ: Ան անոնց բոլոր կարիքները կը հոգայ, Ան անոնց ամէն ինչն է, Ան թոյլ չի տար որ անոնք իրենց ակնարկը ուրիշ ուղղութեամբ սեւեռեն եւ իրմէ դուրս բան մը փնտռեն: Սուրբերը արգարեւ իրմէ դուրս ո'չ մէկ բանի պէտք ունին: Ինք զանոնք կը ծնի, կ'սնցնէ եւ կը սնուցանէ: Ան անոնց լոյս ու շունչ է: Անոնց ակնարկը Իրեն համար կը ձեւաւորէ, զայն իրմով կը լուսաւորէ եւ իր տեսքը անոնց տեսութեան կ'ընծայէ: Ան միանգամայն սնունդ ու սնուցանող է, Ան կը մատուցանէ կեանքի հացը, իսկ այդ մատուցածը՝ Ի'նքն է, Ի'նք՝ ողջերուն կեանքը, Ի'նք՝ շնչողներուն բոյլը, Զի'նք հազիւ ուզողներուն զգեստը: Ի'նքն է նաեւ մեր քայլերուն ուժը, Ի'նքն է ճանապարհը, Ի'նքն է իջեւանը եւ վերջին կայանը: Մենք Անոր անդամներն ենք, իսկ Ան մեր գլուխը: Պայքարի'լ հարկ է, Ան մեր կողքին կը պայքարի եւ պատուով պայքարողին՝ Ան է յաղթանակ պարգեւողը: Յաղթեցի՞նք, ահա Ան է դափնեպսակը: Այսպէս՝ Ան մեր միտքը ամէն կողմէն դէպի իրեն կ'ուղղէ եւ թոյլ չի տար որ դէպի ուրիշ կողմ թեքուի կամ ուրիշէն հրապուրուի (...): Այս մեր ըսածներէն յստակ կը հետեւի, թէ կեանքը Յիսուսի մէջ միայն գալիքի համար չէ, այլ ան այժմէն իսկ ներկայ է սուրբերուն համար, որոնք Անոր մէջ կ'ապրին ու կը գործեն» (Նիկողա Քապադիստ, Կեսմըք Բրիստոսի մէջ, 1, 13-15):

**ՅԱԿՈԲ ՕՐԻՆԱԿԻՉ** - Չորրորդ Աւետարանի մանրամկար, Միխիթաբեան Հայրերու Մատենադարան, Վիեննա:

**ԵՐՐՈՐԴ ՄԱՍ**

**ԿԵԱՆՔԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԷՉ**



**ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԱԾ**

**ՄԱՐԳՈՒՆ ԿՈՉՈՒՄԸ.**

**ԿԵԱՆՔԸ ՀՈԳԻՆ ՄԷՋ**



Մարիամ՝ «Ամենապրբուհին», գլուխ գործոցն է «Ամենասուրբ» Հոգիին: Իր Անարատ Յղութենէն սկսեալ մինչեւ իր հրաշափառ Վերափոխումը, Մարիամի կեանքը իբր յենարան ունի աստուածային սէրը: Հօր եւ Որդիին սիրոյ Հոգին Մարիամը կը կերպարանափոխէ նոր արարածի, Նոր Եւայի: Ան երկնաւոր Հօր նախասիրած դուստրն է եւ հոգւով սրտով՝ նուիրուած է Անոր պաշտամունքին եւ հնազանդութեան, պատրաստ՝ ծառայելու Որդիին, Որուն մայրը, աշակերտն ու գործակիցն է, նաեւ պատրաստ՝ հաղորդակցելու եւ գործակցելու Սուրբ Հոգիին հետ, Որուն թանկարժէք սրբատուփն է ինք:

Այս պատկերին մէջ, Մարիամ չըջապատուած է երաժիշտ տօնակատար հրեշտակներէ, իր գլխուն վերեւ ունենալով աղաւնակերպ Սուրբ Հոգիին աստուածային սիրոյ լուսապսակը: Մարիամ Եկեղեցւոյ մայրն ու պաշտպանն է, (ոտքին ներքեւ սրբալվար մը կը նշմարուի): Շնորհիւ Յիսուսի մօտ իր վախճած մայրական հօր բարեխօսութեան, Մարիամ Եկեղեցւոյ վրայ ցօղել կու տայ երկնային շնորհներուն առատութիւնը (նշուած՝ ծաղկեալ վարդենիի մը պատկերով):

Վարժ՝ ձախին, Անարատ Յղացեալը սեւեռող Յովհաննէս առաքեալը խորհրդանշիչն է իւրաքանչիւր հաւատացեալին, որ Տիրամօր մէջ կը տեսնէ իր կատարեալ տիպարը, միանգամայն Հոգիի կեանքին ուսուցչուհին եւ առաջնորդը:

Սխտերսեան ուխտին արքայ Քրիստիան (12րդ դար), երբ կը խորհրդածէ Մարիամին եւ առաքեալներուն միջեւ փոխանակուած հոգեւոր ապրումին մասին, առաքեալները բաղդատելով Ս. Կոյսը չըջապատող 12 աստղերուն հետ, կը գրէ: «Անոնք յաճախակի կը խմբուէին ամենազօն Տիրամօր շուրջ, ինչպէս աշակերտները իրենց ուսուցիչին շուրջ, որպէսզի անոր կեանքին մանրամասնութիւններուն մօտէն ծանօթանան եւ պատեհ առիթով զանոնք ուրիշներուն քարգզեն: Աստուածային նուիրագործումով եւ գիտութեամբ ճոխացած Ս. Կոյսը երկնային իմաստութեան իսկական գրադարան մըն էր, որովհետեւ նոյնինքն իմաստութեան, այսինքն իր Որդիին հետ իր ամէնօրեայ ապրումով՝ Անոր անձնայատուկ ու մօտիկ ընկերուհին եղած էր, Անկէ սորվելով իր մտքին ու իր սրտին մէջ հաւատարմօրէն պահպանել իր տեսածներն ու լսածները» (Բարոզ Ա.-Վերափոխումը Մարիամ Աստուածածնի):

**ԷԼ ԿՐԷՔՑ** - Ս. Յովհաննէս Սլրտիչ հիացումով կը դիտէ Անարատ Յղացեալը (Ս. *Խաչ* թանգարան, Թուրքիոյ):

**357 - Քրիստոնեային բարոյական կեանքը ի՞նչ կերպով կապուած է հաւատքին եւ Սուրբ Խորհուրդներուն:**

*Ինչ որ հաւատոյ Հանգանակը կը դաւանի, Սուրբ 1691-1698*  
*Խորհուրդները զանոնք մեզի կը հաղորդեն: Իսկապէս՝*  
*հաւատացեալները անոնց միջոցով կ'ընդունին Քրիստոսի*  
*շնորհքը եւ Սուրբ Հոգիին պարգեւները, որոնք զիրենք*  
*ատակ կը դարձնեն Աստուծոյ զաւակներու նոր կեանքն*  
*ապրելու, հաւատքով ընդունուած Քրիստոսի միջոցաւ:*

Քրիստոնեայ՝ ճանչցի՛ր քու արժանապատուութիւնդ  
(Ս. Լեւոն Մեծ):

**ԳԼՈՒԽ Ա.**

**ՄԱՐԿԱՅԻՆ ԱՆՁԻՆ**

**ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ**

**ՄԱՐԴԸ, ՊԱՏԿԵՐ ԱՍՏՈՒԾՈՅ**

**358 - Ո՞րն է մարդկային արժանապատուութեան հիմը:**

*Մարդուն արժանապատուութեան հիմը կը գտնուի 1699-1715*  
*Աստուծոյ պատկերին եւ նմանութեան համեմատ իր*  
*ստեղծուած ըլլալուն մէջ: Մարդկային անձը, օժտուած՝*  
*աննիւթական եւ անմահ հոգիով, իմացականութեամբ եւ*  
*ազատ կամքով, կարգաւորուած է դէպի Աստուած եւ իր*  
*հոգիով ու մարմինով միասին՝ կանչուած է յաւիտենական*  
*երանութեան:*

**ՄԵՐ ԿՈՉՈՒՄԸ ԵՐԱՆՈՒԹԵԱՆ**

**359 - Մարդը երանութեան ինչպէ՞ս կը հասնի:**

*Մարդը երանութեան կը հասնի Քրիստոսի շնորհքին զօ- 1716*  
*րութեամբ, որ զինք աստուածային կեանքին բաժնեկից կը*

դարձնէ: Քրիստոս Աւետարանին մէջ իրեններուն ցոյց կու տայ անվախճան երանութեան առաջնորդող ճանապարհը որ Երանութիւններն են: Քրիստոսի շնորհքը կը ներգործէ նաեւ իւրաքանչիւր մարդու մէջ, որ ճշմարիտն ու բարին ի խղճէ կը փնտռէ եւ կը սիրէ, խուսափելով չարէն:

**360 - Ինչու՞ Երանութիւնները մեզի համար կարեւոր են:**

1716-1717 *Երանութիւնները Քրիստոսի քարոզութեան կեդրոնա-*  
 1725-1726 *կան մասը կը կազմեն: Անոնք Աստուծոյ կողմէ Աբրահամին*  
*կատարուած խոստումները վերաքաղի ենթարկելով, զա-*  
*նոնք իրենց կատարելութեան կը հասցնեն: Անոնք Յիսուսի*  
*խսկական դիմագիծը կը պատկերեն, քրիստոնեայի հարա-*  
*զատ կեանքը կը բնորոշեն եւ անոր կենցաղին վախճանա-*  
*կան նպատակը եղող յաւիտենական երանութիւնը անոր կը*  
*յայտնեն:*

**361 - Ո՞րն է Երանութիւններուն առնչութիւնը մարդու երջանկանալու փափաքին հետ:**

1718-1719 *Երանութիւնները կը համապատասխանեն երանութեան*  
*այն բնատուր փափաքին, զոր Աստուած մարդուն սրտին*  
*մէջ գետեղած է՝ զայն առինքնելու համար, փափաք մը զոր*  
*Ի՛նք միայն կարող է յագեցնել:*

**362 - Ի՞նչ է յաւիտենական երանութիւնը:**

1720-1724 *Ան Աստուծոյ տեսութիւնն է յաւիտենական կեանքին*  
 1727-1729 *մէջ, ուր լիովին «մասնակից պիտի դառնանք աստուածային*  
*բնութեան» (Բ Պետ 1, 4), նաեւ Քրիստոսի փառքին եւ*  
*Սուրբ Երրորդութեան կեանքին վայելումին: Երանութիւնը*  
*կը գերազանցէ մարդկային կարողականութիւնները: Ան*  
*Աստուծոյ գերբնական եւ ձրի մէկ տուրքն է, մեզ հոն*  
*առաջնորդող շնորհքին պէս: Ոչոստացուած երանութիւնը*  
*երկրային բարիքներուն դիմաց՝ մեզ բարոյական վճռական*  
*երկընտրանքի առջեւ կը դնէ եւ մեզ կը խթանէ զԱստուած*  
*ամէն բանէ վեր սիրելու:*

## ՄԱՐԴՈՒՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

## 363 - Ի՞նչ է ազատությունը:

Ան Աստուծո՞ւ մարդուն տրուած կարողութիւնն է գործելու կամ չգործելու, այս կամ այն ընելու, ինքնակամ արարքներ կատարելու: Ազատութիւնը մարդկային իսկական արարքներուն բնորոշիչն է: Որքան բարիք կը գործենք, այնքան ազատ կը դառնանք: Ազատութիւնը իր իսկական կատարելութեան կը հասնի երբ իբր նպատակակէտ կ'առնէ զԱստուծո, որ գերագոյն Բարիքն ու մեր Երջանկութիւնն է: Ազատութիւնը կը ներառէ նաեւ չարին եւ բարիին միջեւ ընտրելու հնարաւորութիւնը: Զարը նախընտրելը՝ մեր ազատութեան կողմէ գործուած զեղծում է, որ մարդս մեղքի գերութեան կ'առաջնորդէ:

1730-1733

1743-1744

## 364 - Ի՞նչ առնչութիւն կայ ազատութեան եւ պատասխանատուութեան միջեւ:

Ազատութիւնը մարդս իր արարքներուն պատասխանատու կը կացուցանէ, պայմանաւ որ անոնք ազատ արարքներ ըլլան, հակառակ որ տգիտութեան, անուշադրութեան, բռնութեան, վախի, անկշռադատ զգացողութեան եւ ունակութիւններու հետեւանքով՝ արարքի մը յանցաւորութիւնը եւ պատասխանատուութիւնը կրնան նուազիլ, երբեմն նոյնիսկ ջնջուիլ:

1734-1737

1745-1746

## 365 - Ի՞նչու՞ ամէն մարդ իր ազատութիւնը կիրարկելու իրաւունք ունի:

Ամէն մարդ իրաւունք ունի իր ազատութիւնը կիրարկելու, որովհետեւ ան անանջատելի է մարդկային անձին արժանապատուութենէն: Հետեւաբար՝ հարկ է այսպիսի իրաւունք մը միշտ յարգել, յատկապէս բարոյական եւ կրօնական մարգերուն մէջ, հարկ է նաեւ զայն քաղաքացիականօրէն ճանչնալ եւ պաշտպանել, մնալով հասարակաց բարիքին եւ հանրային արդար կարգին սահմաններուն մէջ:

1738

1747

**366 - Մարդկային ազատությունը փրկչական կարգին մէջ ի՞նչ տեղ կը գրաւէ:**

1739-1742 *Մեր ազատութիւնը, առաջին մեղքին հետեւանքով, դիւ-*  
 1748 *րաբեկ դարձած է: Այս դիւրաբեկութիւնը ա'լ աւելի սրած է*  
*յետագային գործուած մեղքերով: Բայց Քրիստոս եկաւ եւ*  
*«մեզ ազատագրեց որպէսզի ազատ մնանք» (Գաղ 5, 1): Ս.*  
*Հոգին ալ իր շնորհքով մեզ կ'առաջնորդէ դէպի հոգեւոր*  
*ազատութիւն, որպէսզի Եկեղեցւոյ եւ աշխարհի մէջ՝ մեզ*  
*իր ազատ գործակիցները դարձնէ:*

**367 - Որո՞նք են մարդկային արարքներուն բարոյականութեան ակունքները:**

1749-1754 *Մարդկային արարքներուն բարոյականութիւնը կախեալ*  
 1757-1758 *է երեք տուեաներէ. ա- Մեր ընտրած նիւթն, այսինքն՝*  
*անոր իսկական կամ երեւութական լաւութենէն. բ- Գոր-*  
*ծողին դիտաւորութենն, այսինքն՝ արարքին զրդապատճա-*  
*ռէն, գ- Արարքին պարագաներն, ներառեալ՝ անոր հետե-*  
*ւանքներն:*

**368 - Արարքը ե՞րբ բարոյապէս բարի է:**

1755-1756 *Արարքը բարոյապէս բարի է, երբ կ'ենթադրուի թէ անոր*  
 1759-1760 *նիւթը, նպատակն ու պարագաները՝ միանգամայն բարի են:*  
*Մեր ընտրած նիւթը առանձինն՝ կրնայ ամբողջ արարք մը*  
*աղաւաղել, նոյնիսկ եթէ դիտաւորութիւնը բարի է: Չէ*  
*արտօնուած չարիք գործել՝ անկէ բարիք քաղելու նպատա-*  
*կով: Գէշ նպատակ մը կրնայ արարքը աղաւաղել, նոյնիսկ*  
*եթէ անոր նիւթը ինքնին բարի է: Ներհակաբար, բարի նպա-*  
*տակ մը բարի չի դարձնէր արարք մը, որ իր նիւթին պատ-*  
*ճառով գէշ է, որովհետեւ նպատակը չ'արդարացներ միջոց-*  
*ները: Պարագաները թէեւ կրնան մարդուս պատասխանա-*  
*տուութիւնը թեթեւցնել կամ ծանրացնել, բայց արարքնե-*  
*րուն բարոյական որակը չեն կրնար փոփոխել, ո՛չ ալ կրնան*  
*ինքնին գէշ արարք մը բարիի վերածել:*

**369 - Գոյութիւն ունի՞ն ցմիշտ չարսօնուած արարքներ:**

*Արարքներ կան, որոնց ընտրութիւնը չարսօնուած կը 1756-1761*  
մնայ իրենց նիւթին պատճառով, (օրինակ՝ հայհոյանքը,  
մարդասպանութիւնը, շնութիւնը): Զանոնք ընտրելը՝  
յառաջ կը բերէ կամքի անկարգութիւն, այսինքն  
բարոյական չարիք, որ չի կրնար արդարացուիլ՝ նոյնիսկ  
նկատի առած անկէ հաւանաբար քաղուելիք բարիքները:

**ԿԻՐՔԵՐՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ**

**370 - Կիրքերը ի՞նչ են:**

*Կիրքերը մարդկային հոգեբանութեան բնական բաղա- 1762-1766*  
դրեալները կազմող զգացումներ, յուզումներ կամ զգայ- 1771-1772  
նութեան շարժումներ են, որոնք մարդը կը մղեն բան մը  
ընելու կամ չընելու, նայած թէ բան մը իբր բարի կամ իբր  
գէշ կ'ընկալուի: Գլխաւոր կիրքերն են՝ սէրը եւ ատելու-  
թիւնը, տենչանքն ու վախը, ուրախութիւնը, տխրութիւնը,  
բարկութիւնը: Գլխաւոր կիրքը՝ բարիին հրապոյրէն շար-  
ժող սէ՛րն է: Մարդ միայն բարին կը սիրէ, ան իրական ըլլայ  
թէ երեւութական:

**371 - Կիրքերը բարոյապէս լա՞ւ կամ գէ՞շ են:**

*Կիրքերը զգայնութեան շարժումներ ըլլալով՝ ըստ ինքեան 1767-1770*  
ո՛չ լաւ են ո՛չ ալ գէշ: Լաւ կամ գէշ կը դառնան նայած թէ 1773-1775  
բարե՞ թէ չար գործի կը նպաստեն: Կրնան ընկալուիլ առա-  
քինութիւններու շարքին եւ կամ վատթարանալ ախտերու  
շարքին:

**ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽԻՂՃԸ**

**372 - Ի՞նչ է բարոյական խիղճը:**

*Բարոյական խիղճը, որ անձին ներսիղին ներգոյ է, մտքի 1776-1780*  
դատում մըն է, որ պատե՛հ պահուն մարդուն կը հրահանգէ 1795-1797

բարին գործել եւ չարէն խուսափիլ: Մարդկային անձը՝ շնորհիւ բարոյական խիղճին, կ'ըմբռնէ իր կատարելիք կամ կատարած արարքին բարոյական որպիսութիւնը եւ զինք կարող կը դարձնէ պատասխանատուութիւնը ստանձնելու: Զգուշաւոր մարդը ատակ է լսելու իրեն խօսող Աստուծոյ ձայնը:

**373 - Անձին արժանապատուութիւնը բարոյական խղճին նկատմամբ՝ ներքնապէս ի՞նչ կ'ենթադրէ:**

1780-1782 *Մարդկային անձի մը արժանապատուութիւնը ներքնա-*  
1798 *պէս կ'ենթադրէ բարոյական խղճին ուղիղութիւնը, այսինքն՝*  
*արդար եւ բարի արարքին հետ անոր ներդաշնակութիւնը,*  
*ըստ խելքին եւ ըստ աստուածային Օրէնքին: Ի յարգանս*  
*մարդուն անձնական արժանապատուութեան՝ պէտք չէ մարդս*  
*հարկադրել իր խղճին դէմ գործելու, եւ ո'չ ալ պէտք է զայն*  
*արգիլել հասարակաց բարիքին սահմանին մէջ իր խղճին*  
*համեմատ շարժելու՝ յատկապէս կրօնական մարզէն ներս:*

**374 - Ի՞նչպէս կազմել բարոյական խիղճը, որպէսզի ան ուղիղ եւ ճշմարտախօս ըլլայ:**

1783-1788 *Ուղիղ եւ ճշմարտախօս բարոյական խիղճը կը կազմուի*  
1799-1800 *դաստիարակութեամբ, Աստուծոյ Խօսքին եւ Եկեղեցւոյ*  
*ուսուցումին իւրացումով: Սուրբ Հոգիին պարգեւները*  
*անոր նեցուկ կը կանգնին, իսկ իմաստուն մարդոց*  
*խրատները անոր կ'օժանդակեն: Աղօթքն ու խղճի*  
*քննութիւնն եւս մեծապէս կը նպաստեն բարոյական*  
*դաստիարակութեան:*

**375 - Խիղճը ի՞նչ օրինագիծի հետեւելու է:**

1789 *Երեք ընդհանուր օրինագիծեր կան. 1- Երբեք*  
*արտօնուած չէ գէշ գործի ձեռնարկել՝ լաւ արդիւնք ձեռք*  
*ձգելու նպատակով. 2- Ոսկի Կանոնն է. «Ինչ որ կ'ուզէք որ*  
*մարդիկ ձեզի ընեն, դուք ալ նոյնը անոնց ըրէ՛ք» (Մտք 7,*  
*12). 3- Սէրը միշտ նկատի ունենալու է մերձաւորին*

յարգանքն ու խիղճը, բայց ասիկա չի նշանակեր իբր բարիք ընդունիլ ինչ որ գէշ է:

### 376 - Բարոյական խիղճը կրնա՞յ սխալ դատումի տանիլ:

Մարդս պէտք է միշտ իր խղճին ստոյգ դատողութեան հնազանդի: Հակառակ ասոր՝ ան կարող է նաեւ սխալ դատումներու տանիլ, պատճառներու համար՝ որոնք միշտ գերծ չեն անձնական յանցաւորութենէ: Մակայն անձ մը, երբ ակամայ եւ անգիտակցաբար չարը կը գործէ, անիկա անոր վերագրելի չէ, նոյնիսկ եթէ անոր գործածը առարկայօրէն չար է: Ահա թէ ինչու անհրաժեշտ է բարոյական խիղճը իր սխալմունքներէն սրբագրելու աշխատիլ:

1790-1794

1801-1802

## ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

### 377 - Ի՞նչ է առաքինութիւնը:

Առաքինութիւնը բարիք ընելու ունակական եւ հաստատ տրամադրութիւն մըն է: «Առաքինի կեանքին նպատակը կը կայանայ Աստուծոյ նմանելու մէջ» (Ս. Գրիգոր Նիսեցի): Մարդկային եւ աստուածաբանական առաքինութիւնները կան:

1803-1833

### 378 - Մարդկային առաքինութիւնները ի՞նչ են:

Մարդկային առաքինութիւնները իմացականութեան եւ կամքին ունակական եւ հաստատ այն տրամադրութիւններն են, որոնք մեր արարքները կը կանոնաւորեն, մեր կիրքերը կը կարգաւորեն եւ մեր վարքը կ'ուղղեն իմացականութեան եւ հաւատքին համեմատ: Առաքինութիւնները բարոյապէս բարի եւ կրկնուած արարքներով ձեռք կը ձգուին եւ կ'ամրապնդուին, իսկ աստուածային շնորհքին միջոցով կը մաքրասրբուին ու կը բարձրանան:

1804

1810-1811

1834-1839

**379 - Որո՞նք են մարդկային գլխաւոր առաքինութիւնները:**

1805 Անոնք գլխաւոր կոչուածներն են: Անոնց շուրջ միւս  
1834 բոլոր առաքինութիւնները կը խմբուին եւ առաքինի  
կեանքին առանցքը կը հանդիսանան: Անոնք են՝  
խոհեմութիւնը, արդարութիւնը, զօրութիւնը եւ ժուժկա-  
լութիւնը:

**380 - Ի՞նչ է խոհեմութիւնը:**

1806 Խոհեմութիւնը մեր բանականութիւնը կը տրամադրէ  
1835 բոլոր պարագաներու մէջ մեր իսկական բարիքը բնորոշե-  
լու եւ անոր գործադրութեան յարմար միջոցները ընտրե-  
լու: Ան կ'ուղղէ միւս առաքինութիւնները՝ անոնց ցոյց  
տալով իրենց կանոնն ու չափը:

**381 - Ի՞նչ է արդարութիւնը:**

1807 Արդարութիւնը մնայուն եւ հաստատ կամքն է ուրիշին  
1836 տալու ինչ որ ուրիշին իրաւունքն է: Աստուծոյ հանդէպ  
արդարութիւնը կոչուած է «կրօնի առաքինութիւն»:

**382 - Ի՞նչ է զօրութիւնը:**

1808 Զօրութիւնը դժուարութիւններու մէջ մարդուն կ'ապա-  
1837 հովէ հաստատամտութիւն, իսկ բարիին հետապնդումին  
մէջ՝ վճռակամութիւն: Ան մարդը կարող կը դարձնէ ի  
հարկին մինչեւ իսկ իր կեանքը զոհելու՝ արդար դատի մը  
պաշտպանութեան համար:

**383 - Ի՞նչ է ժուժկալութիւնը:**

1809 Ժուժկալութիւնը հաճոյքներուն հրապոյրը կը չափա-  
1838ւորէ, կ'ապահովէ կամքին ինքնատիրացումը բնազդներուն  
դէմ եւ մարդս ասակ կը դարձնէ արարչութեան բարիքնե-  
րուն գործածութեան մէջ իր հաւասարակշռութիւնը պահ-  
պանելու:

**384 - Ի՞նչ են աստուածաբանական առաքինությունները:**

Այն առաքինություններն են, որոնց աղբյուրը, զրդապատճառն ու անմիջական առարկան՝ Ինք Աստուած է: Անոնք մարդուն մէջ կը զեղուին սրբարար շնորհքին միջոցով եւ զայն ատակ կը դարձնեն Սուրբ Երրորդություն յարաբերութեան մէջ ապրելու: Անոնք քրիստոնեային բարոյական գործելակերպը կը հիմնաւորեն, եւ կը կենդանացնեն, կենսաւորելով մարդկային առաքինութիւնները: Անոնք մարդկային կարողութիւններուն մէջ Սուրբ Հոգիին ներկայութեան եւ ներգործութեան գրաւականն են:

1812-1813

1840-1841

**385 - Որո՞նք են աստուածաբանական առաքինությունները:**

Անոնք են, հաւատքը, յոյսը եւ սէրը:

1813

**386 - Ի՞նչ է հաւատքը:**

Հաւատքը աստուածաբանական այն առաքինութիւնն է, որուն շնորհիւ կը հաւատանք Աստուծոյ եւ Անոր բոլոր յայտնածներուն, զորս Եկեղեցին մեզի կ'առաջարկէ որ հաւատանք, քանի որ Աստուած ճշմարտութիւնն իսկ է: Հաւատքով՝ մարդը ինքզինք ազատօրէն Աստուծոյ կը յանձնէ, այս պաճառով ան որ կը հաւատայ, կը ջանայ ճանչնալ Աստուծոյ կամքը եւ զայն կատարել, քանի որ հաւատքը «սէրէն մղուած կը գործէ» (Գալ 5, 6):

1814-1816

1842

**387 - Ի՞նչ է յոյսը:**

Յոյսը աստուածաբանական այն առաքինութիւնն է, որուն շնորհիւ մենք յաւիտեանական կեանքը կը բաղձանք եւ զայն Աստուծմէ կ'ակնկալենք իբր մեր երանութիւնը, եւ առ այս՝ մեր վստահութիւնը կը զնենք Քրիստոսի խոստումներուն մէջ եւ կը յենինք Սուրբ Հոգիին շնորհքին օժանդակութեան վրայ, արժանանալու համար յաւիտեանական կեանքին եւ յարատեւելու մինչեւ մեր երկրաւոր կեանքին վախճանը:

1817-1821

1843

**388 - Ի՞նչ է սերը:**

- 1822-1829 *Սէրը աստուածաբանական այն առաքինութիւնն է,*  
 1844 *որուն շնորհիւ կը սիրենք զԱստուած ամէն բանէ վեր եւ մեր մերձաւորը մեր անձին պէս՝ Աստուծոյ սիրոյն համար: Յիսուս զայն նոր պատուիրան, Օրէնքի լրում կարգեց: Ան «կատարելութեան զօղն է» (Կող 3, 14), հիմը՝ միւս առաքինութիւններուն, զորս սէրը կ'ոգեւորէ, կը ներշնչէ եւ կը կանոնաւորէ: Առանց սիրոյ՝ «ես ոչինչ եմ» եւ ... «եւ այս ամէնը պիտի ըլլար ինծի անօգուտ » (Ա Կոր 13, 1-3):*

**389 - Ի՞նչ են Ս. Հոգիին պարգեւները:**

- 1830-1831 *Սուրբ Հոգիին պարգեւները մնայուն տրամադրու-*  
 1845 *թիւններ են, որոնք մարդը յօժար կը դարձնեն հետեւելու աստուածային ներշնչումներուն: Անոնք եօթը հատ են. իմաստութիւնը, հանճարը, խրատը, զօրութիւնը, գիտու-*  
*թիւնը, աստուածապաշտութիւնը եւ Աստուծոյ երկիւղը:*

**390 - Ի՞նչ են Ս. Հոգիին պտուղները:**

- 1832 *Սուրբ Հոգիին պտուղները կատարելութիւններ են, որոնք մեր մէջ կը կազմաւորուին իբր գրաւական յաւիտեական փառքին: Անոնք տասներկու հատ են՝ ըստ Եկեղեցւոյ աւանդութեան. «սէրը, ուրախութիւնը, հեզու-*  
*թիւնը, խաղաղութիւնը, համբերութիւնը, երկայնամտու-*  
*թիւնը, բարեսիրտութիւնը, քաղցրութիւնը, հաւատարմու-*  
*թիւնը, համեստութիւնը, ժուժկալութիւնը եւ ողջախոհու-*  
*թիւնը» (Գալ 5, 22-23):*

ՍԵՂՔԸ

**391 - Աստուծոյ գթութեան արժանանալը մեզմէ ի՞նչ կը պահանջէ:**

- 1846-1848 *Կը պահանջէ որ ճանչնանք մեր յանցանքները եւ զղջանք*  
 1870 *մեր մեղքերուն վրայ: Ինքն Աստուած՝ Իր Խօսքին եւ Իր Հո-*

գիրն միջոցով մեր մեղքերը ճանչնալու լոյսը կու տայ, մեր խղճին ուղղամտութիւն կ'ապահովէ եւ ներումի յոյսը կը հաղորդէ մեզի:

### 392 - Ի՞նչ է մեղքը:

Մեղքը «յաւիտենական Օրէնքին հակառակ խօսք մը, 1849-1851  
արարք մը կամ բաղձանք մըն է» (Ս. Օգոստինոս): Մեղքը 1871-1872  
Աստուծոյ դէմ վիրաւորանք մըն է, Անոր սիրոյն դէմ մեր  
գործածած անհնազանդութեան պատճառով: Մեղքը մար-  
դուն բնութիւնը կը խոցէ եւ մարդկային համընկերութեան  
վնաս կը պատճառէ: Քրիստոս Իր հարչարանքներուն միջո-  
ցով մեղքին ծանրութիւնը մեզի կը յայտնէ եւ Իր ողորմա-  
ծութեամբ՝ անոր դէմ յաղթանակ կը տանի:

### 393 - Մեղքերը բազմատեսա՞կ են:

Մեղքերուն բազմազանութիւնը մեծ է: Կարելի է զանոնք 1852-1853  
բնորոշել ըստ իրենց նիւթին եւ կամ ըստ առաքինութիւննե- 1873  
րուն եւ պատուիրաններուն, որոնց հակառակն են: Անոնք  
կրնան առնչուիլ ուղղակի Աստուծոյ, մերձաւորին եւ կամ  
մեզի: Կարելի է զանոնք նաեւ զանազանել իրը մտքով, խօս-  
քով, արարքով կամ զանցառութեամբ գործուած մեղքեր:

### 394 - Մեղքերը ինչպէ՞ս կը դասուին ըստ իրենց ծանրու- թեան:

Անոնք ըստ իրենց ծանրութեան՝ մահացու են կամ նե- 1854  
րելի:

### 395 - Ե՞րբ մահացու մեղք կը գործենք:

Մեղքը մահացու է երբ մեղքին նիւթը ո՛չ միայն ծանր է, 1855-1861  
այլ նաեւ լման գիտակցութեամբ եւ ինքնակամ կերպով 1874  
գործուած է: Մահացու մեղքը՝ մեր մէջ սէ՛րը կը քանդէ,  
մեզ սրբարար շնորհէն կը զրկէ, իսկ չզղջալու պարագա-  
յին՝ մեզ դժոխքի յաւիտենական մահուան կ'առաջնորդէ:  
Անոր արձակումին սովորական միջոցը՝ Մկրտութեան,

*Ապաշխարանքի կամ Հաշտութեան Սուրբ Խորհուրդներն են:*

**396 - Ե՞րբ ներելի մեղք կը գործենք:**

- 1862-1864 *Ներելի մեղքը հիմնովին կը տարբերի մահացու մեղքէն:*  
 1875 *Մեղք մը ներելի է՝ երբ անոր նիւթը թեթեւ է, կամ, եթէ խակ ծանր է, գործուած է առանց զայն գործողին լման գիտակցութեան կամ ամբողջական հաւանութեան: Ան Աստուծոյ հետ մեր ուխտը չի խզեր, սակայն սէրը կը տկարացնէ եւ արարչութեան բարիքներուն հանդէպ անկարգ հակում մը կը ցուցաբերէ: Առաքինութիւններուն գործադրումին եւ բարոյական բարիին կատարումին մէջ՝ Հոգիին յառաջդիմութիւնը կը խափանէ եւ մարդս քաւչական ժամանակաւոր պատիժներու արժանի կը դարձնէ:*

**397 - Մեղքը մեր մէջ ինչպէ՞ս կը բազմանայ:**

- 1865-1876 *Մեղքը՝ մեր մէջ մեղքի վարժութիւն կը ստեղծէ եւ կրկնուելով՝ մոլութիւն կը դառնայ:*

**398 - Մոլութիւնները ի՞նչ են:**

- 1866-1867 *Մոլութիւնները առաքինութիւններուն հակադրուող յուրի սովորութիւններ են, որոնք խիղճը կը մթազնեն եւ դէպի չարը կը հակեն: Անոնք կրնան կցուիլ գլխաւոր կոչուած եօթը մեղքերուն, որոնք են՝ Հպարտութիւնը, ազահութիւնը, նախանձը, բարկութիւնը, հաճոյամոլութիւնը, որկրամոլութիւնը, ծուլութիւնը կամ հեղգութիւնը:*

**399 - Ուրիշին գործած մեղքին մէջ մենք պատասխանատւութիւն ունինք:**

- 1868 *Պատասխանատուութիւն ունինք եթէ անոր մէջ մեր կողմէ մեղսակցութիւն բերած ենք:*

**400 - Որո՞նք են մեղքին կառոյցները:**

Անոնք ընկերային վիճակներ կամ աստուածային Օրէն- 1869  
քին հակառակ գործող հաստատութիւններ են, որոնք անձ-  
նական մեղքերուն արտայայտութիւնն ու հետեւանքներն են:

**ԳԼՈՒԽ Բ.**

**ՄԱՐԳԿԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ**

**ԱՆՁԸ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ**

**401 - Ինչի՞ մէջ կը կայանայ մարդուն ընկերային տարածքը:**

Մարդը, բացի երջանկութեան անձնապէս կոչուած ըլլա- 1877-1880  
լուն, ընկերային տարածք մըն այլ ունի, որ իր բնութեան եւ 1890-1891  
կոչումին հական մէկ բաղադրիչ տարրն է: Արդարեւ բոլոր  
մարդիկը նոյն նպատակին կանչուած են, որ նոյնինքն  
Աստուած է: Աստուածային Անձերուն միութեան եւ մար-  
դոց եղբայրակցութեան միջեւ որոշ նմանութիւն մը գոյու-  
թիւն ունի, զոր անոնք իրարու միջեւ կերտելու են ճշմար-  
տութեան եւ սիրոյ հիման վրայ: Մերձաւորին սէրը անբա-  
ժանելի է Աստուծոյ սէրէն:

**402 - Ո՞րն է առնչութիւնը մարդ անհատին եւ հասարակու-  
թեան միջեւ:**

Ընկերային բոլոր հաստատութիւններուն նախասկիզբը, 1881-1882  
ենթական եւ վախճանը անհատ անձն է եւ պէ՛տք է ըլլայ: 1892-1893  
Կարգ մը հասարակութիւններ, ինչպէս ընտանիքը եւ ու-  
տանը, մարդ անհատին համար անհրաժեշտութիւն են:  
Նմանապէս ուրիշ ընկերակցութիւններ մարդուն օգտակար  
են, ըլլա՛յ քաղաքական ընկերութեանէն ներս, ըլլա՛յ միջազ-  
գային գետնի վրայ, պահելով լրացուցիչ օժանդակութեան  
(subsidiarity) սկզբունքը:

**403 - Ի՞նչ կը նշանակէ լրացուցիչ օժանդակութեան սկզբունքը:**

1883-1885 Այս սկզբունքը կը նշանակէ, թէ բարձրագոյն կարգի ըն-  
1894 կերուլթիւն մը պէտք է ստանձնէ պաշտօններ, որոնք կը վերաբերին ստորակարգ ընկերութեան մը, զայն իր իրաւասութիւններէն զրկելով: Ընդհակառակն, ի պահանջել հարկին՝ պէտք է անոր թիկունք կանգնի:

**404 - Մարդկային հարազատ համակեցութիւն մը ուրիշ ի՞նչ կը պահանջէ:**

1886-1889 Կը պահանջէ որ արդարութիւնը յարգուի, արժէքներու  
1895-1896 արդար դասաւորում կատարուի, ֆիզիքական եւ բնագ-դային տարածքը ենթակարգուի ներքին եւ հոգեւոր տարածքին: Եւ յատկապէս հոն ուր մեղքը ընկերային կլիման կը խաթարէ, հարկ է կոչ ընել սրտերու հոգեփոխումին եւ Աստուծոյ շնորհքին, իրագործելու համար ընկերային յեղաշրջումներ, որոնք կարենան ծառայութիւն մատուցանել իւրաքանչիւր եւ ամբողջական անձին: Սէրը, որ արդարութեան գործադրութիւնը կը պահանջէ եւ մարդն ալ անոր ատակ կը դարձնէ, մարդկային հասարակական մեծագոյն պատուիրանն է:

## ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ ՍԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

**405 - Ո՞րն է իշխանութեան հիմունքը մարդկային հասարակութեան մէջ:**

1897-1902 Մարդկային ամէն հասարակութիւն կարիքն ունի օրի-  
1918-1920 նաւոր իշխանութեան մը, որ կարգ ու կանոնը ապահովէ եւ հասարակաց բարիքին կիրարկումին սատարէ: Այս իշխանութիւնը իր հիմունքը կը գտնէ մարդկային բնութեան մէջ, որովհետեւ ան Աստուծոյ հաստատուած կարգ ու կանոնին կը համապատասխանէ:

**406 - Իշխանութիւնը ե<sup>օ</sup>րօ օրինաւորապէս կը կիրարկուի:**

Իշխանութիւնը օրինաւորապէս կը կիրարկուի երբ հասարակաց բարիքին համար կը գործէ եւ զայն իրագործելու համար՝ բարոյապէս արտօնուած միջոցներու կը դիմէ: Այս պատճառով՝ քաղաքական վարչակարգերը որդեգրուելու են քաղաքացիներուն ազատ որոշումով եւ յարգելու են «իրաւական Պետութեան» սկզբունքը, ուր օրէնքը զօրեւել է եւ ո՛չ թէ մարդոց քմահաճ կամքը: Անիրաւ օրէնքները եւ բարոյական կարգին դէմ միջոցները ի խղճէ պարտաւորիչ չեն:

1901  
1903-1904  
1921-1822

**407 - Ի<sup>օ</sup>նչ է հասարակաց բարիքը:**

Հասարակաց բարիքով կը հասկնանք ամբողջութիւնը ընկերային կեանքի այն պայմաններուն, որոնք խմբաւորումներուն եւ անհատներուն հնարաւորութիւն կ'ընձեռեն իրենք զիրենք կատարելագործելու:

1905-1906  
1924

**408 - Հասարակաց բարիքով ի<sup>օ</sup>նչ կը հասկնանք:**

Հասարակաց բարիքով կը հասկնանք. ա- Յարգանք եւ հրահրում մարդկային անձին հիմնական իրաւունքներուն. բ- Ձարգացումը մարդկային անձին եւ ընկերութեան հոգեւոր եւ ժամանակաւոր բարիքներուն. գ- Բոլորին խաղաղութիւնն ու ապահովութիւնը:

1907-1909  
1925

**409 - Հասարակաց բարիքը ու<sup>օ</sup>ր ամբողջապէս կ'իրագործուի:**

Հասարակաց բարիքին ամբողջական իրագործումը կը գտնուի քաղաքական հասարակութեան մէջ, որ կը պաշտպանէ եւ կը հրահրէ քաղաքացիներուն եւ միջանկեալ մարմիններուն բարիքը, առանց անտեսելու նաեւ մարդկային ընտանիքին ընդհանուր բարիքը:

1910-1912  
1927

**410 - Մարդը ինչպե՞ս կը մասնակցի հասարակաց բարիքին իրագործումին:**

1913-1917 *Իւրաքանչիւր մարդ իր գրաւած դիրքին եւ խաղացած*  
 1926 *դերին համեմատ՝ հասարակաց բարիքին հրահրումին իր մասնակցութիւնը կը բերէ, երբ արդար օրէնքները կը յարգէ եւ հոգը կը ստանձնէ այն մարզերուն, որոնց հանդէպ անձնական պատասխանատուութիւն ունի, ինչպէս՝ իր ընտանիքին հոգածութիւնը եւ իր գործին յանձնառութիւնը: Քաղաքացիները պարտին նաեւ կարելիին չափով՝ իրենց գործօն մասնակցութիւնը բերել հանրային կեանքին մէջ:*

**ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ**

**411 - Մարդկային ընկերութիւնը ինչպե՞ս կ'ապահովէ ընկերային արդարութիւնը:**

1928-1933 *Մարդկային ընկերութիւնը կ'ապահովէ ընկերային ար-*  
 1943-1944 *դարութիւնը երբ կը յարգէ մարդկային անձին արժանապատուութիւնը եւ իրաւունքները, որոնք ընկերութեան յատուկ նպատակը կը հանդիսանան: Այլուստ, մարդկային ընկերութիւնը կը հետապնդէ հասարակաց բարիքին եւ իշխանութեան կիրարկումին հետ զօդուած ընկերային արդարութիւնը երբ կ'իրագործէ այն պայմանները, որոնք ընկերութիւններուն եւ անհատներուն թոյլ կու տան ձեռք ձգելու ինչ որ իրենց իրաւունքն է:*

**412 - Մարդոց միջեւ հաւասարութեան հիմնակէտը ո՞րն է:**

1934-1935 *Հիմնակէտը այն է, որ բոլոր մարդիկը համահաւասար*  
 1945 *արժանապատուութիւն եւ հիմնական նոյն իրաւունքները կը վայելեն, քանի որ նոյն Աստուծոյ պատկերին համեմատ ստեղծուած եւ նոյն բանական հոգիով օծուած են: Անոնք նոյն բնութիւնն ու նոյն ծագումն ունին եւ կանչուած են աստուածային նոյն երանութեան հասնելու, շնորհիւ Քրիստոսին՝ իրենց հասարակաց Փրկչին:*

**413 - Մարդոց միջև անհաւասարութիւնները ինչպէ՞ս ար-  
ժեւորել:**

*Տնտեսական եւ ընկերային մարզերէն ներս անարդար 1936-1938  
անհաւասարութիւններ կան, որոնք միլիոնաւոր մարդկա- 1946-1947  
յին էակներ կը հարուածեն: Անոնք Աւետարանին հետ  
բացայայտ հակադրութեան մէջ են եւ դէմ են արդարու-  
թեան, անձերու արժանապատուութեան, խաղաղութեան:  
Բայց մարդոց միջեւ կան նաեւ տարբերութիւններ, որոնք  
յառաջ եկած են զանազան ազդակներէ, որոնք Աստուծոյ  
ծրագրին մաս կը կազմեն: Արդ՝ Աստուծոյ կամքն է որ  
ամէն մարդ իր կարիքը ուրիշէն ստանայ, իսկ անոնք որ  
յատուկ «քանքար»ներով օժտուած են, զանոնք ուրիշին հետ  
բաժնեն: Նման տարբերութիւնները մարդիկը կը յորդորեն  
եւ յաճախ կը ստիպեն վեհանձնութեան, բարեացակամու-  
թեան եւ բաժնեկցութեան, իսկ մշակոյթներն ալ՝ փոխա-  
դարձ հարստացումի:*

**414 - Ինչպէ՞ս կը դրսեւորուի մարդկային համընկերութիւնը:**

*Մարդկային եւ քրիստոնէական եղբայրակցութենէն 1939-1942  
բխող համընկերութիւնը կը դրսեւորուի նախ եւ առաջ 1948  
բարիքներու արդար բաշխումով, արդար աշխատավարձով  
եւ ընկերային աւելի արդար կարգի մը հանդէպ յանձնա-  
ռութեամբ: Համընկերութեան առաքիճութիւնը կը գոր-  
ծադրէ նաեւ հաւատքի հոգեւոր բարիքներուն բաժնեկցու-  
թիւնը, որոնք նիւթական բարիքներէն աւելի կարեւոր են:*

**ԳԼՈՒԽ Գ.**

**ԱՍՏՈՒԾՈՅ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ.  
ՕՐԷՆՔԸ ԵՒ ՇՆՈՐՀՔԸ**

**ԲԱՐՈՅԱԿԱՆ ՕՐԷՆՔԸ**

**415 - Ի՞նչ է բարոյական օրէնքը:**

1950-1953 *Բարոյական օրէնքը աստուածային իմաստութեան*  
1975-1978 *արարքն է: Ան մարդուն կը հրահանգէ ընթանալ ա՛յն  
ուղիներէն ու կատարել կենցաղային ա՛յն օրէնքները, որոնք  
մարդը խոստացուած երանութեան կը հասցնեն եւ  
կ'արգիլեն Աստուծոյ հեռացնող ճամբաները:*

**416 - Ի՞նչ է բարոյական բնական օրէնքը:**

1954-1960 *Իւրաքանչիւր մարդուն սրտին մէջ Արարչին կողմէ*  
1978-1979 *դրոշմուած բնական օրէնքը մասնակցութիւնն է Աստուծոյ  
իմաստութեան եւ բարութեան: Ան արտայայտութիւնն է  
բարոյական սկզբնական զգայնութեան, որ մարդուն  
հնարաւորութիւն կու տայ իր իմացականութեամբ բարին  
ու չարը զանազանելու: Բնական օրէնքը տիեզերական է եւ  
անփոփոխ: Ան նախահիմն է մարդկային անձին հական  
պարտաւորութիւններուն եւ իրաւունքներուն, ինչպէս  
նաեւ մարդկային հասարակութեան եւ նոյնինքն քաղաքա-  
ցիական օրէնքին:*

**417 - Նման օրէնք մը մատչելի՞ է բոլորին:**

1960 *Բնական օրէնքը, մեղքին պատճառով՝ ո՛չ միշտ, ո՛չ ալ  
բոլորին կողմէ հաւասար պայծառատեսութեամբ եւ անմի-  
ջականութեամբ կ'ընկալուի:*

(Այս պատճառով՝) Աստուած «Օրէնքի տախտակներուն  
վրայ դրոշմեց ինչ որ մարդիկ չէին կարողար իրենց  
սրտերուն մէջ» (Ս. Օգոստինոս):

**418 - Ի՞նչ առնչությամբ կայ բնական օրենքին եւ հին Օրենքին միջեւ:**

*Հին Օրենքը՝ յայտնեալ Օրենքին առաջին հանգրուանն է: Ան բազմաթիւ ճշմարտութիւններ կ'արտայայտէ, որոնք բնական ճամբով մատչելի են իմացականութեան եւ այս ձեւով՝ փրկութեան Ուխտերուն մէջ հաստատուած եւ վաւերացուած են: Տասնաբանեային Տասը Պատուիրաններուն մէջ համառոտուած բարոյական հրահանգները մարդուն կոչումին հիմերը կը դնեն: Անոնք կ'արգիլեն ինչ որ Աստուծոյ եւ մերձաւորին սիրոյն դէմ է, եւ կը հրահանգեն ինչ որ անոնց համար էական է:*

1961-1962  
1980

**419 - Հին Օրենքը Ի՞նչ տեղ կը գրաւէ փրկչական ծրագրին մէջ:**

*Հին Օրենքը հնարաւոր կը դարձնէ իմացականութեան մատչելի շատ մը ճշմարտութիւններ ճանչնալ: Ան կը մատնանշէ թէ ինչ հարկ է ընել կամ չընել եւ մանաւանդ իմաստուն դաստիարակի մը պէս՝ մարդս հոգեփոխումի կը պատրաստէ եւ զայն Աւետարանի ընկալումին կը տրամադրէ: Սակայն Հին Օրենքը՝ սուրբ, հոգեւոր եւ լաւ օրէնք ըլլալով հանդերձ, տակաւին անկատար կը մնայ, քանի որ զայն գործադրելու համար պահանջուած ուժն ու հոգիին շնորհքը՝ ինքնիրմէ չի կրնար տալ:*

1963-1964  
1982

**420 - Ի՞նչ է նոր կամ աւետարանական Օրենքը:**

*Քրիստոսէ հուշակուած եւ գործադրուած նոր կամ աւետարանական Օրենքը բնական եւ յայտնուած աստուածային Օրենքին լրումն ու կատարումն է: Ան համառոտումն է զԱստուած եւ մերձաւորը սիրելու, ինչպէս նաեւ Քրիստոսի մեզ սիրածին պէս՝ զիրար սիրելու պատուիրանին: Ան մարդուն համար ներքին իրականութիւն մըն ալ է. Սուրբ Հոգիին շնորհքի իրականութիւնն է, որ նման սէր մը հնարաւոր կը դարձնէ: Ան «ազատութեան օրէնքն» է (Գալ 1, 25), որովհետեւ մարդս կը մղէ ինքնաբերաբար գործելու*

1965-1972  
1983-1985

*սիրոյ դրդումին տակ:*

Նոր Օրենքը գլխատրաբար Սուրբ Հոգիին շնորհքն է, որ տրուած է Քրիստոսի հաւատացողներուն (Ս. Թովմաս Աբուինացի):

**421 - Նոր Օրենքը ու՞ր կը գտնուի:**

1971-1974 *Նոր Օրենքը կը գտնուի Քրիստոսի ամբողջ կեանքին եւ*  
1986 *բարոգութեան մէջ, ապա առաքեալներուն բարոյական կրօնաւարտութիւն մէջ: Լերան Քարոզը անոր գլխաւոր արտայայտութիւնն է:*

## ՇՆՈՐՀՔ ԵՒ ԱՐԴԱՐԱՅՈՒՄ

**422 - Ի՞նչ է արդարացումը:**

1987-1995 *Արդարացումը՝ Աստուծոյ սիրոյն պատուականագոյն*  
2017-2020 *ներգործութիւնն է: Ան Աստուծոյ բարեգութ եւ ճրի արարքն է, որ մեր մեղքերը կը ջնջէ եւ մեզ մեր ամբողջ էութեամբ արդար եւ սուրբ կը դարձնէ: Ասիկա կ'իրագործուի Սուրբ Հոգիին շնորհքով, որուն արժանացանք Քրիստոսի չարչարանքներով եւ զայն ստացանք Մկրտութեան միջոցով: Արդարացումը ճամբայ կը բանայ մարդուն տալիք ազատ պատասխանին, այսինքն Քրիստոսի հանդէպ հաւատքին եւ Սուրբ Հոգիի շնորհքին հետ գործակցութեան:*

**423 - Մեզ արդարացնող շնորհքը ի՞նչ է:**

1996-1998 *Շնորհքը Աստուծոյ ճրի պարգեւն է, զոր Աստուած մեզի*  
2005 *կու տայ որպէսզի մեզ Սուրբ Երրորդութեան կեանքին*  
2021 *մասնակից ընէ, ինչպէս նաեւ մեզ կարող դարձնէ Իր սիրոյն համար գործելու: Ան կոչուած է ունակակաւ կամ սրբաբար եւ կամ աստուածացուցիչ շնորհք, որովհետեւ մեզ կը սրբացնէ եւ կ'աստուածացնէ: Ան նաեւ զերնական է, որովհետեւ ան ամբողջութեամբ կախում ունի Աստուծոյ ճրի նախաձեռնութենէն, կը գերազանցէ մարդուն իմացակա-*

նույնիսկ եւ ուժին կարողականութիւնները: Հետեւաբար  
ան մեր փորձառութենէն դուրս կը մնայ:

#### 424 - Ուրիշ ի՞նչ տեսակի շնորհքներ կան:

Ունակակամ շնորհքէն զատ, կան - Ներգործական (պա- 1999-2000  
րագայական) շնորհքները - Խորհրդեանական (Խորհուրդ- 2003-2004  
ներուն յատուկ) շնորհքները — Յատուկ կամ պարզեւա- 2023-2024  
շնորհքները (որոնց նպատակը Եկեղեցւոյ հասարակաց  
բարիքն է): Ասոնց շարքէն են վիճակի շնորհքները, որոնք  
եկեղեցական պաշտօնակատարումին եւ կեանքի պատաս-  
խանատուութեան գործադրումին մէջ կ'ընկերակցին մեզի:

#### 425 - Ի՞նչ է առնչութիւնը շնորհքին եւ մարդկային ազատու- թեան միջեւ:

Շնորհքը՝ մարդուն ազատ պատասխանին ընդառաջ 2001-2002  
կ'երթայ, զայն կը պատրաստէ ու կը դրդէ: Ան մարդկային  
ազատութեան խորունկ ձգտումներուն կ'ընդառաջէ, զայն  
գործակցութեան կը հրաւիրէ եւ իր կատարելութեան կը  
հասցնէ:

#### 426 - Ի՞նչ է արժանիքը:

Արժանիքը՝ բարի գործի մը դիմաց՝ մարդուս վարձատ- 2006-2010  
րութեան իրաւունք տուողն է: Մարդը Աստուծոյ ամէն  
բան ճիշդաբար ստացած ըլլալուն համար՝ Աստուծոյ դիմաց  
ըստ ինքեան ո՛չ մէկ արժանիքի իրաւունք ունի: Սակայն  
Աստուած մարդուն արժանիք վաստկելու հնարա-  
ւորութիւնը կ'ընծայէ, շնորհիւ իր միտքեան Քրիստոսի  
սիրոյն հետ, որ աղբիւրն է Աստուծոյ առջեւ մեր շահած  
արժանիքներուն: Հետեւաբար մեր լաւ գործերուն արժա-  
նիքները եւս ամէն բանէ առաջ վերագրուելու են աստ-  
ւածային շնորհքին եւ յետոյ՝ մարդուն ազատ կամքին:

**427 - Ի՞նչ բարիքներու կրնանք արժանանալ:**

2010-2011 *Սուրբ Հոգիէն զրդուած՝ կարող ենք մեզի կամ*  
 2027 *ուրիշներուն համար արժանանալ մեր սրբացումին եւ*  
*յաւիտեանական կեանքին օգտակար եղող շնորհքին, ինչպէս*  
*նաեւ ժամանակաւոր բարիքներուն, որոնք մեզի*  
*անհրաժեշտ են՝ ըստ Աստուծոյ ծրագրին: Ո՛չ ոք կրնայ*  
*արժանանալ առաջին շնորհքին, որ սկզբնակէտն է*  
*մարդուս դարձին եւ արդարացումին:*

**428 - Արդեօ՞ք ամէնքս կանչուած ենք քրիստոնէական սրբութեան:**

2012-2016 *Բոլոր հաւատացեալները կանչուած են քրիստոնէական*  
 2028-2029 *սրբութեան: Ա՛ն լիութիւնն է քրիստոնէական կեանքին եւ*  
*կատարելութիւնը սիրոյ: Ան կ'իրագործուի Քրիստոսի հետ*  
*մտերիմ միութեամբ, եւ Քրիստոսով՝ Սուրբ Երրորդու-*  
*թեան հետ միութեամբ: Քրիստոնեային սրբացումին*  
*ճանապարհը, ինչպէս անցնելէ ետք, իր կատարումին պիտի*  
*հասնի արդարներուն վախճանական Յարութեամբ, ուր*  
*Աստուած պիտի ըլլայ ամէն ինչ ամէն ինչի մէջ:*

ԵԿԵՂԵՑԻՆ, ՍԱՅՐ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿ

**429 - Եկեղեցին ինչպէ՞ս կը սնուցանէ քրիստոնեային բարոյական կեանքը:**

2030-2031 *Եկեղեցին այն հասարակութիւնն է, որուն ծոցին մէջ*  
 2047 *քրիստոնեան կ'ընդունի Աստուծոյ Խօսքը եւ «Քրիստոսի*  
*Օրէնքին» (Գալ 6, 2) ուսուցումը, կը ստանայ Սուրբ Խոր-*  
*հուրդներուն շնորհքը, կը միանայ Քրիստոսի Գոհութեան*  
*զոհին եւ այսպէս՝ իր բարոյական կեանքը կը վերածէ հո-*  
*գեւոր պաշտամունքի, դաս քաղելով Սուրբ Կոյս Մարիամի*  
*եւ սուրբերուն օրինակէն:*

**430 - Ինչու՞ Եկեղեցւոյ Վարդապետումի Հեղինակութիւնը կը միջամտէ բարոյական մարզէն ներս:**

*Որովհետեւ Եկեղեցւոյ Վարդապետումի Հեղինակութեան պարտականութիւնն է ուսուցանել այն հաւատքը զոր մարդ դաւանելու եւ գործադրութեան դնելու է կեանքին մէջ: Այս պարտականութիւնը իր մէջ կը ներփակէ նաեւ բնական օրէնքին յատուկ պատուիրանները, որովհետեւ անոնց գործադրումը փրկութեան համար անհրաժեշտ է:*

2032-2040

2049-2051

**431 - Ո՞րն է նպատակը Եկեղեցւոյ պատուիրաններուն:**

*Եկեղեցւոյ հինգ պատուիրանները իբր նպատակ ունին հաւատացեալներուն ապահովել ինչ որ իբր նուազագոյնը պահանջուած է աճումին համար աղօթքի ոգիին, խորհրդենական կեանքին, բարոյական յանձնառութեան, ինչպէս նաեւ Աստուծոյ եւ մերձաւորին սիրոյն:*

2041

2048

**432 - Որո՞նք են Եկեղեցւոյ պատուիրանները:**

*Ասոնք են. 1) Կիրակի եւ պարտաւորիչ տօներուն՝ պատարագի մասնակցիլ, ձերբազատուելով այն աշխատանքներէն եւ զբաղումներէն, որոնք կրնան սոյն օրերուն սրբացումին արգելք հանդիսանալ: 2) Տարին դէթ մէկ անգամ մեղքերը խոստովանիլ՝ Հաշտութեան Սուրբ Խորհուրդին միջոցով: 3) Սուրբ Հաղորդութեան մերձեցալ առ նուազն Զատիկի օրը: 4) Պահք եւ ծոմ պահել Եկեղեցիին սահմանած օրերուն: 5) Եկեղեցիին նիւթական կարիքներուն օժանդակել, իւրաքանչիւրը իր կարողութեան սահմանին մէջ:*

2042-2043

**433 - Ինչու՞ Աւետարանը հռչակելու համար՝ քրիստոնեաներուն բարոյական կեանքը անհրաժեշտ է:**

*Քրիստոնեաները, Տէր Յիսուսի կեանքին համաձայն ապրելով՝ մարդոց հաւատքը դէպի ճշմարիտ Աստուծոյ կ'առնեն, Եկեղեցին կը կերտեն, աշխարհը Աւետարանին շունչով կը թրծեն եւ Աստուծոյ Թագաւորութեան տարածումը կը փութացնեն:*

2044-2046

Երկտասարդ մը հարցուց Յիսուսին. «Վարդապետ, ի՞նչ բարիք գործելու եմ յախտենական կեանքը շահելու համար»: Յիսուս պատասխանեց. «Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա՝ ունեցածներդ ծախէ՝ եւ աղքատներուն տու՛ր եւ երկինքի մէջ գանձ պիտի ունենաս: Ապա հետեւէ՛ ինծի» (Մտք 19, 17-21):

Յիսուսին հետեւիլ՝ կը նշանակէ պատուիրանները պահել: Հին օրէնքը չէ ջնջուած, մարդը կը հրաւիրուի զայն վերագտնելու աստուածային Վարդապետին մօտ, Որ զայն կատարեալ կերպով կ'իրագործէ Իր անձին մէջ, անոր ամբողջական իմաստը կը յայտնաբերէ եւ անոր յաւերժութիւնը կը հաստատուէ:

Այս բաժնին նուիրուած սոյն պատկերը կը ներկայացնէ Յիսուսը, որ այսպէս կոչուած Լեւոն Քարոզին մէջ Իր աշակերտները կ'ուսուցանէ (Հմտ. Մտք 5, 7): Այս ուսուցումին ամենակարեւոր դրուագներն են. Երանութիւնները, հին Օրէնքին կատարելագործումը, «Հայր Սէր» աղօթքը, ծոմապահութեան մասին ցուցմունքները, աշակերտներուն ուղղուած հրահէրը՝ երկրին աղը եւ աշխարհին լոյսն ըլլալու:

Լուր, իր բարձր դիրքով եւ երկինքի մօտիկութեամբ՝ կը յատկանշէ Աստուծոյ հետ հանդիպումի նախընտրեալ մէկ վայրը, ուր Յիսուս իբր ամբիոնի մը վրայ բազմած Վարդապետ, աջ ցուցամատը դէպի երկինք ուղղած՝ կը յայտնէ կեանքի եւ երջանութեան մասին Իր խօսքերուն աստուածային ելակէտը: Զախ ձեռքին մէջ բռնած պատարը կը նշանակէ թէ Իր վարդապետութիւնը ամբողջական է, զայն լի փառահովութեամբ առաքեալներուն կը փոխանցէ եւ կը հրաւիրէ որ Աւետարանը քարոզեն բոլոր ազգերուն, զանոնք մկրտելով յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյ Սրբոյ:

Վարդապետին շուրջ պսակաձեւ խմբուած տասներկու առաքեալներն ալ լուսապսակ կը կրեն, ի նշան Յիսուսի հանդէպ իրենց հաւատարմութեան եւ իբր վկայութիւն Եկեղեցւոյ մէջ իրենց սրբութեան: Աջին, կէս ծածկուած միայն մէկ առաքեալ մը՝ սեւ լուսապսակ կը կրէ, ի նշան Բարի Լուրին հանդէպ անոր անհաւատարմութեան: Քրիստոսի քարոզած Աստուծոյ արքայութիւնը դատարկ եւ ապարդիւն խօսք չմնաց, այլ դարձաւ բեղուն եւ բեղմնաւոր արարք: Կափառանաումի անդամայութիւն դէպքը, զոր համարաբար աւետարաններէն երեքը մէջբերած են, խօսուն է այս առնչութեամբ.

«Յիսուս նաւակ մտաւ լիճը անցաւ եւ Կափառնաում ուղղուեցաւ: Եւ ահա պատգարակի վրայ անդամայութիւն մը բերին: Անոնց հաւատքը տեսնելով, Յիսուս անդամայութիւն ըսաւ. - Փափայեղուն է, որդեան՛կ, մեղքերդ ներուած են: Ի պիտիներ որ ներկայ էին, կը խորհէին. «Այս մարդը կը հախոյճէ»: Յիսուս, գիտնալով անոնց մտածածը, ըսաւ. - «Ինչո՞ւ» այս վատ մտածումները ձեր սրտերուն մէջ են: Ի՞նչը աւելի դիւրին է. լսել՝ ներուած են մեղքերդ թէ՛ ըսել՝ ա՛ն մահիճդ եւ գնա՛ տունդ: Որպէ՛սզի գիտնաք թէ՛ մարդու Որդին երկրի վրայ իշխանութիւն ունի մեղքերը ներելու», անդամայութիւն դառնալով աւելցուց. - «Ե՛լ, ա՛ն անկողինդ եւ գնա՛ տունդ» (Մտք 9, 1-6):

Այս դէպքին մէջ՝ ֆիզիքական բուժումը միայն տեսանելի երեսն է հոգեւոր միւս հրաշքին, որ մտքէ՛ ձերբազատումն է: Բուժել եւ ներել՝ ա՛յս է աստուածային Վարդապետին դաստիարակութեան տիպար գործելակերպը:

**ՖՐԱ ԱՆՃԷԼԻՌՔՈՅ**- Լեւոն քարոզը: (Փլորենտինա, Ս. Մարկոս թանգարան):

**ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ**  
**ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ**



## Ելք 20, 2-17

«Ես եմ քու Տէր Աստուածդ, որ քեզ հանել տուի Եգիպտոսի երկրէն, գերութեան տունէն:

Ինծմէ զատ դու ուրիշ աստուածներ պիտի չունենաս:

Պիտի չքանդակես ո՛չ մէկ կուռք, որ նման ըլլայ Անոր որ է վերը՝ երկրինքի մէջ, կամ վարը՝ երկրի վրայ կամ ջուրերուն մէջ, երկրին տակը: Պիտի չերկրպագես այս աստուածներուն եւ պիտի չծառայես անոնց, որովհետեւ Ես, Տէրը՝ քու Աստուածդ, նախանձոտ Աստուած եմ, հայրերուն յանցանքը կը պատժեմ իրենց որդիներուն վրայ, թուներուն վրայ եւ ծոռերուն վրայ, որոնք կ'ատեն Զիս, սակայն կը ներեմ հազարաւորներու, որոնք կը սիրեն Զիս եւ կը պահեն պատուիրաններս:

Պիտի չարտասանես զուր տեղ Անունը Տիրոջ՝ քու Աստուծոյդ, որովհետեւ Տէրը չի թողուր անպատիժ ան որ Իր Անունը զուր տեղ կ'արտասանէ:

Պիտի յիշես չաբաթ օրը՝ սրբացնելու համար զայն: Վեց օր պիտի աշխատիս, կատարես ամբողջ գործդ, բայց եօթներորդ օրը չաբաթ մըն է, Տիրոջ՝ քու Աստուծոյդ համար:

Պիտի չընես ո՛չ մէկ գործ, ո՛չ դուռն, ո՛չ որդիդ եւ ո՛չ ալ աղջիկդ, ո՛չ ծառադ եւ ո՛չ ալ աղախինդ, ո՛չ քու անասուններդ, ո՛չ ալ պանդուխտը, որ յարկիդ տակ էջ Որովհետեւ Տէրը վեց օրէն ստեղծեց երկինքը, երկիրը եւ ծովը եւ անոնց բովանդակածը, սակայն Ան հանգչեցաւ եօթներորդ օրը . այս պատճառով Տէրը օրհնեց չաբաթ օրը եւ սրբացուց զայն:

Պատուէ՛ հայրդ ու մայրդ, որպէս զի երկարին օրերդ այն երկրին վրայ զոր Տէրը՝ քու Աստուածդ քեզի կու տայ:

Մի՛ սպաններ:

Մի՛ շնար:

Մի՛ գող նար:

Սուտ վկայութիւն մի՛ տար ընդդէմ քու մերձաւորիդ:

Մի՛ ցանկար մերձաւորիդ տան:

Մի՛ ցանկար մերձաւորիդ կնոջը, անոր ո՛չ ծառային, ո՛չ աղախինին, ո՛չ եգիւն կամ աւանակին, ո՛չ մէկ բանի որ քու մերձաւորինն է»:

«Ես եմ քու Տէր Աստուածդ, որ  
հանել տուի քեզ Եգիպտոսի  
երկրէն, գերութեան տունէն !  
Պիտի հունենաս ուրիշ  
աստուածներ ինծմէ զատ !

Պիտի Հարտասանես զուր տեղ  
անունը Տիրոջ՝ քու Աստուծոյդ !

Պահէ՛ Հաբաթ՝ օրը՝ սրբացնելու  
Համար զայն !

Պատուէ՛ Հայրդ ու մայրդ !

Մի՛ սպաններ !

Մի՛ շնար !

Մի՛ գողնար !

Սխալ վկայութիւն մի՛ տար  
ընդդէմ մերձաւորիդ !

Մի՛ ցանկար մերձաւորիդ կնոջը !

Մի՛ ցանկար ո՛չ մէկ բանի որ  
մերձաւորինն է»!

Կրօնաւսուցումի բանաձեւ

«Մէ՛կ Աստուած պիտի պաշտես  
եւ Զինք կատարելապէս պիտի  
սիրես:

Պիտի յարգես Անոր սուրբ  
Անունը, խոյս տալով Հայհոյան-  
քէն եւ սուտ երգումէն !

Պիտի պահես Տիրոջ օրը՝  
ծառայելով Աստուծոյ բարե-  
պաշտութեամբ !

Հայրդ ու մայրդ պիտի  
պատուես եւ քու մեծաւորներդ  
նմանապէս !

Պիտի խուսափիս սպանութենէ,  
գալթակողութենէ, ատելութենէ  
եւ բարկութենէ !

Մաքուր կեանք պիտի  
պահպանես գործերուդ մէջ  
խնամքով !

Ուրիշին ունեցածը պիտի  
չառնես, ոչ ալ անարդարօրէն  
պիտի պահես զայն !

Չարախօսութիւնն եւ սուտը  
պիտի հեռացնես քեզմէ !  
Պիտի զգուշանաս մաքուր  
մնալու մտքով եւ իղձերով !  
Ուրիշին ունեցածին պիտի  
չցանկաս, զայն անպարկեշտօ-  
րէն ունենալու համար» !

**434 - «Վարդապետ, ի՞նչ բարի գործ ընելու եմ յախտե-  
նական կեանքը ժառանգելու համար» (Մտք 19, 16):**

2052-2054 Այս հարցումը ուղղորդ երիտասարդին, Յիսուս պատաս-  
2075-2076 խանեց. «Եթէ կ'ուզես կեանքի մէջ մտնել, պահէ՛ պատ-  
ուիրանները»: Ապա աւելցուց. «Եկու՛ր, Ինձի հետեւէ՛»  
(Մտք 19, 16-21): Յիսուսին հետեւիլ կը նշանակէ  
պատուիրանները պահել: Հին Օրէնքը չէ ջնջուած, այլ  
մարդը հրաւիրուած է զայն վերագտնելու աստուածային  
Վարդապետին անձին մէջ, որ զայն Իր մէջ կատարեալ  
ձեւով կ'իրագործէ, անոր ամբողջական նշանակութիւնը կը  
յայտնէ եւ անոր յաւերժականութիւնը կը հաստատէ:

**435 - Յիսուս Օրէնքը ի՞նչ ձեւով կը մեկնաբանէ:**

2055 Յիսուս զայն կը մեկնաբանէ սիրոյ գոյգ եւ միակ Պատ-  
ւիրանին լոյսին տակ, որ Օրէնքին լրումն է. «Սիրէ՛ քու Տէր  
Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ անձովդ եւ ամբողջ  
մտքովդ: Ասիկա է ամենամեծ եւ առաջին պատուիրանը:  
Երկրորդը անոր նման է. Սիրէ՛ քու ընկերդ քու անձիդ պէս:  
Այս երկու պատուիրաններէն կախում ունին Օրէնքը եւ  
Մարգարէները» (Մտք 22, 37-40):

**436 - Ի՞նչ կը նշանակէ «Տասնաբանեայ»:**

2056-2057 Կը նշանակէ «տասը խօսքեր» (Ելք 34, 28), որոնք իրենց  
մէջ կը համադրեն Աստուծոյ կողմէ Խորայէի ժողովուրդին  
տրուած Օրէնքը, Մովսէսի հետ կնքած Ուխտին ծիրէն ներս:  
Տասնաբանեան, իր առաջին երեք պատուիրաններուն մէջ,  
Աստուծոյ սէրը յայտնելով, իսկ միւս եօթը պատուիրաննե-  
րուն մէջ՝ եղբայրսիրութիւնը ներկայացնելով, ընտրեալ  
ժողովուրդին եւ իւրաքանչիւր մարդու առջեւ կը դժէ  
մեղքի գերութենէն ձերբազատուած կեանքի ուղին:

**437 - Ի՞նչ է զօղը Տասնաբանեային եւ Ուխտին միջեւ:**

*Տասնաբանեան հասկցուելու է Ուխտին լոյսին տակ, որուն մէջ Աստուած կը յայտնուի՝ Իր կամքը մարդոց յայտնելով: Ժողովուրդը, երբ պատուիրանները կը պահէ, Աստուծոյ իր պատկանելիութիւնը կը յայտնէ եւ երախտապարտ սրտով Անոր սիրոյ նախաձեռնութեան կ'ընդառաջէ:*

**438 - Եկեղեցին Տասնաբանեային ի՞նչ կարեւորութիւն կ'ընծայէ:**

*Եկեղեցին, հաւատարիմ՝ Սուրբ Գիրքին ապա նաեւ Քրիստոսի տուած օրինակին, Տասնաբանեային առաջնակարգ կարեւորութիւն եւ նշանակութիւն կ'ընծայէ: Քրիստոնեաները պարտաւոր են զայն գործադրել:*

**439 - Ի՞նչ ձեւով Տասնաբանեան կառուցային ներքին միութիւն մը կը կազմէ:**

*Տասը պատուիրանները կառուցային եւ անանջատելի համադրութիւն մը կը կազմեն, որովհետեւ իւրաքանչիւր պատուիրան կը յղէ մէկը միւսին եւ ամբողջ Տասնաբանեային: Պատուիրան մը զանց ընելը՝ ամբողջ Օրէնքը բեկանել է:*

**440 - Ինչու՞ Տասնաբանեան ծանօթէն կը պարտաւորէ:**

*Որովհետեւ Տասնաբանեան Աստուծոյ եւ մերձաւորին հանդէպ մարդուն հիմնական պարտականութիւնները կը նշէ:*

**441 - Տասնաբանեան գործադրելը հնարաւոր է:**

*Հնարաւոր է, քանի որ Քրիստոս, առանց Որուն ոչինչ կրնանք ընել, Իր Հոգիին պարգեւով եւ Իր շնորհքին զօրութեամբ՝ զայն գործադրելը մեզի կարելի կը դարձնէ:*

**ԳԼՈՒԽ Ա.**

**«ՄԻՐԷ՛ ՔՈՒ ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾԴ  
ԲՈԼՈՐ ՄՐՏՈՎԴ, ԲՈԼՈՐ ՀՈԳԻՈՎԴ  
ԵՒ ԲՈԼՈՐ ՄՏՔՈՎԴ»**

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ.

ԵՄ ԵՄ ՔՈՒ ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾԴ,

ԻՆԾՄԷ ԶԱՏ ՈՒՐԻՇ ԱՍՏՈՒԱԾ ՉՈՒՆԵՆԱՍ

**442 - Ի՞նչ կը նշանակէ աստուածային այս յայտարարու-  
թիւնը «Ես եմ քու Տէր Աստուածդ» (Ելք 20,2):**

2083-2094  
233-2134

Հաւատացեալին համար՝ ան կը նշանակէ պահել եւ գործադրել աստուածաբանական երեք առաքինութիւնները եւ խոստափիլ անոնց ներհակ մեղքերէն: Հաւատքի ուժով՝ կը հաւատանք Աստուծոյ եւ կը մերժենք ինչ որ Անոր հակառակ է, օրինակ՝ կամաւոր տարակոյսը, անհաւատութիւնը, հերետիկոսութիւնը, ուրացումը, հերձուածը: Յոյսի ուժով՝ վստահութեամբ կ'ակնկալենք Աստուծոյ երանաւէտ տեսութիւնն ու օգնութիւնը, խոստափելով վհատութենէն եւ յանձնապաստանութենէն: Սիրոյ միջոցաւ՝ զԱստուած կը սիրենք ամէն բանէ վեր, հետեւաբար կը վանենք անտարբերութիւնը, ապերախտութիւնը, գաղջութիւնը, հոգեւոր հեղգութիւնը եւ հպարտութենէն ծագող՝ Աստուծոյ ատելութիւնը:

**443 - Ի՞նչ կը նշանակէ Տիրոջ սոյն Խօսքը. «Պաշտէ՛ միայն քու Տէր Աստուածդ եւ միայն Անոր պաշտամունքը ընծայէ՛» (Մտք 4, 10):**

2095-2105  
2135-2136

Կը նշանակէ զԱստուած պաշտել որպէս բոլոր գոյութիւններուն Տէրը, մատուցանել Անոր պատշաճ

պաշտամունքը՝ անհատապէս եւ հաւաքականութեամբ, Անոր գովաբանական եւ գոհաբանական աղօթքներ եւ աղաչանքներ ընծայել, զոհեր մատուցանել եւ յատկապէս մեր կեանքին հոգեւոր զոհը՝ Քրիստոսի՝ կատարեալ զոհին միացնել, եւ վերջապէս՝ գործադրել Աստուծոյ հանդէպ կատարած մեր խոստումները եւ ուխտերը:

**444 - Մարդս ի՞նչ ձեւով Աստուծոյ ճշմարիտ եւ ազատ պաշտամունք մատուցանելու իր իրաւունքը կը կիրարկէ:**

Ամէն մարդ իրաւունքն ու բարոյական պարտականութիւնն ունի ճշմարտութիւնը որոնելու, յատկապէս Աստուծոյ եւ անոր Եկեղեցիին վերաբերեալ եւ, ճշմարտութիւնը անգամ մը ճանչնալէ ետք, զայն ընդգրկելու եւ անոր հաւատարիմ մնալու, Աստուծոյ հարազատ պաշտամունք մատուցանելով: Մարդկային անձին արժանապատուութիւնը եւս կը պահանջէ, որ կրօնական մարդին մէջ ո՛չ ոք իր խղճին դէմ գործելու բռնադատուի եւ ո՛չ ալ, հանրային մարդին օրինաւոր սահմանէն ներս՝ անոր արգելուի ըստ իր խղճին գործել, առանձնապէս թէ հրապարակաւ, անհատապէս թէ խմբակցաբար:

**445 - Աստուած ի՞նչ կ'արգիլէ երբ կ'ըսէ. « Ինծմէ զատ ուրիշ Աստուած պիտի չունենաս» (Ելք 20, 2):**

- Այս պատուիրանը կ'արգիլէ. 2110-2128
- Բազմաստուածութիւնն ու կռապաշտութիւնը, որ 2138-2140  
կ'աստուածացնէ արարածը, իշխանութիւնը, դրամը, նոյնիսկ սատանան:
  - Սնապաշտութիւնը, որ շեղում մըն է Աստուծոյ պատշաճող պաշտամունքէն եւ մարդուն կը ներկայանայ գուշակութեան, մոգութեան, կախարդութեան եւ ոգեհարցութեան ձեւերուն տակ:
  - Անկրօնութիւնը, որ կը կայանայ խօսքով կամ գործով զԱստուած փորձելու մէջ, անձեր կամ սրբազան առարկաներ եւ յատկապէս Սուրբ Հաղորդութիւնը սրբապղծելու մէջ, նաեւ սիմոնականութեան մէջ, այսինքն՝ հոգեւոր իրականութիւններ

գնելու կամ վաճառելու մէջ:

- Անաստուածութիւնը, որ կը մերժէ Աստուծոյ գոյութիւնը, յաճախ թիւր ըմբռնուած մարդկային ինքնավարութեան մը անունին տակ, ապա անգիտապաշտութիւնը, ըստ որուն՝ հնարաւոր չէ Աստուծոյ մասին բան մը գիտնալ: Ան իր մէջ կ'ըմբռնէ նաեւ անտարբերութիւնը եւ գործնական անասուածութիւնը:

**446** - «Քեզի համար կուք պիտի չբանդակես» (Ելք 20, 3):  
Աստուծոյ պատուիրանը Պատկերապաշտութեան դէմ է:

2129-2132

2141

Հին Կտակարանին մէջ այս պատուիրանը կ'արգելէր գերազանցապէս վերանցական Աստուածը՝ պատկերի տակ ներկայացնել: Բայց Աստուածորդիին մարդեղութենէն ետք՝ քրիստոնեաներուն կատարած պատկերապաշտութիւնը արդարացուած է (ինչպէս կը հաստատէ Նիկիոյ 787ին երկրորդ ժողովը), որովհետեւ ան հիմնուած է մարդացեալ Աստուածորդիին Խորհուրդին վրայ, ուր վերանցական Աստուածը տեսանելի կը դառնայ: Պատկերապաշտութիւնը պատկեր չի պաշտեր, այլ կը մեծարէ անոր ներկայացուցած Քրիստոսը, Սուրբ Կոյսը, հրեշտակները եւ սուրբերը:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ.

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՆՈՒՆԸ ԶՈՒՐ ՏԵՂ

ՊԻՏԻ ՉԱՐՏԱՍԱՆԵՍ

**447** - Աստուծոյ սուրբ Անունը ինչպէ՞ս կը մեծարեն:

2142-2149

2160-2162

Աստուծոյ սուրբ Անունը կը մեծարեն զայն օգնութեան կանչելով, զայն օրհնաբանելով, գովաբանելով եւ փառաբանելով: Պէտք չէ Աստուծոյ Անունը վկայակոչել յանցագործութիւն մը արդարացնելու նպատակով, պէտք չէ նաեւ զայն անպատեհ առիթով գործածել, ինչպէս՝ հայիոյանքի պարագային, որ ըստ իր բնութեան՝ ծանր յանցանք է, նաեւ նախատական խօսքին եւ Աստուծոյ Անունով կատար-

ուած խոստումին հանդէպ խոստումնադրժութեան պարագային:

**448 - Ինչու՞ սուտ երդումը արգիլուած է:**

Որովհետեւ ան սուտի մը իբր վկայ կը կանչէ 2150-2151  
զԱստուած, որ ճշմարտութիւնն իսկ է: 2163-2164

Մի՛ երդնուր ո՛չ Արարիչով, ո՛չ արարածով, այլ միայն ճշմարտութեան սիրոյն, անհրաժեշտութեան պարագային եւ յարգանքով (*Ս. Իգնատիոս Լոյոլա*):

**449 - Ի՞նչ է երդմնազանցութիւնը:**

Երդմնազանցութիւնը՝ չյարգելու դիտաւորութեամբ եր- 2152-2155  
դումով խոստում կատարել է, կամ երդումով կատարուած խոստումը դրժել է: Ան ծանր մեղք է՝ Աստուծոյ դէմ որ Իր խոստումներուն միշտ հաւատարիմ է:

## ԵՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ. ՏԻՐՈՋ ՕՐԸ ՍՈՒՐԲ ՊԱՀԷ՛:

**450 - Աստուած ինչու՞ «Շաբաթ օրը օրինեց եւ զայն սուրբ հռչակեց» (Ելք 20, 11):**

Շաբաթ օրը յիշատակութիւնն է արարչագործութեան 2168-2172  
եօթներորդ օրուան, Աստուծոյ հանգիստին, յիշատակու- 2189  
թիւնն է նաեւ Իսրայէլի ազատագրումին Եգիպտոսի դերութեանէն եւ Աստուծոյ Իր ժողովուրդին հետ կնքած Ուխտին:

**451 - Յիսուս շաբաթին հանդէպ ինչպե՞ս կը վարուի:**

Յիսուս շաբաթին սրբութիւնը կը ճանչնայ եւ Իր աստ- 2173  
ւածային հեղինակութեամբ՝ անոր հարազատ մեկնաբանութիւնը կու տայ. «Շաբաթը մարդուն համար եղած է եւ ո՛չ թէ մարդը շաբաթին համար» (Մրկ 2, 27):

**452 - Քրիստոնեաներուն համար կիրակին ի՞նչու փոխարինեց շաբաթը:**

- 2174-2176 *Որովհետեւ կիրակին Քրիստոսի Յարութեան օրն է: Ան,*  
 2190-2191 *որպէս «չաբթուան առաջին օրը» (Մրկ 16, 2), կը յիշեցնէ առաջին արարչագործութիւնը, իսկ իբր շաբաթ օրուան յաջորդող «ութերորդ օրը», կը նշէ Քրիստոսի Յարութեամբ սկսուած նոր ստեղծագործութիւնը: Այս ձեւով, կիրակին քրիստոնեաներուն համար դարձաւ բոլոր օրերուն եւ բոլոր տօներուն առաջինը. եղաւ Տիրոջ օրը, ուր Տէրը իր Զատիկով՝ հրէական շաբաթը իր կատարումին կը հասցնէ եւ մարդուն Աստուծոյ քով վայելելիք յաւիտենական հանգիստը կ'աւետէ:*

**453 - Կիրակին ինչպե՞ս սրբացնել:**

- 2177-2185 *Քրիստոնեաները կիրակին եւ պատուիրեալ տօները կը*  
 2192-2193 *սրբացնեն մասնակցելով Տիրոջ Գոհութեան Խորհուրդին, հեռու մնալով նաեւ այն զբաղումներէն, որոնք աստուածային պաշտամունքին արգելք կը հանդիսանան, Տիրոջ օրուան յատուկ ուրախութիւնը կամ մտքին եւ մարմնին պահանջած անդորրը կը խանգարեն: Թոյլատրուած կը մնան ա'յն զբաղումները, որոնք անհրաժեշտօրէն կապուած են ընտանեկան պահանջներուն կամ ընկերային մեծապէս օգտակար սպասաւորութիւններուն, պայմանով որ անոնք կիրակիի սրբութեան, ընտանեկան կեանքին եւ առողջութեան վնասող սովորութիւններ չստեղծեն:*

**454 Ի՞նչու կարեւոր է քաղաքային իշխանութեան կողմէ կիրակիին իբր արձակուրդի օր ճանչցուիլ:**

- 2186-2188 *Որպէսզի բոլորին իրական կարելիութիւնը տրուի*  
 2194-2195 *բաւարար հանգիստ եւ ազատ ժամանակ վայելելու, որոնք թոյլատրեն կրօնական, ընտանեկան, մշակութային եւ ընկերային կեանք մը մշակելու, ապա մտածականի, խորհրդածութեան, լռութեան եւ ուսումի նպաստաւոր պահեր իրենց տրամադրութեան տակ ունենալու, ինչպէս*

նաեւ բարեսիրական գործերու նուիրուելու, յատուկ կերպով հիւանդներու եւ տարիքաւոր անձերու օգտակար ըլլալու:

## ԳԼՈՒԽ Բ.

### «ԸՆԿԵՐԴ ՊԻՏԻ ՍԻՐԵՍ ՔՈՒ ԱՆՁԻՎ ՊԷՍ»

#### ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ.

#### ՊԱՏՈՒԷ՝ ՀԱՅՐԴ ՈՒ ՄԱՅՐԴ

**455 - Չորորդ Պատուիրանը** <sup>Ի՞նչ կը հրամայէ:</sup>

Կը հրամայէ պատուել ու յարգել մեր ծնողները եւ 2196-2200 անոնք, որոնց Աստուած՝ մեր բարիքին համար, Իր իշխա- 2247-2248 նութիւնը զգեցուցած է:

**456 - Ի՞նչ է ընտանիքին բնոյթը** Աստուծոյ ծրագրին մէջ:

Ամուսնութեամբ միացած այլ ու կին իրենց զաւակնե- 2201-2205 րով ընտանիք մը կը կազմեն: Աստուած Ի՛նք հաստատեց 2249 ընտանիքը եւ զայն Իր հիմնական ուրոյն օրէնքներով օժտեց: Ամուսնութիւնն ու ընտանիքը նպատակադրուած են ամուսիններուն բարիքին, որդեծնութեան եւ զաւակներու դաստիարակութեան համար: Նոյն ընտանիքի անդամներուն միջեւ անձէ անձ յարաբերութիւններ եւ առաջնահերթ պա- տասխանատուութիւններ կը սահմանուին: Ընտանիքը Քրիս- տոսով՝ առաւելի Եկեղեցի մը կը դառնայ, քանի որ ընտա- նիքը հաւատքի, յոյսի եւ սիրոյ հասարակութիւն մըն է:

**457 - Ո՞րն է ընտանիքին տեղը ընկերութեան մէջ:**

Ընտանիքը՝ մարդկային ընկերութեան ծագում տուող 2207-2208 փջիջն է եւ կը կանխէ հանրային իշխանութեան կողմէ եկող ամէն ճանաչում: Ընտանիքին սկզբունքներն ու արժէքները ընկերային կեանքին նախահիմքեր կը կացուցանեն: Ընտա- նիքին կեանքը նախապատրաստութիւն է ընկերութեան կեանքին:

**458 - Որո՞նք են ընկերութեան պարտաւորութիւնները ընտանիքին հանդէպ:**

2209-2213 *Ընկերութիւնը պարտաւոր է ամուսնութեան եւ ընտանիքին թիկունք կանգնիլ եւ զանոնք ամրացնել, միանգամայն յարգելով լրացուցիչ օժանդակութեան սկզբունքը: Հանրային իշխանութիւնները պարտին յարգել եւ պաշտպանել ամուսնութեան եւ ընտանիքին իսկական էութիւնը, հանրային բարոյականը, ծնողներուն իրաւունքներն եւ ընտանեկան օճախին բարգաւաճումը եւ անոնց նպաստել:*

**459 - Որո՞նք են գաւակներուն պարտականութիւնները ծնողներուն հանդէպ:**

2214-2220 *Զաւակները իրենց ծնողներուն պարտին յարգանք (ծնողասիրութիւն), երախտագիտութիւն, հպատակութիւն եւ հնազանդութիւն եւ այսպէս նպաստել ամբողջ ընտանեկան կեանքին ներդաշնակութեան եւ սրբութեան աճումին, նաեւ շնորհիւ քոյրերու եւ եղբայրներու միջեւ համերաշխ յարաբերութեան: Ծնողքներուն չքաւորութեան, հիւանդութեան, մենակութեան կամ ծեր տարիքի մէջ գտնուելու պարագային, չափահաս զաւակները պարտին անոնց բարոյական եւ նիւթական օժանդակութիւն ընձեռել:*

**460 - Որո՞նք են ծնողներուն պարտականութիւնները իրենց գաւակներուն հանդէպ:**

2221-2231 *Ծնողները, որպէս մասնակիցներ աստուածային հայրութեան, իրենց զաւակներուն դաստիարակութեան առաջին պատասխանատուները եւ հաւատքի առաջին փոխանցողներն են: Անոնք պարտին իրենց զաւակները սիրել եւ յարգել որպէս մարդկային անձեր եւ Աստուծոյ գաւակներ: Պարտին իրենց կարելիին չափով՝ անոնց նիւթական եւ հոգեւոր կարիքները հոգալ, անոնց պատշաճ դպրոց ընտրելով եւ իրենց ապագայ արհեստին եւ կեանքի ասպարէզին շուրջ անոնց խոհմ խրատներ տալով: Ծնողները զանոնք քրիստոնեայ հաւատքին մէջ կրթելու յատուկ առաքելութիւնն ունին:*

**461 -** Ծնողները իրենց զաւակները ի՞նչ ձեւով քրիստոնեայ հաւատքին մէջ կը կրթեն:

*Գլխաւորաբար իրենց կեանքի օրինակով, աղօթքով, ընտանեկան կրօնաուսուցումով եւ եկեղեցային կեանքին մասնակցութեամբ:* 2252-2253

**462 -** Ընտանեկան կապերը բացարձակ բարիք են:

*Ընտանեկան կապերը թէեւ կարեւոր են, սակայն բացարձակ չեն, որովհետեւ քրիստոնեային առաջին առաքելութիւնը՝ Յիսուսին հետեւին է՝ Զայն սիրելով: «Ո՛վ որ իր հայրը կամ իր մայրը ինծմէ աւելի սիրէ, արժանի չէ ինծի: Ո՛վ որ իր աղջիկը կամ տղան ինծմէ աւելի սիրէ, արժանի չէ ինծի» (Մտք 10, 37): Ծնողները զուարթ սրտով իրենց զաւակներուն ձեռնադրելով եւ որ անոնք Քրիստոսին հետեւին՝ կեանքի բոլոր ասպարէզներուն մէջ, ինչպէս նաեւ նուիրեալ կեանքին կամ քահանայական առաքելութեան մէջ:* 2232-2233

**463 -** Իշխանութիւնը ի՞նչ ձեւով կիրարկուելու է քաղաքային ընկերութեան զանազան մարզերէն ներս:

*Ան միշտ կիրարկուելու է որպէս սպասարկութիւն, յարգելով մարդուն հիմնական իրաւունքները, արժէքներու արդար դասաւորումը, օրէնքները, բաշխական արդարութիւնը եւ լրացուցիչ ժաշդակութիւնը: Ամէն մարդ, իշխանութիւնը կիրարկելու ատեն՝ փնտռելու է ո՛չ թէ իր անձին, այլ հասարակութեան շահերը, իսկ իր առած որոշումները ներշնչուելու են Աստուծոյ, մարդուն եւ աշխարհի վերաբերեալ ճշմարտութենէն:* 2234-2237 2254

**464 -** Որո՞նք են քաղաքացիներուն պարտաւորութիւնները քաղաքային իշխանութիւններուն հանդէպ:

*Իշխանութեան մը հպատակները իրենց մեծերը նկատելու են իբր Աստուծոյ ներկայացուցիչները, անոնց նուիրելու եւ իբր* 2238-2241 2255

լով իրենց անկեղծ գործակցութիւնը հանրային եւ ընկերային կեանքին բարօր ընթացքին համար: Ասիկա կը նշանակէ հայրենիքի հանդէպ սէր եւ ծառայութիւն, քուէարկելու իրաւունք եւ պարտականութիւն, տուրքերու վճարում, երկրի պաշտպանութիւն եւ շինիչ քննադատութեան իրաւունք:

**465 - Ե՞րբ քաղաքացին պարտաւոր չէ քաղաքային իշխանութիւններուն հնազանդի:**

2242-2243 *Քաղաքացին ի խղճէ պարտաւոր չէ իշխանութիւններուն*  
 2256 *հնազանդի, երբ անոնց հրահանգները դէ՛մ են բարոյական կարգին պահանջներուն. «Հնազանդելու է Աստուծոյ քան թէ մարդոց» (Գործ 5, 29):*

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ.

### ՄԻ՝ ՍՊԱՆՆԵՐ

**466 - Ինչու՞ պէտք է մարդկային կեանքը յարգել:**

2258-2262 *Որովհետեւ մարդկային կեանքը նուիրական է: Մարդ-*  
 2318-2320 *կային կեանքը իր ծագումով իսկ՝ իր մէջ կը կրէ Աստուծոյ ստեղծագործ արարքը եւ յատուկ յարաբերութեամբ ան մշտապէս կապուած կը մնայ իր միակ վախճանին՝ Արարչին: Ոչ ոքի թոյլ տրուած չէ անմեղ մարդ արարած մը կեանքէն ուղղակի զրկել, որովհետեւ ասիկա ծանրօրէն դէ՛մ է անձին արժանապատուութեան եւ Արարչին սրբութեան: «Անմեղն ու արդարը պիտի չմեռցնես » (Ելք 23, 7):*

**467 - Ինչու՞ մարդոց եւ ընկերութիւններուն արդարացի ինքնապաշտպանութիւնը դէմ չէ այս բացարձակ կանոնին:**

2263-2265 *Արդարացի ինքնապաշտպանութեամբ՝ մարդս իր նախընտրանքը կը յայտնէ ինքզինք պաշտպանելու քան թէ ուրիշը սպաննելու, եւ այսպէս աւելի կ'արժեւորէ իր կամ ուրիշին ապրելու իրաւունքը: Արդարացի ինքնապաշտպա-*

նուլթիւնը կրնայ նաեւ ծանր պարտականութիւն մը ըլլալ այն անձին համար, որ ուրիշի կեանքին պատասխանատուութիւնն ունի: Սակայն ինքնապաշտպանութիւնը պէտք է պահանջուածէն աւելի մեծ բռնութիւն գործածէ:

#### 468 - Պատիժ մը ի՞նչ բանի կը ծառայէ:

Հանրային օրինաւոր իշխանութեան կողմէ գործադրուած պատիժ մը կը ծառայէ յանցանքին ներմուծած անկարգութիւնը դարմանելու, հանրային կարգերը եւ մարդոց ապահովութիւնը պահպանելու եւ յանցագործին բարեփոխումին նպաստելու: 2266

#### 469 - Ի՞նչ տեսակ պատիժ հնարաւոր է կիրարկել:

Կիրարկուած պատիժը համապատասխանելու է յանցանքին ծանրութեան: Այսօր, շնորհիւ այն հնարաւորութիւններուն զորս Պետութիւնը իր տրամադրութեան տակ ունի ոճիրը զսպելու եւ յանցագործը ամլնաս դարձնելու, մահապատիժի բացարձակ անհրաժեշտութեան պարագաները «այսուհետեւ շատ հազուադէպ են, չըսելու համար թէ գործնականին մէջ նոյնիսկ չգոյ են» (Կենաց Աւետարան): Երբ անարիւն միջոցները արդէն բաւարար են, իշխանութիւնը պիտի բաւարարուի անոնցմով, որովհետեւ անոնք հասարակաց բարիքին շօշափելի պայմաններուն աւելի մօտէն կը համապատասխանեն եւ մարդկային անձին արժանապատուութեան աւելի համակերպ են եւ յանցագործին մէջ ինքզինք փրկելու կարելիութիւնը վերջնականապէս չեն ջնջեր:

#### 470 - Հիմնգերոյդ պատուիրանը ի՞նչ կ'արգիլէ:

Հինգերորդ պատուիրանը կ'արգիլէ հետեւեալները, որ-2283  
պէս բարոյական օրէնքին դէմ ծանրօրէն գործուած արարք- -2326

- Ուղղակի եւ կամաւոր մարդասպանութիւնը եւ անոր հետ գործակցումը :
- Իբր նպատակ եւ կամ միջոց ուզուած ուղղակի վիժումը եւ անոր հետ գործակցումը, որ բանադրանքի

կ'արժանանայ, որովհետեւ մարդ արարածը իր յղու-  
թեան պահէն իսկ՝ բացարձակապէս յարգուելու եւ  
պաշտպանուելու է իր ամբողջութեան մէջ:

- Ուղղակի հեշտամահը, որ կը կայանայ հաշմանդա-  
մին, հիւանդին կամ մահամերձին կեանքին վերջ դնե-  
լու մէջ՝ ուղղակի արարքով մը կամ պահանջուած  
արարքի մը զանցառումով:
- Անճնասպանութիւնը եւ անոր կամաւոր գործակ-  
ցութիւնը, իբր ծանր վիրաւորանք Աստուծոյ եւ  
Անոր ուրիշի հանդէպ տածած արդար սիրոյն դէմ:  
Պատասխանատուութիւնը կրնայ ծանրանալ՝ իր  
պատճառած գայթակղութեան հետեւանքով եւ կամ  
թեթեւալ՝ հոգեխօսական յատուկ խանգարումնե-  
րու կամ ծանր վախի պատճառով:

**471 - Մահամերձ նկատուած անձի պարագային, բժշկական  
ի՞նչ միջոցառումներ թոյլատրուած են:**

2278-2279 Հիւանդի մը ընդհանրապէս հարկաւոր եղող դարմա-  
նումները չեն կրնար օրինաւորապէս դադարեցուիլ: Իսկ օրի-  
նաւոր է դիմել ոչ մահաբեր թմրեցուցիչներուն, նաեւ հրա-  
ժարիլ «դեղերու ծալրայեղ գործածութենէն», այսինքն՝  
բժշկական անհամեմատ եւ տրամաբանօրէն անյուսալի  
միջոցառումներէն:

**472 - Ընկերութիւնը ինչու՞ պարտաւոր է մարդկային սաղմը  
պաշտպանել:**

2273-2274 Ամէն մարդկային անհատ՝ իր յղութեան վայրկեանէն  
իսկ կեանքի անզանցառելի իրաւունքը կը վայելէ, եւ ասի-  
կա՝ քաղաքային ընկերութեան եւ անոր օրէնսդրութեան  
բաղադրիչ մէկ տարրը կը կազմէ: Երբ Պետութիւն մը իր  
իշխանութիւնը չի գործածեր պաշտպանելու համար ընդհա-  
նուրին եւ ի մասնաւորի ամենատկարին, այսինքն տակաւին  
իրենց մօր արգանդին մէջ գտնուող փոքրերուն իրաւունք-  
ները, այն ատեն օրինական Պետութիւն մը իր հիմերէն իսկ  
կ'ականուի:

**473 - Ինչպե՞ս գայթակղութիւն պատճառել խուսափիլ:**

Գայթակղութիւն պատճառելը՝ մարդս չարիքի մղելն է: 2284-2287  
Գայթակղութիւն պատճառելէ պէտք է խուսափինք՝ ուրիշին հոգին ու մարմինը յարգելով: Իսկ երբ մեր ազատ կամքով ուրիշը ծանր մեղքի կ'առաջնորդենք, ծանր մեղք կը գործենք:

**474 - Մեր մարմնին հանդէպ ի՞նչ պարտականութիւններ ունինք:**

Պարտինք տրամաբանական չափով խնամք տածել մեր եւ 2288-2291  
ուրիշին ֆիզիքական առողջութեան հանդէպ, խուսափելով սակայն մարմնապաշտութենէն եւ ուրիշ չափազանցութիւններէն: Խուսափելու ենք նաեւ առողջութեան եւ կեանքին շատ ծանր վնասներ պատճառող թմրեցուցիչներու գործածութենէն, ինչպէս նաեւ կերակուրի, խմիչքներու, ծխախոտի եւ դեղորայքի չափազանցութիւններէն:

**475 - Անհատներու եւ մարդկային խմբակներու վրայ կատարուող գիտական, բժշկական եւ հոգեբանական փորձարկումները ե՞րբ բարոյապէս օրինաւոր են:**

Այդ փորձարկումները բարոյապէս օրինաւոր են եթէ 2292-2295  
ենթականերուն կեանքին, մարմնի եւ հոգիի ամբողջականութեան անհամաչափ վտանգ չեն պատճառեր եւ կը ծառայեն մարդկային անձին եւ ընկերութեան համընդհանուր լաւութեան, պայմանաւ որ ենթակաները նախապէս տեղեակ պահուին եւ իրենց հաւանութիւնը տան:

**476 - Մարմնի գործարաններուն պատուաստումը եւ մահէն առաջ կամ վերջ՝ զանոնք նուէր տալը թոյլատրուա՞ծ են:**

Մարմնի գործարաններուն պատուաստումը բարոյապէս ընդունուած է՝ տուողին հաւանութեամբ եւ առանց որ ան չափազանց վտանգի ենթարկուի: Մահէն ետք մարմնի գործարանի մը ազնուական նուէրը կատարելու համար,

հարկ է լրիւ ստուգել թէ նուիրողը իսկապէս մահացած է:

**477 - Որո՞նք են մարդկային անձին մարմնական ամբողջութեան եւ յարգանքին դէմ գործուող արարքները:**

2297-2298 *Անոնք են՝ մարդ առեւանդելն ու պատանդ պահելը, հաբեկչութիւնը, խոշտանգումը, բռնարարքները, ուղղակի ամլացումը: Անձ մը անդամահատելը եւ հաշմանդամ դարձնելը բարոյապէս ընդունելի են միայն եթէ անոնք անձին առողջապահական նպատակներուն համար անհրաժեշտ են:*

**478 - Մահամերձները ինչպէ՞ս խնամելու է:**

2299 *Մահամերձներն իրաւունքն ունին իրենց երկրաւոր կեանքին վերջին պահերը արժանապատուութեամբ ապրելու եւ յատկապէս աղօթքով ու Սուրբ Խորհուրդներով զօրանալու, որոնք զիրենք կենդանի Աստուծոյ Հանդիպումին կը պատրաստեն:*

**479 - Ինչպէ՞ս վերաբերուելու է մահացածներուն մարմիններուն հետ:**

2300-2301 *Մահացածներուն մարմիններուն հետ վերաբերուելու ենք յարգանքով եւ սիրով: Անոնց դիակիզումը արտօնուած է եթէ ան կը կատարուի՝ առանց մարմիններու յարուսթիւնը տարակոյսի տակ դնելու:*

**480 - Տէրը խաղաղութեան նկատմամբ մեր իւրաքանչիւրէն ի՞նչ կը խնդրէ:**

2302-2303 *Տէրը, որ «երանի՝ խաղաղարարներուն» (Մտք 5, 9) գոչեց, սրտերու խաղաղութիւնը կը ցանկայ եւ իբր անբարոյ կը դատապարտէ բարկութիւնը, որ մեր կրած չարիքին դիմաց վրէժ լուծելու փափաքն է, նոյնպէս ատելութիւնը, որ մերձաւորին չարիք կը ցանկայ: Այս կեցուածքները սիրոյ դէմ գործուած ծանր մեղքեր կը դառնան, եթէ յօժար կամբով գործուած են մեծ եւ ծանրակշիռ պարագաներու մէջ:*

**481 - Ի՞նչ է աշխարհիս խաղաղութիւնը:**

Աշխարհիս խաղաղութիւնը, որ պահանջուած է մարդ- 2304-2305  
կային կեանքին յարգանքին եւ աճումին համար, պատե-  
րազմի չգոյութիւնը կամ հակադիր ուժերու հաւասա-  
րակշռութիւնը չէ սոսկ, այլ «կարգ ու կանոնի անդորրու-  
թիւնն է» (Ս. Օգոստինոս), «արդարութեան գործ է» (Եվս  
32, 17) եւ սիրոյ արդիւնք: Երկրաւոր խաղաղութիւնը  
Քրիստոսի՝ խաղաղութեան պատկերն ու արգասիքն է:

**482 - Աշխարհիս խաղաղութիւնը ի՞նչ կը պահանջէ:**

Կը պահանջէ մարդկային բարիքներուն արդար բաշ- 2304  
խումն ու պահպանումը, մարդ էակներու միջեւ ազատ հա- 2307-2308  
ղորդակցութիւնը, անձերուն եւ ժողովուրդներուն արժա-  
նապատուութեան յարգանքը, արդարութեան եւ եղբայրու-  
թեան մշտական գործադրութիւնը:

**483 - Ե՞րբ կարելի է զինեալ ուժին գործածութեան հանդէպ  
բարոյապէս հաւան գտնուիլ:**

Զինեալ ուժի դիմելը բարոյապէս արդարանալի է միայն՝ 2307-2310  
երբ հետեւեալ պայմանները միատեղ կը գտնուին. - Եթէ  
ստուգուած է թէ վնասը՝ մնայուն եւ ծանրակշիռ վնաս է -  
Եթէ խաղաղ միջոցներու այլընտրանքը ապարդիւն մնացած  
է - Եթէ յաջողութեան կարելիութիւնները հիմնաւորուած  
են - Եթէ գէնքի դիմելով՝ վատագոյն վնասներ պիտի  
չպատահին, նկատի առած արդիական գէնքերուն քանդիչ  
հզօրութիւնը:

**484 - Պատերազմի սպառնալիքի պարագային, վերել նշուած  
պայմաններուն ճշգրիտ արժեւորումը որո՞ւ պարտա-  
կանութիւնն է:**

Կացութեան մը արժեւորումը կը վերաբերի ղեկավար- 2309  
ներու խոհական դատողութեան, որոնց պաշտօնն է նաեւ  
ազգային պաշտպանութեան պարտականութիւնը քաղաքա-  
ցիներուն պարտադրելու իրաւունքը, միանգամայն յարգե-

լով պատերազմի դէմ խղճի հարց յարուցանողներուն անձնական իրաւունքը, պայմանաւ որ զինուորական ծառայութիւնը փոխանակուի հասարակութեան մատուցուած ուրիշ ծառայութիւններով:

**485 - Բարոյական օրէնքը ի՞նչ կը պահանջէ պատերազմի պարագային:**

2312-2314

2328

Բարոյական օրէնքը կը շարունակէ ի զօրու մնալ նաեւ պատերազմի ատեն: Ան կը պահանջէ մարդավայել ձեւով վարուիլ ոչ-բանակային անձերուն, վիրաւոր զինուորներուն եւ գերիներուն նկատմամբ: Ազգերու իրաւունքին դէմ ազատ կամքով գործուած արարքները եւ զանոնք պարտադրող հրահանգները ոճրային արարքներ են, որոնք չեն արդարացուիր կոյր հնազանդութեան անունով: Դատապարտելի են զանգուածային կործանումները, ինչպէս նաեւ ժողովուրդի մը կամ ցեղային փոքրամասնութեան մը բնաջնջումը, որոնք չափ ծանր մեղքեր են. բարոյական պարտաւորութիւն է զանոնք հրահանգողին հրամանին ընդդիմանալ:

**486 - Ի՞նչ ընել պատերազմին առաջքն առնելու համար:**

2315-2317

2327-2330

Պատերազմի առաջը առնելու համար, պէտք է ընել ամէն ինչ որ տրամաբանօրէն կարելի է ընել, նկատի առած անոր պատճառած չարիքն եւ անարդարութիւնները: Պէտք է յատկապէս արգիլել զէնքերու կոտորուածն ու վաճառքը որոնք պատշաճ կերպով չեն կանոնաւորուած օրինաւոր իշխանութիւններուն կողմէ. արգիլել ի մասնաւորի տնտեսական եւ ընկերային անարդարութիւնները. ցեղային եւ կրօնական խտրութիւնները. չար նախանձը, կասկածամտութիւնը, հպարտութիւնը եւ վրէժխնդրութեան ոգին: Այս եւ ուրիշ անկարգութիւններուն առաջքն առնելու համար ինչ որ ընենք, պիտի նպաստեն խաղաղութիւնը կերտելու եւ պատերազմէն խուսափելու:

ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ.

ՄԻ՝ ՇՆԱՐ:

**487 - Մարդ ի՞նչ պարտականություն ունի իր սեռային ինքնության նկատմամբ:**

*Աստուած այրն ու կինը իբր անձ՝ միեկնոյն արժանա- 2331-2336  
պատուութեամբ ստեղծեց եւ անոնցմէ իւրաքանչիւրին մէջ 2392-2393  
սիրոյ եւ հաղորդակցութեան ձգտումը գետեղեց: Հարկ է որ  
անոնցմէ իւրաքանչիւրը իր սեռային ինքնութիւնը ստանձնէ  
եւ ճանչնայ անոր կարեւորութիւնը, ինքնուրոյնութիւնը եւ  
լրացուցչական բնոյթը՝ ամբողջ անձին համար:*

**488 - Ի՞նչ է ողջախոհութիւնը:**

*Ողջախոհութիւնը անձին եւ սեռականութեան յաջող հա- 2337-2338  
մալրումն է: Սեռականութիւնը իսկապէս մարդավայել կը  
դառնայ, երբ ան անձէ անձ ուղիղ ձեւով կը համալրուի:  
Ողջախոհութիւնը բարոյական առաքինութիւն մըն է, Աս-  
տուծոյ մէկ պարգեւը, շնորհք մը, Հոգիին մէկ պտուղը:*

**489 - Ողջախոհութեան առաքինութիւնը ի՞նչ կը բովանդակէ:**

*Կը բովանդակէ ինքնատիրացում, հասկցուած որպէս 2339-2341  
արտայայտութիւնը մարդու ազատութեան, ուղղուած՝  
դէպի ինքնանուիրում: Առ այս՝ անհրաժեշտ է ամբողջա-  
կան եւ մշտատեւ դաստիարակութիւն մը, որ կ'իրագործուի  
հանգրուանային աճումով:*

**490 - Որո՞նք են ողջախոհութիւնը ապրելու օգնող միջոց-  
ները:**

*Տրամադրելի միջոցները բազմաթիւ են. Աստուծոյ 2340-2347  
շնորհքը, Սուրբ Խորհուրդներուն ընձեռած օգնութիւնը,  
աղօթքը, անձնաճանաչումը, զանազան վիճակներուն  
յարմարող կատարելութեան ձգտումը, բարոյական առա-  
քինութիւններուն գործադրումը եւ յատկապէս Ժուժկալու-*

թիւներ, որ կը ձգտի մարդուն կիրքերը խմացականութեամբ ղեկավարելու:

**491 - Ի՞նչ ձևի տակ բոլոր մկրտուածները կանչուած են ողջախոհ կեանք մը ապրելու:**

2348-2350 *Բոլոր մկրտուածները կանչուած են Քրիստոսի օրինա-*  
 2394 *կին հետեւելով՝ ողջախոհ կեանք մը վարելու ըստ իրենց*  
*կեանքի պայմաններուն. ոմանք կուսակրօն կամ ուխտեալ*  
*կեանքով, ինչ որ գերազանց ձեւն է անբաժան սրտով ինք-*  
*զինք աւելի հեշտօրէն Աստուծոյ նուիրելու, ուրիշներ եթէ*  
*ամուսնացած են՝ ամուսնական ողջախոհութիւնը պահելով,*  
*իսկ եթէ չեն ամուսնացած՝ ողջախոհութիւնը զգաստու-*  
*թեամբ ապրելով:*

**492 - Որո՞նք են ողջախոհութեան դէմ գործուող գլխաւոր մեղքերը:**

2351-2359 *Ողջախոհութեան դէմ ծանրօրէն գործուող մեղքերն են,*  
 2396 *իւրաքանչիւրը ըստ իր առարկային. շնութիւնը, գիթու-*  
*թիւնը, պոռնկութիւնը, պոռնկագրութիւնը, բողոքութիւնը,*  
*պղծումը, միասեռական արարքները: Ասոնք հեշտասիրու-*  
*թեան դրսեւորումներն են: Ասոնք անհափաՀասներու վրայ*  
*կատարուելով՝ ա՛լ աւելի ծանր մեղքեր են, գործուած*  
*անոնց ֆիզիքական եւ բարոյական ողջանդամութեան դէմ:*

**493 - Ինչու՞ վեցերորդ պատուիրանը, քէն միայն «մի՛ շնար» կ'ըսէ, ողջախոհութեան դէմ գործուող բոլոր մեղքերն ալ կ'արգիլէ:**

2336 *Թէեւ Տասնաբանեայի բնագրին մէջ՝ միայն «մի՛ շնար»*  
*կը կարդանք (Ելք 20, 14), սակայն Եկեղեցւոյ Աւանդու-*  
*թիւնը, հետեւելով Հին եւ Նոր Կտակարաններուն բարոյա-*  
*կան ամբողջական ուսուցումին, վեցերորդ պատուիրանը*  
*կը նկատէ ողջախոհութեան դէմ գործուող բոլոր մեղքերը*  
*ընդգրկող պատուիրան:*

**494 - Որո՞նք են քաղաքային իշխանություններուն պարտաւորութիւնները ողջախոհութեան նկատմամբ:**

Քաղաքային իշխանութիւնները, քանի որ պարտաւոր- 2354  
 րութիւնն ունին մարդկային անձին արժանապատուութեան  
 հանդէպ յարգանքը հրահրելու, պարտին ողջախոհութեան  
 նպաստաւոր կլիմայ մը ստեղծել եւ համապատասխան  
 օրէնքներու զօրութեամբ՝ ողջախոհութիւնը ծանրօրէն վի-  
 րաւորող վերեւ յիշուած կարգ մը երեւոյթներուն տա-  
 րածումն անգամ արգիլել, յատկապէս անչափահասներն ու  
 աւելի տկար հոգիները պաշտպանելու նպատակով:

**495 - Որո՞նք են բարեմասնութիւնները ամուսնական սիրոյ, որուն համար սեռականութիւնը նպատակադրուած է:**

Ամուսնական սէրը, որ մկրտեալներուն պարագային 2360-2361  
 սրբացած է ամուսնութեան Սուրբ Խորհուրդով, իբր 2397-2398  
 բարեմասնութիւն ունի ամուսնական միութիւնը, հաւա-  
 տարմութիւնը, անլուծանելիութիւնը եւ բեղմնաւորումին  
 հանդէպ տրամադրուածութիւնը:

**496 - Ամուսնական արարքը ի՞նչ նշանակութիւն կը պարու-նակէ:**

Ամուսնական արարքը զոյգ նշանակութիւն կը պարու- 2362-2367  
 նակէ. մին՝ միացուցիչ (ամուսիններուն իրարու փոխադարձ  
 նուիրում), միւսը՝ բեղմնաւորիչ (կեանքի փոխանցումի  
 տրամադրելիութիւն): Թող ո՛չ ոք, մին կամ միւսը բացա-  
 ռելով, բեկանէ այն անխզելի զօղը, զոր Աստուած ուզեց  
 ամուսնական արարքին այս երկու նշանակութիւններուն  
 միջեւ:

**497 - Երբ ծնունդներու կանոնաւորումը բարոյապէս ընդու-նելի է:**

Ծնունդներուն կանոնաւորումը, որ պատասխանատու 2368-2369  
 հայրութեան եւ մայրութեան երեւոյթներէն մէկն է, առար- 2399

կայականօրէն համակերպ է բարոյական օրէնքին հետ երբ ամուսիններուն միջեւ կը կատարուի ո՛չ թէ արտաքին ճնշումի տակ կամ եսասիրաբար, այլ լուրջ պատճառներով եւ բարոյականի առարկայական չափանիշներու հետ համակերպ մեթոտներով, այսինքն՝ պարբերական ժուժկալու-թեամբ եւ անբեղմնաւոր շրջաններու օգտագործումով:

**498 - Որո՞նք են ծնունդներու կանոնաւորումին անբարոյ միջոցները:**

2370-2372 *Իր ներհուն հոլթեամբ՝ անբարոյ է ամէն արարք - ինչպէս՝ ուղղակի ամուսնումը կամ յղութեան արգելումը - որ իր նպատակով կամ միջոցով կը ձգտի որդեծնութիւնը խափանելու՝ ըլլա՛յ ամուսնական արարքին նախատեսու-թեամբ, ըլլա՛յ անոր կատարումին միջոցին, ըլլա՛յ նաեւ անոր բնական հետեւանքներուն ընթացքին:*

**499 - Ինչու՞ արուեստական սերմանումն ու բեղմնաւորումը անբարոյ արարքներ են:**

2373-2377 *Անբարոյ են, որովհետեւ ծննդաբերութիւնը ամուսիննե-րուն ինքնանուիրումի արարքէն կ'անջատեն եւ անոր փո-խարէն՝ մարդու ծագումին եւ վախճանին վրայ թեքնիք մի-ջոցներու գերիշխանութիւնը կը հաստատեն: Ապա օտար անձէ կատարուած արուեստական սերմանումնով ու բեղմ-նաւորումով, օտար անձ մը ամուսին կեանքէն ներս թեքնի-քական ճամբով միջամուխ կը դարձնեն, զաւակն ալ կը զրկեն իր ճանչցած եւ ամուսնութեամբ իրարու կապուած հայրէ ու մայրէ ծնելու իրաւունքէն, հայր ու մայր՝ որոնք եւ միա՛յն իրարու միջոցով ծնողք դառնալու բացարձակ իրաւունքը կը վայելեն:*

**500 - Չաւակ մը ինչպէ՞ս նկատուելու է:**

2378 *Չաւակը Աստուծոյ պարգեւն է, ամուսնութեան մեծա-գոյն պարգեւը: «Ամէն գնով զաւակ ունենալու» իրաւունք մը գոյութիւն չունի: Ընդհակառակը զաւակի մը իրաւուն-քն է իր ծնողներուն ամուսնական արարքին պտուղն*

ըլլալու, ինչպէս նաեւ իրաւունքը իր յղացումին առաջին պահէն իսկ իբր անձ յարգուելու:

**501 - Անգաւակ ամուսինները ի՞նչ կրնան ընել:**

Ամուսինները եթէ զաւակի մը պարգեւը չունեցան, բժշկութեան օրինաւոր հնարաւորութիւնները սպառելէ ետք՝ կրնան իրենց անձնանուիրումը աւելիով արտայայտել զաւակի մը հոգատարութիւնը ստանձնելով, զայն որդեգրելով կամ ալ ուրիշին համար յատկանշական ծառայութիւններ ստանձնելով: Այսպէս՝ հոգեկան թանկագին բեղմնաւորութիւն մը կ'իրագործեն:

2379

**502 - Որո՞նք են ամուսնական արժանապատուութեան դէմ գործուած մեղանշանքները:**

Անոնք են՝ շնութիւնը, ամուսնալուծումը, բազմակնութիւնը, սեռային յարաբերութիւն՝ շատ մերձաւոր ազգականներու միջեւ, ազատ միութիւնը (անպսակ կենակցութիւնը), ամուսնութենէն առաջ կամ ամուսնութենէ դուրս սեռային յարաբերութիւնը:

2380-2391

2400

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ.

ՄԻ՝ ԳՈՂՆԱՐ:

**503 - Եօթներորդ պատուիրանը ի՞նչ կը սահմանէ:**

Կը սահմանէ բարիքներուն ընդհանրական նպատակադրումն ու բաշխումը, անհատական սեփականութիւնը, անձերուն եւ անոնց ինչքերուն նկատմամբ յարգանքը, արարչութեան ամբողջական պահպանումը: Եկեղեցին այս պատուիրանին վրայ հիմնուած կը տեսնէ նաեւ իր դաւանած ընկերային վարդապետութիւնը, որ ցոյց կու տայ ուղիղ գործելակերպը՝ ե՛ւ տնտեսական գործառնութեան, ե՛ւ ընկերային ու քաղաքական կեանքին, ե՛ւ մարդկային աշխատանքին իրաւունքին եւ պարտականութեան, ե՛ւ

2401-2402

ազգերու միջեւ արդարութեան եւ համընկերութեան, ե՛ւ աղքատներու հանդէպ բարեսիրութեան:

**504 - Որո՞նք են անհատական սեփականութեան իրաւունքի մը գոյութեան պայմանները:**

2403 Անհատական սեփականութեան իրաւունքը գոյութիւն ունի՝ եթէ սոյն սեփականութիւնը արդարօրէն ձեռք բերուած կամ ստացուած է, նաեւ եթէ բարիքներուն տիեզերական նպատակադրումը առաջնահերթ կը մնայ, գոհացում տալու համար բոլոր մարդոց առաջնակարգ պահանջներուն:

**505 - Ո՞րն է անհատական սեփականութեան վախճանական նպատակը:**

2404-2406 Անհատական սեփականութեան վախճանական նպատակն է անհատ մարդուն ազատութիւնն ու արժանապատուութիւնը երաշխաւորել, օգնելով որ ան կարենայ գոհացում տալ իր պատասխանատուութեան յաճնուած մարդոց եւ չքաւորութեան մէջ ապրողներուն առաջնակարգ կարիքներուն:

**506 - Եօթներորդ պատուիրանը ի՞նչ կը հրահանգէ:**

2407 Ան կը հրահանգէ ուրիշին ունեցածը յարգել՝ արդարու-  
2450-2451 թեան, եղբայրսիրութեան, ժողովակալութեան եւ զօրակցութեան գործադրութեամբ: Ան յատկապէս կը պահանջէ՝ տրուած խոստումները եւ կնքուած համաձայնագրերը յարգել, գործուած անարդարութեան հատուցում կատարել եւ գողցուած ինչքերը վերադարձնել, ապա արարչութեան ամբողջականութիւնը պահպանել՝ շնորհիւ տիեզերքի մէջ գոյութիւն ունեցող հանքային, բուսական եւ կենդանական հասոյթներու խոհեմ եւ չափաւոր գործածութեան, յատուկ ուշադրութիւն դարձնելով անհետանալու վտանգին մէջ գտնուող տեսակներուն:

**507 - Մարդը ինչպե՞ս վարուելու է անասուններուն հետ:**

Մարդը բարեացակամ վարուելակերպ ունենալու է Աս- 2416-2418  
տուծոյ ստեղծած անասուններուն հետ, խուսափելով թէ՛ 2457  
չափազանցուած անասնասիրութենէն, թէ՛ անոնց կոյր  
չահագործումէն, յատկապէս բանաւոր սահմաններէն  
դուրս գործադրուող եւ զանոնք աւելիով չարչարող  
գիտական փորձարկումներէն:

**508 - Եօթներորդ պատուիրանը ի՞նչ կ'արգիլէ:**

Ան նախ գողութիւնը կ'արգիլէ, որ կը կայանայ ուրիշին 2408-2413  
ինչքերը իւրացնելու՝ սեփականատիրոջ արդարացի կամքին 2453-2455  
հակառակ: Գողութիւն է նաեւ անարդար աշխատավարձը,  
ուրիշին վնաս հասցնող գիներու չարաշահութիւնը, վճարա-  
գիրի կամ հաշուեգիրի կեղծումը: Կ'արգիլէ նաեւ պետական  
զանձային կամ վաճառականական զեղծարարութիւնները,  
սեփական թէ՛ հասարակական ինչքերուն կամաւորաբար  
վնաս պատճառելը, վաշխառութիւնը, կաշառակերութիւնը,  
ընկերային ինչքերու անհատական չարաշահութիւնը, գի-  
տակցաբար գէշ կատարուած աշխատանքները, մսխումը:

**509 - Եկեղեցւոյ ընկերային վարդապետութիւնը ի՞նչ կ'ու-  
սուցանէ:**

Եկեղեցւոյ ընկերային վարդապետութիւնը, որ Աւետա- 2419-2423  
րանի ճշմարտութեան օրկանական ընդլայնումն է՝ մարդու  
արժանապատուութեան եւ անոր ընկերային տարածքին մա-  
սին, իր մէջ կը բովանդակէ խորհրդածութեան սկզբունք-  
ներ, կը բանաձեւէ դատումի չափանիշեր եւ կ'առաջարկէ  
գործելու օրինաչափեր եւ ուղեգիծեր:

**510 - Ընկերային հարցերուն մէջ Եկեղեցին ե՞րբ կը մի-  
ջամտէ:**

Եկեղեցին տնտեսական եւ ընկերային հարցերուն մէջ կը 2420  
միջամտէ՝ իր բարոյական դատումը տալով, երբ մարդ- 2458

կային անձին հիմնական իրաւունքները, հասարակաց բարիքը կամ հոգիներուն փրկութիւնը զայն կը պահանջեն:

**511 - Ընկերային եւ տնտեսական կեանքը ի՞նչ ձեւով կը կիրարկուի:**

2459

Ան կը կիրարկուի իր սեփական մեթոտներուն համաձայն, բարոյական կարգի շրջագիծին մէջ, ծառայելու համար ամբողջական մարդուն եւ մարդկային ամբողջ հասարակութեան, ընկերային արդարութեան յարգումով: Անոր մէջ մարդը նկատուելու է իբր հեղինակ, կեդրոն եւ վախճան:

**512 - Ի՞նչը կը հակադրուի Եկեղեցւոյ ընկերային վարդապետութեան:**

2424-2425

Եկեղեցւոյ ընկերային վարդապետութեան դէմ են այն տնտեսական եւ ընկերային դրութիւնները, որոնք մարդկային անձին հիմնական իրաւունքները կ'ոտնակոխեն կամ շահը կը համարին իրենց բացարձակ կանոնը կամ գերագոյն նպատակը: Այս պատճառով, Եկեղեցին կը դրժէ արդի ժամանակներու այն գաղափարախօսութիւնները, որոնք «համայնավարութեան» կամ «ընկերավարութեան» անասուած եւ ամբողջատիրական միւս ձեւերուն դասակից են: Եկեղեցին ապա կը դրժէ, «դրամատիրութեան» կիրարկած անհատապաշտութիւնն ու մարդկային աշխատանքին վրայ շուկայի օրէնքներուն բացարձակ տիրապետութիւնը:

**513 - Մարդուն համար աշխատանքը ի՞նչ նշանակութիւն ունի:**

2426-2428

2460-2461

Մարդուս համար աշխատանքը՝ պարտականութիւն եւ իրաւունք է, որուն միջոցով ան կը գործակցի իր արարիչ Աստուծոյ հետ: Մարդը երբ իր աշխատանքը հոգածութեամբ եւ հմտութեամբ կը կատարէ, կը կիրարկէ իր բնութեան մէջ ներգոյ կարողութիւնները, կը պանծացնէ Արարչէն ստացած պարգեւներն ու ձիրքերը, կը գոհացնէ իր եւ իրեններուն պահանջները եւ կը ծառայէ մարդկային հա-

սարակութեան: Ապա աշխատանքը, Աստուծոյ շնորհքին օգնութեամբ, կարող է իբր միջոց ծառայել մարդուն սրբացումին եւ Քրիստոսի հետ անոր գործակցութեան, ուրիշին փրկութեան համար:

**514 - Ամէն մարդ ի՞նչ տեսակ աշխատանքի իրաւունք ունի:**

Ապահով եւ պարկեշտ աշխատանքի մը կարելիութիւնը 2429  
ամէն մարդու մատչելի ըլլալու է, առանց անիրաւ խտրա- 2433-2434  
կանութեան եւ յարգելով տնտեսական ազատ նախաձեռնութիւնը եւ արդար վարձատրութիւնը:

**515 - Ի՞նչ է Պետութեան պատասխանատուութիւնը աշխատանքին մարզին մէջ:**

Պետութիւնը պարտի ապահովել անհատական ազատու- 2431  
թիւններուն եւ սեփականութեան երաշխաւորութիւնը, նաեւ  
կայուն դրամանիշ մը եւ հանրային գործօն սպասարկու-  
թիւններ: ան պարտի տնտեսական մարզին մէջ մարդկային  
իրաւունքներուն գործադրումին վրայ հսկել եւ զայն  
ուղղել: Պարագաներուն համեմատ, ընկերութիւնը պարտի  
օժանդակել քաղաքացիներուն որ գործ ճարեն:

**516 – Ո՞րն է գործարարներուն պատասխանատուութիւնը:**

Գործարարները իրենց գործառնութիւններուն տնտեսա- 2432  
կան եւ բնապահպանական պատասխանատուներն են:  
Անոնք պարտին նկատի ունենալ նաեւ անձերուն բարիքը եւ  
ո՛չ թէ միայն իրենց շահերուն յաւելումը, նոյնիսկ եթէ  
ասոնք անհրաժեշտ են ներդրումները ապահովելու, գոր-  
ծառնութիւններուն ապագային, գործի գոյութեան եւ  
տնտեսական կեանքին բարւոք ընթացքին համար :

**517 - Որո՞նք են աշխատաւորներուն պարտականութիւնները:**

Աշխատաւորները պարտին իրենց աշխատանքը խղճմտո- 2435  
րէն, ձեռնհասօրէն եւ նուիրումով կատարել, իսկ հաւանա-  
կան բախումները երկխօսութեամբ լուծել: Առանց բռնու-

թեան կատարուող գործադուլը բարոյապէս օրինաւոր է, եթէ ան կը ներկայանայ իբր անհրաժեշտ միջոցը հաւասարակշռեալ շահ մը ձեռք ձգելու համար, նաեւ նկատի առնելով հասարակաց բարիքը:

**518 - Արդարութիւնն ու համընկերութիւնը ազգերու միջեւ ինչպէ՞ս կը գործադրուին:**

2437-2441 Միջազգային գետնի վրայ, բոլոր ազգերը եւ բոլոր հաստատութիւնները գործելու են համընկերութեան եւ լրացուցիչ օժանդակութեան հոգիով, որպէսզի չքանան կամ գէթ նուազին չքաւորութիւնը, տնտեսական եկամուտներուն եւ միջոցներուն անհաւասարութիւնը, տնտեսական եւ ընկերային անարդարութիւնները, մարդու չարաչափումը, չքաւոր երկիրներու պարտքերուն յաւելումը եւ այն չարամիտ մեքենայութիւնները, որոնք թերաճ երկիրներուն զարգացումը կը խոչընդոտեն:

**519 - Քրիստոնեաները ի՞նչ ձեւով կը մասնակցին երկրի մը քաղաքական եւ ընկերային կեանքին:**

2442 Աշխարհական հաւատացեալները իրենց երկրին քաղաքական եւ ընկերային կեանքին ուղղակիօրէն միջամուխ կ'ըլլան եւ աշխարհային իրականութիւնները քրիստոնէական շունչով կը թրծեն եւ բոլորին հետ կը վարուին իբրեւ Աւետարանի հարազատ վկաներ, իբրեւ խաղաղութեան եւ արդարութեան գործիչներ:

**520 - Աղքատներու հանդէպ սէրը ի՞նչ բանէ կը ներշնչուի:**

2443-2449 Աղքատներու հանդէպ սէրը կը ներշնչուի Աւետարանի  
2462-2463 Երանութիւններէն եւ Յիսուսի աղքատներուն հանդէպ ցուցաբերած յարատեւ հոգածութեան օրինակէն: Յիսուս ըսաւ. «Ինչ որ ըրիք իմ եղբայրներէս ամենափոքրին, ինծի ըրիք» (Մտք 25, 40): Աղքատներու սէրը կը կիրարկուի դիրքաւորումով նիւթական չքաւորութեան դէմ, ինչպէս նաեւ մշակութային, բարոյական եւ կրօնական աղքատութեան բազմաթիւ տեսակներուն դէմ: Հոգեկան եւ

նիւթական բարեգործութիւններն ու դարերու ընթացքին ծնունդ առած բարեգործական բազմաթիւ հաստատութիւնները՝ շօշափելի վկայութիւնն են աղքատներու հանդէպ այն նախընտրական սիրոյն, որ յատկանշիչ է Յիսուսի աշակերտներուն:

## ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ.

### ՍՈՒՏ ՄԻ՝ ՎԿԱՅԵՐ:

**521 - Մարդը ի՞նչ պարտականութիւն ունի ճշմարտութեան հանդէպ:**

Ամէն մարդ կանչուած է իր վարքով եւ իր խօսքով ան- 2464-2470  
կեղծ եւ ճշմարտախօս ըլլալու: Ամէն մարդ պարտի ճշմար- 2504  
տութիւնը որոնել եւ անոր յարիւ, իր ամբողջ կեանքը դա-  
սաւորելով ճշմարտութեան պահանջներուն համեմատ: Աս-  
տուծոյ ճշմարտութիւնը լման յայտնուեցաւ Յիսուս Քրիս-  
տոսով: Ան է ճշմարտութիւնը: Անոր հետեւողը՝ պարտի  
ճշմարտութեան Հոգիով ապրիլ եւ խոյս տալ երկդիմութե-  
նէն, ձեւացումէն եւ կեղծաւորութենէն:

**522 - Ճշմարտութեան ինչպէ՞ս կը վկայեն:**

Քրիստոնեան պարտի աւետարանական ճշմարտութեան 2471-2474  
վկայել իր անհատական եւ հրապարակային կեանքին բոլոր 2505-2506  
մարզերէն ներս, եւ ի պահանջել հարկին՝ նոյնիսկ ի գին իր  
կեանքին: Մարտիրոսութիւնը հաւատքի ճշմարտութեան  
համար կատարուած գերազոյն վկայութիւնն է:

**523 - Ութերորդ պատուիրանը ի՞նչ կ'արգիլէ:**

Ութերորդ պատուիրանը կ'արգիլէ. 2475-2487  
- Սուտ վկայութիւնը, երդմնազանցութիւնն ու ստախօ- 2507-2509  
սութիւնը: Սուտին ծանր հանգամանքը կը կշռուի անոր  
աղաւաղած ճշմարտութեան բնոյթէն, պարագաներէն,  
ստախօսին դիտաւորութենէն եւ զոհերուն պատճառուած  
վնասէն:

- Յանդուգն դատողությունը, չարախօսությունը, վարկաբեկումը, զրպարտությունը, որոնք կը նուազեցնեն կամ կը կործանեն մարդոց վայելած բարի համբաւն ու պատիւը, որոնց ամէն մարդ իրաւունք ունի:

- Շողոքորթությունը, կամ կամահաճությունը, յատկապէս եթէ ծանր մեղքի կը ձգտին կամ ապօրինի շահեր կը հետապնդեն:

Ճշմարտութեան դէմ ամէն խօսուած սուտ, որ վնաս հասցուցած է, հատուցում կը պահանջէ:

#### 524 - Ութերորդ պատուիրանը ի՞նչ կը խնդրէ:

2488-2492 Ութերորդ պատուիրանը կը խնդրէ որ ճշմարտութիւնը  
2510-2511 յարգուի՝ եղբայրասէր գաղտնապահութեան հետ միատեղ: Ասիկա կատարուելու է՝ հաղորդագրութեան եւ լրատուութեան մէջ, այնպիսի ձեւով որ անհատական եւ հասարակական բարիքը պահպանուի, առանձնական կեանքը պաշտպանուի եւ գայթակղութեան վտանգը հեռացուի: Ապահովուի նաեւ պաշտօնի պահանջած գաղտնապահությունը, որ միշտ յարգուելու է, բացի ծանր ու կշռադատուած պատճառներէն յառաջ եկած յատուկ պարագաներէն: Այս պատուիրանը կը պահանջէ նաեւ չյայտնել գաղտնիքի տակ վստահուած մտերիմ զրոյցները:

#### 525 - Ի՞նչպէս գործածուելու են ընկերային լրատուական միջոցները:

2493-2499 Լրատուական միջոցները հասարակաց բարիքին ծառայելու են. իրենց բովանդակութիւնը միշտ ճշմարտացի պէտք է ըլլայ եւ, արդարութիւնն ու եղբայրսիրութիւնը յարգելով՝ նաեւ ամբողջական: Անոնք պարկեշտ եւ վայելուչ կերպով արտայայտուելու են, միանգամայն խղճմտօրէն յարգելու են բարոյական օրէնքները, մարդու սեփական իրաւունքներն ու արժանապատուութիւնը:

**526 - Ի՞նչ առնչություն կայ ճշմարիտին, գեղեցիկին եւ գեղարուեստին միջեւ:**

*Ճշմարտութիւնն իր էութեամբ գեղեցիկ է: Ան իր մէջ կը կրէ հոգեղէն գեղեցկութեան պայծառութիւնը: Ճշմարտութիւնը արտայայտելու, խօսքէն զատ՝ ուրիշ բազմաթիւ ձեւեր կան, ի մասնաւորի՝ արուեստի գործերը, որոնք արգասիքն են աստուածապարգեւ տաղանդին եւ մարդու աշխատանքին: Սրբազան արուեստը ճշմարիտ ու գեղեցիկ ըլլալու համար, պարտի ոգեկոչել եւ փառաբանել Քրիստոսով յայտնուած Աստուծոյ Խորհուրդը եւ մարդը մղել պաշտելու եւ սիրելու Արարիչ եւ Փրկիչ Աստուծո՛ր: Ճշմարտութեան եւ Սիրոյ գերազանց Գեղեցկութիւնը:*

2500-2503

2513

## ԻՆՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ. ՈՒՐԻՇԻՆ ԿՆՈՋ ՄԻ՝ ՅԱՆԿԱՐ:

**527 - Իններորդ պատուիրանը ի՞նչ կը խնդրէ:**

*Իններորդ պատուիրանը կը պահանջէ նուաճել մտածումներէն եւ տենչերէն ծնող մարմնաւոր ցանկութիւնները, որոնց դէմ մղուող պայքարը կ'անցնի սրտի մաքրազտումին եւ ժուժկալութեան առաքինութեան գործադրումին մէջէն:*

2514-2516

2528-2530

**528 - Իններորդ պատուիրանը ի՞նչ կ'արգիլէ:**

*Իններորդ պատուիրանը կ'արգիլէ սնուցանել մտածումներ եւ տենչեր, որոնք կը վերաբերին վեցերորդ պատուիրանին կողմէ արգիլուած գործերուն:*

2517-2519

2531-2532

**529 - Սրտի մաքրութիւնը ի՞նչ ձեւով կարելի է ձեռք ձգել:**

*Մկրտուած հաւատացեալը Աստուծմէ ստացած շնորհքին զօրութեամբ եւ անկարգ տենչերուն դէմ իր մղած պայքարով՝ կը հասնի սրտի մաքրութեան, շնորհիւ ողջախոհու-*

2520

Թեան առաքինութեան եւ պարգեւին, շնորհիւ իր պայծառ դիտաւորութեան, իր ներքին եւ արտաքին նայուածքին թափանցիկութեան, իր յուզումներուն եւ երեւակայութեան տիրապետումին, շնորհիւ աղօթքին:

**530 - Սրտի մաքրութիւնը ուրիշ ի՞նչ կը պահանջէ:**

2521-2527 *Սրտի մաքրութիւնը կը պահանջէ ամօթխածութիւն, որ*  
 2533 *մարդուն մտերմութիւնը պահպանելով՝ ողջախոհութեան նրբազգացութիւնը կ'արտայայտէ եւ անձերուն արժանապատուութեան եւ հաղորդակցութեան համեմատ՝ անոնց նայուածքն ու շարժուձեւերը կ'ուղղէ: Ան մարդը կը ձերբազատէ համատարած սեռամոլութենէն եւ կը հեռացնէ ապառողջ հետաքրքրութեան նպաստող ամէն բանէ: Ան կը պահանջէ նաեւ ընկերային կլիմայի մաքրագոյնում, յարատեւ պայքար մղելով բարքերու թուլացումին դէմ, որ հիմնուած է մարդկային ազատութեան թիւր ըմբռնումի մը վրայ:*

ՏԱՄՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ.

ՈՒՐԻՇԻՆ ՈՒՆԵՅԱԾԻՆ ՄԻ՝ ՅԱՆԿԱՐ

**531 - Տասներորդ պատուիրանը ի՞նչ կը պահանջէ եւ ի՞նչ կ'արգիլէ:**

2534-2540 *Նախորդը ամբողջացնող այս պատուիրանը կը խնդրէ*  
 2551-2554 *ներքին յարգալիւր կեցուածքով յարաբերիլ ուրիշին սեփականութեան հանդէպ, կ'արգիլէ սեփականութեան անյագութիւնը, անգուսպ ընչաքաղցութիւնը եւ չար նախանձը, որ ուրիշին ունեցածին դիմաց տիրիւն է եւ անոր տիրանալու անկարգ փափաքն է:*

**532 - Յիսուս ի՞նչ կը խնդրէ հոգիով աղքատներէն:**

2544-2547 *Յիսուս իր աշակերտներէն կը խնդրէ, որ Զինք ամէն*  
 2556 *անձէ եւ ամէն ինչէ վեր գերադասեն: Աւետարանական հոգիին համեմատ հարստութիւններէն անջատուիլը եւ մեզ*

վաղուան մտահոգութենէն ազատող Աստուծոյ Նախախնամութեան յանձնուիլը՝ մեզ կը նախապատրաստեն «Հոգիով աղքատներուն» երանութեան, «որովհետեւ անոնց է երկինքի արքայութիւնը» (Մտք 5, 3):

**533 - Ո՞րն է մարդուն մեծագոյն իղձը:**

Մարդուն մեծագոյն իղձը՝ զԱստուած տեսնելն է: Մար- 2548-2550  
դուն համակ էութեան կանչը այս է. «Կ'ուզեմ զԱստուած 2557  
տեսնել»: Արդարեւ մարդը իր ճշմարիտ եւ ամբողջական երջանկութիւնը կ'իրագործէ տեսութեան եւ երանութեան մէջ Անոր, որ զինք սիրելուն համար՝ զինք ստեղծեց եւ Իր անհուն սիրով՝ զինք Իրեն կը քաշէ:

Աստուած տեսնողը արդէն ընդունած է ամէն բարիք, զոր կարող է պատկերացնել (Մ. Գրիգոր Նիւսեցի):





Աստուած տեսնողը արդէն ընդունած է ամէն բարիք, զոր կարող է պատկերացնել (Ս. Գրիգոր Նիսեցի)։

Սրբանկարը կը պատկերացնէ Հոգեգալստեան տեսարանը ինչպէս գրուած է Սուրբ Գրքին մէջ։ «Երբ Պենտեկոստէի օրերը անցած էին, ամէնքը միասին մէկտեղ էին։ Յանկարծ երկինքէն հնչիւն մը լսուեցաւ, նման սաստիկ հովի եւ տունը ուր նստած էին՝ լեցուեցաւ։ Եւ անոնց բաժնուած լեզուներ երեւցան, նման կրակէ լեզուներու եւ իջան իւրաքանչիւր առաքեալի վրայ։ Ամէնքը լեցուեցան Սուրբ Հոգիով եւ սկսան խօսիլ տարբեր լեզուներով, ինչպէս որ Հոգին կու տար անոնց կարողութիւն խօսելու» (Գործ 2, 1-4)։

Սրբանկարին մէջ, Սուրբ Հոգին խորհրդանշող աղանձին՝ զօրաւոր ճառագայթ մը կ'անջատուի եւ կը շրջապատէ Մարիամը եւ առաքեալները։ Ան առաքեալներուն միտքը լուսաւորող լոյսն է։ Ան անոնց կը բաշխէ գիտութեան եւ իմաստութեան պարգեւները, աստուածային իրականութիւններուն հասկացողութիւնը, ինչպէս նաեւ բարեպաշտութեան, ուժի, խորհուրդի եւ Աստուծոյ երկիւղի պարգեւները։

Անոնց գլուխներուն վրայ կը հանգչին կրակէ լեզուներ, որոնք արտայայտութիւնն են աստուածային սիրոյ լրումին, որ զանոնք պիտի մղէ Աւետարանը քարոզելու բոլոր ազգերուն։ Արդարեւ առատաբուխ շնորհները թոյլ պիտի տան, որ անոնք բոլորին կողմէն հասկցունին, քանի որ անոնց գործածած սիրոյ լեզուն՝ տիեզերական եւ բոլորին մատչելի լեզուն է։

Ժողովուրդներու միջեւ ստեղծուած լեզուներուն բաժանումին՝ Հոգեգալստը կը հակադրէ ժողովուրդները միացնող դարմանը։

Խմբանկարին կեդրոնին՝ կ'իշխէ Մարիամ, Մայրը Եկեղեցւոյ, Թագուհի առաքեալներուն եւ աղօթարարի կատարեալ տիպարը։ Հաւատացեալները Սուրբ Հոգիին սէրէն մղուելով՝ կարող կը դառնան իրենց որդիական աղօթքները դէպի Աստուած բարձրացնելու, ըստ Առաքեալին, որ կ'ըսէ՝ «Քանի որ դուք որդիներ էք, Աստուած ալ մեր սրտերուն մէջ զրկեց իր Որդիին՝ Հոգին, որ կ'աղաղակէ արքա՛, Հայր» (Գալ 4, 6)։

Հոգեգալուստի դպտիական սրբանկար։

**ՀՈՐԻՈՐԴ ՄԱՍ**

**ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՂՕԹՔԸ**

*Բոլոր պահերը յարմար են աղօթելու համար: Սակայն Եկեղեցին հաւատացեալներուն պահեր կ'առաջարկէ յատկացուած՝ մշտաբուխ աղօթքը կշռոյթաւորելու եւ սնուցանելու. անոնք են՝ առաւօտեան, երեկոյեան, ճաշէն առաջ եւ վերջ աղօթքները, ժամասացութիւնները, կիրականօրեայ պատարագը, վարդարանը, ծիսական տարիին տօնակատարումները:*

*Սրբանկարը ցոյց կու տայ ծիսական տարիին գլխաւոր տօներէն մի քանին, որոնք կը բնորոշեն Եկեղեցիին աղօթքը: Կեդրոնին՝ կ'իշխէ զատկական խորհուրդին պատկերացումը. Յիսուսի Յարութիւնն եւ Համբարձումը: Ծիսական աղօթքին գագաթնակէտ հանդիսացող այս տօնակատարումէն իրենց նշանակութիւնը եւ փրկչագործ ուժը կը քաղեն Յիսուսի եւ Մարիամի միւս բոլոր տօները:*

Սրբանկար գլխաւոր ծիսական տօներուն:

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԱԾ

ԱՂՕԹՔԸ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ





**534 - Ի՞նչ է աղօթքը:**

Աղօթքը Հոգիին վերացումն է առ Աստուած կամ աստ- 2558-2565  
 ւածային կամքին հաճոյ եղող բարիքի մը խնդրանքն է: Ան 2590  
 միշտ պարգեւ մըն է մարդը դիմաւորող Աստուծոյ կողմէ:  
 Քրիստոնեայ աղօթքը Աստուծոյ զաւակներուն անձնական  
 եւ կենդանի յարաբերութիւնն է իրենց ամենաբարի Հօր,  
 Անոր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի եւ անոնց սրտերուն մէջ  
 բնակող Սուրբ Հոգիին հետ:

**ԳԼՈՒԽ Ա.****ԱՂՕԹՔԻՆ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ****535 - Ինչու՞ քնդհանրական կոչ մը կայ դէպի աղօթքը:**

Որովհետեւ Աստուած, նախ եւ առաջ արարչագոր- 2566-2567  
 ծուլեան միջոցով, բոլոր էակները ոչինչէն կեանքի կը  
 կանչէ: մարդը եւ նոյնիսկ իր անկումէն ետք, կը շարունակէ  
 ատակ մնալ իր Արարիչը ճանչնալու, իր մէջ կենսունակ  
 պահելով իրեն փափաքը գոյութիւն տուողին: Բոլոր  
 կրօնները, եւ յատուկ կերպով փրկագործութեան ամբողջ  
 պատմութիւնը, կը վկայեն մարդուն զգացած Աստուծոյ  
 այս փափաքին մասին: Սակայն ինք Աստուած է, որ  
 նախապէս մէն մի անձը շարունակաբար կը կանչէ աղօթքի  
 խորհրդաւոր հանդիպումին:

**ԱՂՕԹՔԻՆ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ****ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՄԷՁ****536 - Աբրահամ ինչու՞ վ աղօթքի տիպար կը հանդիսանայ:**

Աբրահամ աղօթքի տիպար է, որովհետեւ ան կը քայլէ 2570-2573  
 Աստուծոյ ներկայութեան, իրեն մտիկ կ'ընէ եւ իրեն կը 2592  
 հնազանդի: Անոր աղօթքը հաւատքի պայքար մըն է,  
 որովհետեւ նոյնիսկ փորձութիւններու մէջ՝ ան կը շարու-  
 նակէ Աստուծոյ հաւատարմութեան հաւատալ: Իսկ երբ

վրանին տակ Տէրը իրեն այցելութեան կու գայ եւ իր ծրագիրները կը յայտնէ, Աբրահամ կը յանդգնի մեղաւորներուն համար բարեխօսել համարձակ վստահութեամբ:

**537 - Մովսէս ինչպէ՞ս կ'աղօթէր:**

2574-2577 Մովսէսի աղօթքը նմոյշն է վերհայեցողական աղօթքին:  
2593 Աստուած Մովսէսը անկէզ Մորենիին մէջէն կանչելով՝ անոր հետ յաճախակի եւ երկարօրէն կը խօսակցի «դէմ առ դէմ, ինչպէս մարդ մը իր բարեկամին հետ կը խօսի» (Ելք 33, 11): Մովսէս Աստուծոյ հետ իր այս մտերմութենէն ուժ կը քաղէ համարձակութեամբ բարեխօսելու իր ժողովուրդին համար: Այսպէս՝ անոր աղօթքը նախապատկեր կը հանդիսանայ միակ միջնորդ Յիսուս Քրիստոսի բարեխօսութեան:

**538 - Հին Կտակարանին մէջ, տաճարը եւ թագաւորը ի՞նչ առնչութիւն ունին աղօթքին հետ:**

2578-2580 Աստուծոյ բնակութեան - Ուխտի Տապանակին, ապա  
2594 տաճարին - հովանիին ներքեւ՝ Աստուծոյ ժողովուրդին աղօթքը կը զարգանայ իր հովիւներուն առաջնորդութեամբ: Անոնցմէ է Դաւիթը, «ըստ Աստուծոյ սրտին» թագաւորը, իր ժողովուրդին համար աղօթող հովիւը: Անոր աղօթքը իբր նմոյշ կը ծառայէ ժողովուրդին աղօթքին, որովհետեւ ան փարում մըն է Աստուծոյ տուած խոստումին եւ սիրագեղ վստահութիւն մը՝ միակ Թագաւորին եւ Տէրին հանդէպ:

**539 - Ի՞նչ է աղօթքին դերը մարգարէներուն առաքելութեան մէջ:**

2581-2584 Մարգարէները իրենց աղօթքէն լոյս եւ ուժ կը քաղեն եւ ժողովուրդը հաւատքի եւ զղջումի կը յորդորեն: Աստուծոյ մեծ մտերմութեան արժանանալով՝ իրենց եղբայրներուն համար կը բարեխօսեն եւ Աստուծոյ մօտ իրենց տեսածն ու լսածը՝ անոնց կը հաղորդեն: Եղիա՝ մարգարէներուն, այսինքն Աստուծոյ Երեսը որոնողներուն հայրն է: Կարմեղոս լերան վրայ, ան կը յաջողի ժողովուրդը հաւատքին վերա-

դարձնել շնորհիւ Աստուծոյ միջամտութեան, Որուն այսպէս կ'աղօթէր. «Լսէ՛ ինծի, Տէ՛ր, լսէ ինծի՛» (Գ Թագ 18, 37):

**540 - Ի՞նչ է Սաղմոսներուն կարեւորութիւնը աղօթքին մէջ:**

Հին Կտակարանին մէջ Սաղմոսները աղօթքին գագաթնակէտն են. անոնց մէջ Աստուծոյ Խօսքը մարդուն աղօթքը կը դառնայ: Սուրբ Հոգիէն ներշնչուած միանգամայն անձնական եւ հասարակական եղող այս աղօթքը, Աստուծոյ սքանչելիքներուն փառքը կը հիւսէ արարչագործութեան եւ փրկչական պատմութեան ընդմէջէն: Քրիստոս Սաղմոսները աղօթեց եւ զանոնք իրենց կատարումին հասցուց: Այս պատճառով, անոնք Եկեղեցւոյ աղօթքին հական եւ մնալուն բաղադրիչ տարրը կը կազմեն եւ կը յարմարին բոլոր վիճակներուն եւ ժամանակներուն պատկանող մարդոց:

## ԱՂՕԹՔԸ՝ ԼՐԻՒ ՅԱՅՏՆՈՒԱԾ ԵՒ ԻՐԱԳՈՐԾՈՒԱԾ Է ՅԻՍՈՒՍՈՎ

**541 - Յիսուս որմէ՞ աղօթել սորվեցաւ:**

Յիսուս ըստ Իր մարդկային սրտին՝ Իր Մօրմէն եւ հրէական աւանդութենէն սորվեցաւ աղօթել: Բայց Անոր աղօթքը աւելի թաքուն ակունքէ մը կը բխի, քանի որ Ինք Աստուծոյ յաւիտեանական Որդին է եւ Իր սուրբ մարդկայնութեան մէջէն՝ որդիական կատարեալ աղօթքը կը բարձրացնէ Իր Հօր:

**542 - Յիսուս ե՞րբ կ'աղօթէր:**

Աւետարանը Յիսուսը յաճախ աղօթքի մէջ ցոյց կու տայ: Նոյնիսկ գիշեր ատեն Անոր առաձնանալը կը տեսնենք: Ան կ'աղօթէ Իր կամ Իր առաքեալներուն առաքելութեան բախտորոշ պահերէն առաջ: Անոր ամբողջ կեանքը աղօթք դարձած է, որովհետեւ Իր Հօր հետ սիրոյ մշտական հաղորդութեան մէջ է:

**543 - Յիսուս Իր չարչարանքներուն ատեն ինչպէ՞ս աղօթեց:**

2605-2606 *Յիսուսին աղօթքը Գեթսեմանիի Պարտեզին հոգեվարքին*  
 2620 *ատեն, ինչպէս նաեւ խաչին վրայ արտաբերած Իր վերջին*  
*խօսքերը՝ Անոր որդիական աղօթքին խորութիւնը կը յայտ-*  
*նաբերեն: Յիսուս Իր Հօր սիրոյ ծրագիրը Իր կատարումին*  
*կը հասցնէ եւ մարդկութեան անձկութիւնները, մարդուն*  
*բոլոր խնդրանքները եւ փրկչական ծրագրին բարեխօսու-*  
*թիւնները Ինք ստանձնելով՝ զանոնք Հօր կը ներկայացնէ:*  
*Հայրը զանոնք կ'ընդունի եւ ամէն յոյսէ անդին՝ անոնց*  
*կ'անսայ, Յիսուսը մեռեալներէն յարուցանելով:*

**544 - Յիսուս ինչպէ՞ս մեզի աղօթել կը սորվեցնէ:**

2608-2614 *Յիսուս մեզի աղօթել կ'ուսուցանէ ո՛չ միայն Հայր Մերը*  
 2621 *սորվեցնելով, այլ նաեւ Ինք եւս աղօթելով: Այսպէս, Ան՝*  
*աղօթքին բովանդակութենէն զատ, մեզի կը սորվեցնէ նաեւ*  
*ճշմարիտ աղօթքին համար պահանջուած տրամադրութիւն-*  
*ները, այսինքն՝ սրտի մաքրութիւնը, որ Արքայութիւնը կը*  
*փնտռէ եւ իր թշնամիին կը ներէ, ապա մեր զգացումները*  
*եւ մեր հասկացողութիւնը գլոյդ անցնող որդիական եւ յան-*  
*դուգն վստահութիւնը, հուսկ աշակերտը փորձութեան դէմ*  
*պաշտպանող արթնութիւնը: Ասիկա է Հօր մօտ մեր Միջ-*  
*նորդին՝ Յիսուսի Անունով կատարուած աղօթքը:*

**545 - Մեր աղօթքը ի՞նչով արդիւնաւոր է:**

2615-2616 *Մեր աղօթքը արդիւնաւոր կը դառնայ, երբ հաւատքով*  
*Յիսուսի աղօթքին կը միանայ: Անով՝ քրիստոնեայ աղօթքը*  
*Հօր հետ սիրոյ միութիւն կը դառնայ: Այս պայմաններով է*  
*որ կրնանք մեր խնդրանքները Աստուծոյ ներկայացնել եւ*  
*զանոնք ընդունիլ. «Խնդրեցէ՛ք եւ պիտի ընդունիք եւ ձեր*  
*ուրախութիւնը կատարեալ պիտի ըլլայ» (Յովհ 16, 24):*

**546 - Ս. Կոյս Մարիամը ինչպէ՞ս կ'աղօթէր:**

2617-2618 *Մարիամի աղօթքը կը բնորոշուի իր հաւատքով եւ իր* 2679  
 2622-2674 *ամբողջ էութեան Աստուծոյ կատարած ինքնանուէր ընծա-*

յուժով: Յիսուսի Մայրը նաեւ Նոր Եւան է, «ողջերու Մայրը»: Ան կը բարեխօսէ իր Յիսուս Որդիին մօտ բոլոր մարդոց կարիքներուն համար:

**547 - Աւետարանին մէջ Մարիամէն աղօթք մը կը յիշուի՞:**

Գալիլիոյ Գանայի հարսանիքին մէջ Մարիամի կատարած 2619 բարեխօսութենէն բացի, Աւետարանը (Ղուկ 1, 46-55) մեզի «Մեծացուցէ» կը կտակէ. ան Աստուածամօր եւ Եկեղեցիին երգն է, նաեւ աղքատներուն սրտէն բխող ուրախալից շնորհակալութեան խօսքն է, քանի որ անոնց ակնկալութիւնները իրագործուեցան աստուածային խոստումներուն կատարումով:

## ԱՂՕԹՔԸ՝ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻՆ ՄԷՁ

**548 - Երուսաղէմի առաջին հասարակութեան հաւատացեալները ինչպէ՞ս կ'աղօթէին:**

Առաքեալներու Գործերուն սկիզբը՝ գրուած է թէ Երուսաղէմի առաջին քրիստոնեայ հասարակութեան հաւատացեալները, աղօթքի կեանքի մէջ Սուրբ Հոգիէն հրահանգուած, «կը յարատեւէին առաքեալներուն ուսուցման մէջ, հաւատարիմ էին եղբայրական հաղորդութեան, հացի բեկանումին եւ աղօթքներուն» (Գործ 2, 42): 2623-2624

**549 - Սուրբ Հոգին ինչպէ՞ս կը միջամտէ Եկեղեցոյ աղօթքին մէջ:**

Սուրբ Հոգին, քրիստոնեայ աղօթքին հոգեւոր Ուսուցիչը, Եկեղեցին կը դաստիարակէ աղօթքի կեանքին մէջ եւ զայն միշտ աւելի խոր կը ներմուծէ վերահայեցողութեան եւ Քրիստոսի անքննելի խորհուրդին միութեան մէջ: Այն աղօթածեալները, որոնք արտայայտուած են առաքելական եւ կանոնական Գրութիւններուն մէջէն, քրիստոնեայ աղօթքին մնայուն օրինակարգը պիտի հանդիսանան: 2623-2625

**550 - Որո՞նք են քրիստոնեայ աղօթքին էական ձևերը:**

2643-2644 Անոնք են՝ օրհնութիւնը եւ երկրպագութիւնը, խնդրանքն ու բարեխօսութիւնը, գոհաբանութիւնն ու գովաբանութիւնը: Գոհութեան խորհուրդը աղօթքի բոլոր ձևերը իր մէջ կը բովանդակէ եւ կ'արտայայտէ:

**551 - Ի՞նչ է օրհնաբանութիւնը:**

2626-2627 Օրհնաբանութիւնը մարդուն պատասխանն է Աստուծոյ  
2645 պարգեւներուն: Կ'օրհնենք Ամենակալը, որ նախ Ի՛նք մեզ կ'օրհնէ եւ իր պարգեւներով մեզ կը լիացնէ:

**552 - Ի՞նչ է երկրպագութիւնը:**

2628 Երկրպագութիւնը մարմնով դէպի երկիր խոնարհումն է, որով մարդը՝ երիցս սուրբ Արարչին առջեւ՝ ինքզինք Անոր արարածը կը դաւանի:

**553 - Որո՞նք են խնդրանքի աղօթքին զանազան ձևերը:**

2629-2633 Ան կարող է ըլլալ խոնարհ եւ վստահալից խնդրանք մը՝  
2646 ներումի կամ հոգեւոր ու նիւթական մեր բոլոր կարիքներուն համար: Բայց մեր խնդրելիք առաջին իրողութիւնը՝ երկինքի Արքայութեան գալուստն է:

**554 - Բարեխօսութիւնը ի՞նչ բանի մէջ կը կայանայ:**

2634-2636 Բարեխօսութիւնը ուրիշին ի նպաստ ներկայացուած  
2647 խնդրանք մըն է: Ան մեզ կը միաձեւէ ու կը միացնէ աղօթքին Յիսուսին, որ Հօր մօտ կը բարեխօսէ բոլոր մարդոց եւ յատկապէս մեղաւորներուն համար: Բարեխօսութիւնը պէտք է տարածուի նոյնիսկ մեր թշնամիներուն:

**555 - Աստուծոյ ե՞րբ գոհաբանութիւն կը մատուցանենք:**

2637-2638 Եկեղեցին անդադար իր գոհաբանութիւնը կ'ընծայէ  
2648 Աստուծոյ, յատկապէս Գոհութեան խորհուրդը մատուցա-

նելով, որուն մէջ Քրիստոս Եկեղեցին մասնակից կը դարձնէ Հօր մատուցած Իր գոհաբանութեան: Քրիստոնեային համար ամէն դէպք գոհաբանութեան առիթ է:

**556 - Ի՞նչ է գովաբանական աղօթքը:**

Գովաբանութիւնը աղօթքի այն ձեւն է, որ զԱստուած՝ 2639-2643  
իբր Աստուած կը դաւանի ուղղակիօրէն: Ան բոլորովին 2649  
անշահախնդիր է, ան զԱստուած կը գովերդէ Աստուծոյ  
համար եւ Ձայն կը գոհաբանէ՝ որովհետեւ Ան է որ է:

**ԳԼՈՒԽ Բ.**

## ԱՂՕԹՔԻՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆԸ

**557 - Ո՞րն է աւանդութեան կարեւորութիւնը աղօթքի նկատմամբ:**

Եկեղեցւոյ մէջ՝ Սուրբ Հոգին Աստուծոյ զաւակներուն 2650-2651  
աղօթել կը սորվեցնէ կենդանի աւանդութեան ճամբով:  
Արդարեւ աղօթքը չի վերածուիր ներքին մղումի մը  
ինքնաբուխ արտայայտութեան, այլ կ'ըմբռնէ նաեւ վեր-  
հայեցողութիւն, ուսում եւ մեր փորձառութեան ենթակայ  
հոգեւոր իրականութիւններուն ըմբռնում:

## ԱՂՕԹՔԻՆ ԱԿՆԱՂԲԻՒՆԵՐԸ

**558 - Որո՞նք են քրիստոնեայ աղօթքին ակնադիւրսները:**

Անոնք են. Աստուծոյ Խօսքը, որ մեզի կը հաղորդէ 2652-2662  
«Քրիստոսի գերազանց գիտութիւնը» (Փիլ 3, 8). Եկեղեցւոյ  
Ծիսակատարումը, որ փրկչական խորհուրդը կ'աւետէ,  
կ'այժմէագործէ եւ կը հաղորդէ. Աստուածաբանական  
առաքինութիւնները. Առօրեայ կացութիւնները, որոնց  
մէջէն կրնանք Աստուծոյ հանդիպիլ:

Կը սիրեմ քեզ, Տէ՛ր, եւ միակ շնորհքը որ Քեզմէ կը  
խնդրեմ՝ Քեզ յախտենապէս սիրելն է (...): Աստուած իմ,  
եթէ լեզուս կարող չէ ամէն վայրկեան ըսել քե կը սիրեմ

քեզ, կ'ուզեմ որ սի'րտս զայն կրկնէ Քեզի՝ ամէն անգամ որ շնչեմ (*Ս. Յովհաննէս Վիաննէ*):

## ԱՂՕԹՔԻՆ ՈՒՂԻՆ

**559 - Եկեղեցիին մէջ աղօթքի զանազան ուղիներ գոյութիւն ունի՞ն:**

2663 *Եկեղեցիին մէջ աղօթքի զանազան ուղիներ կան, որոնք առնչուած են պատմական, ընկերային եւ մշակութային զանազան մարզերու: Եկեղեցւոյ Վարդապետութիւն Հեղինակութեան կը պատկանի ստուգել՝ այն ուղիներուն հաւատարմութիւնը առաքելական հաւատքի աւանդութեան հետ, իսկ հովիւներուն եւ կրօնուսոյցներուն կը վերաբերի բացատրել անոնց նշանակութիւնը, որ միշտ Յիսուս Քրիստոսի հետ առնչուած է:*

**560 - Ո՞րն է մեր աղօթքին ուղին:**

2664 *Մեր աղօթքին ուղին Քրիստոսն է: Մեր աղօթքը թէեւ*  
2680-2681 *Հօր Աստուծոյ ուղղուած է, սակայն Անոր կը հասնի միայն եթէ մենք, գէթ լռելեայն, Յիսուսի Անունով կ'աղօթենք: Արդարեւ Քրիստոսի մարդկային բնութիւնը միակ ուղին է, որուն միջոցով Սուրբ Հոգին մեզի «Հայր Մեր» աղօթել կը սորվեցնէ: Այս պատճառով ծիսական աղօթքները «մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով» բանաձեւով կ'աւարտին:*

**561 - Ո՞րն է Սուրբ Հոգիին դերը աղօթքին մէջ:**

2670-2672 *Քանի որ Սուրբ Հոգին քրիստոնեայ աղօթքին հոգեւոր*  
2680-2681 *Ուսուցիչն է, իսկ մենք «չենք գիտեր աղօթել ինչպէս որ պէտք է» (Հն 8, 26), ուստի Եկեղեցին մեզ կը յորդորէ ամէն առիթով Սուրբ Հոգիին դիմելու եւ Զինք կանչելու. «Եկու՛ր Սուրբ Հոգի»:*

**562-** Ի՞նչ նշանակութեամբ քրիստոնեայ աղօթքը մարեմական է:

*Մարիամի Սուրբ Հոգիին հետ ունեցած իւրայատուկ համագործակցութեան պատճառով, Եկեղեցին կը սիրէ աղօթել Մարիամին եւ Մարիամին հետ, իբր տիպար Աղբսող, որպէսզի Մարիամի հետ՝ Տէրը մեծարէ եւ աղբսէ: Արդարեւ Մարիամ է որ մեզի «ցոյց կու տայ ճամբան», որ իր Որդին է, միա՛կ Միջնորդը:*

**563 -** Եկեղեցին Մարիամին ի՞նչ ձեւով կ'աղօթէ:

*Նախ «Ողջոյն քեզ»ով, որուն միջոցաւ Եկեղեցին Սուրբ Կոյսին բարեխօսութիւնը կը հայցէ: Մարեմական միւս աղօթքներուն շարքին՝ Վարդարանը կայ, «Մայր Սուրբ» շարականը եւ քրիստոնեայ զանազան աւանդութիւններուն տաղերն ու երգերը կան:*

## ԱՂՕԹՔԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

**564 -** Սուրբերը ի՞նչ ձեւով աղօթքի առաջնորդներն են:

*Սուրբերը մեզի համար աղօթքի տիպարներ են, անոնց կը դիմենք նաեւ որպէսզի մեզի եւ ամբողջ աշխարհին համար բարեխօսեն Սուրբ Երրորդութեան մօտ: Անոնց կատարած բարեխօսութիւնը Աստուծոյ ծրագրին անոնց մատուցած մեծագոյն ծառայութիւնն է: Եկեղեցւոյ պատմութեան ընթացքին՝ սուրբերու հաղորդութեան ծոցէն անհեցան հոգեկանութեան զանազան տիպարներ, որոնք մեզի կը սորվեցնեն ինչպէս ապրիլ եւ ինչպէս աղօթել:*

**565-** Ո՞վ կրնայ մարդը աղօթելու դաստիարակել:

*Մարդս աղօթքի դաստիարակող առաջին օճախը քրիստոնեայ ընտանիքն է: Ընտանեօք կատարուող ամէնօրեայ աղօթքը յատուկ կերպով յաճնարարելի է, որովհետեւ ան Եկեղեցւոյ աղօթքի կեանքին առաջին վկայութիւնն է: Կրօնու-*

սուցումը, աղօթքի խմբակցութիւնները, «Հոգեւոր առաջնորդութիւնը» աղօթքի համար դպրոց եւ օժանդակութիւն են:

**566 - Որո՞նք են աղօթքի նպաստաւոր վայրերը:**

2691 Կարելի է ամէն տեղ աղօթել, սակայն յարմար վայրի մը  
2696 ընտրութիւնը՝ աղօթքի համար անկարեւոր բան մը չէ: Ծիսական աղօթքին եւ Սուրբ Հաղորդութեան երկրպագութեան յարմար վայրը եկեղեցին է: Ուրիշ վայրեր ալ կան, որոնք կրնան աղօթելու նպաստել, ինչպէս՝ տան մէջ՝ «աղօթքի անկիւն» մը, վանք մը, ուխտավայր մը:

## ԳԼՈՒԽ Գ.

### ԱՂՕԹՔԻ ԿԵԱՆՔԸ

**567 - Որո՞նք են աղօթելու յարմարագոյն պահերը:**

2697-2698 Բոլոր պահերը աղօթելու յարմար են, սակայն մշտատեւ  
2720 աղօթք մը ապահովելու համար՝ Եկեղեցին հաւատացեալներուն կ'առաջարկէ աղօթքին տալ հերթական կշռոյթ մը. աղօթք՝ առաւօտեան եւ երեկոյին, աղօթք՝ ճաշէն առաջ եւ վերջ, ժամասացութիւն, կիրակնօրեայ գոհաբանական պատարագ, վարդարան, ծիսական տարիին տօներ:

Հարկ է գԱստուած յիշել՝ շնչելէն աւելի յաճախ (Ս. Գրիգոր Նազիանզացի):

**568 - Որո՞նք են աղօթքի կեանքին արտայայտութիւնները:**

2697-2699 Աղօթքը արտայայտելու եւ զայն ապրելու համար՝ քրիստոնեայ աւանդութիւնը պահպանած է արտայայտութեան գլխաւոր երեք ձեւեր. ձայնիւ աղօթքը, մտածականը եւ հայեցողական աղօթքը: Անոնց միջեւ հասարակաց գիծը՝ սրտի ներամփոփումն է:

## ԱՂՕԹՔԻՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

## 569 - Ի՞նչ է ձայնիւ աղօթքը:

*Ձայնիւ աղօթքը մարդուս մարմինը մասնակից կը 2700-2704*  
*դարձնէ սրտին ներքին աղօթքին: Սակայն ամէնէն ներքին 2722*  
*աղօթքն անգամ չի կրնար անտեսել ձայնիւ աղօթքը: Բոլոր*  
*պարագաներուն՝ աղօթքը բխելու է մարդուս անձնական*  
*հաւատքէն: Յիսուս, «Հայր Մեր» աղօթքին միջոցով՝ մեզի*  
*սորվեցուց ձայնիւ աղօթքին մէկ կատարեալ ձեւը:*

## 570 - Ի՞նչ է մտածականը:

*Մտածականը՝ աղօթող խորհրդածութիւնն է, որուն մեկ- 2705-2708*  
*նակէտը՝ Սուրբ Գիրքով արտայայտուած Աստուծոյ Խօսքն 2723*  
*է: Մտածականը մարդուս խելքը, երեւակայութիւնը, յոյզե-*  
*րը եւ բաղձանքը գործի կը լծէ, որպէսզի խորացնէ մեր*  
*հաւատքը, դարձի բերէ մեր սիրտը եւ Քրիստոսի հետեւելու*  
*համար զօրացնէ մեր կամքը: Մտածականը Տիրոջ հետ սիրոյ*  
*միութիւնը նախապատրաստող հանգրուան մըն է:*

## 571 - Ի՞նչ է հայեցողական աղօթքը:

*Հայեցողական աղօթքը՝ լռութեան եւ սիրոյ մէջէն Աս- 2709-2719*  
*տուծոյ ուղղուած պարզ ակնարկ մըն է: Անիկա Աստուծոյ 2724*  
*մէկ պարզեւն է, հարազատ հաւատքի մէկ պահ, որուն 2739-2741*  
*ընթացքին՝ աղօթող հոգին Քրիստոսը կը փնտռէ, իր անձը*  
*Հօր սիրաւէտ կամքին կը յանձնէ եւ Սուրբ Հոգիին ներգոր-*  
*ծութեամբ իր հուլթիւնը կ'ամփոփէ: Աւելացի Սրբուհի*  
*Թէրէզան զայն կը բնորոշէ որպէս «բարեկամական*  
*մտերմիկ հաղորդակցում մը, ուր յաճախ մէն մինակ կը*  
*խօսակցինք Աստուծոյ հետ, Որուն կողմէ մենք մեզ*  
*սիրուած կը զգանք»:*

## ԱՂՕԹՔԻՆ ՊԱՅՔԱՐԸ

## 572 - Աղօթքը ինչու՞ պայքար է:

2725 Աղօթքը շնորհքին մէկ պարգեւն է, որ սակայն մեր կողմէ միշտ վճռակամ պատասխան մը կ'ենթադրէ, որովհետեւ աղօթող մարդը պայքարի մէջ է ինքնիր դէմ, իր շրջապատին մտայնութեան դէմ եւ յատուկ կերպով Փորձիչին դէմ, որ մեզ աղօթքէն հեռացնելու համար՝ ամէն ինչի կը դիմէ: Աղօթքի համար մղուած պայքարը՝ հոգեւոր կեանքին մէջ յառաջդիմութեան մէկ անբաժան մասն է: Մարդ իր ապրածին համեմատ կ'աղօթէ եւ իր աղօթածին համեմատ կ'ապրի:

## 573 - Աղօթքի դէմ առարկութիւններ կա՞ն:

2726-2728 Աղօթքի մասին թիւր ըմբռնումներէն զատ, շատեր կը  
2752-2753 համարին թէ աղօթելու բնաւ ժամանակ չունին կամ թէ աղօթելը՝ աւելորդ բան է: Աղօթողներու մէջ մարդիկ ալ կան, որոնք դժուարութիւններու եւ երեւութական ձախողութիւններու դիմաց՝ կրնան յուսալքուիլ: Այս խոչընդոտները յաղթահարելու համար՝ անհրաժեշտ է խոնարհ ըլլալ, վստահիլ եւ յարատեւել:

## 574 - Որո՞նք են աղօթելու դժուարութիւնները:

2729-2733 Մտացրումը աղօթելու մեր սովորական դժուարութիւնն  
2754-2755 է: Ան մեր ուշադրութիւնը Աստուծոյ կը շեղեցնէ, այսպէս՝ ցոյց տալով թէ մենք ինչ բանի կառչած ենք: Պէտք է մեր սիրտը խոնարհաբար դէպի Աստուած վերադարձնենք: Աղօթքը յաճախ սիրտի ցամաքութեան զոհ կ'երթայ, որուն հաւատքի ուժով եթէ յաղթահարենք, դարձեալ կարելի կը դառնայ Տիրոջ յարիլ, նոյնիսկ առանց զգալի մխիթարութեան: Հեղգութիւնը հոգեւոր ծուլութեան մէկ ձեւն է, որ յառաջ կու գայ մեր մտքի արթնութեան եւ մեր սրտի հսկողութեան թուլացումէն:

**575 - Մեր որդիական վստահութիւնը ինչպե՞ս զօրացնել:**

*Որդիական վստահութիւնը մեր մէջ կը խախտի երբ կը կարծենք թէ մեր խնդրանքը միշտ լսելի չ'ըլլար: Նման պարագաներուն մէջ՝ մենք մեզի հարց տանք, թէ Աստուած մեզի համար արդեօք Հա՞յր մըն է, Որուն կամքը կ'ուզենք կատարել, թէ ընդհակառակը՝ Աստուած մեզի համար հասարակ միջոց մըն է, ստանալու համար ինչ որ մե՛նք կ'ուզենք: Եթէ մեր աղօթքը Քրիստոսի աղօթքին միացուցած ենք, այն ատեն կրնանք ապահո՞վ ըլլալ թէ Ան մեր որեւէ խնդրածէն աւելի՛ն պիտի տայ. պիտի ընդունինք մեր սրտերը կերպարանափոխող Սուրբ Հոգին:*

2734-2741

2756

**576 - Կարելի՞ է ամէն ատեն աղօթել:**

*Աղօթելը մի՛շտ կարելի է, որովհետեւ քրիստոնեային ժամանակը յարուցեալ Քրիստոսին ժամանակն է եւ Ան «մեզի հետ է ամէն օր» (Մտք 28, 20): Հետեւաբար աղօթք եւ քրիստոնեայ կեանք՝ իրարմէ անբաժանելի են:*

2742-2745

2757

Կարելի է յաճախակի եւ եռանդագին աղօթք մատուցանել, նոյնիսկ շուկայի մէջ կամ մենաւոր պտոյտի մը պահում, նստած ձեր խանութին մէջ կամ առուծախ ընելու պահում, նոյնիսկ կերակուր եփելու ատեն (Ս. Յովհան Ոսկեբերան):

**577 - Ո՞րն է Յիսուսի ժամունա աղօթքը:**

*Այսպէս կոչուած է վերջին Ընթրիքի ատեն Յիսուսին արտասանած քահանայական աղօթքը: Յիսուս, Նոր Ուխտի Քահանայապետը, իր Հօր կը դիմէ երբ կը հասնի իր «անցքի» Ժամը, իր զոհաբերումի Ժամը:*

2604

2746-2751

2758



**ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ  
ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԸ  
“ՀԱՅՐ ՄԵՐ”**

---



Հայր մեր որ յերկինս ես,  
սուրբ եղիցի Անուն քո,  
եկեացէ արքայութիւն քո,  
եղիցին կամք քո  
որպէս յերկինս եւ յերկրի:  
Չհաց մեր հանապազորդ  
տու՛ր մեզ այսօր,  
եւ թող մեզ զպարտիս մեր  
որպէս եւ մեք թողումք մերոց  
պարտապանաց:  
Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն,  
այլ փրկեա՛ ի Չարէ:

«Յիսուս տեղ մը կեցած կ'աղօթէր: Երբ աղօթքը աւարտեց, աշակերտներէն մին ըսաւ օր մը անոր: Տէ՛ր, մեզի աղօթել սորվեցու՛ր» (Ղուկ 11, 1): Եւ Յիսուս անոր խընդրանքին ընդառաջելով՝ «Հայր Մեր»ը սորվեցուց:

Աշակերտները, իրենց ժամանակի երբայական աղօթքին հմտացած ըլլալուն հակառակ, իրենց Վարդապետին աղօթելու եզական ընդթէն խորապէս տպաւորուեցան: Արդարեւ Յիսուս անդադար կ'աղօթէր (Ղուկ 5, 16): Աղօթքը անոր կեանքին կարեւորագոյն պահերուն կ'ընկերակցի: Յիսուս կ'աղօթէ Յորդանանի մէջ՝ Իր մկրտութեան պահուն (Ղուկ 3, 21), կ'աղօթէ առաքեալները կանչելէ առաջ (Ղուկ 6, 12), կ'աղօթէ Պաժառակերպութենէն առաջ (Ղուկ 9, 28), կ'աղօթէ Պետրոսի հաւատքին համար (Ղուկ 22, 31-32), Սուրբ Հոգիին առաքումին համար (Յովի 14, 15-17): Կ'աղօթէ Ղազարոսին յարութիւն տալէ առաջ (Յովի 11, 41), Երուսաղէմ Իր յաղթական մուտքէն առաջ (Յովի 12, 27), Վերջին Ընթրիքին՝ Հօր կ'աղօթէ Իր փառաւորումին համար (Յովի 17, 1-5), Իր աշակերտներուն համար (Յովի 17, 6-19) եւ բոլոր հաւատացեալներուն համար (Յովի 17, 20-26): Կ'աղօթէ Իր չարչարանքներէն առաջ (Ղուկ 22, 39-46), Իր մահուան ժամուն՝ կ'աղօթէ Իր թշնամիներուն համար (Ղուկ 23, 34):

Յիսուսին աղօթքը Հօր ուղղուած է երկխօսութեամբ կատարուող հնազանդութեամբ, որ Իր առաքելութիւնը կը կենսագործէ. «Իմ կերակուրս՝ Զիս Ղրկողին կամքը գործադրել եւ Անոր գործերը կատարել է» (Յովի 4, 34): Հօր հետ այս սերտ հաղորդակցութիւնը Յիսուսի համար ուրախութեան եւ գովաբանութեան աղբիւր է. «Կը գովաբանեմ Քեզ, Հայր (...), Հայրս Ինծի ամէն բան յանձնեց: Ո՛չ որ կը ճանչնայ Որդին եթէ ոչ՝ Հայրը եւ ո՛չ որ կը ճանչնայ Հայրը եթէ ոչ՝ Որդին եւ ան՝ որուն Որդին կը հաճի յայտնել» (Մտք 11, 25, 27):

Հօր ուղղած աղօթքը Յիսուսի երկրաւոր գոյութեան շնչառութիւնն էր: Յիսուս թէեւ եկաւ եւ մեր մէջ ընակեցաւ, սակայն երբեք չհեռացաւ Հօր տունէն, այսինքն՝ Հօր հետ աղօթքի միջոցով Իր ունեցած հաղորդակցութենէն: Հօր հետ այս որդիական մտերմութեամբ հանդերձ, Յիսուս Իր եղբայրներուն հետ Իր փրկչագործ եւ գթառատ մատիկութիւնը պահպանեց մինչեւ խաչին գերագոյն զոհարերումը:

Յիսուսի աղօթքը այսօր եւս կը շարունակուի (Եբր 7, 25): Գոհութեան խորհուրդին մէջ, Քրիստոս որպէս գերագոյն քահանայապետ՝ Իր փրկչագործ գոհաբերումը Հօր կ'ընծայէ միասնաբար Իր Մարմինին հետ, որ Եկեղեցին է: Մեր մատուցած աղօթքներուն իւրաքանչիւրը դէպի Հայր կը բարձրանայ «մեր Տէր Քրիստոսով»: Քրիստոսի աղօթքը նեցուկ է մեր սրտերէն ու չրթներէն բխող մեր բոլոր աղօթքներուն: Երբ Եկեղեցին կ'աղօթէ, Որդին է որ Հօր ծունկերուն կը փարի: Որդիներուն աղօթքը Հօր կը բարձրանայ Անոր անդրանիկ Որդիին ձայնով: Աղօթելու, գովաբանելու եւ աղաչելու համար տարածուող բազուկներն են, բայց անոնց բոլորին կանչը ո՛րոյն է. Որդիին կանչն է:

Իւզանկարը ցոյց կու տայ Գեթսեմանիի մէջ աղօթող Յիսուսը: Ան չարչարանքի դառնագոյն բաժակը մարդոց փրկութեան համար կ'ընդունի՝ Հօր հանդէպ գերագոյն հնազանդութեամբ:

**ԷԼ ԿՐԻՔՔՕ** - Յիսուսի աղօթքը Զիթենեաց պարտեզին մէջ (Գեղարուեստի թանգարան, Թոլէսո, Օհայօ):

## Հայր Մեր

Ո՛վ մեր Հայրը որ երկինքն էս,  
թող սուրբ ըլլա՛յ Քու Անունդ,  
թող գայ Քու Թագաւորութիւնդ,  
թող կատարուի Քու Կամքդ  
երկրիս վրայ՝ ինչպէս երկինքի մէջ:  
Մեր ամենօրեայ հացը տու՛ր մեզի այսօր,  
եւ ներէ՛ մեզի մեր պարտքերը  
ինչպէս մե՛նք ալ կը ներենք մեր  
պարտապաններուն:  
Եւ մի՛ ենթարկեր մեզ փորձութեան,  
այլ փրկէ՛ Չարէն:

**578 - Ի՞նչ է Հայր Մեր աղօթքին ծագումը:**

*Յիսուս «Հայր Մեր»ը, այս անփոխարինելի քրիստոնէ- 2759-2760  
ական աղօթքը մեզի սորվեցուց, երբ աշակերտ մը, Իր 2773  
աղօթելը տեսնելով՝ Իրմէ խնդրեց. «Մեզի աղօթել սորվե-  
ցու՛ր» (Ղուկ 11,1): Ծիսական աւանդութիւնը միշտ Մատ-  
թէոսի բնագիրը գործածած է (Մտք 6, 9-13):*

## «ԱՄԲՈՂՁ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄԸ»

**579 - Ո՞րն է «Հայր Մեր»ին տեղը Սուրբ Գիրքին մէջ:**

*«Հայր Մեր»ը «ամբողջ Աւետարանին համադրումն է» 2761-2764  
(Տերտուղիանոս), «աղօթքներուն ամենակատարեալն է» (Ս. 2774  
Թովմաս Աթուինացի): Լերան Քարոզին կեդրոնը գրաւող  
այս աղօթքը (Մտք 5, 7) իր մէջ կը բովանդակէ Աւետա-  
րանին հական մասերը:*

**580 - Ինչու՞ «տէրունական աղօթք» կոչուած է:**

*«Հայր Մեր»ը «տէրունական», այսինքն՝ «Տիրոջ աղօթք» 2765-2766  
կոչուած է, որովհետեւ Տէրը անձամբ զայն մեզի 2775*

սորվեցուց:

**581** - «Հայր Մեր»ը Եկեղեցւոյ աղօթքին մէջ ի՞նչ տեղ կը գրաւէ:

- 2767-2772 *Եկեղեցւոյ համար առանձնայատուկ եղող «Հայր Մեր»*  
 2776 *աղօթքը Մկրտութեամբ եւ Դրոշմով մեզի «փոխանձնուած է» յայտնելու համար Աստուծոյ զաւակներուն վերածնունդը աստուածային կեանքին մէջ: Սուրբ Հաղորդութիւնը այս աղօթքին ամբողջական իմաստը կը բացայայտէ, քանի որ այս աղօթքին խնդրանքները, փրկչական արդէն իրագործուած խորհուրդին վրայ հիմնուելով, լիուլի պիտի իրականանան Տիրոջ գալստեան ժամանակ: «Հայր Մեր»ը ժամասացութեան բաղադրիչ մէկ մասն է:*

«ՀԱՅՐ ՄԵՐ ՈՐ ԵՐԿԻՆՔՆ ԵՍ»

**582** - Ինչու՞ կրնանք «համարձակիլ ամենայն վստահութեամբ մօտենալ» մեր Հօր:

- 2777-2778 *Որովհետեւ Յիսուս մեր Փրկիչը՝ մեզ Հօր հետ՝ դէմ առ*  
 2797 *դէմ կը հանէ, իսկ Իր Հոգին՝ մեզ որդիներ կ'ընէ: Այսպէս՝ մենք կարող կը դառնանք «Հայր Մեր»ը աղօթել պարզ եւ որդիական վստահութեամբ, զուարթամիտ ապահովութեամբ եւ խոնարհ համարձակութեամբ, ապահով ըլլալով որ մենք սիրուածներ ենք եւ մեր աղօթքները լսելի կ'ըլլան:*

**583** - Ինչպէ՞ս կարելի է գԱստուած «Հայր» կոչել:

- 2779-2785 *Կարելի է «Հայր» կոչել, որովհետեւ Աստուծոյ մարդա-*  
 2789 *ցած Որդին՝ Զինք մեզի այսպէս յայտնեց, իսկ Անոր Հոգին*  
 2798-2800 *ալ՝ Զինք մեզի այսպէս ճանչցուց: Հայրը կանչելը՝ մեզ վերանորոգ սքանչացումով Իր խորհուրդին մէջ կը ներմուծէ եւ հետը որպէս որդիներ վարուելու փափաքը կը հրահրէ մեր մէջ: Տէրունական աղօթքով՝ գիտակից կը դառնանք, թէ մենք եւս Հօր զաւակներ ենք՝ Որդիին միջոցով:*

**584 - Ինչու՞ Հայր «մե՛ր» կ'ըսենք:**

«Մեր» բառը՝ Աստուծոյ հետ ամբողջովին նոր յարաբե- 2786-2790  
րութեան մը արտայայտութիւնն է: Հօր աղօթելով, մենք 2801  
կ'երկրպագենք եւ կը փառաբանենք նաեւ Որդին եւ Հոգին:  
Քրիստոսով՝ մենք «Ի՛ր» ժողովուրդն ենք, իսկ Ինք «մե՛ր»  
Աստուածը, այժմ եւ յաւիտեանս: Մենք Հայրը «մե՛րը» կը  
կոչենք, որովհետեւ Քրիստոսի Եկեղեցին փոխադարձ հա-  
ղորդակցութիւնն է բազմաթիւ եղբայրներու, որոնք «մէկ  
սիրտ եւ մէկ հոգի» (Գործ 4, 32) կը կազմեն:

**585 - Հաղորդակցութեան եւ առաքելագործութեան ի՞նչպիսի հոգիով Հայր «մե՛ր»ը կ'աղօթենք:**

Հայր «մե՛ր» աղօթելը՝ մկրտուածներուն հասարակաց 2791-2793  
բարիքն է, ուստի ասոնք ջերմ պահանջքը կը զգան մաս-  
նակցելու Յիսուսին Իր աշակերտներուն միութեան համար  
կատարած աղօթքին: «Հայր Մեր» աղօթելը՝ բոլոր մարդոց  
հետ եւ բոլոր մարդոց համար աղօթել է, որպէսզի բոլորը  
միակ եւ ճշմարիտ Աստուածը ճանչնան եւ մէկ միութիւն  
կազմեն:

**586 - Ի՞նչ կը նշանակէ «որ երկինքն ես»:**

Սուրբ Գրային այս ասոյթը ո՛չ թէ վայր մը կը նշանակէ, 2794-2796  
այլ լինելու ձեւ մը, քանի որ Աստուած ամէն բանէ անդին 2802  
եւ վեր է: Այս ասոյթը կ'արտայայտէ Աստուծոյ մեծփայել-  
չութիւնն ու սրբութիւնը, ինչպէս նաեւ Անոր ներկայու-  
թիւնը արդարներուն հոգիներուն մէջ: Երկինքը, կամ Հօր  
Տունը, կը հանդիսանայ այն իսկական հայրենիքը, որուն  
լիայոյս կը ձգտինք, մինչ տակաւին երկրիս վրայ կը  
գտնուինք: Մենք արդէն իսկ հո՛ն կ'ապրինք, «Թաքնուած,  
Քրիստոսով՝ Աստուծոյ մէջ» (Կող 3, 3):

## ԵՕԹԸ ԽՆԴՐԱՆՔՆԵՐԸ

**587 -** Տէրունական աղօթքը Ի<sup>օ</sup>նչ մասերէ կը բաղկանայ:

2803-2806

Ան կը պարունակէ Հօր Աստուծոյ ուղղուած եօթը խնդրանքներ, որոնցմէ առաջին երեքը՝ աւելի աստուածաբանական են եւ մեզ դէպի Իրեն կը տանին, Իր փառքին համար: Միւրոյ յատուկ է նախ եւ առաջ իր սիրածին մտածել: Երեք խնդրանքները մեզի ցոյց կու տան, թէ ամէն բանէ առաջ ինչ պէտք է խնդրենք. որ սուրբ ըլլայ Իր Անունը, որ դա՛յ Իր Արքայութիւնը եւ կատարուի՝ Իր կամքը: Միւս վերջին չորս խնդրանքները՝ մեր խեղճութիւններն ու մեր ակնկալութիւնները կը ներկայացնեն գթութեան Հօր եւ Անկէ կը հայցեն մեր սնունդը, մեր ներումը, փորձութեան մէջ օգնութիւնը եւ Չարէն ազատումը:

2857

**588 -** Ի<sup>օ</sup>նչ կը նշանակէ «Անունդ սուրբ ըլլայ»:

2807-2812

Աստուծոյ Անունին սրբացումը՝ նախ եւ առաջ գովաբանութիւն է, որ զԱստուած որպէս Սուրբ կը դաւանի: Աստուած Իր սուրբ Անունը Մովսէսին յայտնեց եւ ուզեց որ Իր Ժողովուրդը Իրեն նուիրագործուի իբր սուրբ ազգ մը, որուն մէջ Ինք կը բնակի:

2858

**589 -** Աստուծոյ Անունը ինչպէ՞ս կը սրբանայ մեր եւ աշխարհի մէջ:

2813-2815

Մեզ «սրբութեան» կանչող (Ա ԹԵԱ 4, 7) Աստուծոյ Անունը սրբացնել՝ կը նշանակէ փափաքի որ Մկրտութեան օծումը մեր ամբողջ կեանքը կենսաւորէ: Ապա կը նշանակէ խնդրել՝ մեր կեանքին եւ մեր աղօթքին միջոցով, որ Աստուծոյ Անունը բոլոր մարդերէն ճանչցուի եւ օրհնաբանուի:

**590 - Եկեղեցին ի՞նչ կը խնդրէ երբ «Թող քու Թագաւորութիւնդ գայ» աղօթ:**

*Եկեղեցին կը հայցէ, որ Աստուծոյ Թագաւորութիւնը վերջնականապէս գայ՝ Քրիստոսի փառքով վերադարձին ընդմէջէն: Բայց Եկեղեցին նաեւ կ'աղօթէ որ Աստուծոյ Թագաւորութիւնը այժմէն իսկ ծաւալի շնորհիւ Հոգիին միջոցով մարդոց սրբացումին, շնորհիւ նաեւ արդարութեան եւ խաղաղութեան համար անոնց թափած ջանքերուն, հետեւողութեամբ Երանութիւններուն հոգիին: Այս խընդրանքը Հոգիին եւ Հարսին արձակած կանչն է: «Եկու՛ր, Տէ՛ր Յիսուս» (Յայտ 22, 20):*

2816-2821

2859

**591 - Ի՞նչու՞ կը խնդրենք, որ «Քու կամքդ կատարուի երկրի վրայ ինչպէս երկինքի մէջ»:**

*Մեր Հօր կամքն է, որ «բոլոր մարդիկը փրկուին» (Ա Տիմ 2, 3): Ասոր համար՝ Յիսուս եկաւ. որ Հօր փրկչագործ կամքը կատարեալ կերպով իրագործէ: Մենք Հօր Աստուծոյ կ'աղօթենք, որ մեր կամքը իր Որդիին կամքին միացնէ, Սուրբ Կոյս Մարիամին եւ սուրբերուն նման: Կ'ուզենք որ իր սիրոյ բարեացակամ ծրագիրը լման գործադրուի, երկրիս վրայ ինչպէս երկինքի մէջ: Աղօթքի միջոցով է, որ մենք կարող կը դառնանք «գիտնալ Աստուծոյ կամքը» (Հն 12, 2) եւ գայն «գործադրելու յարատեւութիւնը» (Եբր 10, 36) ընդունիլ:*

2822-2827

2860

**592 - Ի՞նչ կը նշանակէ «մեր ամէնօրեայ հացը տո՛ւր մեզի այսօր»:**

*Մեր բոլորին անհրաժեշտ ամէնօրեայ սնունդը երբ Աստուծոյ որդիական վստահութեամբ կը խնդրենք, կը դաւանինք թէ մեր Հօր Աստուծոյ բարութիւնը կը գլխէ կ'անցնի ամէն չափ ու սահման: Միանգամայն կը խնդրենք շնորհք, որ գիտնանք ա՛յնպէս վարուիլ, որ արդարութիւնը եւ բաժնեկցութիւնը հնարաւոր դարձնեն բաժին հանելու առատօրէն ունեցողներէն՝ չունեցողներուն:*

2828-2834

2861

**593** - Այս խնդրանքը քրիստոնեային համար յատուկ նշանակություն մըն ալ ունի<sup>o</sup>:

2835-2837 *Քանի որ «մարդը միայն հացով չ'ապրիր, այլ ամէն խօս-*  
 2861 *քով որ կ'ելլէ Աստուծոյ բերնէն» (Մաթ 4, 4), հետեւաբար*  
*այս խնդրանքը հաւասարապէս կը զօրէ նաեւ Աստուծոյ*  
*Խօսքին քաղցին եւ Գոհութեան Խորհուրդով տրուած*  
*Քրիստոսի Մարմինին, ինչպէս նաեւ Սուրբ Հոգիին*  
*քաղցին: Ջայն կը խնդրենք ամենայն վստահութեամբ*  
*այսօր, Աստուծո՛յ այսօրին համար, եւ ասիկա մեզի*  
*տրուած է յատկապէս Սուրբ Հաղորդութեամբ, որ գալիք*  
*Թագաւորութեան խնջոյքին նախաճաշակն է:*

**594** - Ինչո՞ւ կ'ըսենք «Ներէ՛ մեզի մեր պարտքերը, ինչպէս որ մենք կը ներենք մեր պարտապաններուն»:

2838-2839 *Հօր Աստուծմէ խնդրելով որ մեզի ներէ, մենք մեզ իր*  
 2862 *առջեւ մեղաւոր կը ճանչնանք, միանգամայն իր բարեգլխու-*  
*թիւնը կը հռչակենք, քանի որ իր Որդիին եւ Սուրբ*  
*Խորհուրդներուն միջոցով՝ «մենք ունինք փրկութիւնն ու*  
*մեղքերուն թողութիւնը» (Կող 1, 14): Բայց մեր խնդրանքը*  
*ընդունելի պիտի ըլլայ եթէ մենք ալ մեր կողմէն նախապէս*  
*ուրիշին ներենք:*

**595** - Ներումը ինչպէ՞ս կարելի է գործադրել:

2840-2845 *Բարեգլխութիւնը մեր սրտերէն ներս կը թափանցէ միայն*  
 2862 *ա՛յն ատեն՝ երբ մենք ալ կը գիտնանք նոյնիսկ մեր*  
*թշնամիներուն ներել: Այս նախապայմանը գոհացնելը՝*  
*նոյնիսկ եթէ անկարելի կը թուի մարդուն համար, սակայն*  
*ինքզինք Սուրբ Հոգիին նուիրող սիրտը կրնայ, Քրիստոսի*  
*նման, ծայրագոյն սիրով սիրել, վերքը վերածել գթածու-*  
*թեան եւ վիրաւորանքը բարեխօսութեան: Ներելը՝ մասնակ-*  
*ցիլ է Աստուծոյ բարեգլխութեան եւ ասիկա՝ քրիստոնեայ*  
*աղօթքին գագաթնակէտերէն մին է:*

**506 - Ի՞նչ կը նշանակէ «Մի՛ ենթարկեր մեզ փորձութեան»:**

*Մեր Հօր Աստուծոյ կը խնդրենք, որ փորձութեան մէջ մեզ առանձին չթողու: Իսկ Հոգիէն կը խնդրենք որ կարենանք իրարմէ զանազանել մէկ կողմէն՝ նեղութիւնը որ մեզ բարիքին մէջ կ'աճեցնէ եւ փորձութիւնը որ մեզ մեղքի եւ մահուան կը տանի, իսկ միւս կողմէն՝ զանազանենք փորձութեան ենթարկուիլը՝ փորձութեան տեղի տալէն: Այս խնդրանքը մեզ կը զօղէ Յիսուսին, որ Իր աղօթքին միջոցով փորձութեան յաղթեց: Այս խնդրանքը կը հայցէ նաեւ զգօնութեան եւ ցվերջ յարատեւութեան շնորհքը:*

2846-2849  
2863

**507 - Ինչու՞ վերջաւորութեան կ'ըսենք. «Փրկէ՛ մեզ Չարէն»:**

*Չարը կը մատնանշէ Աստուծոյ դէմ կեցող Սատանան, որ «մոլորեցուց ամբողջ տիեզերքը» (Յայտ 12, 9): Քրիստոս Սատանային դէմ արդէն յաղթանակ տարած է: Սակայն մենք կ'աղօթենք որ մարդկային ընտանիքը ազատագրուի Սատանայէն եւ անոր գործերէն: Կը խնդրենք նաեւ խաղաղութեան թանկարժէք պարգեւը եւ Քրիստոսի գալուստին յարատեւութեամբ սպասելու շնորհքը: Ան մեզ վերջնակա՜նապէս պիտի ազատէ Չարէն:*

2850-2854  
2864

**508 - Ի՞նչ կը նշանակէ վերջին «Ամէն»ը:**

Յետոյ, աղօթքին աւարտին՝ կը գոչես Ամէն, եւ այս Ամէնով, որ կը նշանակէ «թո՛ղ ըլլայ», Աստուծոյ մեզի սորվեցուցած աղօթքին բովանդակութիւնը կը ստորագրես (*Ս. Կիրեղ Երուսաղէմացի*):

2855-2856  
2865

Հրեշտակները Աստուծոյ արարածներն են: Անոնցմէ մաս մը Աստուծոյ հաւատարիմ մնաց ու կը շարունակէ հաւատարիմ մնալ՝ Անոր ներկայութեան, Անոր ծառայութեան եւ Եկեղեցւոյ սպասարկութեան մէջ, միասնաբար բոլոր փրկեալներուն եւ երկինքի փառքը վայելողներուն հետ:

Ինչպէս Յակոբի սանդուխին տեսիլքին մէջ եւս - ուր «Աստուծոյ հրեշտակները կ'ելլէին եւ կ'իջնէին» (Ծննդ 28, 12) - հրեշտակները կը մնան աշխոյժ եւ անխոնջ պատգամաբերներ, որոնք երկինքը երկրին կը կապեն: Աստուծոյ եւ մարդկութեան միջեւ լուծիւն եւ անհաղորդակցութիւն չէ որ կը տիրէ, այլ մնայուն երկխօսութիւն եւ անդադրուն հաղորդակցութիւն: Այս հաղորդակցութեան մասնակից մարդիկը պարտին սրել իրենց հոգեւոր լսողութիւնը, որպէսզի ունենդրեն եւ իմանան հրեշտակային այս լեզուն, որ իրենց կը թելադրէ ազնիւ խօսքեր, սուրբ զգացումներ, բարեգործութիւններ, եղբայրասէր վարուելակերպեր եւ շինիչ յարաբերութիւններ:

Կաթողիկէ ժողովրդական բարեպաշտութեան պատկանող երեւելի աղօթքի մը մէջ՝ մեր պահապան հրեշտակէն հետեւեալը կը հայցենք .

«Հրեշտակ Աստուծոյ,  
որ իմ պահապանն ես,  
որուն յանձնած է զիս Աստուծոյ Բարութիւնը,  
լուսաւորէ՛, պաշտպանէ՛,  
ուղղէ՛ եւ կառավարէ՛ զիս: Ամէն»:

Պատկերը կը ներկայացնէ խումբ մը անթեւ հրեշտակներ, որոնք երգելով կ'աղօթեն: Անոնք հազած են եկեղեցական շքեղ հանդերձանքներ, ցոյց տալու համար թէ իրենք հանդիսաւոր ծիսակատարումի մը մէջ են: Հրեշտակները ո՛չ միայն Աստուծոյ պատգամաբերներն են, ղրկուած Աստուծոյ գերազույն կամքը մարդոց հաղորդելու, այլ նաեւ պաշտօնն ունին Տէրը գովաբանելու երկինքի յաւիտենական ծիսակատարումին առնէն (Յայտ 8, 2):

**ԵԱՆ ՎԱՆ ԱՅՔ** - Երգեցիկ հրեշտակներ (Կանտի եկեղեցւոյ նկար):





**ՅԱԻԵԼՈՒԱԾ**

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՂՕԹՔՆԵՐ**

**ԿԱԹՈՂԻԿԷ  
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
ԲԱՆԱԶԵԻՆԵՐ**



## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՂՕԹՔՆԵՐ

## Խաչակերում

*Յանուն Հօր*

*եւ Որդւոյ*

*եւ Հոգւոյն Սրբոյ: Ամէն:*

## Փառք Հօր

*Փառք Հօր*

*եւ Որդւոյ*

*եւ Հոգւոյն Սրբոյ:*

*Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:*

## Ողջոյն Քեզ Մարիամ

*Ողջոյն քեզ Մարիամ*

*լի շնորհօք, Տէր ընդ քեզ,*

*օրհնեալ ես դու ի կանայս*

*եւ օրհնեալ է պտուղ որովայնի քո, Յիսուս:*

*Սրբուհի Մարիամ, Մայր Աստուծոյ*

*բարեխօսեա՛ վասն մեր մեղաւորացս,*

*այժմ եւ ի ժամու մահուան մերոյ: Ամէն:*

(Աշխարհաբար)

*Ողջո՛յն քեզի, Մարիամ, շնորհքներով լի,*

*Տէրը քեզի հետ է, դուն օրհնուած ես կիներուն մէջ*

*եւ օրհնուած է քու ծոցիդ պտուղը, Յիսուսը:*

*Սրբուհի Մարիամ, Մայր Աստուծոյ,*

*բարեխօսէ՛ մեզի՝ մեղաւորներուս համար,*

*հիմա եւ մեր մահուան ժամուն: Ամէն:*

### Հրեշտակ Աստուծոյ

Ո՛վ Հրեշտակ Աստուծոյ  
որ իմ պահապանս ես,  
որուն յանձնուած եմ աստուածային Բարութեան կողմէ,  
լուսաւորէ՛ զիս, պաշտպանէ՛ զիս,  
ուղղէ՛ եւ կառավարէ՛ զիս: Ամէն:

### Զհանգիստ յաւիտենական

Զհանգիստ յաւիտենական պարգեւեա՛ նոցա, Տէ՛ր  
եւ զլոյս մշտնջենաւոր ծագեսցի ի նոսա  
եւ հանգիցեն ի խաղաղութեան. Ամէն:

(Աշխարհաբար)

Յաւիտենական հանգիստը անոնց պարգեւէ՛, Տէ՛ր,  
եւ մշտնջենաւոր լոյսդ թող ծագի անոնց վրայ  
եւ թող հանգչին խաղաղութեան մէջ. Ամէն:

### Հրեշտակ Տեառն

Հրեշտակ Տեառն աւետեաց Սրբոյ Կուսին Մարիամո՛ւ:  
եւ յղացաւ ի Հոգւոյն Սրբոյ:  
Ողջոյն քեզ Մարիամ...

Ահաւասիկ կամ աղախին Տեառն:  
Եղիցի ինձ ըստ բանի քում:  
Ողջոյն քեզ Մարիամ...

Եւ Բանն մարմին եղեւ:  
Եւ բնակեաց ի մեզ:  
Ողջոյն քեզ Մարիամ...

Աղաչեա՛ վասն մեր, Սուրբ Աստուածածին,  
Զի արժանի լիցուք խոստմանցն Քրիստոսի:

Զնորհս քո աղաչեմք, Տէ՛ր  
 Հե՛ղ ի միտս մեր  
 զի որք հրեշտակին աւետեօք  
 զմարդեղութիւնն Որդւոյ քո Քրիստոսի ծանեաք,  
 ի ձեռն չարչարանաց եւ խաչի նորա  
 ժամանեսցուք ի փառս յարութեան:  
 Տերամք Մերով Յիսուսիւ Քրիստոսիւ: Ամէն:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ  
 Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

(Աշխարհաբար)

Տիրոջ հրեշտակը Սուրբ Կոյս Մարիամին աւետեց:  
 Եւ ան յղացաւ Սուրբ Հոգիէն:

Ահաւասիկ ես Տիրոջ աղախինն եմ:  
 Թող ըլլայ ինծի քու խօսքիդ համաձայն:

Եւ Բանը մարմին առաւ:  
 Եւ մեր մէջ բնակեցաւ:

Աղաչէ՛ մեզի համար, Սուրբ Աստուածածին,  
 որպէս զի Քրիստոսի խոստումներուն արժանանանք:

Աղօթք

Տէ՛ր, կ'աղաչենք որ մեր միտքը շնորհքներովդ լեցնես  
 որպէսզի մենք որ հրեշտակին աւետումով,  
 Քու Որդիիդ Քրիստոսի մարդեղութիւնը ճանչցանք,  
 Անոր չարչարանքներուն եւ խաչին շնորհիւ  
 յարութեան փառքին արժանանանք  
 մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով: Ամէն:

## Ուրախ լեր, Թագուհի երկնից

(Զատիական շրջան)

Ուրախ լե՛ր, Թագուհի երկնից, ալէլուիա:  
 Քանզի զոր ի քեզ կրե՛լ արժանի եղեր, ալէլուիա,  
 Յարեաւ ահա՛ որպէս ասացն, ալէլուիա:  
 Խնդա՛ եւ ուրախ լե՛ր, Կո՛յս Մարիամ, ալէլուիա,  
 Զի ճշմարտապէս յարեաւ Տէրն, ալէլուիա:  
 Աղաչեա՛ վասն մեր զԱստուած, ալէլուիա:

## Աղօթք

Աստուած, որ յարութեամբ Որդւոյ Քո Տեառն Մերոյ  
 Յիսուսի Քրիստոսի զաշխարհ ուրախ առնել հաճեցար,  
 տու՛ր մեզ, աղաչեմք, զի ի ձեռն ծնողի նորին Կուսին  
 Մարիամով՝ հասցուք յաւիտեանական ուրախութեանցն  
 յերկինս, Տերամբ Մերով Յիսուսիւ Քրիստոսիւ. Ամէն:

(Աշխարհաբար)

Ուրախացի՛ր, երկինքի՛ Թագուհի, ալէլուիա՛:  
 Որովհետեւ Անիկա, զոր մէջդ կրելու արժանի եղար,  
 յարութիւն առաւ, ինչպէս որ ըսած էր, ալէլուիա՛:  
 Խնդա՛ եւ ուրախացի՛ր, Կո՛յս Մարիամ,  
 որովհետեւ Տէրը ճշմարտապէս յարեաւ, ալէլուիա՛:  
 Աղաչե՛ զԱստուած մեզի համար, ալէլուիա՛:

## Աղօթք

Աստուած, որ արժանի համարեցար աշխարհը Քու Որդիիդ  
 մեր Տէր Յիսուս Քրիստոսի յարութեամբ ուրախացնել,  
 կ'աղաչենք, տու՛ր մեզի որ՝ Զինք ծնող Կոյս Մարիամի  
 միջոցով՝ հասնինք երկինքի ուրախութիւններուն, մեր Տէր  
 Յիսուս Քրիստոսով. Ամէն:

### Ո՛ղջ լեր, Թագուհի

Ո՛ղջ լեր, Թագուհի՛, Մա՛յր ողորմութեան,  
 Կեանք, քաղցրութիւն եւ յոյս մեր, ո՛ղջ լեր:  
 Առ քեզ գոչեմք, աքսորեալ որդիքս Շւայի,  
 առ քեզ հառաչեմք հեծելով եւ ողբալով  
 յայսմ արտասուաց վայրի:  
 Արդ՝ ո՛վ բարեխօս մեր,  
 դարձո՛ւ առ մեզ զաչս ողորմութեան քո,  
 եւ Յիսուս՝ զօրհնեալ պտուղ որովայնի քո  
 յետ այսր աքսորանաց, ցո՛յց մեզ:  
 Ո՛վ գթած, ո՛վ բարեգութ, ո՛վ քաղցր Կոյս Մարիամ:

(Աշխարհաբար)

Ողջո՛յն քեզ, ո՛վ Թագուհի, ողորմութեան Մայր,  
 Կեանք, քաղցրութիւն եւ մեր յոյսը, ողջո՛յն քեզ:  
 Շւայի աքսորուած որդիներս քեզի՛ կը դիմենք,  
 հեծելով ու ողբալով քեզի՛ կ'աղաչենք:  
 Ո՛վ դուն՝ մեր բարեխօսը, քու ողորմած աչքերդ մեզի՛  
 դարձուր  
 եւ Յիսուսը՝ արգանդիդ օրհնուած պտուղը  
 մեր այս աքսորէն յետոյ՝ մեզի ցո՛յց տուր:  
 Ո՛վ գթած, ո՛վ բարեգութ, ո՛վ քաղցր Կոյս Մարիամ:

### Մեծացուցէ

Մեծացուցէ անձն իմ զՏէր եւ ցնծացէ հոգի իմ  
 Աստուծով փրկչաւ իմով:

Այց արար ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ.  
 այսուհետեւ երանիցեն ինձ ամենայն ազգք:

Արար ընդ իս մեծամեծս հզօրն, եւ սուրբ է անուն  
 նորա:

Ողորմութիւն արար ազգաց յազգս երկիւղածաց  
 իւրոց, եւ արար զզօրութիւն բազկաւ իւրով:

Յրուեաց զամբարտաւանս ի մտաց սրտից, եւ քա-  
 կեաց զհզօրս յաթոռոց:

Զխոնարհս բարձրացոյց, զկարօտս ելից բարու-  
թեամբ, եւ զմեծատունս արձակեաց ունայնս:

Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրոյ՝ յիշելով  
զողորմութիւնս իւր:

Որպէս խօսեցաւ առ հարսն մեր՝ ընդ Աբրահամու եւ  
զաւակի նորա յաւիտեան:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

(Աշխարհաբար)

Անձս Տէրը կը փառաւորէ

եւ հոգիս կը ցնծայ իմ Աստուած փրկիչս:

Որովհետեւ հայեցաւ Իր աղախնին խոնարհութեան,  
այսուհետեւ բոլոր ազգերը ինծի երանի՝ պիտի տան:

Որովհետեւ Հօրը ինծի մեծամեծ գործեր կատարեց,  
մեծ է Անոր անունը:

Իսկ Անոր ողորմութիւնը Իր երկիւղածներուն վրայ  
կը տարածուի սերունդէ սերունդ:

Իր բազուկին զօրութեամբ մեծ գործեր կատարեց,  
ամբարտաւան խորհուրդներով մարդիկը ցրուեց,

Հօրները իրենց գահերէն

վար առաւ եւ խոնարհները բարձրացուց:

Քաղցածները բարիքներով լիացուց,

իսկ մեծատունները ձեռնունայն ճամբեց:

Իր ծառան Իսրայէլը պաշտպանեց՝

յիշելով Իր բարեգթութիւնը,

ինչպէս որ նախապէս խօսած էր մեր հայրերուն՝

Աբրահամին եւ անոր սերունդին, յաւիտեան:

**Ընդ հովանեաւ**

Ընդ հովանեաւ պաշտպանութեան քո

ապաւինիմք, Սուրբ Աստուածածին:

Զաղաչանս մեր մի՛ անտես առներ,

այլ միշտ փրկեա՛ զմեզ յամենայն վտանգից մերոց:

Փառաւորեալ եւ օրհնեալ մի՛շտ Սուրբ Կոյս:

(Աշխարհաբար)

Քու պաշտպանութեանդ հովանիին տակ  
կ'ապաւինինք, Սուրբ Աստուածածին:  
Մեր աղանչանքները մի՛ անտեսեր,  
այլ մեզ միշտ փրկէ՝ մեր բոլոր վտանգներէն,  
ո՛վ փառաւորուած եւ օրհնուած միշտ Սուրբ Կոյս:

### Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի

Օրհնեա՛լ Տէր Աստուած Իսրայէլի,  
որ յայց ել եւ արար փրկութիւն ժողովրդեան Իւրոյ:  
Յարոյց մեզ գեղջիւր փրկութեան  
ի տանէ Դաւթի ծառայի Իւրոյ,  
որպէս խօսեցաւ բերանօք սրբոցն  
որք յաւիտենից մարգարէքն էին:  
Փրկութիւն ի թշնամեաց մերոց  
եւ ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց:  
Առնել ողորմութիւն առ հարսն մեր  
եւ յիշել զկտակարանս սրբութեան Իւրոյ:  
Զերդումն զոր երդուաւ Աբրահամու հօր մերոյ  
տալ մեզ առանց երկիւղի զփրկութիւն ի թշնամեաց մերոց:  
Պաշտել զՆա սրբութեամբ եւ արդարութեամբ  
առաջի Նորա՝ զամենայն աւուրս կենաց մերոց:  
Եւ դու՝ մանուկ, մարգարէ բարձրելոյն կոչեսջիր,  
զնասցես առաջի Տեառն պատրաստել զճանապարհս Նորա:  
Տալ զգիտութիւն փրկութեան Իւրոյ  
ի թողութիւն ամենայն մեղաց մերոց:  
Վասն զթոյ ողորմութեան Տեառն Աստուծոյ մերոյ  
որով երեւեցաւ մեզ արեգակն ի բարձանց  
լուսաւոր առնել զխաւար մեր:  
Ծագել զլոյս ի վերայ այսոցիկ  
որք նստէաք ի խաւարի եւ ի ստուերս մահու,  
ուղղել զոտս մեր ի ճանապարհս խաղաղութեան:  
Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ,  
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

(Աշխարհաբար)

Օրհնեա՛լ է Իսրայէլի Տէր Աստուածը  
որ այցելեց Իր ժողովուրդին՝ եւ զայն ազատեց,  
Իր ծառային՝ Դաւիթի տունէն  
մեզի փրկութեան ուժ մը հանելով,  
ինչպէս որ ժամանակին  
սուրբ մարգարէներուն բերնով խօսած էր ,  
Թէ մեզ պիտի փրկէ մեր թշնամիներէն  
եւ մեզ բոլոր ատողներէն,  
Ան պիտի ողորմի մեր հայրերուն,  
յիշելով Իր կնքած սուրբ Ուխտը  
եւ երդումը, զոր մեր հօր Աբրահամին հետ ըրաւ  
մեզ քաջաբար ազատելու մեր թշնամիներէն,  
որպէսզի մենք ալ Զինք պաշտենք սրբութեամբ եւ  
արդարութեամբ մեր կեանքին ամբողջ ընթացքին:  
Եւ դուն, ո՛վ մանուկ, Բարձրեալին մարգարէն պիտի կոչուիս,  
Տիրոջ առջեւէն պիտի քալես  
եւ Անոր ճանապարհը պիտի պատրաստես,  
եւ մեղքերու թողութեան համար՝  
Իր ժողովուրդին փրկութեան գիտութիւնը պիտի տաս,  
չնորհիւ մեր Տէր Աստուծոյ ողորմածութեան,  
որուն միջոցով՝ մեր վրայ արե՛ւ ծագեցաւ լուսաւորելու հա-  
մար մեզ՝ ստուերի եւ մահուան խաւարին մէջ նստածներս,  
ուղղելու համար մեր քայլերը խաղաղութեան ճանապարհին  
վրայ:

## Զքեզ Աստուած

Զքեզ Աստուած գովաբանեմք  
եւ զքեզ, Տէ՛ր, խոստովանեմք,  
զքեզ, Հա՛յր մեր, անժամանակ  
պաշտէ երկիր առ հասարակ:

Քեզ հրեշտակաց զօրք ամենայն  
երկինք եւ պետք միանգամայն,  
հոյ՞ք քրովբէից եւ սրովբէից  
անլուելի լեալ ձայնակից,

Եղանակեն երգս օրհնութեանց.  
սու՛րբ, սու՛րբ, սու՛րբ ես՝ Տէ՛ր զօրութեանց,  
լի են երկինք, երկիր համայն  
փառօք քո մեծվայելչութեան:

Զքեզ պանծալի դասըք սրբոց,  
երկոտասան առաքելոց,  
պարըք գովեալ մարգարէից,  
տնօրէնութեանդ նախատեսից:

Գունդք լուսազգեաց մարտիրոսաց  
գովաբանեն զՏէ՛րըդ փառաց,  
զքեզ մինչեւ ի ծագս երկրի  
դաւանէ սուրբ Եկեղեցի,

ԸզՀայրդ մեծ անբաւելի,  
ըզՄիածինդ քո զՈրդի,  
զմխիթարիչ քո սուրբ Հոգի  
փառաւորէ անլուելի:

Քրիստո՛ս, փառաց Դու Թագաւոր,  
անժամանակ ծննունդդ Հօր,  
ի փրկութիւն մարդկան ազգի  
խոնարհեցար յարգանդ Կուսի:

Դու կոխեցեր զմահու խայթոց,  
զերկինս բացեր յուսացելոց,  
եւ համբարձեալ յաջմէ՛ն նստար  
փառօք ընդ Հօր քո հաւասար:

Գալ միւս անգամ ես հանդերձեալ  
ի դատել զազգըս հողածնեալ.  
եւ արդ խնդրեմք օգնել մեզ, Տէ՛ր,  
զորս պատուական արեամբ գնեցեր:

Ընդ սուրբս քո դասաւորեա՛  
ի փառս անանց եւ յարակալ,  
ըզժողովուրդըդ քո փրկեա՛,  
զժառանգութիւնս քո, Տէ՛ր, օրհնեա՛:

Հովուեա՛ զնոսա եւ խնամարկեա՛  
յայսմ հետէ եւ առ յապայ·  
զօրհանապազ զՔեզ օրհնեսցուք  
եւ զանուն սուրբ Քո զովեսցուք:

Շնորհեա՛ մեզ, Տէ՛ր, զաւուրս կենաց  
անցուցանել առանց մեղաց,  
ողորմեա՛ց մեզ, Տէ՛ր, ողորմեաց  
եւ զթութեամբդ ի մեզ հայեաց:

Ողորմութիւնդ լիցի ի մեզ  
որպէս եւ մեք յուսամք ի Քեզ,  
ի Քեզ անձինք մեր յուսացան,  
մի՛ ամաչեսցեն ի յաւիտեան:

### Երգ Գովաբանական

(Աշխարհաբար)

Մենք Քեզ, Աստուա՛ծ, կը գովաբանենք  
եւ Քեզ մեր Տէրը կը խոստովանինք:  
Ամբողջ երկիրը Քեզ իբր Հայր կը պաշտէ:

Քեզ զօրքերն հրեշտակներուն,  
երկինքն ու համայն պետութիւնները,  
քերոբէներ, սերօբէներ  
կը կանչեն Քեզ անյուշի ձայնով·  
Սու՛րբ, սու՛րբ, սու՛րբ, Տէր զօրութեանց,  
երկինք ու երկիր լի են Քու փառքովդ:

Քեզ կը փառաբանեն առաքեալներուն դասերը,  
մարգարէներուն սուրբ խումբերը,  
նահատակներուն գունդերը:  
Ս· Եկեղեցին մինչեւ աշխարհի ծայրերը  
կը դաւանի Քու մեծ վայելչութիւդ, ո՛վ Հայր,  
կը մեծարէ Միածին Որդիդ եւ մխիթարիչ Ս· Հոգիդ:

Փառքի արքայ, ո՛վ Քրիստոս, Հօր յաւիտեական Որդին,  
Դուն մարդը փրկելու համար՝ խոնարհեցար արգանդ կուսին,  
եւ յաղթելով մահուան խայթոցին  
երկինքի արքայութիւնը բացիր հաւատացեալին,  
եւ բազմեցար Հօրը աջին:

Կը հաւատանք որ մեզ դատելու պիտի գաս:  
 Կը խնդրենք որ այն օր Քու ծառաներուդ գլխաս,  
 որոնք փրկեցիր Քու պատուական արիւնովդ:  
 Ըրէ՛ր որ Քու սուրբերուդ հետ դասուինք  
 յաւիտեանական փառքին մէջ:

Տէ՛ր, Քու ժողովուրդդ փրկէ՛ եւ Քու ժառանգութիւնդ  
 օրհնէ՛,  
 ուղղէ՛ զանոնք եւ առաջնորդէ՛ յաւիտեան:  
 Քեզ ամէն օր պիտի օրհնենք  
 եւ անունդ յաւիտեան պիտի գովաբանենք:  
 Շնորհէ՛ մեզի մեր կեանքի օրերը առանց մեղքի անցընել:

Ողորմէ՛ մեզի, Տէ՛ր, ողորմէ՛,  
 եւ գլխութիւնդ մեր վրայ տարածէ՛:  
 Տէ՛ր, ես յոյսս Քու վրադ դրի,  
 բնա՛ւ ամօթապարտ պիտի չմնամ:

### Ե՛կ Արարիչ Սուրբ Հոգի

Ե՛կ, Սուրբ Հոգի, ստեղծող էից,  
 յայց ել մտաց Քոց ծառայից,  
 եւ վերնական շնորհօք Քո լի՛ց  
 զՔո ստեղծեալ սիրտ բոլորից:

Մըխիթարիչդ ամենայնի  
 եւ Բարձրելոյն պարգեւ բարի,  
 աղբիւ՛ր կենաց, հու՛ր կենդանի,  
 սէր եւ օծումն իմանալի:

Դու եօթնարփեան շընորհք վերին,  
 մատն հայրական աջոյ ձեռին,  
 Դու աւետիք Հօր բարձրելոյ,  
 որ տաս բարբառըս բերանոյ:

Վառեա՛ ըզլոյս ի զգայարանս,  
 հե՛ղ ըզսիրոյ Քո զհոսանս,  
 զտկարութիւն մարմնոյ մերոյ  
 միշտ զօրութեամբ Քո ամրացո՛ւ:

Ի բաց վանեա՛ զթշնամութիւն  
 եւ պարգեւեա՛ զխաղաղութիւն,  
 զի Քեւ յաւէտ առաջնորդեալ  
 առ ի չարեաց լիցուք զերծեալ:

Տու՛ր ճանաչել մեզ Քեւ ըզՀայր  
 եւ զՄիածինն Իւր հաւասար,  
 եւ յԵրկոցունց զՀոգիդ բխեալ  
 յամենայն ժամ սերտ հաւատալ:

Փառքը, պատիւ Հօ՛ր Աստուծոյ  
 եւ Միածնի յարուցելոյ,  
 Հոգւոյն Սրբոյ մխիթարչի,  
 այժմ եւ յաւէտ անլուրի: Ամէն:

### Ե՛կ Արարիչ ո՛վ Հոգի

(Աշխարհաբար)

Ե՛կ Արարիչ ո՛վ Հոգի  
 Քու հաւատացեալներուդ միտքերն այցելէ՛  
 եւ Քու ստեղծած սրտերը  
 երկնային շնորհքով լեցու՛ր:

Քեզ կոչած են Խորհրդատու,  
 պարգեւ Գերագոյն Աստուծոյ,  
 աղբիւր կենդանի, հուր, սէր  
 եւ աննխթական օծում:

Դուն եօթնատուր Հոգին ես  
 եւ հայրական ձեռքին մատ,  
 Հօր խոստացած Հոգին ճշմարտութեան  
 եւ ներշնչող մեր խօսքերուն:

Լոյսդ հաղորդէ՛ մեր զգայարանքներուն,  
 Սէրդ հոսեցու՛ր մեր սրտերուն,  
 միշտ ամրացու՛ր Քու զօրութեամբ  
 տկարութիւնը մեր մարմիններուն:

Մեզմէ հեռու վանէ՛ մեր թշնամին,  
խաղաղութիւնդ տու՛ր մեզի շուտով,  
Քու ուղղութեամբդ եւ խորհուրդովդ,  
հեռու մնանք փորձանքներէն:

Տու՛ր որ Քեզմով Հայրը ճանչնանք  
եւ Որդիին ծանօթանանք  
եւ Երկուքէն բխող Հոգին,  
ըրէ որ յաւերժօրէն հաւատանք:

Փառք ու պատիւ Հօր Աստուծոյ  
մեռեալներէն յարուցեալ Որդիին,  
եւ մխիթարիչ Սուրբ Հոգիին,  
յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

## Եկ Սուրբ Հոգի

(Աշխարհաբար)

Ե՛կ Սուրբ Հոգի  
եւ երկինքի բարձունքներէն  
մեզի դրկէ՛՝ ճառագայթ մը Քու լոյսէդ:

Ե՛կ, ո՛վ Հա՛յր աղքատին,  
բաշխող բարիին,  
լո՛յս սրտերուն:  
Ե՛կ, գերագոյն մխիթարիչ եւ քաղցրը հիւր հոգիներուն,  
ո՛վ կազդուրիչ զովութիւն:

Դուն ես հանգիստ յոգնութեան  
դու՝ զովացում ջերմութեան  
եւ սփոփանք լացողին:

Ո՛վ Լոյս երջանիկ,  
թափանցէ՛ ներսիդին  
Քեզի հաւատացողին:

Առանց Քու զօրութեան,  
մարդուն մէջ ամենայն  
բո՛յն է ապականութեան:

Աղտը մաքրէ՛,  
 չորը թրջէ՛,  
 վէրքը բուժէ՛,  
 կարծրը կակղէ՛,  
 պաղը տաքցու՛ր,  
 ծուռը ուղղէ՛:

Քեզի հաւատացողին,  
 Քեզի վստահողին  
 եօթնարփեան շնորհքներդ պարգեւէ՛:  
 Առաքինին վարձատրէ՛,  
 տու՛ր վերջնական փրկութիւն,  
 անվախճան ուրախութիւն. Ամէն:

### Հոգի՛ Քրիստոսի

Հոգի՛ Քրիստոսի, սրբէ՛ գիս,  
 Մարմին Քրիստոսի, փրկէ՛ գիս,  
 Արիւն Քրիստոսի, արբեցու՛ր գիս,  
 Զու՛ր կողին Քրիստոսի, լուա՛ գիս,  
 Զարչարանք Քրիստոսի, զօրացու՛ր գիս:

Բարի՛ Յիսուս, լսէ՛ գիս,  
 Վէրքերուդ մէջ պահէ՛ գիս,  
 Մի՛ թողուր որ բաժնուիմ Քեզմէ՛,  
 Զար ոգիին դէմ պաշտպանէ՛ գիս,  
 Մահուանս ժամուն՝ կանչէ՛ գիս,  
 Հրամայէ՛ ինծի որ Քու մօտդ գամ,  
 Եւ սուրբերուն հետ գովեմ Քեզ  
 յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

### Յիշէ՛ ո՛վ Մարիամ

Յիշէ՛, ո՛վ բարեգութ Կոյս Մարիամ, որ ամենեւին չէ  
 լսուած թէ մէկը քու քա՛ղցր պաշտպանութեանդ  
 ապաւինած, քեզ իրեն օգնութեան կանչած ու ինքզինքը քու  
 խնամքիդ յանձնած ըլլայ եւ դուն անոր երես դարձուցած  
 ըլլաս:

Ես ալ, այս յոյսով զօրացած՝ քեզի՛ կը դիմեմ, քեզի՛  
 կու գամ, քու առջեւդ կ'ողբամ մեղքերուս բեռան տակ, ո՛վ  
 կոյսերու Կո՛յս, քա՛ղցր Մայր: Ո՛վ Մա՛յր Բանին Աստուծոյ,

*իմ այս խօսքերէս երես մի՛ դարձներ, այլ զիս սիրով լսէ՛ եւ  
աղաչանքներս ընդունէ՛: Ամէն:*

### **Ս. Վարդարանի Խորհուրդները**

Ուրախութեան Խորհուրդներ

*(Երկուշաբթի եւ Շաբաթ)*

*Աւետումը:*

*Այցելութիւնը:*

*Ս. Ծնունդը:*

*Յիսուսի տաճար ընծայումը:*

*Յիսուսի տաճարին մէջ վերագտնումը:*

Լոյսի Խորհուրդներ

*(Հինգշաբթի)*

*Յիսուսի մկրտութիւնը Յորդանան գետին մէջ:*

*Կանայի Հարսանիքը:*

*Աստուծոյ Թագաւորութեան հռչակումը:*

*Պայծառակերպութիւնը:*

*Ս. Հաղորդութեան հաստատումը:*

Տխրութեան Խորհուրդներ

*(Երեքշաբթի եւ Ուրբաթ)*

*Յիսուս Գեթսեմանիի Պարտէզին մէջ:*

*Ջաղկումը:*

*Փռւչով Պսակումը:*

*Յիսուս Խաչը ուսը կ'առնէ:*

*Խաչելութիւնը:*

Փառաւորութեան Խորհուրդներ

*(Չորեքշաբթի եւ Կիրակի)*

*Յարութիւնը:*

*Համբարձումը:*

*Հոգեգալուստը:*

*Վերափոխումը:*

*Մարիամի Պսակումը:*

**Աղօթք Վարդարանէն ետք**

*Աղաչէ՛ մեզի համար, Ս. Աստուածածին,  
որպէ՛սզի Քրիստոսի խոստումներուն արժանի՛ ըլլանք:*

**Աղօթք**

*Ո՛վ Աստուած, քանի որ Քու միածին Որդիդ Իր կեանքով,  
մահով եւ յարութեամբ մեզի համար յաւիտենական կեանքը  
վաստկեցաւ, կ'աղաչենք՝ տու՛ր մեզի որ, Ս. Աստուածածնի  
Վարդարանին այս խորհուրդներուն շուրջ մտածելով, կարե-  
նանք անոնց բովանդակութեան նմանիլ եւ անոնց խոստում-  
ներուն արժանանալ, մեր Տէր Յիսուս Քրիստոսով: Ամէն:*

**Խումկի աղօթք**

*(Ղպտիական աւանդութիւն)*

*Թագաւո՛ր խաղաղութեան, խաղաղութիւնդ տու՛ր մեզ եւ  
ներէ՛ մեր մեղքերուն: Վանէ՛ Եկեղեցիին թշնամիները եւ  
զայն անսասան պահէ՛:*

*Մեր էմմանուէլ Աստուածը, որ Հօր եւ Սուրբ Հոգիին  
փառքով մեր մէջ է,*

*թող օրհնէ մեզ, սրբէ մեր սրտերը եւ բուժէ մեր հոգեւոր եւ  
մարմնաւոր հիւանդութիւնները:*

*Ո՛վ Քրիստոս, կ'երկրպագենք Քեզի՝ Քու բարեգութ Հօրդ  
եւ Ս. Հոգիին հետ, որովհետեւ թէ՛ եկար եւ թէ՛ մեզ  
փրկեցիր:*

**Հրաժեշտի աղօթք**

*Սուրբ Սեղանին Պատարագէն ետք, եկեղեցիէն մեկնելու  
ատեն (Ասորի-մարոնիական ծէս)*

*Խաղաղութիւն քեզի, ո՛վ Սեղան Աստուծոյ: Թող իմ մա-  
տուցած ընծան ծառայէ պարտքերու թողութեան եւ մեղքե-  
րու արձակման եւ զիս արժանի ընէ ներկայանալու Քրիս-  
տոսի ատեանին՝ առանց դատապարտութեան եւ ամօթի: Չեմ  
գիտեր, թէ՛ պիտի կարենամ անգամ մը եւս զալ ու վրադ  
Պատարագ մատուցանել: Պահէ՛ զիս, Տէր, պահպանէ՛ Եկե-  
ղեցիդ որ ճշմարտութեան եւ փրկութեան ուղին է: Ամէն:*

## Աղօթք ննջեցեալներուն համար

(Բիւզանդական ծէս)

Հոգիներու Աստուած եւ մարմիններու ստեղծող, որ մահը խափանեցիր եւ սատանան ոտնակոխ ըրիր եւ կեանքդ աշխարհին պարգեւեցիր, Դուն Տէր, ննջեցեալ ծառայիդ (Ա.Ա) հոգիին հանգիստ պարգեւէ՛ լուսաւոր, չէն ու հովասուն վայրի մը մէջ, ուր չկան ո՛չ տառապանք, ո՛չ ցաւ, ո՛չ հեծութիւն:

Թող ամենաբարին Աստուած թողութիւն չնորհէ անոր գործով, խօսքով եւ մտածութեամբ գործած բոլոր մեղքերուն, որովհետեւ չկայ մարդ մը որ ապրի ու չմեղանչէ:

Դուն միայն առանց մեղքի ես եւ Քու արդարութիւնդ բոլոր դարերուն համար է, իսկ խօսքերդ ճշմարիտ են, որովհետեւ, Քրիստոս Աստուած մեր, Դուն ես Յարութիւնը եւ քու ծառայիդ (Ա.Ա) կեանքն ու հանգիստը: Քեզի գոհութիւն կը մատուցանենք անստեղծ Հօրդ եւ ամենասուրբ, գթած եւ կենդանարար Հոգիիդ հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Թող հանգչին խաղաղութեամբ. Ամէն:

## Հաւատքի ներգործութիւն

Աստուած իմ, հաստատապէս կը հաւատամ այն բոլոր ճշմարտութիւններուն, զորս Դուն յայտնեցիր եւ Ս. Եկեղեցին կը սորվեցնէ, որովհետեւ Դուն գերազոյն ճշմարտութիւնն ես, չես կրնար ո՛չ խաբել, ո՛չ ալ խաբուիլ:

Այս հաւատքով կ'ուզեմ ապրիլ ու մեռնիլ: Ամէն:

## Յոյսի ներգործութիւն

Աստուած իմ, հաստատապէս կը յուսամ որ Յիսուսի Քրիստոսի արդիւնքներուն շնորհիւ, երկինքը եւ անոր արժանանալու շնորհքը ինծի պիտի տաս, որովհետեւ Դուն մեզ անսահմանօրէն կը սիրես եւ Քու խոստումներուդ մէջ ամենակարող եւ հաւատարիմ ես:

Այս յոյսով կ'ուզեմ ապրիլ ու մեռնիլ: Ամէն:

## Սիրոյ ներգործութիւն

Աստուած իմ, կը սիրեմ Բեզ ամէն բանէ վեր՝ բոլոր հոգիովս եւ կարողութեամբս, որովհետեւ Դուն ամենակատարեալ ես եւ գերազանցօրէն սիրելի: Կը սիրեմ նաեւ իմ ընկերս Քու սիրոյդ համար:

Այս սիրով կ'ուզեմ ապրիլ ու մեռնիլ: Ամէն:

## Զղջումի ներգործութիւն

Աստուած իմ, սաստիկ կը ցաւիմ Բեզ վշտացնելուս համար, որովհետեւ անսահմանօրէն բարի ես ու անհունապէս սիրելի եւ մեղքը կ'ատես: Քու սուրբ շնորհքովդ հաստատապէս կ'առաջադրեմ ասկէ ետք չմեղանչել եւ մեղքի առիթներէն փախչիլ: Այս զղջումով կ'ուզեմ ապրիլ ու մեռնիլ:

## ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՂՅ

Առաւօտ լուսո՛յ,  
Արեգակն արդա՛ր,  
Առ ի լոյս ծագեա՛լ:

Բըղխումն ի Հօրէ՛,  
Բըղխեա ի հոգւո՛յս  
Բան քեզ ի հաճո՛յս:

Գանձդ ողորմութեան,  
Գանձիդ ծածկելոյ  
Գըտող զիս արա:

Դուռն ողորմութեան  
Դաւանողիս բաց,  
Դասեցո վերնոց:

Երբեակ միութիւն,  
Եղելոց խնամող,  
Եւ ինձ ողորմեա:

Ձարթիր Տէր յօգնել.  
Ձարթո ըզթմբբեալս,  
Ձուարթնոց նրմանել:

Էդ Հայր անըսկիզբն,  
Էակից Որդի,  
Է միշտ սուրբ Հոգի:

Ընկալ զիս գըթած,  
 Ընկալ ողորմած,  
 Ընկալ մարդասէր:

Թագաւոր փառաց,  
 Թողութեանց տըւող,  
 Թող ինձ ըզյանցանս:

Ժողովող բարեաց,  
 Ժողովեա եւ զիս  
 Ժողովս անդրանկաց:

Ի քէն Տէր հայցեմ  
 Ի մարդասիրէդ  
 Ինձ բըժըշկութիւն:

Լեր կեանք մեռելոյս,  
 Լոյս խաւարելոյս,  
 Լուծանող ցաւոյս:

Խորհրդոց գիտող,  
 Խաւարիս շնորհեա  
 Խորհուրդ լուսաւոր:

Ծընունդ Հօր ծոցոյ,  
 Ծածկելոյս ստուերաւ  
 Ծագեա լոյս փառաց:

Կենարար Փըրկիչ,  
 Կեցո ըզմեռեալս,  
 Կանգնեա ըզգլորեալս:

Հաստեա հաւատով,  
 Հաստատեա յուսով,  
 Հիմնեցո սիրով:

Ձայնիւս աղաչեմ,  
 Ձեռօքս պաղատիմ,  
 Ձիւր բարեաց շնորհեա:

Ղամբարմամբ լուսոյ,  
 Ղեկավար ճարտար,  
 Ղօղեալս ամրացո:

Ճառագայթ փառաց,  
 Ճանապարհ ինձ ցոյց  
 Ճեմել ի յերկինս:

Միածինըդ Հօր,  
 Մոյժ զիս յառադաստ  
 Մաքուր հարսանեացդ:

Յորժամ գաս փառօք  
Յահագին աւուրն,  
Յիշեա զիս Քրիստոս:

Նորոգող հնութեանց,  
Նորոգեա եւ զիս,  
Նորոգ զարդարեա:

Շնորհատու բարեաց,  
Շնորհեա զքաւութիւն,  
Շնորհեա զթողութիւն:

Ուրախացո՛՛ Տէր  
Ոգւոյս փրկութեամբ,  
Ոյր վասն եմ ի սուգ:

Չար մըշակողին  
Չար սերմանցն որ յիս՝  
Չորացո զպըտուղ:

Պարգեւիչ բարեաց,  
Պարգեւեա իմոց  
Պարտեաց թողութիւն:

Ջուր շնորհեա աչացս,  
Ջերմ հեղուլ արտօսր,  
Ջընջել ըզյանցանս:

Ռետինըդ քաղցու,  
Ռամ հոգւոյս արբո,  
Ռահ ցոյց ինձ լուսոյ:

Սէր անուն Յիսուս,  
Սիրով քո ճըմլեա  
Սիրտ իմ քարեղէն:

Վասըն գըթութեան,  
Վասըն ողորմութեան,  
Վերըստին կեցո:

Տենչալի տեսլեամբ  
Տուր ինձ յագենալ,  
Տէր Յիսուս Քրիստոս:

Րաբուն երկնաւոր,  
Րոտեա զաշակերտս  
Րամից երկնայնոց:

Յօղ արեան քոյ Տէր  
Յօղեա ի հոգիս,  
Յընծասցէ անձն իմ:

Իիւծեալլս մեղօք  
 Իիւծեալ աղաչեմ,  
 Իիւսեա յիս բարիս:

Փըրկիչ բալորից,  
 Փռւթա զիս փըրկել  
 Փորձուլթեանց մեղաց:

Քաւիչ յանցանաց,  
 Քաւեա զօրհնաբանս  
 Քեզ երգել ըզփառս:

Աստուածածնին բարեխօսուլթեամբ  
 Յիշեա Տէր եւ ողորմեա:

### ԱՇԽԱՐՀ ԱՄԵՆԱՅՆ

Աշխարհ ամենայն,  
 Առ իս նայեցեալ  
 Ախտակից լերուք:  
 Բանամ ըզշրթունս,  
 Բարբառեմ լեզուաւս,  
 Բողոքեմ զանձնէ:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
 Գող եղէ մեղաց,  
 Գըտող կորըստեան,  
 Գուբ ինձ փորեցի:  
 Դաւեցի զանձն իմ,  
 Դաւաճանեցի,  
 Դարան գործեցի:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
 Երբեմն էի լոյս,  
 Եւ այժմ եմ խաւար  
 Եւ ըստուեր մահու:

Զիարդ պատմեցից  
 Զթիւ մեղաց իմոց,  
 Զի բազում են յոյժ:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
 Էրկինք եւ երկիր:

Էկայք ողբացէք  
 Էղկելի զանձն իմ:

Ընտրեցի ըզչարն,  
 Ընկալայ կամաւ  
 Ըզհոյլլս մեղաց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Թաթաւիմ տըղմով,  
Թաւալիմ ի մեղս,  
Թօթափել չկարեմ:  
Ժանտ ախտիւ լըցեալ՝  
Ժահահոտ եղէ  
Ժամանակ բազում.

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ի բաց մեկնեցայ  
Ի սուրբ խորհրդոց,  
Ի բարեաց գործոց:  
Լաւ վարկաւ անձն իմ  
Լուսոյն հեռանալ,  
Լինել ընդ խաւար.

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Խորհուրդըք չարին  
Խաբեն ըզհոգիս,  
Խորասոյգ առնեն:  
Ծածկեն անդընդօք,  
Ծիծաղին գլորմամբս,  
Ծանակ գիս առնեն.

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Կամաւ կորացայ  
Կարկամեալս անձամբ,  
Կանգնել ոչ կարեմ:  
Հուր մեղաց կիզող  
Հըրդեհաց որ յիս  
Հոգեւոր բարիս.

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ձայկեցայ մեղօք  
Ձաղեցին տեսողք.  
Ձանձրացաւ հոգիս:  
Ղեղի դառնութեան  
Ղօղեալ ի սըրտիս,  
Ղամբար իմ չիջաւ.

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ճաշակմամբ մեղաց  
Ճաշեցի ըզմահ,  
Ճոխս աղքատացայ:  
Մեռեալ եմ հոգւով,  
Մոլորեալ մըտօք,  
Միայն կամ մարմնովս.

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Յորոգայթ մահու  
 Յորսողին անկայ,  
 Յաղթեցայ յախտից:  
 Նետից թըշնամույն  
 Նըշաւակ եղէ,  
 Նոր միշտ խոցոտիմ.  
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
 Շուրջ պատեալ զինեւ  
 Շունք բազում եղեն,  
 Շաղախին արեամբա:  
 Որս եղէ չարին,  
 Ուռկանաւ մեղաց  
 Որսացաւ զանձն իմ.  
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
 Զարչար վըշտօք  
 Զարչարի անձն իմ.  
 Զունիմ դադարումն:  
 Պարտապան գըտայ  
 Պարտուց յանցանաց  
 Պարտեալս ի մեղաց.  
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
 Զանամ զըղջանալ,  
 Զերանիմ դարձեալ,  
 Զեռնում հրով մեղաց:  
 Ռաբբի կոչեցայ,  
 Ռակայ անուանիմ  
 Ռամկական վարուք.  
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
 Սիրով ցանկութեամբ,  
 Սաստիկ բարկութեամբ,  
 Սիրտ իմ խոցեալ է:  
 Վիրօք յանցանաց  
 Վըշտանայ հոգիս,  
 Վարանեալ չըրջիմ.  
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
 Տիրեցին ինձ չարք,  
 Տարագիր հանին  
 Տիրական գըրկացն:  
 Բաբունույն բարույ  
 Բախճական ձայնին  
 Բոտինս ոչ լըւայ.  
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
 Յանկութիւն չարեաց  
 Յանկալի դիմօք  
 Յաւեցոյց զաչս իմ:

Իհերաքանչիւրոց  
Իհւամամբ խոռոն ախտից  
Իիւծեալ է հոգիս.

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Փռլթացիր անձն իմ

Փախչել ի չարեաց,  
Փափաքել բարեաց:

Քեզ միշտ մերձ ծանիր  
Քոռն մահու եկեալ,  
Քըննող դատաւոր:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Աստուածածնին բարեխօսութեամբ  
Յիշեա Տէր եւ ողորմեա:

### Տէ՛Ր, ՈՂՈՐՄԵԱՍ

Տէ՛Ր, ՈՂՈՐՄԵԱՍ. Տէ՛ր, ողորմեա՛.

Տէ՛ր, ողորմեա՛. Տէ՛ր, ողորմեա՛:

Արի՛, Աստուած հարցն մերոց,  
Հաս յօգնութիւն ծառայից քոց:

Ամենասուրբ Երրորդութիւն,

Տո՛ւր աշխարհի գխաղաղութիւն.

Եկեղեցւոյ պայծառութիւն,

Ազգիս Հայոց՝ սէր, միութիւն.

Եւ հիւանդաց առողջութիւն,

Ննջեցելոց արքայութիւն:

Տէ՛ր, ողորմեա՛. Տէ՛ր, ողորմեա՛.

Յիսուս Փրկիչ, մեզ ողորմեա՛:

### ՆՈՅՆ ԵՒ ՆՄԱՆ

ՆՈՅՆ ԵՒ ՆՄԱՆ Հօր եւ Որդւոյ, Հոգիդ անեղ  
եւ համագոյ. բղխումն Հօր անքննաբար. առող յՈրդւոյ  
անճառաբար. ի վերնատունն այսօր իջեր, գՀոգիդ  
շնորհաց քոց արբուցեր. արբո եւ մեզ ողորմութեամբ  
ի բաժակէդ իմաստութեան:

Էից ստեղծող արարածոց, որ չըջիր ի վերայ  
ջրոց, նոյն եւ ի ջուրսն աւազանին, ի շնորհել մեզ  
քում էակցին. գգուես սիրով աղաւնակերպ, զմարդիկ  
ծնանիս աստուածակերպ. արբո՛ եւ մեզ ողորմութեամբ  
ի բաժակէդ իմաստութեան:

Բարուն վերնոց իմանալեաց եւ ըստորին այսըր  
զգալեաց. որ մարգարէս տաս ի հովուաց եւ առաքեալս  
ի ձկնորսաց.

աւետաւորը ըզմաքսաւորս, քարոզ բանի քում  
զհալածողս. արբո՛ւ եւ մեզ ողորմութեամբ ի բաժակէդ  
իմաստութեան:

### ՀԱՅՍ ԱՅՍ ՄԱՐՄԻՆ

Հացս ալս Մարմին է Քրիստոսի,  
Բաժակս Արիւն նորոյ Ուխտի:  
Ծածկեալ խորհուրդն մեծ յայտնի  
Աստուած ի սմա մեզ տեսանի:

Սա է Քրիստոս Բանն Աստուած  
Որ ընդ աջմէ Հօրն բազմի,  
Եւ աստ ի մեզ պատարագի  
Բառնայ զմեղս աշխարհի:

### ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ

#### ԱՂԹՔ ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ  
քեզ՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, անեղ եւ անմահ  
ընտելին, արարիչ հրեշտակաց եւ մարդկան եւ  
ամենայն եղելոց. ողորմեա՛ քո արարածոց:

Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ  
քեզ՝ անբաժանելի լոյս, միասնական սուրբ Երրորդու-  
թիւն եւ մի Աստուածութիւն, արարիչ լուսոյ եւ հալածիչ  
խաւարի. հալածեա՛ ի հոգւոյ իմմէ՛ զխաւար մե-  
ղաց եւ անգիտութեան, եւ լուսաւորեա՛ զմիտս իմ ի  
ժամուս յայսմիկ աղօթել քեզ ի հաճոյս եւ ընդունել ի  
քէն զխնդրուածս իմ. եւ ողորմեա՛ ինձ՝ բազմամեղիս:

Հայր երկնաւոր՝ Աստուած ճշմարիտ, որ առա-  
քեցեր զՈրդիդ քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխա-  
րին, մեղայ յերկինս եւ առաջի քո. ընկա՛լ զիս որպէս  
զանառակ որդին, եւ զգեցո՛ ինձ զպատմութեանն առա-  
ջին, զոր մերկացայ մեղօք. եւ ողորմեա՛ քո արարա-  
ծոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Որդի Աստուծոյ՝ Աստուած ճշմարիտ, որ խոնար-  
հեցար ի հայրական ծոցոյ, եւ առեր մարմին ի սրբոյ  
կուսէն Մարիամայ, վասն մերոյ փրկութեան, խաչե-  
ցար եւ թաղեցար եւ յարեար ի մեռելոց եւ համբար-  
ձար առ Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո. յիշեա՛  
զիս որպէս զաւազակն, յորժամ գաս արքայութեամբ  
քով. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Հոգի Աստուծոյ՝ Աստուած ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան եւ ի Վերնատունն, եւ լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւագանին, մեղայ յերկինս եւ առաջի քո մաքրեալ զիս վերստին աստուածային հրով քով, որպէս հրեղէն լեզուօք զառաքեալսն. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Անեղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով եւ մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ՝ զառաջինս վասն անուանդ քում սրբոյ. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Տեսո՛ղ ամենայնի, մեղայ քեզ խորհրդով, բանիւ եւ գործով. ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց, եւ գրեա՛ զանուն իմ ի դպրութեան կենաց. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Քննո՛ղ զաղտնեաց, մեղայ քեզ կամաւ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. թողութիւն շնորհեա՛ մեղաւորիս, զի ի ծննդենէ սուրբ աւագանին մինչեւ ցայսօր մեղուցեալ եմ առաջի աստուածութեանդ քոյ՝ զգայարանօք իմովք եւ ամենայն անդամօք մարմնոյս. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Ամենախնամ Տէր, դի՛ր պահապան աչաց իմոց գերկիւղ քո սուրբ՝ ոչ եւս հայել յարատ, եւ ականջաց իմոց՝ ոչ ախորժեւ լսել զբանս չարութեան, եւ բերանոյ իմոյ՝ ոչ խօսել զստութիւն, եւ սրտի իմոյ՝ ոչ խորհել զչարութիւն, եւ ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն, եւ ոտից իմոց՝ ոչ գնալ ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա՛ զչարժումն սոցա լինել ըստ պատուիրանաց քոց յամենայնի. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Հո՛ւր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քոյ, զոր արկեր յերկիր, բորբոքեա՛ յանձն իմ. զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ, եւ սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, եւ մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, եւ վառեսցէ զլոյս գիտութեան քոյ ի սրտի իմում. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Իմաստութիւն Հօր՝ Յիսուս, տու՛ր ինձ իմաստութիւն՝ զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա՛ զիս. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Կամեցո՛ղ բարեաց, Տէր կամարար, մի՛ թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ, ալլ առաջնորդեա՛ ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Արքայ՝ երկնաւոր, տու՛ր ինձ զարքայութիւն քո, զոր խոստացար սիրելեաց քոց, եւ զօրացո՛ զսիրտ իմ ատել զմեղս եւ սիրել զքեզ միայն, եւ առնել զկամս քո. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Խնամո՛ղ արարածոց, պահեա՛ նշանաւ խաչի քոյ զհոգի եւ զմարմին իմ՝ ի պատրանաց մեղաց, ի փորձութեանց դիւաց եւ ի մարդոց անիրաւաց, եւ յամենայն վտանգից հոգւոյ եւ մարմնոյ. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Պահապան մանեայնի Քրիստոս, աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի, ի նստել ի տան եւ ի գնալ ի ճանապարհ, ի ննջել եւ ի յառնել, զի մի՛ երբեք սասանեցայց. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո, եւ լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով, քեզ յանձն առնեմ՝ զանձն իմ. դու՛ հոգա եւ պատրաստեա զպէտս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ, յայսմհետէ մինչեւ յաւիտեան. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Դարձուցի՛չ մոլորելոց, դարձո՛ զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն. եւ բեւեռեա՛ ի հոգի իմ զսոսկալի օր մահուն եւ զերկիւղ գեհենոյն եւ զսէր արքայութեան քոյ, զի զղջացայց ի մեղաց եւ գործեցից զարդարութիւն. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Աղբի՛ւր անմահութեան, աղբերացո՛ ի սրտէ իմմէ արտասուս ապաշխարութեան՝ որպէս պոռնկին, զի լուացից զմեղս անձին իմոյ՝ յառաջ քան զելանէն իմ յաշխարհէս. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Պարգեւի՛չ ողորմութեան, պարգեւեա՛ ինձ ուղղափառ հաւատով եւ բարի գործով եւ սուրբ մարմնոյ եւ արեան քոյ հաղորդութեամբ զալ առ քեզ. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Բարերա՛ր Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս՝ քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, եւ անխռով անցուցանել ընդ չարութիւն աշտոյն, որ են ի ներքոյ երկնից. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Լո՛յս ճշմարիտ, Քրիստոս, արժանաւորեա՛լ զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոյ ի կոչման աւուրն, եւ հանգչել յուսով բարեաց յօթեվանս արդարոց, մինչեւ յօր մեծի գալստեան քոյ. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Դատաւո՛ր արդար, յորժամ գաս փառօք Հօր՝ դատել զկենդանիս եւ զմեռեալս, մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայիս քոյ, այլ փրկեա՛ զիս ի յաւիտենական հրոյն, եւ լսելի արա ինձ՝ զերանաւէտ կոչումն արդարոց՝ յերկնից արքայութիւնդ. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Ամէնողորմ Տէր, ողորմեա՛ ամենայն հաւատացելոց ի քեզ, իմոց եւ օտարաց, ծանօթից եւ անծանօթից, կենդանեաց եւ մեռելոց. շնորհեա՛ եւ թշնամեաց իմոց եւ ատելեաց զթողութիւն՝ որ առ իս յանցանաց. եւ դարձո՛ զնոսա ի չարեացն՝ զոր ունին վասն իմ, զի ողորմութեան քում արժանի եղիցին. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Փառաւորեա՛լ Տէր, ընկա՛լ զաղաչանս ծառայիս քոյ, եւ կատարեա՛ ի բարի զխնդրուածս իմ, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին եւ Յովհաննու Մըկրտչին եւ սրբոյն Ստեփանոսի նախապկային եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին եւ սրբոց առաքելոց եւ մարգարէից եւ վարդապետաց եւ մարտիրոսաց եւ սրբոց հայրապետաց եւ ճգնաւորաց եւ կուսանաց եւ ամենայն սրբոց քոց երկնաւորաց եւ երկրաւորաց: Եւ քեզ փառք եւ երկրպագութիւն անբաժանելի սուրբ Երրորդութեանդ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

### ԱՆԿԱՆԻՄՔ

Անկանիմք առաջի քո, Աստուածածին. եւ աղաչեմք զանարատ ըզԳոյսդ:

Բարեխօսեա վասն անձանց մերոց. եւ աղաչեա՛ զՄիածին Որդիդ:

Փրկել ըզմեզ ի փորձութենէ՝ եւ յամենայն վտանգից մերոց:

### ՄԱՅՐ ՍՈՒՐՐ

Մա՛յր սուրբ, սքանչելի Լուսոյն, որ զԱստուածն ամենայն յաւիտեանց յորովայնի քում կրեցեր եւ ցնծութիւն աշխարհի ծնար զԲանն Աստուած. աղաչեմք:

Մա՛յր սուրբ, բարեխօսեա՛:

Աղաչեա՛ վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած, որ խոնարհեցաւ ի հայրական ծոցոյ, հառ մարմին ըստ մարդկային բնութեանս, առնել խաղաղութիւն յերկինս եւ յերկրի. աղաչեմք:

Մա՛յր սուրբ, բարեխօսեա՛:

Աղաչեա՛ վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած, ներել մեզ, անտես առնել գյանցանս մեր եւ տալ օգնականութիւն ընդդիմակաց լինել հակառակամարտիցն ի պատերազմի. աղաչեմք:

Մա՛յր սուրբ, բարեխօսեա՛:

Աղաչեա՛ վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած, զի լռեսցեն պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր եւ արդարութիւն ի յերկրի. աղաչեմք:

Մա՛յր սուրբ, բարեխօսեա՛:

Աղաչեա՛ վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած, աճեցուցանել յերկրի մերում զքաղցր բըղխումն աղբերաց, զառատ պտղաբերութիւն բուսոց եւ տնկոց, առ ի զուարճալի լինել ամենայն հարկաւոր պիտոյից մերոց. աղաչեմք:

Մա՛յր սուրբ, բարեխօսեա՛:

Աղաչեա՛ վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած, զի միաբանեսցէ գեկեղեցի իւր սուրբ, չինեալ ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից, պահել անարատ մինչեւ յօր երեւելոյ գալստեան իւրոյ. աղաչեմք:

Մա՛յր սուրբ, բարեխօսեա՛:

Աղաչեա՛ վասն մեր, Սրբուհի՛, զՄիածին քո զՈրդին, եւ վասն հոգւոցն հանգուցելոց՝ ընդունել յարձալութիւն երկնից եւ տալ մասն եւ բաժին ընդ սուրբս ամենայն. աղաչեմք:

Յիշեա՛, Տէ՛ր, եւ ողորմեա՛:

Եւ եւս առաւել գոյրդորումն սիրոյ եւ զգործս բարեաց պարգեւել մեզ. խնդրեմք:

Տու՛ր մեզ, Տէ՛ր Աստուած մեր:

Չանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ Ամենակալին յանձն արասցուք:

Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Ողորմեա՛ց մեզ, Տէ՛ր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում. ասասցու՛ք ամենեքեան միաբանութեամբ:

Տէ՛ր ողորմեա՛, Տէ՛ր ողորմեա՛. Մա՛յր Սուրբ,  
բարեխօսեա՛ առ Տէր վասն մեր:

### ԱՂԱԽԻՆ ԵՒ ՄԱՅՐ ԱՍՏՈՒԾՈՅ

#### Ա

Եւ արդ,  
այս յուսահատ վիճակին եւ ահաւոր սրտաբեկումին,  
